ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱշգաձիՒ տՆտեսութՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևանի պետական համալսարան

Վոլոդյա Հովսեփյան
Մարգարիտա Եղիազարյան

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 330(479.25)(07)
ԳՄԴ 65.9(2Հ)g7
Հ 872

Ուսումնական ձեռնարկը երաշխավորել է հրատարակման
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը
Երաշխավորել են տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սարգիս Ղանթարջյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Արամ Առաքելյանը:

Խմբագիր Արմեն Ներսիսյան

Ուսումնական ձեռնարկի հեղինակներն են տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ***Վալոդյա Հովսեփյան****՝ Գլուխ 1, Գլուխ 3, Գլուխ 7, Գլուխ 8, Գլուխ 9, Գլուխ 10, Գլուխ 11, Գլուխ 12, Գլուխ 13, Գլուխ 14:*

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ***Մարգարիտա Եղիազարյան****՝ Գլուխ 2, Գլուխ 4, Գլուխ 5, Գլուխ 6:*

Հ 872 Հովսեփյան Վ.
Ազգային տնտեսությաուն: Ուսումնական ձեռնարկ/ Վ. Հովսեփյան, Մ. Եղիազարյան.- Եր.: ԵՊՀ, 2014.- 224 էջ:

«Ազգային տնտեսաություն» ուսումնական ձեռնարկում քննարկվում են Հայաստանի Հանրապետության ազգային տնտեսության ժամանակակից հիմնախնդիրները տարբեր տեսանկյուններից. ըստ տընտեսական գործունեության բնույթի, ճյուղային կառուցվածքի, պետական կարգավորման, զբաղվածության և ներդրումային քաղաքականության, տնտեսական անվտանգության և համաշխարհային տնտեսությանն ինտերգրվելու ժամանակակից հարցեր:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար, այն լրացուցիչ գիտելիքներ է տալիս մակրոտնտեսագիտության ուսումնասիրությունն ընդլայնելու համար:

ՀՏԴ 330(479.25)(07)
ԳՄԴ 65.9(2Հ)g7

ISBN 978-5-8084-1872-1

© ԵՊՀ հրատարակչություն, 2014
© Վ. Հովսեփյան, Մ. Եղիազարյան, 2014

ԳԼՈՒԽ 1
ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

1. Տնտեսական գործունեության բովանդակությունը և նպատակը

Սահմանափակ ռեսուրսների աշխարհում, նյութական բարիքների արտադրությանն և բնակչության պահանջմունքների բավարարմանն ուղղված մարդկային գործունեությունը ստանում է տընտեսական բովանդակություն:

Դեռևս անգլիացի հռչակավոր տնտեսագետ Ալֆրեդ Մարշալը (1842-1924 թթ.) նյութական բարիքներն ընդունում էր որպես. «օգտակար նյութական իրերը և նյութական բարիքների տնօրինման և օգտագործման բոլոր իրավունքները, կամ նրանց օգուտների քաղումը, կամ էլ նրանից՝ ապագայում օգուտների ստացումը»[1]: Իսկ ավստրիական դպրոցի քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը՝ Կարլ Մենգերը (1840-1921 թթ.) «Քաղաքատնտեսության հիմունքները» աշխատության մեջ նյութական բարիքներ անվանում է ապագայի համար անհրաժեշտ բարիքների ապահովման «նախնական հոգածություն»: Այնուհետև Կ. Մենգերը նշում է չորս հիմնական պայմաններ, որոնց համակցման արդյունքում այս կամ այն իրը (առարկան) ձեռք է բերում բարիքի բնույթ: Դրանց թվին դասելով՝

1. մարդկային պահանջմունքները,
2. առարկայի այն հատկությունը, որը նրան դարձնում է պիտանի, և պահանջմունքների բավարարման պատճառական կապ է լինում,
3. մարդու կողմից այդ պատճառային կապի ճանաչումը,
4. առարկայի տնօրինման հնարավորության այնպիսի եղանակ, որպեսզի իրականում այն օգտագործվի պահանջմունքի բավարարման համար:

[1] А. Маршал, 1993 г., том 1, стр. 112.

Այսուհանդերձ էականն այն է, որ բարեկեցության և կյանքի որակի ապահովման համար անհրաժեշտ է նաև ապահովել պահանջմունքների բավարարման ներդաշնակություն: Դա պայմանավորված է նրանով, որ

1. բարիքների մեծ մասն անվճար չէ,
2. մեկ բարիքի ձեռք բերումը պահանջում է մյուսի զոհաբերությունը,
3. ցանկացած բարիք ունի փոխարինող, իսկ ցանկացած փոխարինող բարիք պահանջում է լրացուցիչ ծախսեր և լրացուցիչ օգուտ:

Այսպիսով, անհրաժեշտ է միաժամանակ բավարարել բազմապիսի և բազմատեսակ պահանջմունքները համապատասխան բարիքների քանակությամբ, որոնք իրենց պատրաստման (արտադրության) համար պահանջում են ևս տարատեսակ ռեսուրսներ, որոնք էլ իրենց հերթին համարվում են բարիքներ: Հենց դրան է ձգտում հասարակությունը՝ բավարարելու հասարակության հարաճուն աճող պահանջմունքները տնտեսական բարիքների ստեղծման և օգտագործման միջոցով, որն էլ իմաստավորում է տնտեսական գործունեության բովանդակությունը:

Իսկ ծախքերի մշտական չափումը, որ պահանջում է պահանջմունքների բավարարումն արտահայտում է տնտեսական գործունեության նպատակը: Այդ նպատակն արտահայտում է տնտեսական գործունեության արդյունավետությունը:

Այսուհանդերձ կարևոր է գիտակցել, թե որքան բարիք է անհրաժեշտ ապագա պահանջմունքների բավարարման համար և այդ նպատակով որքան բարիք են տնօրինում: Այս տեսակետից որոշակի դժվարություն է ներկայացնում, թե ինչպես կարելի է կանխատեսել պահանջմունքների բավարարման ուղղությունները: Բանն այն է, որ բավականին բարձր է շարժառիթների անորոշությունը, որով ղեկավարվում է մարդն այս կամ այն պահանջմունքը ձևավորելիս: Այս տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի

գերմանացի տնտեսագետ Հենրիխ Գոսենի կողմից ձևակերպված «պահանջմունքների օրենքները»:

Ըստ առաջին՝ տևականության օրենքի, երբ որևէ պահանջմունք բավարարվում է անընդհատ (մշտապես), ապա նրա բավարարման ինտենսիվությունը սկզբում բարձր է, հետագայում աստիճանաբար նվազում է և ի վերջո դառնում է զրոյական:

Ըստ երկրորդ՝ կրկնության օրենքի, երբ որևէ պահանջմունքի բավարարումից առաջացող որևէ հաճելի զգացողություն կրկնվում է, ապա բավարարվածության ինտենսիվության աստիճանը և նրա տևականությունը նվազում է այնքան արագ, որքան արագ այն կրկնվում է:

Ելնելով այս օրենքներից՝ Գոսենը ձևակերպել է նաև նվազող օգտակարության սկզբունքը: Ըստ նվազող օգտակարության սկզբունքի յուրաքանչյուր անձ առավելագույնի է հասցնում օգտակարությունը, երբ իր տնօրինության տակ գտնվող փողը տարբեր բարիքների միջև բաշխում է այնպես, որ ձեռք է բերում հավասար բավարարվածություն ապրանքներից յուրաքանչյուրի վրա ծախսված փողի վերջին միավորից: Հետագայում այս սկզբունքը Կ. Մենգերը լուսաբանեց հինգ պարկ ցորենի օգտագործման օրինակով: Ընդ որում այդ հինգ պարկ ցորենի օգտակարությունը ցույց է տալիս ելնելով դրանց տնօրինման (օգտագործման) նվազման կարգով: Այսպես, անտառում ապրող ծերուկն առաջին պարկ ցորենն օգտագործում է սնվելու նպատակով, երկրորդը՝ սննդի կատարելագործման, երրորդը՝ տնային թռչունների կերակրման, չորրորդը՝ գարեջրի պատրաստման և վերջապես հինգերորդը՝ թութակի կերակրման համար:

Այսպիսով, Գոսենի օրենքների բովանդակությունից կարելի է հանգել այնպիսի եզրակացության, որ պահանջմունքների զարգացման մեջ առկա է որոշակի սահմանափակումներ, սակայն դրանք դժվար է կանխորոշել:

Նյութական բարիքների նկատմամբ պահանջմունքները ծագում են ինչպես առանձին անհատների, այնպես էլ տնտեսական ագենտ-

ների (գործակալների) մոտ, որոնց գործունեությունը կապված է անհատական պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ միջոցների արտադրության հետ: Դրա համար էլ պետք է տարբերել բարիքների երկու տեսակ, որոնց սակավության դեմ «պայքարում է» տնտեսական գործունեությունը. առաջին կարգի բարիքներ՝ սպառման առարկաներ (ապրանքներ) և երկրորդ՝ բարձր կարգի բարիքներ՝ ռեսուրսներ կամ արտադրության միջոցներ, որոնք նախատեսված են (ծառայում են) առաջին կարգի բարիքների արտադրության համար: Քանի որ առաջին և բարձր կարգի բարիքների արտադրությունը փոխադարձաբար պայմանավորված են մեկը մյուսով, ուստի կարելի է եզրակացնել, որ տնտեսական գործունեությունը «պայքար» է այդ բարիքների սակավության դեմ:

2. «Ազգային տնտեսության» հայեցակարգը

Ազգային տնտեսությունը երկրի մասշտաբով իրականացվող տնտեսական գործունեության ամբողջությունն է, որը կարգավորվում է համապատասխան ինստիտուցիոնալ համակարգով (տնտեսական, քաղաքական, գաղափարական):

Ազգային տնտեսության զարգացման մակարդակը որոշվում է համաշխարհային տնտեսական համակարգում նրա ունեցած դիրքով (զբաղեցրած տեղով), ազգային հարստության օգտագործման արդյունավետության մակարդակով, բնակչության բարեկեցությամբ, երկրի մրցունակության աստիճանով և ազգային անվտանգության համակարգով:

Ազգային տնտեսության տեսական հայեցակարգը դեռևս ձևավորվել է գերմանացի տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի (1789-1846 թթ.) կողմից՝ «Քաղաքատնտեսության ազգային համակարգը» աշխատության մեջ (1841 թ.):

Ֆ. Լիստը գտնում է, որ պետք է տարբերել ազգային տնտեսությունը կոսմոպոլիտիկական (աշխարհաքաղաքական, տիեզերական) տնտեսությունից: Նա գտնում է, որ դասական քաղաքատնտե-

սությունն ըստ էության կոսմոպոլիտիկական է, որը բազմակողմանի «դեղատոմսեր» է առաջարկում բոլոր երկրների համակողմանի զարգացման համար: Նա տնտեսագիտության մեջ առաջ քաշեց ազգային տնտեսության առանձնահատկությունների գաղափար, որոնց ուսումնասիրությամբ էլ պետք է զբաղվի ազգային տնտեսության գիտությունը:

Նա քննադատում էր դասականների այն տեսակետները, որ ազատ առևտրի քաղաքականությունը յուրահատուկ է բոլոր երկրներին: Ֆ. Լիստը ձգտում է հիմնավորել, որ այդ քաղաքականությունը յուրահատուկ է, մասնավորապես, զարգացած երկրներին, իսկ միջին մակարդակի զարգացած երկրներին անհրաժեշտ է հովանավորչական քաղաքականություն: Նա գտնում էր, որ հովանավորչական քաղաքականության իրականացումը, անհրաժեշտ է մասնավորապես պաշտպանելու տնտեսության թերզարգացած ճյուղերը:

«Տնտեսության ազատականության» սկզբունքի փոխարեն առաջ է քաշում «ազգի արդյունաբերական դաստիարակման» սկզբունքը: Ազգը գերմանացի տնտեսագետը դիտարկում է, որպես լեզվի, բնավորության, պատմական զարգացման ու պետական կարգի ամբողջական համակարգ: Ֆ. Լիստը գտնում էր, որ առանձին սերունդներ պետք է իրենց բարեկեցությունը զոհաբերեն ազգի զարգացման և պահպանման համար:

Ֆ. Լիստը ենթադրում էր, որ ազգը պետք է ունենա արտադրողական ուժերի զարգացման միատեսակ մակարդակ՝ գյուղատնտեսությունում, արդյունաբերությունում և արտաքին առևտրում: Անհրաժեշտ է զարգացնել ծովային և երկաթուղային տրանսպորտը, կատարելագործել տեխնիկական գիտելիքներն ու ունակությունները: Ֆ. Լիստի հայեցակարգում արտադրողական ուժերը զբաղեցնում էին ավելի բարձր տեղ, քան սպառողական բարիքները, որոնք կարող են արտադրվել առկա արտադրողական ուժերի զարգացման մակարդակում:

Ֆ. Լիստը գտնում էր, որ մերկանտիլիստական տեսական համակարգը ավելի ճիշտ է, քան դասական տեսությունը: Նա դասա-

կան տեսության գլխավոր թերությունը տեսնում էր նրանում, որ այն գովաբանում էր ինդուստրիալիզմը և կոսմոպոլիտիզմը, մի կողմ թողնելով ազգի տնտեսական պրոբլեմների վերլուծությունը:

Ինչպես հայտնի է ազգի էության բնութագրման (որոշման) հարցում տնտեսագետները տարբեր ժամանակաշրջանում տարբեր կերպով են մեկնաբանել: Դ. Ռիկարդոն ազգը բնորոշել է, որպես աշխարհագրական տարածություն, որն ապահովված է բնական գործոններով, որոնք էլ որոշում են տնտեսական գործունեության բնույթը: Ս. Միլլն ազգը ներկայացնում է որպես մի տարածաշրջան, որտեղ արտադրական գործոնները շարժունակ են և այդ տարածաշրջանը սահմանափակվում է պետության սահմաններով: Իսկ Ֆ. Պերուի բնորոշմամբ՝ ազգն անհատների և խմբերի ամբողջություն է:

Ազգի հասկացության բնորոշման ավելի բարդ սահմանում է տալիս Ռոբերտ Բարրը.

1. Նախ, որ այն տնտեսական գործունեության կենտրոն է, որը տարբերվում է իր բնույթով (արդյունաբերություն, գյուղատնտեսություն և այլն), իր ծագմամբ (անհատական, պետական և այլն), իր բնույթով (կապիտալիստական) և իր գործունեության պայմաններով (մրցակցային, մենաշնորհային և այլն):
2. Ազգն ուժի կենտրոնն է, որի նշանակությունն ու ազդեցությունը դուրս է գալիս աշխարհագրական և քաղաքական տարածության սահմաններից:
3. Ազգն անհատների միասնություն է՝ ըստ տնտեսական, քաղաքական և հոգևոր ընդհանրության:

Այսուհանդերձ տնտեսագիտական գրականության մեջ ընդունվում է ազգի բնորոշման երկու մեկնաբանություններ.

- պատմականորեն ձևավորված հանրույթ,
- երկիր, պետություն:

Այսպիսով, ինչպես երևում է վերը շարադրվածից, ազգին բնորոշ են լեզվի, բնավորության, աշխարհաքաղաքական, տնտեսական

և հոգևոր բնույթի առանձնահատկություններ, որոնցով էլ մեկ ազգը տարբերվում է մյուսներից:

Ինչ վերաբերվում է «տնտեսություն» հասկացությանը, այն ծագել է հունարեն «oikonomike» բառից, որը նշանակում է տնային տնտեսությունների կառավարման հմտություն (արվեստ), որը ներառում է.

1. արտադրական հարաբերությունները,
2. երկրի, տարածաշրջանի, երկրների խմբի կամ էլ ողջ աշխարհի տնտեսությունը,
3. գիտության ճյուղ, որն ուսումնասիրում է տնտեսական հարաբերությունների գործառույթային և ճյուղային ասպեկտները:

Այսպիսով, ազգային տնտեսությունը «ազգ» և «տնտեսություն» հասկացությունների միասնությունն է որևէ երկրի շրջանակներում: Այն արտահայտում է երկրի կազմը, կառուցվածքը և նրա առանձին տարրերի փոխկապակցվածությունները:

3. Ազգային տնտեսության ուսումնասիրության առարկան, մեթոդները և գործառույթները

Ազգային տնտեսություն առարկայի դասընթացն ուսումնասիրում է առանձին երկրի տնտեսական համակարգի գործունեությունը պայմանավորող տնտեսական երևույթները և գործընթացները: Դրա շրջանակներում քննարկվում են էվոլյուցիայի (աստիճանական զարգացման) խնդիրները, ինչպես նաև երկրի տնտեսավարման համակարգի զարգացման հեռանկարները:

20-րդ դարի կեսերին, երբ տնտեսագիտությունը բաժանվեց երկու բաժնի՝ միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության. ազգային տնտեսության առարկան յուրահատուկ տեղ զբաղեցրեց մակրոտնտեսագիտության բաժնում, որպես խոշորագույն տնտեսվարման օբյեկտներից մեկի՝ երկրի տնտեսության ուսումնասիրությանն ամբողջությամբ: Այսպիսով, ազգային տնտեսության ուսումնասիրությունը փաստորեն դարձավ տնտեսագիտության տե-

սության բաղկացուցիչ մասը՝ որպես տնտեսության մասին ֆունդամենտալ (հիմնարար) գիտություն:

Ազգային տնտեսության ուսումնասիրող խնդիրները համարվում են նաև այլ գիտությունների ուսումնասիրության օբյեկտներ, ինչպիսիք են օրինակ՝ ժողովրդագրությունը, էկոլոգիան, քաղաքագիտությունը, տնտեսական պատմությունը, աշխարհագրությունը և այլն:

Ազգային տնտեսության առարկայի կապը հատկապես խորը կերպով արտահայտվում է տնտեսական աշխարհագրության առարկայի հետ, որի շրջանակներում ուսումնասիրվում են գրեթե բոլոր խնդիրները, բացի ֆինանսական հարաբերություններից:

Ազգային տնտեսության առարկայի ներքին տարրերն ընդհանուր ճանաչողական և կայուն չեն, սակայն կարելի է առանձնացնել գիտության կառուցվածքների այնպիսի բաժիններ, ինչպիսիք են՝ երկրի բնական ռեսրուսների ներուժը, ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքը, երկրի ֆինանսական համակարգը, երկրի տնտեսական շրջանները և այլն:

Կան նաև տերմիններ - հոմանիշներ, որոնք կարող են ցույց տալ ազգային տնտեսության բնույթը՝ կախված պետության դերից, տընտեսվարման համակարգից, որոնք ենթակա են վերլուծության, և որից հետո կարելի է խոսել Հայաստանի կամ էլ մեկ այլ ուրիշ երկրի տնտեսության մասին:

Հայտնի են ազգային տնտեսության ուսումնասիրության հետևյալ հիմնական մեթոդները. ինդուկցիան և դեդուկցիան, տնտեսամաթեմատիկական մոդելավորումները, վիճակագրության ինֆորմացիան, փորձարարական մեթոդների օգտագործումն ազգային տնտեսության շրջանակներում և այլն:

Ազգային տնտեսության ֆունկցիաներից կարելի է թվարկել իմացության, կանխագուշակման, պրոգմատիկական (գործնական) և նորմատիվային ֆունկցիաները: Այս ֆունկցիաների արտահայտմամբ տնտեսագետները զինված են լինում երկրում տեղի ունեցող տնտեսական պրոցեսների մասին գիտելիքներով, ի վիճակի են լի-

նում լուծելու երկրում ծագած այս կամ այն պրոբլեմը, որը կապված է տնտեսավարման համակարգի գործունեությունից:

Որպես յուրահատուկ ֆունկցիա՝ տնտեսագետներից շատերն առաջ են քաշում նաև էթիկական ֆունկցիան, որն արտահայտվում է առանձնահատուկ սկզբունքներով և վարքագծով, ինչպես մակրոմոդելների, այնպես էլ միկրոմոդելների մակարդակով՝ դրանց փոխներգործության ազգային շուկայի շրջանակում:

Ազգային տնտեսության ուսումնասիրության պրոցեսում չպետք է սահմանափակվել առանձին վերցրած մեկ երկրի շրջանակով, քանի որ ազգային տնտեսությունը կազմում է համաշխարհային տնտեսության բաղկացուցիչ մասը:

4. Ազգային տնտեսության ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները, ազգային տնտեսությունների դասակարգումը

Յուրաքանչյուր երկիր պայմաններ է ստեղծում ողջ տնտեսական համակարգի գործունեության կամ նրա առանձին հատվածների զարգացման համար: Ինչը սկզբունքային նշանակություն ունի երկրի կողմից համաշխարհային տնտեսության մեջ որոշակի դիրք գրավելու համար:

Երկրի առանձնահատկություններից շատերը հեշտացնում կամ ընդհակառակը դժվարացնում են ազգային տնտեսության ճյուղերի և կազմակերպությունների հաջող զարգացումը: Այդ առանձնահատկությունները բազմաբնույթ են՝ սկսած կազմակերպության կառավարման մեթոդները որոշող նորմերից մինչև որակյալ աշխատուժի առկայությունը կամ բացակայությունը, պահանջարկի բնույթը ներքին շուկայում, ներքին ներդրողների առջև դրված նպատակները և այլն: Էական դեր է խաղում նաև երկրի քաղաքական համակարգը և այլն:

Ազգային տնտեսության դիտարկվում է որպես բարձրագույն համակարգի՝ համաշխարհային տնտեսական համակարգի բա-

ղադրամաս: Հետևաբար, ազգային տնտեսության առանձնահատկությունները որոշվում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով:

Արտաքին գործանները բաժանվում են հետևյալ խմբերի՝

- տնտեսական,
- քաղաքական,
- ժողովրդագրական,
- մշակութային:

Համաշխարհային հանրության տնտեսական գործոնների շարքին են դասվում աշխատանքի միջազգային բաժանումը, այս կամ այն երկրի տեղը համաշխարհային շուկայում և այլն:

Քաղաքական գործոնները կարող են հանդես գալ ամենատարբեր ձևերով: Դրանցից են՝ էմբարգոյի հայտարարումը, առավել բարենպաստ ռեժիմի տրամադրումը կամ արգելումը, այս կամ այն առևտրաքաղաքական միության մեջ ընդգրկվելը, դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և այլն:

Ժողովրդագրական գործոնները գլխավորապես հանդես են գալիս աշխատուժի միգրացիայի փոփոխություններով:

Մշակութային գործոնները կարող են ազգային տնտեսության վրա ազդել զանգվածային մշակույթի տարածման դեպքում, որը կարողէ ազդել տնտեսության համապատասխան ճյուղերի վիճակի և զարգացման վրա:

Ազգային տնտեսության ապահովման ներքին գործոններն են՝

- ազգային տնտեսական գործունեսություն իրականացնող գործակալները,
- ազգային տնտեսական գործունեության կազմակերպման ձևերը,
- երկրի շրջանակներում տնտեսական գործունեության վերլուծության մեթոդները:

Ազգային տնտեսության զարգացման մակարդակը որոշվում է համաշխարհային տնտեսական համակարգում նրա ունեցած դիրքով, ազգային հարստության օգտագործման արդյունավետությամբ,

բնակչության բարեկեցությամբ, երկրի մրցունակության աստիճանով և ազգային անվտանգության համակարգով:

Ժամանակակից տեսությունում և պրակտիկայում ընդունված է ազգային տնտեսությունները բաժանել մի քանի տիպերի: Դասակարգման հիքում ընկած են տնտեսական համակարգը բնութագրող տարբեր չափանիշներ:

Զարգացման աստիճաններից ելնելով ազգային տնտեսությունները բաժանվում են՝

- ազատ կապիտալիզմի տնտեսություն,
- ժամանակակից կապիտալիզմի տնտեսություն,
- կենտրոնական պլանային տնտեսություն,
- «ավանդական» տիպի տնտեսություն:

Համաշխարհային տնտեսական համակարգին ինտեգրման աստիճանից ելնելով տարբերում ենք բաց և փակ ազգային տնտեսություններ:

Սոցիալ-տնտեսական և տեխնիկա-տեխնոլոգիական մակարդակից ելնելով տարբերում ենք բարձր զարգացած, զարգացող, թույլ զարգացած ազգային տնտեսություններ:

Տնտեսության կառուցվածքից ելնելով ազգային տնտեսությունները բաժանվում է ագրարային-ինդուստրիալ և ինդուստրիալ-ագրարային երկրների:

Ելնելով երկրի գտնվելու վայրից ազգային տնտեսությունները բաժանվում են՝ Հյուսիս Ամերիկյան, Ասիական՝ խաղաղօվկիանոսյան, Մերձավոր Արևելքի, Աֆրիկյան, Լատինական Ամերիկայի տարածաշրջանի երկրներ և այլն:

ՄԱԿ-ի սահմանմամբ ազգային տնտեսությունները դասակարգվում են հետևյալ խմբերի՝ զարգացած, զարգացող և անցումային: Նախկին սոցիալիստական երկրները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, որոնք անցում են կատարում վարչահրամայական համակարգից շուկայականի, դասվում են անցումային երկրների շարքին:

ԳԼՈՒԽ 2
ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

1. Տնտեսական ներուժը և կառուցվածքը: Տնտեսական ներուժի կուտակումը

Մասնագիտական գրականությունում տնտեսական ներուժ հասկացությունն ընդգրկուն կիրառություն ստացավ 1970-ական թվականներին: Ներուժ (potential) հասկացությունը լատիներենից հայերեն թարգմանությամբ նշանակում է պաշար, ուժ, պահուստ:

Տնտեսական առումով ներուժը լայնորեն կիրառվում է ազգային տնտեսության ընդհանուր տնտեսական «հնարավորությունները» ներկայացնելիս:

Ազգային տնտեսության ընդհանուր տնտեսական ներուժը տվյալ ժամանակահատվածում տարբեր քանակական և որակական հատկանիշներով օժտված բարիքներ արտադրելու (ազգային) տնտեսության կարողություններն են: Սա ցույց է տալիս երկրի տնտեսության հզորության աստիճանը, նրա առանձին ճյուղերի, ձեռնարկությունների տնտեսական գործունեություն իրականացնելու, ապրանքներ և ծառայություններ մատակարարելու, բնակչության կարիքները և հասարակության պահանջմունքները բավարարելու, արտադրությունները զարգացնելու և առավել ընդգրկուն հասարակական պահանջմունքների բավարարման հնարավորություններ ստեղծելու կարողությունները:

Տնտեսական ներուժով են փոխպայմանավորված տնտեսական գործունեության առանձնահատկությունները, տնտեսական աճի մասշտաբներն ու տեմպերը: Տնտեսական ներուժի ծավալով է պայմանավորված ազգային տնտեսության տնտեսական անկախության աստիճանը, նրա տեղը և դերը համաշխարհային տնտեսական համակարգում և բնակչության կյանքի որակը:

Մասնագիտական գրականության մեջ տնտեսական ներուժը դիտարկվում է երկու տեսանկյունից:

Նեղ իմաստով տնտեսական ներուժը բնորոշվում է կատարված (նյութականացված) աշխատանքի և գիտելիքների ու գործնական կարողությունների ամբողջությամբ. այն ընկած է հասարակական, տնտեսական զարգացման ապահովման հիմքում և այդ ընթացքի ուղղորդիչ է համարվում: Սակայն հասարակական, տնտեսական զարգացումը պայմանավորված է ոչ միայն վերը նշված գործոններով, այլև բնական ռեսուրսների առկայությամբ և արտադրական նպատակներով դրանց կիրառմամբ, բնակլիմայական պայմաններով, տվյալ երկրի աշխարհաքաղաքական դիրքով և այլն: Տնտեսական ներուժի առանցքային բաղադրիչ են մարդկային ռեսուրները, մասնավորապես հասարակական արտադրությունում զբաղվածների մասնագիտական և որակական կառուցվածքը, քանի որ այդ ամենից են մեծապես կախված տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման և կուտակման հնարավորությունները:

Հետևաբար, տնտեսական ներուժը լայն իմաստով բնորոշվում է մարդկային և գիտատեխնիկական աշխատանքով, բնական ռեսուրսների, աշխարհաքաղաքական պայմանների, գիտելիքների և գործնական կարողությունների, տնտեսությունում (հասարակական ոլորտներում) զբաղվածների գիտակրթական մակարդակի ամբողջությամբ:

Տնտեսական ներուժի կառուցվածքն արտահայտվում է քանակական և որակական հատկանիշներով միմյանցից տարբերվող ներուժերով, որոնք բնութագրվում են տարբեր միտումներով, ձևավորման առանձնահատկություններով, օրինաչափություններով և ազդեցության տարբեր գործոններով: Տնտեսական ներուժի կառուցվածքը հիմնականում բաղկացած է՝

- բնական ներուժից,
- արտադրական ներուժից,
- գիտատեխնիկական ներուժից,
- մարդկային ներուժից,
- ինստիտուցիոնալ ներուժից:

Տնտեսական ներուժի բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և դրանց համակցությամբ որոշվում են դրա օգտագործման և դինամիկ զարգացման հեռանկարները:

1. Բնական ներուժ

Բնական ներուժը բնական ռեսուրսներն են, որոնք կարող են օգտագործվել կամ օգտագործվում են տնտեսական գործունեության մեջ՝ մարդկանց պահանջմունքները բավարարման նպատակով:

Ընդհանրապես (բնական) ռեսուրս է դիտվում այն ամենը, ինչը մարդկանց նյութական ու հոգևոր բարիքների ստացման աղբյուր ու նախադրյալ է: Այդպիսի աղբյուր ու նախադրյալ են մեզ շրջապատող բնությունից ստացվող բազմաթիվ նյութեր, «երևույթներ», ինչպիսիք են՝ օգտակար հանածոները, անտառանյութերը, վարելահողերն ու մարգագետինները, գետերն ու լճերը, քամու և արևի էներգիան, լույսն ու ջերմությունը:

Կառուցավծքային առումներով բնական ռեսուրսները կարող են օգտագործվել՝ կոնկրետ և այլընտրանքային նպատակներով: Բնական ռեսուրսների նպատակային օգտագործումը դիտարկվում է միայն տնտեսական գործունեությունում, երբ չկան այդ ռեսուրսների այլընտրանքային օգտագործման հնարվորություններ (օրինակ՝ հանքային ռեսուրսները): Թեև շատ ռեսուրսներ կարող են ունենալ օգտագործման այլընտրանքներ: Օրինակ՝ ջրային և անտառային ռեսուրսները կարող են օգտագործվել հանգստի կազմակերպման նպատակով:

Տարբերում են սպառվող և չսպառվող, վերականգնվող և չվերականգնվող, փոխարինելի և անփոխարինելի բնական ռեսուրսներ: Օրինակ՝ մարդկանց, կենդանիների ու բույսերի համար անփոխարինելի է թթվածինը, քաղցրահամ ջուրը: Բայց բավական շատ են բնական ռեսուրսների այն տեսակները, որոնք կարելի է փոխարինել այլ բնական ռեսուրսներով կամ արհեստական նյութերով: Գիտության ու տեխնիկայի զարգացման հետ դրանց թիվը մեծանում է: Փոխարինելի ռեսուրսներից են մետաղը, փայտանյութը, բնական կաշին ու մորթին, բնական թելերը:

Ըստ բաղադրության և օգտագործման առանձնահատկությունների՝ տարբերում են օգտակար հանածոների հետևյալ տեսակները.

- այրվող օգտակար հանածոներ՝ գազ, նավթ, տորֆ, այրվող թերթաքարեր և այլն,
- ոչ հանքային օգտակար հանածոներ՝ շինանյութեր՝ կրաքար, քարեր, ավազ, կավ և այլն,
- հանքաքարեր՝ սև, գունավոր, ազնիվ և հազվագյուտ, ինչպես նաև ռադիոակտիվ մետաղների հանքանյութեր,
- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,
- ջրաջերմային՝ ստորգետնյա հանքային և խմելու ջրեր,
- լեռնաքիմիական՝ ֆոսֆորի, ազոտի և այլ տարրերի հանքային աղեր, կալցիտ, բարիտ, քվարց և այլն:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Եվրոպայի ու Ասիայի հատման տիրույթում՝ Հարավային Կովկասում: Զբաղեցնում է 29.8 հազ. կմ^2 տարածք, սահմանակից է չորս զարգացող երկրների հետ, չունի ելք դեպի ծով, թեև հարուստ է խմելու, ոռոգման համար պիտանի ջրային ռեսուրսներով: Հայաստանը տնտեսագիտական դասական մեկնաբանությամբ փոքր երկիր է, թեև զբաղեցնում է ռազմավարական առումով կարևոր դիրք:

Հայաստանը հանքահումքային և բնական որոշակի պաշարներով լեռնային երկիր է: Հետախուզված են Աբովյանի և Հրազդանի երկաթի պահուստային հանքավայրերը, որտեղ առկա հանքանյութերն ունեն արդյունաբերական կարևոր նշանակություն: Աբովյանի հանքաքարերում երկաթի միջին պարունակությունը մոտ 28 % է, իսկ Հրազդանի հանքաքարերում՝ շուրջ 32 %: Աբովյանի հանքավայրի հանքաքարերը պարունակում են ցերիումի և իտրիումի խմբերի հազվագյուտ տարրեր, իսկ Հրազդանի հանքաքարերը՝ նաև մի շարք արժեքավոր քիմիական տարրեր: Աշխարհում ամենախոշորներից մեկը (ըստ պաշարների և արդյունահանվող հանքանյութերի քանակի) Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրն է, որի՝ ըստ հետախուզված պաշարների՝ հանքանյութերով ապահովվածությունը կկազմի ավելի քան 100 տարի:

Գունավոր և ազնիվ մետաղներից պետք է առանձնացնել մոլիբդենի և պղնձի հանքավայրերի առկայությունը: Հայաստանի Հանրա-

պետության պղնձամոլիբդենային հանքավայրերից կարելի է հիշատակել Քաջարանի, Ագարակի, Ալավերդու և Կապանի հանքավայրերը: Կան նաև ալյումինի արդյունաբերական նշանակության պաշարներ, ինչպես կապարի, ցինկի, մանգանի, անագի, սնդիկի հանքեր: Հայաստանում գոյություն ունեն նաև ոսկու և պլատինի հանքավայրեր (Զոդ, Մեղրաձոր և այլն): Հանդիպում են հազվագյուտ հողային տարրեր՝ բիսմութ, գալիում, ինդիում, սելեն, թալիում, թելուր, ռենիում և այլն: Հայաստանն ունի նաև տուֆի տարբեր երանգների (նարնջագույն, դեղին, վարդագույն, սև, սպիտակ), օբսիդիանի, բազալտի, մարմարի, տրավերտինի, կրաքարի բավական պաշարներ: Կան նաև կիսաթանկարժեք քարեր (ագաթ, ամետիստ, բերիլ, վանակատ, օնիքս և այլն), որոնցից հայ և օտարերկրյա վարպետների հմուտ աշխատանքի շնորհիվ պատրաստվում են գեղեցիկ զարդեր:

Հայտնի են նաև խմելու ջրի մոտավորապես 7500 և հանքային ջրի 1300 աղբյուրներ, որոնցից շատերն օգտագործվում են նաև առողջարարական նպատակներով: Հանքային ջրերից առավել հայտնի են «Ջերմուկը», «Արզնին», «Դիլիջանը», «Բջնին», «Հանքավանը», «Սևանը» և այլն:

2. Արտադրական ներուժ

Արտադրական ներուժը երկրի առկա և «պոտենցիալ» արտադրական կարողություններն (հզորություններն) են, տնտեսվարող սուբյեկտների իրական հնարավորություններն են առավելապես արտադրելու կոնկրետ որակի, նշանակության, քանակի բարիքներ:

Երկրի արտադրական ներուժը պայմանավորում են՝

ա) արդյունաբերական արտադրության ներուժը, ծավալը և կազմը,

բ) գյուղատնտեսական արտադրության ներուժը, ծավալը և կառուցվածքը,

գ) ծառայությունների ոլորտի զարգացման աստիճանը,

դ) կապի և հեռահաղորդակցման համակարգի կառուցվածքը, որակը և զարգացման աստիճանը:

Արդյունաբերությունն իրավամբ համարվում է տնտեսական ներուժը պայմանավորող հիմնական բաղադրիչներից մեկը և ժամանակակից գիտատեխնիկական դարաշրջանում երկրների մրցակցային առավելությունների դրսևորման հիմնական ոլորտներից է:

3.Գիտատեխնիկական ներուժը

Գիտատեխնիկական ներուժը գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակի համապարփակ բնութագրումն է, ազգային, տարածաշրջանային և միջազգային նշանակություն ունեցող գիտական և գործնական խնդիրների (այդ թվում՝ նոր և նորագույն) ձևակերպման և լուծման համար հասարակությանը, պետությանը հասանելի ռեսուրսների և հնարավորությունների ամբողջությունն է:

Գիտատեխնիկական ներուժը մարդկության առջև բացում է բնությունը վերափոխելու, նյութական վիթխարի հարստություն ստեղծելու, մարդու ստեղծագործական ունակությունները բազմապատկելու, արտադրության և աշխատանքի կազմակերպման ձևերի և մեթոդների կատարելագործման աննախադեպ հնարավորություններ:

Գիտատեխնիկական ներուժը պայմանավորում են՝

ա) գիտնականների և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող անձանց թվաքանակը երկրում,

բ) գիտահետազոտական ինստիտուտների քանակը և ֆոնդազինվածության աստիճանը,

գ) նորարարարության ոլորտի զարգացման աստիճանը՝ գիտատեխնիկական նորարարությունների թվաքանակը և դրանց ներդրման աստիճանը տնտեսությունում:

4. Մարդկային ներուժ

Մարդկային ներուժն ընդհանուր տնտեսական ներուժի հիմնական բաղադրիչն է: Բնակչության անհրաժեշտ թվաքանակն՝ իր քանակական և որակական հատկանիշներով (որակավորման և մասնագիտական կառուցվածք) անփոխարինելի ռեսուրս է, առանց որի անհնար է ոչ միայն ազգային տնտեսության զարգացումը, այլև նրա բնականոն գործունեությունը: Ըստ այդմ որքան մեծ է մարդկային

ներուժով ապահովվածության աստիճանը, այնքան մեծ է ազգային տնտեսության տնտեսական աճի հնարավորությունները:

Համաձայն ՄԱԿ-ի կողմից մշակված մեթոդաբանության երկրները՝ ելնելով մարդկային ներուժի զարգացման աստիճանից, բաժանվում են չորս խմբերի՝ շատ բարձր, բարձր, միջին և ցածր մարդկային ներուժ ունեցող երկրներ: 2013 թ.-ին Հայաստանը դասվեց բարձր մարդկային ներուժ ունեցող երկրների շարքին՝ 185 երկրների շարքում գրավելով 87-րդ տեղը (ցուցանիշը՝ 0,729): Ցավոք վերջին ժամանակներում ՀՀ-ում արձանագրվեցին մարդկային կապիտալի լուրջ կորուստներ, ինչը բացասական ազդեցություն ունեցավ տնտեսական ներուժի և նրա կուտակման միտումների վրա:

5. Ինստիտուցիոնալ ներուժ

Ինստիտուցիոնալ ներուժն արտացոլում է տնտեսվարող սուբյեկտների համար գործարար միջավայր ապահովող կազմակերպչական կառուցվածքի առկայությունը և զարգացման աստիճանը:

Տնտեսական ներուժի կուտակումը պայմանավորված է ինչպես ազգային արտադրությունում ներգրավված ռեսուրսների քանակի աճի, այնպես էլ դրանց օգտագործման արդյունավետության բարձրացման հետ:

Յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման ներուժը պայմանավորված է նաև կուտակման նորմայով, որի հիման վրա էլ ձևավորվում են արդյունավետ ներդրումներ կատարելու իրական հիմքեր: Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների կատարած դիտարկումները ցույց են տալիս, որ XX-րդ դարի վերջին տասնամյակներում համախառն կուտակման միջին համաշխարհային նորման կազմել է մոտ 23-24 %, զարգացած երկրներում այդ նույն ցուցանիշը 1-2 %-ով պակաս է զարգացող երկրներում արձանագրվածից: Զարգացող երկրներում համախառն կուտակման նորման միշտ եղել է բարձր՝ մոտ 29 %, և ըստ որոշ կանխատեսումների՝ այն կշարունակի պահպանել այդ բարձր մակարդակը: Համաշխարհային տնտեսության առաջատար երկրների, ինչպես նաև նոր զարգացող արդյունաբերական երկրների փորձը ցույց է տալիս, որ

համախառն կուտակման նորմայի և ՀՆԱ-ի դինամիկայի միջև գոյություն ունի սերտ կախվածություն: 1999-2003 թթ. ՀՀ-ում համախառն կուտակման նորման կազմել է 19.9 %, իսկ 2005-2009 թթ. միջինը՝ մոտ 30 %, որը զարգացող երկրների համեմատ համարվում է բավական բարձր ցուցանիշ: Արդյունքում ներդրումները/ՀՆԱ հարաբերակցությունը 2008 թ. կազմեց 40.9 %: Սակայն 2009 թվականից սկսած նկատելի են ներդրումների նվազման միտումներ, այսպես՝ եթե 2009 թ. ներդրումները կազմել են ՀՆԱ-ի՝ 34.7 %, ապա 2010 թ. համապատասխանաբար՝ 32.8 %, 2011 թ.՝ 27.9 %, 2012 թ.՝ 23.09 %: Սա ևս բացասական ազդեցություն է թողնում տնտեսական ներուժի կուտակման տեմպերի վրա:

2. Ազգային հարստությունը՝ որպես երկրի տնտեսական ներուժի բաղկացուցիչ մաս

Ազգային տնտեսության ընդհանուր տնտեսական ներուժի հիմնական բաղադրիչն ազգային հարստությունն է:

Ընդհանրապես ազգային հարստության մասին հարցերը միշտ էլ եղել են տնտեսագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Տնտեսության և տնտեսագիտության տեսության զարգացման հետ մեկտեղ ազգային հարստության հասկացությունը պարբերաբար փոփոխվել է: Մասնավորապես, մերկանտիլիստները գտնում էին, որ հարստություն կարելի է համարել միայն ոսկին և արծաթը (որոնց քանակությամբ որոշվում էր տնտեսությունում փողի քանակությունը), և, որի կարևոր աղբյուրը համարում էին միջազգային առևտուրը: Ֆիզիոկրատները համոզված էին, որ իրական հարստությունը հողն է, իսկ ազգերի հարստության աղբյուրը համարում էին հողի վրա կատարվող աշխատանքը: Դասականները որպես հարստության աղբյուր դիտում էին մարդու արտադրողական աշխատանքը և այն ամենը, ինչը ստեղծվել է մարդու ֆիզիկական և մտավոր աշխատանքով, ինչպես նաև արտադրության կազմակերպումը դիտվում էր որպես ազգի հարստություն:

Արդեն 20-րդ դարի նախաշեմին այդ մոտեցումները համալրվեցին հասարակությունում որոշակի ժամանակահատվածում առկա բարիքների ամբողջության գնահատման եղանակներով, իսկ 20-րդ դարի կեսերին ազգային հարստության և դրա հաշվարկման մեթոդաբանության հանդեպ հետաքրքրությունը մեծացավ՝ պայմանավորված ՄԱԿ կողմից ազգային հաշիվների համակարգի ներդրմամբ, առանձնահատկությունների վերամշակմամբ:

Ազգային հարստությունն առաջին հաշվարկները կատարվել են Ու. Պետիի կողմից 1664 թվականին. նրա հաշվարկներով Անգլիայի հարստությունը դիտարկվող ժամանակահատվածում 417 միլիոն ֆունտ էր: Այդ գումարի 250 մլն. ֆունտը նյութական հարստությունն էր, իսկ այդ մեծությունների տարբերությունը, հետահայացք վերլուծությամբ՝ մարդկային կապիտալի մեծությունն էր: Թվաբանական այդ հաշվարկներում նույնիսկ ներկայացվում էին Անգլիային անհրաժեշտ բժիշկների ու իրավաբանների կոնկրետ թվակազմը, ըստ որի նախընտրելի էր առաջնորդվել բուհերի ընդունելության տեղերի սահմանման պարագայում: Ֆրանսիայում այդօրինակ հաշվարկներ առաջին անգման իրականացվել են 1789 թվականին, ԱՄՆ-ում՝ 1803 թվականին, Ռուսաստանում՝ 1864 թվականներին:

Ներկայում ազգային հարստության սահմանման միասնական մոտեցումը բացակայում է: Հետևաբար գոյություն ունեն ազգային հարստության և դրա հաշվարկման տարաբնույթ մոտեցումներ: Առավել ընդունվածներն են՝

1) Ազգային հարստությունը տվյալ երկրում, կոնկրետ ժամանակահատվածում առկա նյութական բարիքների ամբողջությունն է, ողջ ազգային ունեցվածքը, որը կուտակվել է նախորդ և ներկա սերունդների գործունեության արդյունքում:

2) Ազգային հարստությունը երկրի տնտեսական ակտիվների ամբողջությունն է, որոնք ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման և մարդկանց կյանքի ապահովման համար անհրաժեշտ պայմաններ են ձևավորում:

3) Ազգային հարստությունը ֆիզիկական, ֆինանսական, մարդկային և բնական կապիտալների ամբողջությունն է՝ արժեքային գնահատմամբ:

Ազգային հարստությունը հաշվարկվում է ինչպես տեղական դրամով, այնպես էլ կայուն արտարժույթով:

Գոյություն ունի ազգային հարստության հաշվառման երկու հիմնական եղանակ՝

1) կուտակված կապիտալի (Համաշխարհային Բանկի մեթոդաբանություն),

2) ազգային հաշիվների համակարգի (ՄԱԿ-ի մեթոդաբանություն):

Առաջին եղանակով հաշվարկելիս ազգային հարստության կառուցվածքը ներառում է՝

- ֆիզիկական կապիտալը,
- բնական կապիտալը,
- մարդկային կապիտալը,
- ֆինանսական կապիտալը:

Ներկայում զարգացած երկրներում մեծ տեղ են հատկացվում մարդկային կապիտալին, դրա դրսևորման առանձնահատկությունների ներկայացմանը: Այսպես օրինակ՝ Համաշխարհային Բանկի մասնագետների կարծիքով զարգացած երկրի ազգային հարստությունը բաղկացած է 5 տոկոս բնական կապիտալից, 18 տոկոս ֆիզիկական և ֆինանսական կապիտալներից և 77 տոկոս մարդկային կապիտալից՝ գիտելիքներից և դրանք օգտագործելու հմտություններից:

Պատահական չէ, որ ներկայում բարեկեցության տեսանկյունից առաջատար դիրքերում են գտնվում այն երկրները, որոնցում մեծ տեղ են հատկացվել մարդկային կապիտալի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը: Այդ երկրներում մարդկային կապիտալում ներդրումներն ընդհանուր ներդրումների կեսից ավելին են, ընդ որում ներդրումների մեծ մասը կատարվում է ուղղակիորեն պետության կողմից կամ՝ պետության օժանդակությամբ:

Ըստ ՄԱԿ-ի կողմից մշակված ազգային հաշիվների համակարգի՝ ազգային հարստությունը բաժանվում է երկու խոշոր խմբերի՝ ոչ ֆինանսական ակտիվների և ֆինանսական ակտիվների:

1) Ոչ ֆինանսական ակտիվներն իրենց հերթին լինում են արտադրական և ոչ արտադրական:

Ոչ ֆինանսական արտադրական ակտիվներն արտադրության արդյունք են, որոնք կարող են օգտագործվել արտադրության մեջ և ընդգրկում են.

1) հիմնական ֆոնդերը,

2) շրջանառու միջոցները,

3) արժեքները:

Ազգային հարստության կարևորագույն բաղադրիչ են համարվում հիմնական ֆոնդերը:

Հիմնական ֆոնդերն արտադրության գործընթացում ստեղծված նյութաիրային արժեքների ամբողջությունն է, որոնք բազմիցս օգտագործվում են բարիքների և ծառայությունների արտադրության մեկից ավելի փուլերում՝ իրենց արժեքը մաս առ մաս փոխանցելով արտադրված արդյունքին (հիմնականում մաշվածքի չափով): Հիմնական ֆոնդերն իրենց հերթին բաժանվում են՝ նյութականի և ոչ նյութական արտադրական ֆոնդերի:

Նյութական արտադրական ֆոնդերը ներառում են շենքերը, շինությունները, մեքենաները, սարքավորումները, բանող և մթերատու անասունները, բազմամյա տնկարկները և այլն: **Ոչ նյութական արտադրական ֆոնդերը** ներառում են համակարգչային ծրագրային ապահովումը, օգտակար հանածոների հետազոտական ծրագրերը, արտադրական գործընթացը կազմակերպելու ծրագրերը և այլն: Հիմնական ֆոնդերի կազմում են նաև բնակչության բնակարանային ֆոնդը և կուտակված ունեցվածքը, սոցիալ-մշակութային նշանակության հաստատությունները և այլն:

Ազգային հարստության երկրորդ կարևոր բաղադրիչը շրջանառու միջոցներն են:

Շրջանառու միջոցները այն ակտիվներն են, որոնք կիրառվելով արտադրական մեկ շրջափուլում, ամբողջությամբ սպառվում են, և իրենց արժեքն ամբողջությամբ փոխանցում են թողարկված ապրանքներին կամ ծառայություններին: Շրջանառու միջոցների շարքին են դասվում հումքը, վառելիքը, հիմնական նյութերը, անավարտ և պատրաստի արտադրանքը և այլն:

Արժեքները երկարատև օգտագործման թանկարժեք ապրանքներն են, որոնք ժամանակի ընթացքում չեն կորցնում իրենց արժեքները, հակառակը՝ դրանց արժեքը ժամանակի ընթացքում կարող է մեծանալ: Արժեքների շարքին են դասվում թանկարժեք քարերը և մետաղները, ոսկերչական զարդերը, արվեստի ստեղծագործությունները և այլն: Արժեքները որպես կանոն չեն օգտագործվում արտադրության կամ սպառման նպատակներով, այլ՝ հատկապես զարգացած երկրներում, պահվում են որպես խնայողություններ:

Ոչ ֆինանսական ոչ արտադրական ակտիվները չեն համարվում արտադրության արդյունք և իրենց հերթին բաժանվում են երկու խոշոր խմբերի՝ նյութական և ոչ նյութական:

Ոչ ֆինանսական, ոչ արտադրական նյութական ակտիվների կազմում ընդգրկված են բնական ռեսուրսները՝ հողը և նրա ընդերքը, անտառները, ջրային ռեսուրսները և այլն, իսկ ոչ նյութական ակտիվները ներառում են հեղինակային իրավունքները, ապրանքանիշերն ու ապրանքանշանները, պատենտները, գուդվիլները և այլն:

2) Ֆինանսական ակտիվներն ընդգրկում են ոսկին, արտարժույթը, կանխիկ դրամը, արժեթղթերը և այլ տեսակի մասնակցությունը կապիտալում, վարկերը, ապահովագրական ֆոնդի տեխնիկական պահուստները և այլն:

Ազգային հարստության ծավալը կարող ենք հաշվարկել, եթե երկրի ոչ ֆինանսական ակտիվների արժեքին գումարենք ֆինանսական ակտիվների արժեքները և հանենք ֆինանսական պարտավորությունները:

Հասարակական արտադրության զարգացման հետ մեծանում է նաև ազգային հարստությունը: Ազգային հարստության աճի գործոններն են՝

- ազգային արտադրության ծավալի աճը և զարգացումը,
- արտադրական գործընթացում բնական ռեսուրսների ներգրավման տեմպերի ավելացումը,
- գիտական և տեխնոլոգիական առաջընթացի և փորձի կիրառումը,
- աշխատողների կրթական և մասնագիտական մակարդակի բարձրացումը,
- տնտեսվարող սուբյեկտների նորարարական–ներդրումային գործունեության կատարելագործումը:

Հարկ է նշել, որ ազգային հարստության աճը մարդկանց կենսամակարդակի բարձրացման անհրաժեշտ պայմանն է, տնտեսական առաջընթացի նախապայման և արդյունք, երկրի տնտեսական հզորության կարևորագույն ցուցանիշ:

Համաշխարհային Բանկի հաշվարկներով ներկայում աշխարհի բոլոր երկրների ազգային հարստության չափը մոտ 550 տրիլիոն ԱՄՆ դոլար է, որի շուրջ կեսը զետեղված է Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում:

ԱՄՆ ազգային հարստությունը կազմում է 24 տրիլիոն ԱՄՆ դոլար, ԱՊՀ երկրների ազգային հարստությունը՝ 80 տրիլիոն ԱՄՆ դոլար է, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության ազգային հարստությունը՝ 60 տրիլիոն ԱՄՆ դոլար, որից 30 տրիլիոն ԱՄՆ դոլարը բաժին է ընկնում բնական ռեսուրսներին:

Հարուստ երկրներում բնակչության մեկ շնչին բաժին է ընկնում միջինում 439 հազար ԱՄՆ դոլար ազգային հարստություն, աղքատ երկրներում՝ միջինում մոտ 7200 ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետության ազգային հարտսության կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում օգտակար հանածոները: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայում հաշվառված են հաստատված պաշարներով, պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, որից՝ 30-ը մետաղական հանքանյութերով հարուստ հանքավայրեր են: Նշված հան-

քավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 22 մետաղական: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայրեր: Բացի դրանցից գնահատված և Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ:

Ամենառակյալ և ամենաշատ փքվող լեռնային ապարների (պեռլիտներ, օբսիդիաններ և այլն) պաշարներն աշխարհում գտնվում են Հայաստանում: Հայաստանում գտնվող Արագած-պեռլիտի հաստատագրված պաշարները կազմում են 150 մլն մ.^{3}, իսկ կանխատեսվող պաշարների ընդհանուր քանակը հասնում է մինչև 3 մլրդ մ.^{3}:

Քաջարանի հանքավայրի վերջին ուսումնասիրությունների արդյունքում ընդերքում հայտնաբերվել է սկանդիում, որի մեկ տոննան առավել քան 5 մլն. դոլար է: Նույն հանքավայրում հայտնաբերվել են նաև վանադիումի, ցինկի, կապարի, պիրիտի էական պաշարներ:

Մասնագետների տարաբնույթ գնահատումներով Հայաստանի հանքավայրերում օգտակար հանածոների արժեքը կազմում է ավելի քան 4 տրիլիոն դոլար, ինչը Հայաստանի պես փոքր երկրի համար բավական է հարուստ երկրների շարքին դասվելու համար:

Մասնագետների մի մասի կարծիքով, եթե Հայաստանում հանքավայրերը շահագործվեն այնպես, որ կորզվեր մետաղների 95 տոկոսը, շահութաբերության աստիճանն ավելի բարձր կլիներ և շրջակա միջավայրի իրական աղտոտվածությունն ավելի ցածր կլիներ: Հանքավայրերը շահագործելիս մեր երկրում կորզվում է մետաղների 60-ից 70 տոկոսը, իսկ մյուս բավականին վտանգավոր մետաղներ թափվում են պոչամբարներ: Դիցուք զարգացած երկրներում այս մոտեցումը համարվում է անընդունելի և խիստ հնացած:

ԳԼՈՒԽ 3
ԵՐԿՐԻ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

1. Գիտատեխնիկական առաջադիմության էությունը և հիմնական գծերը

Գիտությունը և տեխնիկան գտնվում են փոխադարձ կապի և ներգործության մեջ: Դրանք մի կողմից ծառայում են բնության ուժերին տիրապետելուն, մյուս կողմից՝ էական փոփոխություններ են մտցնում սոցիալ-տնտեսական հարաբերություններում:

Գիտատեխնիկական առաջադիմության շնորհիվ մարդիկ կիրառում են բնության ուժերի ճանաչման և օգտագործման նոր կատարելագործված ձևեր ու մեթոդներ: Կապված լինելով հասարակական գրեթե բոլոր գործընթացների հետ (տնտեսական, գաղափարական, քաղաքական)՝ գիտատեխնիկական առաջադիմությունը էական փոփոխություններ է մտցնում նյութական բարիքների արտադրության մեջ: Նրա ազդեցությամբ արմատապես փոփոխվում են արտադրության տեխնիկան և տեխնոլոգիան, մարդու տեղը և դերը տնտեսական բարիքների արտադրության ընթացքում:

Գիտատեխնիկական առաջադիմությունը մարդկության առջև բացում է բնությունը վերափոխելու, նյութական վիթխարի հարըստություն ստեղծելու, մարդու ստեղծագործական ունակությունները բազմապատկելու աննախադեպ հնարավորություններ:

Ներկայումս գիտությունն աստիճանաբար վերածվում է անմիջական արտադրողական ուժի: Ժամանակակից պայմաններում գիտությունը թափանցել է արտադրության խորքը և վճռական դեր է խաղում նրա կազմակերպման ու զարգացման գործում: Գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը զուգընթաց իսկական հարստության ստեղծումն ավելի ու ավելի է պայմանավորվում գիտության ընդհանուր վիճակով և տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացման աստիճանով կամ արտադրության մեջ գիտության կիրառման աստիճանով: Եթե արտադրությունը դառնում է գիտության

կիրառելիություն, ապա գիտությունը դառնում է, այսպես կոչված, արտադրության գործառույթ:

Գիտության աստիճանական վերաճումն անմիջական արտադրողական ուժի, նշանակում է, որ հասարակությունում արտադրված տնտեսական բարիքների քանակությունը որոշվում է ոչ այնքան նյութական արտադրության մեջ զբաղված մարդկանց կատարած աշխատանքով, որքան գիտության զարգացման և արտադրության մեջ նրա օգտագործման աստիճանով: Գիտության վերաճումն անմիջական արտադրողական ուժի դեռևս չի նշանակում, որ այն վերածվում է արտադրողական ուժի այնպիսի տարրի, ինչպիսիք են արտադրության միջոցները: Հայտնի է, որ արտադրության ֆունկցիան տնտեսական բարիքների ստեղծումն է, իսկ գիտության ֆունկցիան՝ բնության ու հասարակության օրենքների մասին գիտելիքների ընդլայնումն ու խորացումը: Ապագայում էլ ավելի կխորանան գիտության և արտադրության կապը, սակայն գիտությունը կմնա որպես մարդկային գործունեության հատուկ բնագավառ, որն ավելի մեծ չափերով կնպաստի ոչ միայն տնտեսական բարիքների արտադրության, այլև ողջ հասարակության զարգացմանը:

Գիտությունն վերաճում է անմիջական արտադրողական ուժի այնքանով, որքանով այն մարմնավորվում է աշխատանքի առարկաների, աշխատանքի գործիքների և մարդու աշխատանքի արդյունքների մեջ և նպաստում է աշխատանքի արտադրողականության աճին: Ինտենսիվ վերարտադրության զարգացման պայմաններում գիտության արագ առաջընթացի և արտադրության մեջ նրա նվաճումների կիրառումը դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն:

Գիտատեխնիկական առաջադիմության առաջատար օղակը մեքենաների ավտոմատ համակարգերն է: Արտադրության համալիր մեքենայացումը և ավտոմատացումը զգալիորեն կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, արտադրության կուլտուրան և աշխատողների մասնագիտական պատրաստականությանն առաջադրվող պահանջները: Այն միաժամանակ կնպաստի աշխատանքի պայմանների բարելավմանը, աշխատանքային օրը կրճա-

տելուն և կենցաղի բարեկարգմանը: Մեքենաների ավտոմատ համակարգը վճռական նշանակություն ունի նաև արտադրության ընթացքի անընդհատության ապահովման գործում:

Ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության ծավալման գործում էական նշանակություն ունի նաև արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը: Այն լայն հնարավորություններ է ստեղծում բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, անցնելու անթափոն արտադրությանը, կրճատելու արտադրության ծախքերը և նպաստելու աշխատանքի պայմանների բարելավմանը:

Գիտատեխնիկական առաջադիմությունը սերտորեն կապված է նաև քիմիայի զարգացման հետ: Այն գիտատեխնիկական առաջադիմության կարևոր ուղղություններից մեկն է: Քիմիայի զարգացման շնորհիվ ստեղծվում են արմատապես նոր արտադրանքի բազմաթիվ տեսակներ: Մարդը չի կարող սահմանափակվել միայն բնության տված աշխատանքի առարկաներով, քանի որ բնության մեջ դրանց պաշարները սահմանափակ են: Քիմիայի միջոցով հնարավորություններ է ստեղծվում ստանալ այնպիսի նյութեր, որոնք պատրաստի վիճակում բնության մեջ չկան: Սակայն քիմիայի դերը չի սահմանափակվում միայն արտադրանքի քանակական աճով: Նրա դերը մեծ է նաև նախապես կանխորոշված հատկություններով նոր արդյունքներ ստեղծելու համար: Վերջին ժամանակաշրջաններում արտադրության մեջ լայն կիրառում են ստացել այնպիսի նյութեր, որոնք բազմաթիվ առավելություններ ունեն մետաղների նկատմամբ: Օրինակ՝ ապակե պլաստիկայից պատրաստված առարկաները ավելի ամուր և դիմացկուն են, քան պողպատից պատրաստվածները: Տեքստոլիտ պլաստինն ավելի ամուր է բրոնզից: Կապրոնն օգտագործվում է մեքենաների ամենատարբեր դետալներ պատրաստելու համար: Ավելի ու ավելի մեծ կիրառություն են ստացել տեֆլոնը, վինիլպլաստը և այլ պոլիմերներ: Արտադրության քիմիացումը հսկայական դեր է խաղում մեքենաշինության զարգացման համար: Այժմ մեքենաշինության մեջ օգտագործվում են մեծ քա-

նակությամբ պլաստմասաներ, որոնք փոխարինում են սև, գունավոր և թանկարժեք մետաղներին: Հաշվարկները ցույց են տալիս, որ 1 տ պլաստմասան կարող է փոխարինել 3-4 տ պողպատին, իսկ նրա արտադրության ծախքերը 4-5 անգամ ավելի պակաս են, քան պողպատի արտադրության ծախքերը:

Գիտատեխնիկական առաջադիմության կարևոր ուղղություն է հանդիսանում նաև էներգետիկայի զարգացումը: Էլեկտրաէներգիայի արտադրության գործում զգալի տեղաշարժեր է տեղի ունեցել նաև ՀՀ-ում: Հիդրոէլեկտրակայանների և ջերմաէլեկտրակայանների կողքին էական նշանակություն է ստացել ատոմային էներգետիկայի զարգացումը և քամու ուժի կիրառումը: Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց հնարավորություններ կստեղծվեն նաև լայն մասշտաբներով էլեկտրաէներգետիկայում արևի և երկրի ընդերքի ջերմության օգտագործման համար:

Մեծ ներուժ է ներկայացնում կենսաբանության զարգացումը, մասնավորապես գենային ինժեներիայի և կենսաբանական սինթեզի օգտագործումը սննդամթերքի արտադրության բնագավառում:

Գիտատեխնիկական առաջադիմության հիման վրա տեղի է ունենում աշխատանքի բնույթի և բովանդակության փոփոխում, որն էլ իր հերթին լայն հնարավորություններ է ստեղծում անհատի համակողմանի զարգացման համար: Մարդը ոչ միայն գիտատեխնիկական առաջադիմության օբյեկտ է, այլև՝ սուբյեկտ: Նա ոչ միայն կրում է գիտատեխնիկական առաջադիմության ազդեցությունը, այլև գիտության ու տեխնիկայի զարգացումը ստեղծող ուժ է՝ զարգացնելով գիտությունը ու տեխնիկան, օգտագործելով դրանցում առկա նվաճումները՝ մարդիկ միաժամանակ իրենք են զարգանում և նպաստում արտադրության արդյունավետության բարձրացմանը:

2. Գիտատեխնիկական առաջադիմությունը և տնտեսական աճը

Տնտեսական աճը որոշակի ժամանակաշրջանում ՀՆԱ-ի ավելացումն է, լրիվ զբաղվածության ժամանակ՝ երկրի արտադրական ներուժի ընդլայնման արդյունքում:

Տնտեսական աճի նոր տեմպը հաշվարկվում է իրական ՀՆԱ-ի աճի տեմպերով՝ տոկոսային հարաբերակցությամբ: Սովորաբար այն հաշվարկվում է մեկ տարվա համար հետևյալ բանաձևով.

$$y = \frac{y_1 - y_{t-1}}{y_{t-1}} 100 = \frac{\Delta y_t}{\Delta y_{t-1}} 100\% \ (1)$$

որտեղ y_t-ն իրական ՀՆԱ-ն է, y_{t-1}-ը իրական ՀՆԱ-ն է՝ նախորդ ժամանակաշրջանում:

Տնտեսական աճը դինամիկ ամբողջական ցուցանիշ է և բնութագրում է ազգային տնտեսության իրավիճակը՝ որոշակի ժամանակաշրջանում: Այն ազգային տնտեսության «տնտեսական զարկերակն» է:

Տնտեսական աճի տեմպերը միշտ չէ, որ կարող են լինել դրական: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում, անկախության առաջին տարիներից մինչև 1994 թ. տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի նվազում (տրանսֆորմացիոն անկում): Սակայն սկըսած 1994 թ. մինչև 2000 թ. արձանագրվել է տնտեսական աճ՝ տարեկան 5-6 %-ով, իսկ 2000 թ. մինչև 2008 թ.՝ 10-14 %: 2009 թ. պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, Հայաստանում արձանագրվեց 14,1 % տնտեսական անկում: 2011 թ. կրկին տեղի ունեցավ տնտեսական աճ (2,1 %):

Որպեսզի պատասխանենք այն հարցին, թե ինչն է ընկած տընտեսության զարգացումը բնորոշող այդ կարևոր ցուցանիշի հիմքում, անհրաժեշտ է իրականացնել որոշակի կառուցվածքային և որակական վերլուծություն:

Ինչպես հայտնի է, երկրում ստեղծված տնտեսական բարիքները արտադրության գործոնների՝ աշխատանքի (L), կապիտալի (K) և

հողի ու այլ բնական ռեսուրսների (N) փոխներգործության արդյունք են:

Արտադրության գործոնների ներգործությունն արտադրության իրական ծավալի (ամբողջական արդյունքի) վրա մեկնաբանվում է արտադրական պարզ ֆունկցիայով.

$$y = f(L, K, N) \quad (2):$$

Սակայն արտադրական ֆունկցիան ցույց է տալիս միայն մեկ կամ բոլոր արտադրական գործոնների քանակական ներգործությունը՝ ամբողջական արդյունքի վրա՝ չշոշափելով նրա որակական բնութագիրը: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական աճի դրսևորման երկու եղանակների տարբերությունը: Երբ արտադրության իրական ծավալն աճում է ըստ նրա դաշտի լայնությամբ, այսինքն՝ լրացուցիչ աշխատուժի, կապիտալի և հողի ու բնական ռեսուրսների օգտագործման հաշվին, կոչվում է էքստենսիվ տնտեսական աճ: Էքստենսիվ տնտեսական աճը քանակական ցուցանիշ է և ունի սահմանափակ բնույթ, քանի որ տնտեսական ռեսուրսները սահմանափակ են: Իսկ երբ արտադրության իրական ծավալն աճում է նրա դաշտի խորությամբ՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին, կոչվում է ինտենսիվ տնտեսական աճ: Ինտենսիվ տնտեսական աճը որակական ցուցանիշ է, որի հիմքում ընկած է աշխատանքի արտադրողականությունը (Y/L), կապիտալի արտադրողականությունը (Y/K) և հողային ու այլ բնական ռեսուրսների օգտագործման արտադրողականությունը (Y/N): Այսպիսով, քանի որ տնտեսական ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար ինտենսիվ տնտեսական աճն ավելի արդյունավետ է, քան էքստենսիվ տնտեսական աճը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ինտենսիվ տնտեսական աճի դեպքում տնտեսական ռեսորսների օգտագործումը կարող է մնալ նույնը կամ նույնիսկ նվազել: Օրինակ, արտադրության ավտոմատացումը պայմանավորում է ձեռքի աշխատանքի (աշխատուժի) կրճատում:

Վերլուծությունն ավելի խորացնելու նպատակով ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև ուսումնասիրել տնտեսական աճի տեմպերի վրա ազդող արտադրական գործոնների սահմանային արտադրողականությունը. աշխատանքի սահմանային արտադրողականությունը՝ $\Delta y\Delta l=MP_L$, կապիտալի սահմանային արտադրողականությունը՝ $\Delta y/\Delta k=MP_K$ և բնական ռեսուրսների սահմանային արտադրողականությունը՝ $\Delta y/\Delta N=MP_N$: Այսինքն դրանց միջոցով գնահատել յուրաքանչյուր լրացուցիչ ռեսուրսի լուման ամբողջական արդյունքի մեջ: Ինչքան մեծ է յուրաքանչյուր ռեսուրսի սահմանային արտադրողականությունը, այնքան այլ հավասար պայմաններում ավելի մեծ կլինի այդ ռեսուրսի ներդրման կարողությունն ամբողջական արդյունքում:

Այսպիսով, եթե (1) բանաձևն արտահայտում է էքստենսիվ տընտեսական աճը, ապա ինտենսիվ տնտեսական աճը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

$$y=\Delta y/\Delta l\bullet L+\Delta y/\Delta k\bullet K+\Delta y/\Delta N\bullet N \quad (3):$$

Ինչպես վերը նշվեց ինտենսիվ տնտեսական աճի հիմքում ընկած է աշխատանքի արտադրողականության բարձրացումը: Իսկ ի՞նչ գործոններից է կախված աշխատանքի արտադրողականության բարձրացումը, այդ հարցին պատասխանել է ամերիկյան տնտեսագետ Էդվարդ Դենիսոնը, որն իր պրոֆեսիոնալ գործունեության մեջ զգալի տեղ է հատկացրել տնտեսական աճի վրա ազդող գործոնների ուսումնասիրությանը: Այսպես, Է. Դենիսոնի հաշվարկներով ԱՄՆ-ում արտադրության իրական ծավալի տարեկան միջին աճը 1929-1982 թթ. կազմել է 2,9 %: Ընդ որում, այդ աճի 32 %-ը բաժին է ընկնում աշխատածախսերի աճին, իսկ 68 %-ը աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Դա նախ նշանակում է, որ ԱՄՆ-ում տնտեսությունն առավելապես զարգացել է ինտենսիվ գործոնի գերակայությամբ և երկրորդ, որ աշխատանքի արտադրողականության աճի ամենագլխավոր գործոնը եղել է տեխնիկական առաջադիմությունը՝ 28 %: Համեմատության նկատառումով նշենք, որ աշխատանքի արտադրողականության աճի երկրորդ գործոնը (ըստ մե-

ծության) դա կապիտալի ծախսերի աճն է, որը կազմում է ընդամենը 19 %, իսկ երրորդ գործոնը՝ կրթությունը և պրոֆեսիոնալ պատրաստականությունը՝ 14 %:

Անհրաժեշտ է նաև նշել, որ տեխնիկական առաջադիմության ներգործությունը տնտեսական աճի վրա կատարվել է միջնորդավորված արտադրական գործոնների քանակական և որակական փոփոխությունների միջոցով: Արտադրության մեջ նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրումը նպաստում է կրճատելու աշխատանքի կապիտալի և բնական ռեսուրսների օգտագործման ծավալը՝ կայուն տնտեսական աճի պայմաններում: Դրա պատճառը, ամենից առաջ, դարձել է ռեսուրսների արտադրողականության բարձրացումը և դրանց որակի բարելավումը:

Ավելի երկար ժամանակաշրջանի համար տնտեսական աճի ինտենսիվ գործոն է համարվում գիտատեխնիկական առաջադիմության արագացումը և ծավալումը:

Չնայած գիտատեխնիկական առաջադիմությունը համարվում է տնտեսական աճի արտաքին գործոն, սակայն սխալ կլինի այն դիտարկել տնտեսական համակարգից դուրս: Քանի որ տեխնիկական առաջադիմության ներդրման մակարդակը և ծավալը, որը ներդրվում է արտադրության մեջ, կախված է գիտատեխնիկական առաջադիմության զարգացման աստիճանից և արագությունից: Դրա հետ մեկտեղ կարևոր է նշել, որ գիտատեխնիկական առաջադիմության ներդրումն ազգային տնտեսության մեջ կախված է երկրում առկա ներդրումային ներուժից և ներդրումային քաղաքականությունից: Գիտատեխնիկական առաջադիմության ծավալումը պահանջում է կրթության մակարդակի բարձրացում, գիտահետազոտական աշխատանքների իրականացում, աշխատողների որակավորման մակարդակի բարձրացում և այլն: Այս բոլորը նշանակում է ինվեստիցիաներ մարդկային կապիտալում: Ճիշտ է այն անմիջականորեն չի առարկայանում (մարմնավորվում) տեխնիկական առաջադիմության մեջ, սակայն դա նպաստում է գիտելիքների խորացմանը, արտադրության կազմակերպման և կառավարման մակարդակի բարձ-

ռացմանը, որոնք անմիջականորեն նպաստում են ձեռնարկության, ճյուղի և ամբողջ տնտեսության մեջ թողարկվող արտադրանքի աճին:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը որպես գերակա ուղղություն

Սովորաբար տեղեկատվական տեխնոլոգիաները ներառում են տեղեկատվական սարքավորումները, ծրագրերը, ինչպես նաև տեղեկատվության հավաքման, կուտակման, օգտագործման և փոխանցման միջոցները: Տեղեկատվական ոլորտը կապված է գրեթե բոլոր բնագավառների հետ: Դրա հետ մեկտեղ այն կապիտալատար չէ և ապահովում է բարձր շահութաբերություն:

Հայաստանում այն հիմնականում կապված է հեռուստատեսության ենթակառուցվածքների հետ, մասնավորապես շեշտադրվում է ծրագրավորման ենթաոլորտը:

Վերջին ժամանակաշրջանում զգալի տեղաշարժեր է կատարվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում: Արդեն ակնհայտ է դարձել, որ այն արտադրական գործոնների շարքում ամենաազդեցիկ դերն ունի: Հետևողական քաղաքականության դեպքում նոր, կատարելագործված տեխնոլոգիաների արմատավորումը կնպաստի լուծել ինստիտուցիոնալ վերափոխումների, արտադրական տեխնիկա-տեխնոլոգիական պրոցեսների նորացման, ինչպես նաև այլ բազում սոցիալ-տնտեսական խնդիրներ: Բարձր տեխնոլոգիաների լայն կիրառման շնորհիվ ավելի արագ կարելի է հասնել լուրջ նվաճումների: Նման իրավիճակում փոքր և միջին, և նույնիսկ թույլ զարգացած երկրները կարող են ձեռք բերել զգալի նվաճումներ՝ նույնիսկ համաշխարհային տնտեսության համակարգում: Հայաստանը ևս կարող է լուրջ հաջողություններ ունենալ, քանի որ տնօրինում է զգալի ներուժի:

Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում առաջատար երկրներ են համարվում ԱՄՆ-ն և Ճապոնիան: Այ-

սուհանդերձ, ներկայումս տեղեկատվական համաշխարհային շուկայում լայն մրցակցություն են ծավալել նաև Եվրոմիության երկրները:

Ներկայումս Հայաստանում ևս որոշակի ուշադրություն է դարձվում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: ՀՀ կառավարությանն առնթեր ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման խորհուրդ, ինչպես նաև պետության կողմից ֆինանսավորվում են տարբեր տեղեկատվական կենտրոններ, որոնք նույնպես աջակցում են այս գործին:

Կասկած չկա, որ այս ոլորտի հետագա զարգացումը հանդիսանալու է ազգային տնտեսության զարգացման գործոններից մեկը և կարող է զգալի ազդեցություն թողնել նրա հետագա զարգացման վրա: Բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսության զարգացումը կարող է երկրում ապահովել կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ: Այսօր երկրի գրեթե բոլոր արտադրական ձեռնարկությունները դրա կարիքն ունեն:

Այսօր Հայաստանում գործում են ավելի քան 300 տեղեկատվական տեխնոլոգիայով զբաղվող ընկերություններ, որոնցից մոտ 80-ը մասնագիտացված են ծրագրերի ապահովման բնագավառներում: Այդ ընկերություններից շատերը արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են, որոնք ապահովված են իրացման շուկաներով:

Հայաստանում գործող տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող ծառայությունները ընդգրկում են.

- համակարգչային ծրագրերի ապահովման միջոցների ստեղծումը,
- կապի միջոցների ծրագրավորումը, նախագծումը և արտադրությունը,
- համակարգչային կառուցվածքների ծրագրավորումը և դիզայնը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների հատուկ ծառայությունների մատուցումը,

- քառաչափ գրաֆիկական համակարգիչների նախագծումը և այլն:

Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար առկա են որոշակի մրցակցային առավելություններ.

- ✓ մտավոր և ինժեներական կարողություններ,
- ✓ աշխատավարձի համեմատաբար ցածր մակարդակ,
- ✓ համեմատաբար փոքր ծավալի ներդրումների անհրաժեշտություն, հետևաբար նաև հետգնման կարճ ժամանակահատված,
- ✓ ներքին շուկայի փոքր ծավալի հետևանքով առավելապես արտահանմանն ուղղված գիտատար ոլորտների զարգացում,
- ✓ տեղեկատվական տեխնոլոգիայի ունիվերսալ բնույթով պայմանավորված տնտեսության ավանդական ոլորտներն արդիականացնելու անհրաժեշտություն:

Ներկայումս Հայաստանի ընկերությունների կողմից ծրագրային արտադրանքն արտահանվում է ԱՄՆ, Կանադա, Գերմանիա, Ռուսաստան, Պակիստան, Լիբանան և այլ երկրներ:

4. Գիտության դերն ազգային տնտեսությունում

Գիտությունը նշանակալից դեր է խաղում ազգային տնտեսության զարգացման գործում:

Ազգային տնտեսության զարգացման ռազմավարության մշակման անհրաժեշտությունը կապված է գիտության և գիտական հետազոտությունների հետ երկու ուղղություններով: Առաջին՝ այդ ռազմավարությունը պետք է հաշվի առնի գիտության և գիտական հետազոտությունների դերը տնտեսության ու հասարակության զարգացման համար:

Երկրորդ, որը բխում է առաջին ուղղությունից, չի կարելի մշակել ազգային տնտեսության ռազմավարական ծրագիր առանց գիտության և գիտական հետազոտությունների:

Ըստ էության ազգային տնտեսության ռազմավարության մշակումը մեծագույն գիտահետազոտական գործընթաց է:

Դեռևս Շումպետերը զգուշացնում էր, որ «տնտեսության գիտակցական ապակառուցվածքայնությունը («գիտակցական քայքայումը») նորամուծությունների դիֆուզիայի (անհստակության) արդյունքն է»:[2] Զարգացումը ըստ Շուպերետրի կարծիքի, դա ոչ այլ ինչ է, քան արտադրական գործոնների նոր համակցում է: Իսկ այդ նոր համակցումը հիմնված է նորամուծության վրա: Այլ կերպ ասած արտադրական գործոնների համակցումը հիմնված է գիտության առաջադիմության վրա:

Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ կազմում ուներ զարգացած գիտություն: Հայաստանի Հանրապետությունն առաջնային տեղ էր զբաղեցնում թե՛ գիտության թեկնածուների և դոկտորների և թե՛ արտադրության մեջ զբաղված միջնակարգ ու բարձրագույն կրթությամբ մասնագետների քանակով: Բավականին բարձր էր նաև գիտության աշխատողների աշխատավարձի մակարդակը (375-550 ռուբլի):[3] Ինչպես վերը նշվեց՝ ԽՍՀՄ կազմում բավականին բարձր մակարդակի էր արտադրության մեջ աշխատողների որակավորման մակարդակը: Ցավոք, նրանց մեծ մասն արտագաղթեց, ինչի հետևանքով ընդհատվել է որակյալ աշխատուժի վերարտադրության բնականոն ընթացքը, խաթարվել է աշխատուժի սերնդափոփոխությունը: Արտագաղթի հետևանքով զգալիորեն կրճատվել է երիտասարդության թիվն աշխատաշուկայում: Դրա հետ մեկտեղ արդյունավետ չեն օգտագործվում աշխատանքային առկա ռեսուրսները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր Հայաստանում բարձրագույն կրթությամբ երիտասարդ մասնագետների զգալի մասը զբաղված է իր որակավորումից ցածր աշխատանքներով: Եվ

---

[2] Տես Шумпетер И., Теория экономияеского развития. М., Прогресс, 1982. с. 148.

[3] ԽՍՀՄ-ում 1 ռուբլու գնողունակության մակարդակը մոտ 1.5 անգամ ավելի բարձր էր քան ԱՄՆ 1 դոլարի գնողունակությունը:

հակառակը, կառավարության ոլորտում զբաղվածների մեծ մասը չունի համապատասխան որակավորման մակարդակ:

Այնուամենայնիվ, Հայաստանը դեռևս ունի գիտական հզոր ներուժ, որի հետևողական և արդյունավետ օգտագործումը կարող է նպաստել ոչ միայն գիտահենք արտադրանքի թողարկման ծավալների ընդլայնմանը, այլև տնտեսական աճի բարձր տեմպերի սահմանմանը և աղքատության ու արտագաղթի նվազմանը:

Շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում ազգային տնտեսության զարգացման գործում գիտության և գիտելիքի դերի բարձրացումը (մեծացումը) պահանջում է գիտելիքի ստեղծման, տարածման և կիրառության գործընթացների արդյունավետության բարձրացման նոր մոտեցումներ: Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտում ձևավորված միտումները և կազմակերպական ձևափոխումները պայմանավորել են համալսարանական (բուհական) գիտության դերի նորովի ըմբռնման և դրա զարգացման նոր պարադիգմայի անհրաշետություն: Մասնավորապես, դա վերաբերվում է կրթական քլասթերի ձևավորումը և զարգացումը:

Ըստ որում, տնտեսագիտական գրականության մեջ այն մեկնաբանվում է որպես աշխարհագրորեն մոտ գտնվող, որոշակի ոլորտում գործող և միմյանց փոխլրացնող արտադրողների, մատակարարների, կրթական հաստատությունների և այլ կազմակերպությունների խումբ:

Պրոֆեսոր Մայքլ Պորտերը գտնում է, որ տարածաշրջանային մրցակցությունը և կայուն զարգացումն անհրաժեշտ է գնահատել ոչ թե առանձին կազմակերպությունների համար, այլ քլասթերների՝ տարբեր ոլորտների կազմակերպությունների միավորումների տեսանկյունից, որոնք ունակ են ավելի արդյունավետ օգտագործել ներքին և ներկրած ռեսուրսները:

Ներկայումս Հայաստանում քլասթերերի ստեղծումը ինչպես արդյունաբերության, այնպես էլ կրթական ոլորտներում դեռևս գտնվում է սկզբնական փուլում: Անհրաժեշտ մակարդակով մշակ-

ված չեն կրթական քլասթերների կառուցվածքները, զարգացման հայեցակարգերը և գնահատման չափանիշները:

Զարգացած շուկայական երկրների փորձը ցույց է տալիս, որ գիտության, արտադրության և հասարակության միչև կրթական քլասթերների ստեղծումը նպաստում է ոչ միայն գիտության զարգացմանն, այլև որակյալ մասնագետների պարտաստմանը:

Ժամանակակից պայմաններում կրթության զարգացման հրամայական պահանջ է դարձել նաև գիտության և կրթության ինտեգրումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրումը, կրթական մեթոդաբանության նորացումը նպաստում է ուսանողներին հնարավորություն կտան տիրապետելու ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական: Հայաստանում պետական այրերի մոտ ստեղծվել է սխալ պատկերացում այն մասին իբր թե Հայաստանը փոքր երկիր է և պետք չի զարգացնել հիմնարար գիտությունը:

Սակայն զարգացման տրամաբանությունը ցույց է տալիս, որ հիմնարար և կիրառական գիտությունները չեն հակասում միմյանց, այլ ենթադրում են մեկը մյուսին: Հիմնարար և կիրառական գիտությունները չեն գտնվում այլընտրանքային դիրքերում և դրա համար էլ չկա կամ, կամ, այլ կա և, և:

ԳԼՈՒԽ 4
ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Արդյունաբերական քաղաքականության էությունը և հիմնական գծերը

Արդյունաբերությունը տնտեսության այն ճյուղն է, որտեղ թողարկվում է արտադրության միջոցների և սպառման առարկաների հիմնական մասը: Հետևաբար արդյունաբերության զարգացմամբ է պայմանավորված ինչպես հասարակական արտադրության զարգացումը, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Արդյունաբերությունը տնտեսության առաջատարն է, որոշիչը և դրա զարգացմամբ է բնորոշվում տվյալ երկրի զարգացման մակարդակը:

ԽՍՀՄ կազմում Հայաստանը դարձավ զարգացած արդյունաբերության, առաջավոր գիտության և մշակույթի երկիր: Հայաստանը հիմնականում կենտրոնացավ ծանր արդյունաբերության, հատկապես էներգետիկայի, մեքենաշինության, քիմիական և մետալուրգիայի ոլորտների վրա: Արագ տեմպերով զարգանում էին նաև գունավոր մետաղների և թեթև արդյունաբերությունները: Խորհրդային իշխանության տարիներին ՀՀ արդյունաբերությունը թողարկում էր ազգային արդյունքի կեսից ավելին: Այս ոլորտում էին ընդգրկված հանրապետության աշխատանքային ռեսուրսների զգալի մասը՝ զբաղված բնակչության մոտ 70 տոկոսը և հիմնական արտադրական ֆոնդերի կեսից ավելին: Առանձին տեխնիկատնտեսական ցուցանիշներով Հայաստանն առաջատար դիրքեր էր գրավում ԽՍՀՄ-ում: Զբաղեցնելով ԽՍՀՄ տարածքի 0,13 %-ը և ունենալով բնակչության 1,1 %-ը՝ Հայաստանն նախկին միութենական հանրապետությունների շարքում եթերայուղերի, տուֆաբլոկների արտադրությամբ գրավում էր առաջին տեղը, մոլիբդենային խտանյութի, պղնձարջասպի, շարժական էլեկտրակայանների, ժամացույցների արտադրությամբ՝ երկրորդ տեղը: Մինչև 1988 թ. Հայաստանը թողարկում էր ԽՍՀՄ

տեքստիլ արդյունաբերության 20 տոկոսը: Բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայաստանն առաջ էր անցել կապիտալիստական բազմաթիվ երկրներից: Սակայն Հայաստանի արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ աշխատում էր հումքի ներկրման հաշվին և հիմնականում թողարկում միջանկյալ արտադրանք: Հայաստանի անկախացումից հետո, ԽՍՀՄ նախկին կապերի փլուզման պատճառով կազմալուծվեց արդյունաբերությունը: Սպիտակի երկրաշարժի հետևանքով Հայաստանը կորցրեց իր արդյունաբերական ներուժի 40 տոկոսը: Արդյունաբերության կազմալուծման տեսակետից էական բացասական նշանակություն ունեցավ նաև անկանոն սեփականաշնորհումը, ինչի արդյունքում համատարած կարգով փակվեցին գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները: 1993 թ.-ին 1988 թ.-ի համեմատ արդյունաբերական արտադրանքի թողարկումը ՀՀ-ում կրճատվեց 64 տոկոսով, իսկ ճյուղի տեսակարար կշիռն ազգային եկամտում նվազեց՝ կազմելով շուրջ 31 տոկոս: Արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում շարունակ նվազում էր, այսպես՝ 2008 թվականին ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության արտադրանքը կազմել է ընդհամենը 13.1 %՝ 2007 թվականի 15 %–ի դիմաց: Թեև 2010 թ.-ից սկսած այս ոլորտում նկատվում է առաջընթաց՝ 2012 թ.-ին արդյունաբերության տեսակարար կշիռը կազմեց 17.2 տոկոս: ՀՆԱ-ի կառուցվածքում առաջին տեղում է ծառայությունների մատուցման ոլորտը՝ մոտ 40 տոկոս: Սրանք պաշտոնական վիճակագրության տվյալներն են:

Իհարկե, այս ամենը չի նշանակում, որ նվազել է արդյունաբերության դերը: Այս երևույթը պետք է լինի ժամանակավոր: Արդյունաբերությունը Հայաստանում ավանդաբար եղել է տնտեսության հիմքը: Ուստի արդյունաբերության բնագավառում վարվող տնտեսական քաղաքականությունը վճռական դեր է խաղում տնտեսության կայունացման գործում:

Արդյունաբերական քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված արդյունաբերու-

թյան աճի տեմպերի ավելացմանը, արդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացի կազմակերպմանը և արդյունավետ իրականացմանը, արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ապրանքների արտադրության ծավալների և անվանացանկի ավելացմանը, արդյունաբերության մեջ նյութական և աշխատանքային ռեսուրսների, հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանը, համաշխարհային տնտեսության հետ հայրենական արդյունաբերության սերտաճմանը, մրցակցային դաշտի ձևավորմանը, ներդրումների ներգրավմանը և դրանց պաշտպանությանը, արդյունաբերության մեջ գիտատեխնիկական նվաճումների և արտասահմանյան առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը[4]:

Արդյունաբերության քաղաքականությամբ որոշվում են արդյունաբերության զարգացման ուղղությունները և առաջարկվում այն խնդիրները, որոնք լուծվելու են արդյունաբերության զարգացման ծրագրերը կենսագործելու ընթացքում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է իրականացնել արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական քաղաքականություն՝ շեշտադրելով վերամշակող արդյունաբերության զարգացումը: Հանրապետության արդյունաբերության, հատկապես արտահանման ներուժ ունեցող ճյուղերի և առանձին կազմակերպությունների զարգացումը կարևորվում է նաև այն առումով, որ այն կխթանի արտաքին առևտուրը՝ նախադրյալներ ստեղծելով արտաքին առևտրի դեֆիցիտի կրճատման ուղղությամբ:

Հանրապետության արդյունաբերության ներկա վիճակը բնութագրվում է մի շարք խնդիրներով, որոնք, հիմնականում, ընդհանուր են հանրապետության գրեթե բոլոր արդյունաբերական ճյուղերի համար, որոնցից են՝

- սեփական ֆինանսական միջոցների պակասը և հիմնական ֆոնդերի մաշվածության բարձր աստիճանը,
- ցածր մրցունակությունը,

[4] Տես՝ Հ. Բ.Ղուշչյան, Մակրոտնտեսական կարգավորում, ք. Երևան, 2005թ., էջ 208:

- ներքին շուկայի ոչ լիարժեք պաշտպանվածությունը,
- հիմնականում ներմուծված հումքի վրա արտադրության հիմնվածությունը,
- Հայաստանում արտադրվող հումքային արտադրատեսակների վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայությունը,
- տրանսպորտային բարձր ծախսերը,
- հարկային և մաքսային վարչարարության խնդիրները,
- արդյունաբերության ոլորտում՝ միկրո մակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակասը, տեղեկատվական բազայի բացակայությունը,
- ինչպես ընդհանուր արդյունաբերության, այնպես էլ ոլորտային զարգացման ծրագրերի բացակայությունը,
- ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման համակարգերի բացակայությունը,
- ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ցածր մակարդակը,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակությունը,
- արտադրություն-գիտություն-կրթություն կապի սերտ համագործակցության և հետադարձ թույլ կապը,
- հայկական արտադրատեսակների բրենդի բացակայությունը,
- վարկային միջոցների անմատչելիությունը և այլն:

Հանրապետության արդյունաբերական ճյուղերի զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են իրականացնել համալիր միջոցառումներ, որոնք իրենց մեջ պետք է ընդգրկեն՝

1. **ՀՀ արդյունաբերության զարգացման ծրագրի մշակում, որտեղ զարգացումը ներկայացված կլինի ըստ ճյուղերի**:

2. **Տեղեկատվության մատչելիության ապահովում, ուսումնական ծրագրերի իրականացում և խորհրդատվություն տրամադրում**: Անհրաժեշտ է ԶԼՄ-ների, ցուցահանդեսների, ինտերնետային կայքերի միջոցով հաճախակի լուսաբանել տեղական արտադրանքը,

զարգացման հեռանկարները, ինչպես նաև համապատասխան մասնագերտների ներգրավմամբ՝ ներկայացնել տեղական և ներմուծվող արտադրատեսակների համամեմատական առավելությունները:

3. Արտադրանքի որակի ստուգման և վերահսկման մեխանիզմների բարելավում և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին:

4. Գիտություն–արտադրություն կապի ապահովում:

Հայաստանում տեխնոլոգիաների և ինովացիաների զարգացման նպատակով անհրաժեշտ է վերանայել գիտության և տեխնոլոգիաների զարգացման ծրագրերը, գտնել Հայաստանի համար այդ ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմները և ֆինանսավորման աղբյուրները, սուբսիդիաներ կամ այլ ֆինանսական աջակցություն տրամադրել տեխնոլոգիաների տարածման համար և խթանել ինովացիոն արտադրությունների ստեղծումը: Շատ կարևոր է ունենալ աշխատող մեխանիզմ, որի միջոցով գիտական աշխատանքները կարող են փորձարկվել, գնահատվել և հասնել արտադրություն: Անհրաժեշտ է ձևավորել տեխնոպարկեր և արդյունաբերական պարկեր, որոնք որպես արդյունաբերության զարգացման գործիք ներկայումս մեծ կիրառում ունեն միջազգային պրակտիկայում: Նորարարության խթանման գործում կարևոր է նաև մտավոր սեփականության պահպանության հարցը: ՀՀ-ում 2009 թվականին ընդունվել է Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման հայեցակարգը, որտեղ ներկայացված են մտավոր սեփականության պահպանման ներկայիս առանձնահատկությունները, բացահայտված են առկա խնդիրները և տրվում են դրանց լուծման ուղիները:

5. Ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում:

Արդյունաբերական կազմակերպությունների տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ ոչ բարձր տոկոսադրուքով երկարաժամկետ վարկային միջոցների ձեռքբերման անհրաժեշտություն է առաջանում, որը չի կարող բավարարվել ներկայումս հանրապետությունում գործող բանկային

համակարգի կողմից առաջարկվող պայմաններով: Արդյունաբերական գերակա ճյուղերի զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բանկային համակարգի հետ համատեղ մշակել պայմաններ, որոնք հնարավորություն կտան առևտրային բանկերին հեռանկարային կազմակերպությունների զարգացման ծրագրերի շրջանակներում տրամադրել մատչելի տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր: Որպես արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսավորման գործիքներ անհրաժեշտ է աշխատանքներ կատարել նաև Հայաստանում լիզինգի և ֆակտորինգի զարգացման ուղղությամբ:

6. Ներդրումային միջավայրի բարելավում:

Օտարերկրյա և տեղական ներդրումների հոսքերը մեծացնելու համար անհրաժեշտ է ապահովել բիզնես գործարքների և ներդրումների պատշաճ իրավական պաշտպանության կայուն և կանխատեսելի պայմաններ և բարձրացնել հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը, իրականացնել բարեփոխումներ հարկային և մաքսային համակարգերում, պարզեցնել բիզնեսի գրանցման, փակման և հաշվետվությունների ներկայացման գործընթացները, ներդնել կորպորատիվ կառավարման մշակույթ և այլն:

7. Քլաստերների զարգացման ծրագրերի մշակում:

Քլաստերները մրցակցող և համագործակցող ձեռնարկությունների, մատակարարների, ծառայություններ մատուցող ձեռնարկությունների, հետազոտական ինստիտուտների աշխարհագրական խմբավորումներ են: Քլաստերներն անկախ ընկերությունների և կազմակերպությունների խմբեր են, որոնք մասնագիտացված են կիրառվող ընդհանուր տեխնոլոգիաներով և կապված են հմտություններով, կոնկրետ ոլորտում գիտատար են կամ ավանդական, կարող են լինել կազմակերպչական կամ ոչ կազմակերպչական:[5]

Քլաստերային զարգացմանն ուղղված միջոցառումները միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերից է: Քլաս-

[5] Տես՝ Հ. Բ.Ղուշչյան, Մակրոտնտեսական կարգավորում, ք. Երևան, 2005թ., էջ 211:

տերային ռազմավարությունները կարելի է կիրառել տնտեսության բարձր ներուժով ճյուղերում: Այսպիսի ճյուղերից են ՏՏ/ճարտարագիտական ծառայությունները, զբոսաշրջությունը, առողջապահությունը և սննդի վերամշակումը: Կառավարությունն արդեն իսկ սկսել է նշված ոլորտներից մի քանիսում ռազմավարական ներդրումներ նախաձեռնելու և դրանց աջակցելու գործընթացը (օրինակ՝ «Տաթևի վերածնունդ» և «Միջուկային բժշկություն» ծրագրերը, Գյումրիի տեխնոքաղաք նախագիծը, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի Ազգային գիտական լաբորատորիան, Համաշխարհային բանկի կողմից աջակցություն ստացող տեխնոլոգիական մրցունակության նախագիծը):

Քլաստերային զարգացման շարժիչ ուժը պետք է հանդիսանա մասնավոր հատվածը, սակայն գործուն աջակցություն պետք է ցուցաբերվի պետության կողմից: Պետության դերը կկայանա քլաստերի ստեղծման հնարավորությունների բացահայտման, բարենպաստ գործարար միջավայրի ստեղծման, կազմակերպման և աշխատանքների համակարգման մեջ: Քլաստերների ձևավորումը հնարավորություն կտա բարձրացնել դրանում ներգրավված ընկերությունների մրցունակությունը, գիտություն-արտադրություն կապերի ստեղծումն ու կատարելագործումը:

8. Պետական մարմինների կողմից աջակցություն արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացման, արտահանման ծավալների ավելացման, արդյունաբերական կազմակերպությունների արտաքին համագործակցության, հումք ու նյութերի ներմուծման և արտադրանքի արտահանման հարցերում:

9. Բարձրակարգ մասնագետներով ապահովման նպատակով կադրերի ուսուցման շարունակականության ապահովում:

Առանց կազմակերպությունների անձնակազմի որակավորման կանոնավոր բարձրացման գրեթե անհնար կդառնա նոր արտադրական տեխնոլոգիաների յուրացումն ու արտադրության զարգացումը: Այս ուղղությամբ կարևոր խնդիր է համարվում գործատուների և

աշխատուժի միջև նոր սոցիալական հարաբերությունների մշակումն ու զարգացումը:

2. Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և վերափոխման անհրաժեշտությունը

Արդյունաբերությունը լայն առումով բաժանվում է երկու խոշոր ճյուղերի՝ ծանր և թեթև արդյունաբերություն: Արդյունաբերությունը, մասնավորապես, ընդգրկում է հետևյալ ճյուղերը՝

1. Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն: Բաժանվում է 2 խոշոր ճյուղերի՝ վառելիքային և էներգետիկական:

ա) Վառելիքային արդյունաբերություն: Ընդգրկում է քարածխի, նավթի, գազի, տորֆի և այլն արդյունահանումն ու վերամշակումը: 2000 թ. տվյալներով աշխարհում վառելիքա-տնտեսական օգտագործման կառուցվածքում նավթի տեսակարար կշիռը կազմել է 40 %, բնական գազինը՝ շուրջ 23 %, ածխինը՝ ավելի քան 27 %, միջուկային վառելիքինը՝ 7.3 %:

բ) Էլեկտրաէներգետիկ արդյունաբերություն: Էլեկրտաէներգետիկ արդյունաբերությունը բաժանվում է 2 ենթաճյուղի՝ ջերմաէլեկտրաէներգետիկ և հիդրոէլեկտրաէներգետիկ: Աշխարհում այժմ տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի ավելի քան 80 %-ն արտադրում են ջերմաէլեկտրակայանները: Ջերմաէլեկտրաէներգետիկ արդյունաբերության առավել հեռանկարային ենթաճյուղն ատոմային էլեկրտրաէներգետիկան է: Հայկական ԱԷԿ-ը կառուցվել է Մեծամորում՝ ավելի քան 800 հազ կվտ հզորությամբ: Վերջին տարիներին ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի շուրջ 40 %-ը տվել է Մեծամորի ատոմային էլեկտրոկայանը: ՀՀ տարածքում ձևավորվել են հիդրոէլեկտրակայանների կասկադներ՝ Սևան-Հրազդանի, Որոտանի: Սևան-Հրազդան կասկադն ընդգրկում է 6 ՀԷԿ՝ Սևանի (լճային), Աթաբեկյանի, Գյումուշի, Արզնու, Քանաքեռի և Երևանի: Որոտան գետի վրա կառուցվել է 3 ՀԷԿ՝ Տաթևի, Շամբի ու Սպանդարյանի:

2. **<u>Հանքահումքային և մետալուրգիական:</u>** Բաղկացած է 2 ինքնուրույն ճյուղերից՝ սև մետալուրգիա և գունավոր մետալուրգիա:

ա) **Սև մետալուրգիա:** Սև մետալուրգիան ընդգրկում է երկաթի հանքաքարի, մանգանի ու քրոմի արդյունահանումը, մանրացումը, չուգունի, պողպատի արտադրությունը, սև մետաղների ջարդոնի կրկնակի մշակումը, կոքսի արտադրությունը և այլն:

բ) **Գունավոր մետալուրգիա:** Գունավոր մետաղներից արտադրության և օգտագործման չափերով աշխարհում այժմ առաջին տեղերը զբաղեցնում են պղինձը և ալյումինը:

3. **<u>Մեքենաշինություն:</u>** Զարգացած երկրներում արդյունաբերական արտադրանքի 35-40 %-ը բաժին է ընկնում մեքենաշինությանը: Մեքենաշինությունն ընդգրկում է բազմաթիվ ենթաճյուղեր: Դրանցից առավել կարևոր են՝ հաստոցաշինությունը, ծանր մեքենաշինությունը, տրանսպորտային մեքենաշինությունը, տրակտորաշինությունն ու գյուղատնտեսական մեքենաշինությունը և այլն:

4. **<u>Քիմիական արդյունաբերություն:</u>** Քիմիական արդյունաբերությունը ծանր արդյունաբերության առավել բարդ կառուցվածք ունեցող, արագ աճող և խոշոր դեր խաղացող ճյուղերից է: Քիմիական արդյունաբերության կառուցվածքը գնալով բարդանում է, հանդես են գալիս նոր ենթաճյուղեր: Այն ընդգրկում է հանքային պարարտանյութերի, ռետինատեխնիկական իրերի, ավտոդողերի, սինթետիկ կաուչուկի, քիմիական թելերի, լաքերի ու ներկերի, պլաստմասների ու պոլիմերային իրերի, տարբեր տեսակի թթուների, դեղանյութերի արտադրությունը և այլն:

5. **<u>Շինանյութերի արդյունաբերություն:</u>** Շինանյութերի արդյունաբերության կառուցվածքի մեջ մտնող ենթաճյուղերից առավել կարևորներն են կապակցող նյութերի, ծածկանյութերի ու ազբեստացեմենտե իրերի, լցանյութերի, ապակու, երեսապատման նյութերի, ազբեստի արտադրությունները:

6. **<u>Անտառային, փայտամշակման ու թղթի – ցելյուլոզի արդյունաբերություն:</u>** Ըստ արտադրական պրոցեսների ընդհանրության,

ծանր արդյունաբերության այս ճյուղը բաժանվում է 2 ենթաճյուղի՝ անտառային, փայտամշակման և թղթի – ցելյուլոզի արդյունաբերություն:

7. **Թեթև արդյունաբերություն:** Թեթև արդյունաբերությունն ընդգրկում է մի շարք բնագավառներ, որոնք հիմնականում թողարկում են բնակչության համար լայն սպառման ատադրանք: Խոշոր կտրրվածքով թեթև արդյունաբերությունը բաժանվում է 2 ճյուղերի՝ տեքստիլ արդյունաբերություն և կաշվե կոշկեղենի արդյունաբերություն:

8. **Տեքստիլ արդյունաբերությունը** ընդգրկում է բոլոր տեսակի գործվածքների՝ բամբակյա, բրդյա, վուշե, մետաքսյա, արհեստական, սինթետիկ ու արհեստական թելերից ստացվող այլ իրերի արտադրությունը:

9. **Կաշվե կոշկեղենի արդյունաբերության:**

10. **Սննդամթերքի արդյունաբերություն:** Սննդամթերքի արդյունաբերությունն այն ճյուղն է, որը բնակչությանը մատակարարում է կենսական նշանակություն ունեցող սնունդ: Նրա կազմի մեջ են մտնում ալրաղացային, հացաբուլկեղենի, մակարոնի, հրուշակեղենի, մսի ու երշիկեղենի, պահածոների, կաթի ու պանրի, յուղի, սպիրտի- օղու, գինու- կոնյակի, գարեջրի, ոչ ալկահոլային խմիչքների, շաքարի, թեյի, վիտամինների ու այլ արտադրաճյուղերը:

Հայաստանի Հանրապետությունը բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր է, որտեղ ներկայացված են այնպիսի հիմնական ոլորտներ, ինչպիսիք են՝ սննդարդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, հանքահումքային և մետաղագործական, քիմիական, բիոտեխնոլոգիական և դեղագործական, մեքենաշինական, սարքաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերություն, ոսկերչություն և ակնագործություն, շինանյութերի արտադրություն:

2011 թ. հանրապետության արդյունաբերության ոլորտի թվով 2648 կազմակերպություններում աշխատել զբաղվածների ընդհանուր թվաքանակի մոտ 7.5 %-ը: Դոլարային արտահայտությամբ

2010 թ.-ին Հայաստանի արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալը կազմել է 2206 միլ. դոլար, կամ բնակչության մեկ շնչին տարեկան միջինը 676 դոլար:

Արդյունաբերական արտադրանքի 81.6 տոկոսն ապահովվում է ի հաշիվ հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության (վերամշակող արդյունաբերություն):

Վերամշակող արդյունաբերությունում գերակշռում են սննդամթերքի արդյունաբերությունը (37 տոկոս), հիմնային մետաղների արտադրությունը (24.9 տոկոս), խմիչքների արտադրությունը (13.2 տոկոս): Զարգանում է նաև դեղագործությունը, հագուստի արտադրությունը, ոսկերչությունը և այլն: Կարելի է հետևություն անել, որ հանքարդյունաբերության նշանակությունը Հայաստանի համար ապագայում ևս կմեծանա:

Գծապատկեր 1

Մշակող արդյունաբերության կառուցվածքը 2011 թվականին տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ[6]



1 սննդամթերքի արտադրություն,
2 խմիչքների արտադրություն,
3 ծխախոտային արտադրատեսակների արտադրություն,
4 մանածագործական և կարի արտադրություն,
5 հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերատադրում,

[6] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011թ., էջ 292:

6 քիմիական արդյունաբերություն,
7 ռետինե և պլասմասե արտադրատեսակների արտադրություն,
8 ոչ այլ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն,
9 հիմնային մետաղների արտադրություն,
10 պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն,
11 համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրություն,
12 էլեկտրական սարքավորումների արտադրություն,
13 մեքենաների և սարքավորումների արտադրություն,
14 գործունեության այլ տեսակներ:

Ըստ մարզերի արդյունաբերական արտադրանքի թողարկման առաջատարներն են Երևանը, Սյունիքի և Կոտայքի մարզերը: Արդյունաբերական արտադրանքի մոտ կեսը՝ 42.4 տոկոսը, արտադրվում է Երևանում, 17.8 տոկոսը՝ Սյունիքի մարզում, 10.5 տոկոսը՝ Կոտայքի մարզում:

ՀՀ արդյունաբերության զարգացման գործում պետության գլխավոր խնդիրը կառուցվածքային փոփոխությունների օպտիմալ քաղաքականության մշակումը և իրականացումն է, որն անմիջական ազդեցություն կունենա արդյունաբերական ճյուղային կառուցվածքի վրա: Բանն այն է, որ Հայաստանի ներքին շուկան փոքր է և չի կարող ժամանակակից բոլոր արտադրությունների հիմք հանդիսանալ, իսկ ներմուծման փոխարինումը սեփական արտադրությամբ կարող է կիրառվել սահմանափակ ոլորտներում: Ուստի արտահանման խթանումը դառնում է արդյունաբերության զարգացման կարևորագույն պայման: Հայաստանի նման փոքր շուկա ունեցող երկրի համար արտահանումը տնտեսական զարգացման համար կարևոր գործոն է, քանի որ հնարավորություն է տալիս հասնելու տնտեսապես շահավետ ծավալների և զարգացնել այն ճյուղերը, որտեղ երկիրն ավելի մրցունակ է:

ՀՀ արտահանման կառուցվածքում գերակշռում է արդյունաբերական արտադրանքը, սակայն այդ կառուցվածքը բացարձակապես դիվերսիֆիկացված չէ: Արտահանման կառուցվածքում բացառապես գերակշռում են չմշակված թանկարժեք քարերը և հումքը: Արտադրողականության և մրցունակության խթանումը հնարավոր է

բարձր ավելացված արժեքով ապրանքների ու ծառայությունների միջոցով: Այդ իսկ պատճառով ռեսուրսային կախվածության կայուն աճը, այն է՝ 2007 թվականի 61 տոկոսից 65 տոկոս՝ 2008 թվականին, ապա 73 տոկոս՝ 2009 թվականին, վկայում են Հայաստանի արտահանման ճյուղերում ավելացված բարձր արժեքի ստեղծման սահմանափակության մասին, ինչը մտահոգությունների տեղիք է տալիս: Ռեսուրսատար վարքագծից ձերբազատվելու նպատակադրման ներքո տեխնոլոգիաների ներմուծումից պետք է անցում կատարել տեխնոլոգիապես հասուն արդյունաբերության, որը հիմք կհանդիսանա գլոբալ զարգացումներին համընթաց՝ երկրում գիտելիքահենք տնտեսության մրցունակության բարձրացմանը: Հայաստանն ինդուստրիալ ուղղվածություն ունեցող երկիր դարձնելու քաղաքականությունը պահանջում է ժամանակակից մոդելների, ինովացիոն արդյունքի կիրառման համակարգերի ներդրում՝ արդի, մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում արդյունաբերական արտադրանքի պահանջարկի կտրուկ անկման հետևանքով, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում նկատվեց անկում արդյունաբերական ճյուղերում: Որոշ արտադրություններ կրճատվեցին կամ փակվեցին, որն իր ուղղակի բացասական ազդեցությունն ունեցավ բնակչության սոցիալական վիճակի վրա: 2009 թվականը չափազանց ծանր տարի է եղել նաև Հայաստանի արտահանման համար: Արտահանման ծավալները 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են ավելի քան 40 տոկոսով: Թեև արդեն 2010 թվականի հունվարին արտահանման ծավալներն աճել են 58.5 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ և շարունակել են աճել ամեն ամիս: 2008 թվականից ի վեր Հայաստանի խոշոր առևտրային գործընկերները չեն փոխվել: 2012 թվականին արտահանման 47.3 տոկոսը կատարվել է Եվրամիության անդամ երկրների հետ, իսկ 20 տոկոսը՝ ԱՊՀ երկրների հետ:

Հայաստանն ունի այնպիսի բնական ռեսուրսներ, որոնք կենսական նշանակություն ունեն արտահանման համար: Հանքարդյունաբերության ոլորտն, օրինակ, սրընթաց աճ է արձանագրել վերջին տարիներին ընդլայնված կարողությունների և արտահանման գրավիչ գների շնորհիվ: Աշխարհը թևակոխել է բնական ռեսուրսների բարձր գների նոր ժամանակաշրջան, ինչին նպաստել է Չինաստանում և Հնդկաստանում բնական ռեսուրսների նկատմամբ զանգվածային պահանջարկը: Այնուհանդերձ, Հայաստանը չունի ռեսուրսների շատ մեծ պաշար և, մեծ հաշվով, չի կարող հույս դնել այդպիսի հեռանկարի վրա: Այս առումով բնական ռեսուրսները կնպաստեն բարեկեցությանը՝ բարձր ավելացված արժեքով ապրանքների ստեղծման և արտադրողականության մեծացման միջոցով:

Հանքարդյունաբերության ոլորտից բացի Հայաստանն ունի նաև նշանակալի ռեսուրսներ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության համար: Ինչևէ, ներկայումս էներգիայի մեծ մասն արտադրվում է Ռուսաստանի Դաշնությունից ներկրվող վառելիքի, այդ թվում՝ գազի և միջուկային վառելիքի օգտագործմամբ: Ռազմավարական տեսանկյունից Հայաստանի էներգետիկայի ոլորտն ունի արտահանման մեծ ներուժ, ինչի մասին է վկայում ատոմակայանի նոր բլոկի կառուցման ծրագիրը, որի արտադրած էլեկտրաէներգիան նախատեսվում է արտահանել Իրան և Վրաստան:

Համային և որակական բարձր հատկանիշների շնորհիվ, սնընդարդյունաբերության ճյուղում արտահանման զգալի ներուժ ունեն ոգելից և ոչ ոգելից խմիչքները, ներառյալ՝ հանքային և խմելու ջրերը, պտղի, բանջարեղենի մշակված ու պահածոյացված արտադրանքը, ծխախոտը, կաթնամթերքը, մսամթերքը:

ԳԼՈՒԽ 5
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Ագրարային քաղաքականության էությունը և հիմնական գծերը

Գյուղատնտեսությունը համարվում է ՀՀ տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: Գյուղատնտեսությունը ոչ միայն ստեղծում է հանրապետության պարենային անվտանգության հիմքերը, արտադրում անհրաժեշտ պարենամթերք, թեթև ու սննդի արդյունաբերության համար հումք, այլև դրա հիմնական գործառույթներից է գյուղական տարածքների զարգացումը, գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ավելացումը, ազգային նկարագրի և ավանդույթների պահպանումը, բնապահպանությունը, լանդշաֆտների, սահմանամերձ գյուղերի պահպանությունը և այլն:

Գյուղատնտեսությունն բաժանվում է երկու խոշոր ճյուղերի՝ բուսաբուծություն և անասնապահություն:

Երկրի համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում 2006-2010 թթ. միջին տվյալներով ճյուղին բաժին է ընկել 17,2 տոկոսը, իսկ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության հետ՝ շուրջ 22,0 տոկոսը: 2012 թ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 19 տոկոս: Ընդ որում, արտադրանքի մոտ 58 տոկոսն ապահովվում է ի հաշիվ բուսաբուծության և 42 տոկոսը՝ ի հաշիվ անասնապահության:

Ագրարային ոլորտի բարեփոխումները և սեփականաշնորհումը չտվեցին այն արդյունքները, որոնք ակնկալվում էին: Հայաստանի գյուղատնտեսությունը դարձավ հանրապետության տնտեսական համակարգի ամենախոցելի և բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներից մեկը: Հայաստանն առաջինն էր ԱՊՀ երկրներից, որ սեփականաշնորհեց գյուղատնտեսական նշանակման հողերը, սակայն այս գործընթացին անմիջապես չհաջորդեց գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգի մասնավորեցումը, նոր

շուկայական ենթակառուցվածքների ձևավորումը, ինչը զգալիորեն իջեցրեց ագրոարդյունաբերական համալիրի տնտեսական արդյունավետությունը և ձևավորեց անբարենպաստ սոցիալ-տնտեսական պայմաններ գուղատնտեսության զարգացման համար: Հողերի սեփականաշնորհումը հանգեցրեց հողերի խիստ մասնատվածությանը և ցաքուցրիվ տեղաբաշխմանը: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց փոքր չափերով, արտադրանքի իրացման հստակ մեխանիզմների բացակայության, բնակչության ցածր գնողունակության հետևանքով վերածվեցին մանր բնամթերային տընտեսությունների, կրճատվեցին վերարտադրողական կարողությունները և լուրջ խոչընդոտներ ստեղծվեցին գյուղատնտեսական արտադրանքի նյութատեխնիկական մատակարարումների բնագավառում: Այսպես գյուղատնտեսության համար առավել բարենպաստ պայմաններ ունեցող Արարատի մարզի ավելի քան 100 գյուղացիական տնտեսություններում անցկացված հարցման արդյունքները վկայում են, որ հարցման մասնակիցների 90-93 %-ը դժվարություններ ունի մթերքի իրացման գործընթացում:

Իրականացված ագրարային բարեփոխումների շրջանակներում սեփականաշնորհվեցին նաև գյուղատնտեսական տեխնիկան և արտադրության այլ միջոցները, որոնք հիմնականում բաժին ընկան դրանք սպասարկողներին և շահագործողներին: Գյուղատնտեսական տեխնիկան ֆիզիկապես և բարոյապես մաշված է՝ շահագործվող տրակտորների 94.4 տոկոսն օգտագործվում է 10 տարուց ավելի: Բացի դրանից, տնտեսության փոքր չափերի պայմաններում սեփական տեխնիկա ունենալը ոչ միշտ է տնտեսապես նպատակահարմար:

Այս ամենը կարևորում է արդյունավետ ագրարային քաղաքականության իրականացումը: Ագրարային հատվածի հիմնախնդիրներն առաջնային և գերակա համարելը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունից:

Ագրարային քաղաքականությունը երկրի կառավարության միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի ավելացմանը, գյուղացիական տնտեսությունների գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ծավալների ավելացմանը, ցանքատարածությունների կառուցվածքի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների կարևորագույն տեսակների գծով երկրի ներքին պահանջարկի բավարարմանը, ներքին և արտաքին շուկաներում գյուղմթերքների մրցունակության բարձրացմանը, գյուղատնտեսության մեջ նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև հիմնական ֆոնդերի արդյունավետ օգտագործմանը, գիտատեխնիկական նվաճումների և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլն[7]:

Ագրարային քաղաքականության նպատակներից է նաև.

1. Գյուղական աղքատության հաղթահարում և բնակչության արտահոսքի կրճատում, գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության ընդլայնում:

2. Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի բարելավում:

3. Շրջակա միջավայրի վրա գյուղատնտեսության բացասական ազդեցության նվազեցում:

4. Գյուղատնտեսության հարկային և վարկային համակարգի բարելավում:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար պետության օժանդակությամբ ագրարային քաղաքականության շրջանակներում պետք է իրականացվեն մի շարք գործառույթներ և լուծվեն հետևյալ խնդիրները.

1. Ագրարային բարեփոխումների իրականացում, շուկայական ենթակառուցվածքների զարգացում և տնտեսավարման ձևերի կատարելագործում:

[7] Տես՝ Հ. Բ.Ղուշչյան, Մակրոտնտեսական կարգավորում, ք. Երևան, 2005թ., էջ 229:

2. Պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդի անվտանգության ապահովում: Երկիրը համապատասխանում է պարենային ապահովության չափանիշներին, եթե արտադրում է իր բնակչության սպառած մթերքի 80 %-ը: ԱՊՀ երկրներից և ոչ մեկը, այդ թվում Հայաստանը, չեն բավարարում այդ չափանիշը:

3. Տեղական գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում և ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների տեղական արտադրությամբ փոխարինում:

4. Գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում:

5. Բուսաբուծության զարգացում:

6. Անասնաբուծության զարգացում:

7. Գյուղատնտեսական հումքի վերամշակում.

- ոլորտի զարգացում և վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում,

- առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում,

- մարքետինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացման խթանում:

8. Գյուղատնտեսության սպասարկող և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում:

9. Ագրարային ոլորտի հարկային և վարկային համակարգի բարելավում.

- սուբսիդավորման համակարգի անցման մեխանիզմների մշակում,

- գյուղատնտեսության վարկավորման մեխանիզմների կատարելագործում և մատչելիության մակարդակի բարձրացում:

10. Ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում:

11. Գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում՝ գյուղատնտեսության համատարած հաշվառման ծրագրի,

գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների իրավական կարգավիճակի և իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության մշակման միջոցառումների իրականացում:

Ագրարային քաղաքականության հիմքում պետք է դրվեն նաև գյուղատնտեսական զարգացման առանձնահատկությունները:

2. ՀՀ գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները: Ագրոարդյունաբերական համալիր:

Արդյունավետ ագրարային քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսությանը բնորոշ առանձնահատկությունները:

Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից մեկը գյուղատնտեսական նշանակության հողերի[8] սահմանափակությունն է, հատկապես քիչ են լավագույն հողատարածությունները: Երկրի ընդհանուր տարածքի ընդամենը 46,6 տոկոսն է, որ կարելի է օգտագործել գյուղատնտեսական նպատակներով: Իսկ այդ տարածքի 90 տոկոսը ծովի մակերևույթից ավելի քան 1000մ բարձրություն ունի: Հայաստանն ունի եզակի ուղղաձիգ գոտիականություն, որը հատուկ է լեռնային երկրներին: Երկիրը հայտնի է հողատեսքերի բազմազանությամբ:

[8] Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար օգտագործվող հողերն են: Դրանց կազմի մեջ են մտնում մշտական մշակաբույսերի /բազմամյա տնկարկների/ տակ գտնվող հողերը, վարելահողերը, խոտհարքները, արոտավայրերը և այլ հողերը:

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ տեսակների[9]

	2009 թ.	2010 թ.	2011 թ.
Ընդհանուր մակերեսը 1000 հա, որից՝	2974.3	2974.3	2974.3
Գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում՝	2120.3	2100.9	2077.0
Վարելահող	449.4	448.5	449.2
Բազմամյա տնկարկ	32.6	32.9	33.0
Խոտհարք	127.3	127.1	128.3
Արոտ	1116.6	1104.3	1067.2
Այլ հողեր	394.4	388.1	399.3
Գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ %			
Գյուղատնտեսական նշանակության հողեր թվում՝	100	100	100
Վարելահող	21.2	21.3	21.6
Բազմամյա տնկարկ	1.5	1.6	1.6
Խոտհարք	6.0	6.0	6.2
Արոտ	52.7	52.6	51.4
Այլ հողեր	18.6	18.5	19.2

Միաժամանակ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, վարելահողերի մոտ 38 տոկոսը նպատակային չի օգտագործվում, զգալիորեն նվազել են գյուղատնտեսական մշակաբույսերի տարածքները: Գյուղացիական տնտեսությունները սովորաբար օգտագործում են իրենց սեփականաշնորհված հողատարածքների 45-55 տոկոսը: Չօգտագործվող հողերի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Արմավիրի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում,

[9] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012թ., էջ 290:

իսկ ամենացածր ցուցանիշը՝ Շիրակում և Վայոց Ձորում[10]: Ոռոգման տեսակետից հողերի օգտագործման էական դժվարություններ են առաջացել, բացակայում են ոռոգման ջրով ապահովելու հատուկ համակարգերը: Այսպես հանրապետության 232.9 հազար հա ոռոգելի հողատարածքներից այսօր փաստացի ոռոգվում է ընդամենը 156 հազար հա հողատարածք: Հրատապ է դարձել էռոզիայի՝ վտանգավոր և ողողամաշված գյուղատնտեսական հողերի, ծանր մետաղներով աղտոտվածության հիմնախնդիրը: Առանձին մարզերում և տարածաշրջաններում էրոզիայի պատճառով վնասվել են ընդհանուր հողատարածքի մոտ 50 տոկոսը: Հատկապես մտահոգիչ է էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության բավական փոքր ծավալները:

Անհրաժեշտ է ոչ միայն նպատակային օգտագործել լավագույն գյուղատնտեսական տարածքները, այլ օգտագործել վատ և շատ վատ տարածքները: Հողի սահմանափակությունը պահանջում է այս ճյուղի զարգացումն ապահովել ինտենսիվ եղականով, հետևաբար ագրարային քաղաքականությունը մշակելիս պետք է նկատի ունենալ, որ ներդրված միջոցներից ստացվող արդյունքները կարող են նաև ուշ ստացվել և համեմատաբար փոքր լինել:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունն իհարկե պայմանավորված է նաև բնակլիմայական պայմաններով: Բնական պայմանների տարբերությունների պատճառով հանրապետության շատ շրջաններում տարբեր են ինչպես հողի պտղաբերությունը, այնպես էլ բերքի ստացման ժամկետները: Լինում են բերրի և ոչ բերրի տարիներ: Բնակլիմայական առանձնահատկություններով է պայմանավորված նաև գյուղատնտեսության արտադրության սեզոնային բնույթը: Գյուղատնտեսական արտադրանքն հիմնականում արտադրվում է տարվա 2-րդ և 3-րդ եռամսյակներում, բայց դրա պահանջարկը գոյություն ունի ողջ տարվա ընթացքում:

---

[10] Տե՛ս՝ Հ. Լ. Սարգսյան, Խ. Մ. Հարությունյան, Վ. Գ. Մանասյան, Ագրարային հատվածի և գյուղի կայուն զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան, 2011թ., էջ 16:

Գյուղատնտեսական արտադրության առանձնահատկություններից նաև այն, որ գյուղացիական տնտեսությունները փոքր են և հիմնականում կազմավորված են գյուղական մեկ ընտանիքի սահմաններում: 2011 թ.-ին գյուղատնտեսական արտադրանքի 97 %-ը ապահովվում էր ի հաշիվ բնակչության տնտեսությունների և միայն 3 %-ը ի հաշիվ առևտրային տնտեսությունների[11]:

Ներկայումս ՀՀ-ում մեկ գյուղացիական տնտեսությանը միջինում բաժին է ընկնում է 1-1.4 հա հողատարածք, այդ թվում 1.1 հա վարելահող, 0.12 հա բազմամյա տնկարկներ և 0.2 հա խոտհարքներ: Տարեկան թողարկվում է մոտ 4000 ԱՄՆ դոլարին համարժեք արտադրանք: Ակնհայտ է, որ նման պայմաններում չի կարող իրականացվել արդյունավետ տնտեսավարում և կիրառվել առաջադիմական տեխնիկա և տեխնոլոգիա: Այն դեպքում, երբ եվրոպական ֆերմերը տարեկան միջինում «կերակրում է» 100-150 քաղաքացու, հայաստանյան գյուղացին չի կարողանում ապահովել անգամ իր սեփական կարիքները: Լուրջ խոչընդոտներ են ստեղծվել գյուղատընտեսական արտադրության մեքենայացման և քիմիացման հարցում:

Զարգացած երկրներում գյուղական բնակչության 4-5 %-ը կարողանում է ոչ միայն ապահովել տվյալ երկրի բնակչության պահանջը պարենի նկատմամբ, այլև արտահանել զգալի քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք: ԱՄՆ-ի ֆերմերները, որոնք կազմում են բնակչության շուրջ 3 %-ը կարողանում են գյուղմթերքով ապահովել 2 մլրդ. մարդու: Ընդ որում, ժամանակին համընթաց այդ երկրներում նվազում է գյուղական բնակչության թիվը, և համապատասխանաբար մեծանում է քաղաքային բնակչությունը, առաջիկայում այս միտումը, ըստ մասնագետների, կշարունակվի: Ինչպես աշխարհի մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս նկատվել է գյուղական բնակչության նվազում՝ (2012 թ.-ին՝ ընդհանուր բնակչության 36.0 %), բայց ի տարբերություն աշխարհի մյուս, այդ թվում անցումային տնտեսությամբ երկրների, գյուղատնտեսությունում զբաղվածներն ունեն բավական մեծ տեսա-

[11] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 292:

կարար կշիռ: Այսպես 2011 թ.-ին գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում զբաղվածների թիվը կազմում է ընդհանուր զբաղվածների 38.9 տոկոսը[12]:

Ակնհայտ է, որ գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել գյուղացիական տնտեսությունների խոշորացում, իրականացնելով ճկուն վարկային և հարկային քաղաքականություն:

Ագրոարդյունաբերական ոլորտի կայուն զարգացումը շատ կարևոր է, քանի որ դրանից կախված զարգանում են նաև երկրի գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղերը՝ բուսաբուծությունը և անասնաբուծությունը:

Հայաստանում ավանդաբար զարգացած էին գինեգործությունը, մրգի և բանջարեղենի պահածոների, ծխախոտի, մսի և կաթի վերամշակման, ոչ ոգելից խմիչքների և գարեջրի արտադրությունը: Մասնավորեցումից հետո խիստ սահմանափակ թվով գործարաններ ենթարկվեցին վերազինման, որոնք թողարկում են ներքին ու արտաքին շուկայում մրցունակ արտադրանք:

Ներկայում ագրովերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններով աշխատել գյուղացիական տնտեսությունների հետ, ինչը երաշխիք է գյուղատնտեսական արտադրանքի և հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրության ծավալների ավելացման գործում: Եթե ընդամենը 8-10 տարի առաջ աշխատում էին գյուղատնտեսական հումք վերամշակող ընդամեն 7 պահածոների, 12 գինեգործության և կաթի ու մսի վերամշակման մի քանի ընկերություն, ապա այսօր գործում են վերագործարկված կամ նոր ստեղծված շուրջ 35 պահածոների, 43 գինեգործական, ավելի քան 275 կաթի, 75 մսի և 4 ծխախոտի վերամշակման ընկերություններ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերամշակող ընկերությունների կողմից տարեցտարի (բացառու-

[12] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 61:

թյամբ 2008-2009 թթ.) մեծանում են խաղողի, պտուղների ու բանջարեղենի գնումների ծավալները:

Անվիճելի է, որ ՀՀ ազգաբնակչության պարենային անվտանգության ապահովման գլխավոր երաշխիքը ագրոարդյունաբերական համալիրի հետագա զարգացումն է, որին պետք է նպատակաուղղել ոլորտի ներդրումային քաղաքականությունը և պետական կարգավորման մյուս լծակները: Ագրոպարենային ոլորտում կոոպերացիայի տարբեր ձևերի, միավորումների, ընկերակցությունների ստեղծումը և զարգացումն անհրաժեշտություն է, այն պետք է հռչակել պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Գյուղատնտեսությունում ծառացած խնդիրների և առաջնահերթությունների գնահատման արդյունքում ՀՀ կառավարության կողմից մշակված հիմնական գերակայությունները 3-ն են՝

1. Եվրամիության պահանջներին համապատասխան սննդամթերքի անվտանգության օրենսդրական փոփոխությունների իրականացում և ընթացակարգերի սահմանում:
2. Գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում:
3. Հայաստանի Հանրապետության համայնքներին գյուղատընտեսական տեխնիկայի մատակարարման մեխանիզմների կատարելագործում:

Նշվածներից բացի կարևոր են նաև մի շարք ծրագրեր, որոնք նպատակաուղղվում են գյուղատնտեսությունում օգտագործվող կարևորագույն ռեսուրսների մատչելիության բարձրացմանը և դրանց օգտագործման ծավալների ավելացմանը: Այսպես՝ ավելի քան 20 արտասահմանյան երկրների հետ կնքվել են ագրոպարենային բնագավառում համագործակցության համաձայնագրեր: Համագործակցություն է ծավալվել ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Նիդեռլանդների Թագավորության, Չինաստանի հետ, որոնք շարունակում են ֆինանսավորել հանրապետությունում իրականացվող տարբեր դրամաշնորհային ծրագրեր:

ԳԼՈՒԽ 6
ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԵՎ ԿԱՊԸ, ՇԻՆԱՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Տրանսպորտը և կապը

Տրանսպորտը և կապը էական նշանակություն ունեն երկրի տնտեսության զարգացման գործում: Տրանսպորտի միջոցով իրականացվում են բեռնափոխադրումներ, ուղևորափոխադրումներ, մատուցվում ծառայություններ բնակչությանը, ապահովվում արտաքին տնտեսական կապերը: Եթե տրանսպորտը փոխադրում է բեռներ և ուղևորներ, ապա կապը՝ տեղեկատվություն, լինի դա փոստային, թե հեռուստառադիոհաղորդագրություն կամ ինտերնետ ծառայություններ: Կապի արտադրանքը դրսևորվում է որոշակի ծառայությունների ձևով, որի մի մասը սպասարկում է տնտեսությանը, իսկ մյուս մասը բնակչությանը: Տնտեսության մեջ ունեցած դերով և առանձնահատկություններով պայմանավորված՝ տրասնպորտն և կապը փոխադարձ կապված են տնտեսության բոլոր ճյուղերի հետ: Տրանսպորտն և կապը նպաստում են արտադրողական ուժերի արդյունավետ տեղաբաշխմանը, մասնագիտացման և կոոպերացման մակարդակների բարձրացմանը, տարբեր մարզերի և շրջանների տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցմանը:

ՀՀ տրանսպորտային համակարգը ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, խողովակաշարային տրանսպորտի տեսակները:

Լինելով ցամաքային երկիր՝ Հայաստանի տնտեսությունը, մեծապես պայմանավորված է տրանսպորտային ծախսերից և միջսահմանային հաղորդակցումից: Ինչևէ, Հայաստանի դիրքը լուրջ խնդիր է հարուցում տրանսպորտի ոլորտի համար: Բաց են միջազգային սահմաններից միայն երկուսը՝ հյուսիսում Վրաստանի և հարավում Իրանի հետ: Ադրբեջանի հետ արևելյան սահմանը փակվել է

1991 թ.-ից, իսկ Թուրքիայի հետ արևմտյան սահմանը՝ 1993 թվականին: Փակ սահմանների հետևանքով էապես աճում են տրանսպորտային ծախսերը, կրճատվում միջազգային առևտրի հնարավորությունները, սահմանափակվում տեղական բեռնափոխադրումների ոլորտի զարգացումը, խաթարվում նյութատեխնիկական մատակարարման ոլորտի հեռանկարները և նվազում երկաթուղու դերը: Հետևաբար՝ կարևորվում է սևծովյան նավահանգիստների մատչելիության ապահովումը: Բացի ՀՆԱ-ի աճի և Հայաստանի առևտրային պակասուրդը կրճատելու օգուտներից՝ սահմաններին առնչվող խնդիրների լուծումը կարող է նաև խթանել ուղղակի օտարերկրյա ներդրումները ազգային տնտեսությունում:

Մեկ այլ հիմնախնդիր է Հայաստանի խիստ մայրցամաքային կլիման՝ ձմեռային շրջանի շատ ցածր ջերմաստիճաններով և ձնառատ տեղումներով, որոնք սահմանափակում են տնտեսական գործունեությունը:

Դրա հետ մեկտեղ ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով ենթակառուցվածքները ենթարկվել են արագ քայքայման: Արդյունքում 2011 թվականի Գլոբալ մրցունակության ինդեքսի համաձայն Հայաստանի ենթակառուցվածքները 139 պետությունների շարքում զբաղեցնում են 77-րդ տեղը: Գնահատված բաղադրիչներով Հայաստանի ճանապարհները եղել են 92-րդը, երկաթուղային ենթակառուցվածքները՝ 69-րդը, իսկ օդային տրանսպորտի ենթակառուցվածքները՝ 74-րդը:

Տրասնպորտի առանձին տեսակներով կատարվող ուղևորափոխադրումների մեջ ՀՀ-ում գերակշռում է ավտոմոբիլային տրանսպորտը: Այսպես 2011 թ.-ին բեռնափոխադրումների 50.9 տոկոսը կատարվել է ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով, 33.6՝ երկաթուղային տրանսպորտի միջոցով, 0.1 տոկոսը՝ օդային տրանսպորտի միջոցով և 15.4 տոկոսը՝ մայրուղային խողովակաշարային տրանսպորտի միջոցով:

Ճանապարհային ցանցը ծառայում է որպես երկրի տնտեսական զարգացման ողնաշար՝ կապ ապահովելով երկրի ներսում,

հարևան պետությունների և Ասիայի ու Եվրոպայի մայրցամաքների հետ: Այնուհանդերձ տեղական ճանապարհների մոտ 61 %-ը պահանջում է անհապաղ արդիականացում: Թեպետ ճանապարհների կապիտալ վերանորոգման համար կատարվող բյուջետային հատկացումները զգալիորեն չեն ավելացել, կառավարությունը փոխհատուցում է պակասուրդն արտաքին աղբյուրներից կատարվող փոխառությունների միջոցով: 2008-2010 թվականներին ճանապարհների հիմնանորոգման համար փոխառու միջոցներով կատարված ներդրումների գումարը կազմել է մոտ 100 միլիոն դոլար:

Հայաստանի երկաթուղային ցանցը վճռորոշ դերակատարում ունի ուղևորների և բեռների փոխադրումներն ապահովելու գործում: Երկաթուղային համակարգը սպասարկում է բեռնափոխադրումների խոշոր ծավալներ և, այդ պատճառով, հանդիսանում կարևորագույն դերակատար Հայաստանի նյութատեխնիկական ապահովման գործում: Համակարգն ընդգրկում է նաև մետրոպոլիտենի համակարգը, որը սպասարկում է մայրաքաղաքի ուղևորներին:

ԽՍՀՄ ժամանակաշրջանում երկաթուղին տրանսպորտի հիմնական միջոց էր: Համակարգը նախագծված էր փոխադրումների մեծ ծավալներ և, որոշ դեպքերում, հեռավոր շրջաններ սպասարկելու համար: Ավելին, հաշվի չառնելով ճանապարհային տրանսպորտի հետ մրցակցությունը՝ նախկին Խորհրդային Միությունը 1960-ականներից գրեթե չէր արդիականացնել երկաթուղային տեխնոլոգիաները: Ենթակառուցվածքները և շարժակազմը հին են, իսկ էլեկտրական լոկոմոտիվների մեծ մասը շուրջ 35 տարվա է և վերանորոգման կամ փոխարինման կարիք է զգում:

Ներկայումս երկաթուղային համակարգն ապահովում է Հայաստանի ներմուծման և արտահանման մոտ 70 %-ը, սակայն նախկինում ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների ծավալները եղել են շատ ավելի մեծ: 1991 թվականի անկախությունից հետո երկաթուղային համակարգի գործառնությունները կրճատվել են 10-ն անգամ, ներկայումս երկաթուղու 732 կմ ցանցից լիարժեք շահագործվում է 370 կմ: Համաշխարհային բանկի միջոցներով վերա-

կանգնվել է երկաթգծի 72 կմ, սակայն վերականգնման կարիք ունի ևս 107 կմ-ը: Երկաթուղային համակարգը փոխադրում է ավելի մեծ ծավալի միջազգային, քան տեղական բեռներ: Երկաթուղային բոլոր բեռնափոխադրումների գրեթե 65 %-ը միջազգային փոխադրումներն են, որոնց 45 %-ը կազմում է ներմուծումը, իսկ տեղական բեռնափոխադրումների ծավալն աննշան գերազանցել է 35 %-ը: Երկաթուղով փոխադրված հիմնական ապրանքատեսակներն են եղել (ըստ նվազող հաջորդականության) հացահատիկը, նավթը և նավթամթերքը, ցեմենտը, քիմիական և հանքային պարարտանյութերը: Ռուսական երկաթուղիների մասնաճյուղ հանդիսացող Հարավկովկասյան երկաթուղին (նախկին Հայկական երկաթուղին) սկսեց գործել 2008 թվականի հունիսից: Երկաթուղու կոնցեսիան ուժի մեջ մտավ անմիջապես համաշխարհային ճգնաժամի սկզբին:

Հայաստանն ունի երեք հիմնական օդանավակայաններ՝ Զվարթնոցը, Շիրակը և Էրեբունին: Զվարթնոց (կամ Երևանի) միջազգային օդանավակայանը երկրի հիմնական դարպասն է: Ներկայումս, մասնավոր հատվածի 173 միլիոն դոլար ներդրման շնորհիվ օդանավակայանը կարող է սպասարկել մոտ 3.2 միլիոն ուղևոր՝ ընթացիկ 1.8 միլիոն ուղևորի փոխարեն:

Վերջին տասնամյակում կապը և տեղեկատվական տեխնոլոգիաները զգալի զարգացում են ապրել: Այս միտումը կշարունակվի՝ Հայաստանին ընձեռելով տրանսպորտի ոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և նյութատեխնիկական ապահովումը բարելավելու հնարավորություններ:

Հայաստանը անդամակցում է ԱՊՀ Կապի բնագավառում տարածաշրջանային համագործակցության և Հեռահաղորդակցության միջազգային միություններին, ինչպես նաև համարվում է Համաշխարհային փոստային միության (UPU) անդամ: Կապի բնագավառում գործում են՝ «Օրանժ Արմենիա», «ՎիվաՍել-ՄՏՍ», «ԱրմենՏել», «Ucom» և «Ռոստելեկոմ» ընկերությունները:

Հայաստանի աշխարհագրական և տնտեսական առանձնահատկությունները պահանջում են, որպեսզի մշակվի տրանսպորտի

և կապի ազգային ռազմավարություն: Այն պետք է ձևավորի արդյունավետ և մրցունակ տրանսպորտային համակարգ, որը կընդգրկի այնպիսի տրանսպորտային ծառայություններ, նյութատեխնիկական ապահովում, ենթակառուցվածքներ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կնպաստեն տնտեսական աճին և կխթանեն միջազգային տնտեսական համագործակցությունը: Կապի բնագավառում անհրաժեշտ է կատարելագործել և զարգացնել գոյություն ունեցող կապի միջոցները, ներդնել կապի նորագույն տեխնիկա, մեքենայացնել և ավտոմատացնել կապի արտադրական գործընթացները:

Տրանսպորտի ոլորտի մարտահրավերներն են՝

- ճանապարհային ցանցի ամբողջական վերականգնումը,
- միջազգային երկաթուղային և ճանապարհային ենթակառուցվածքների արդիականացումը,
- քաղաքային տրանսպորտի հիմնախնդիրների հաղթահարումը, մասնավորապես՝ մասնավոր և հասարակական տրանսպորտի միջև կայուն հավասարակշռության ապահովումը,
- երկաթուղու կոնցեսիայի հաջող իրականացումը,
- օդային ծառայությունների հետագա զարգացումը,
- տրանսպորտային աճող պահանջարկի բացասական ազդեցության նվազեցումը,
- տրանսպորտային ակտիվների, մասնավորապես՝ ճանապարհային ցանցի կառավարման ոլորտում երկարաժամկետ կայունության ապահովումը:

Տրանսպորտի ազգային ռազմավարություն ձևավորելիս մեկ այլ կարևոր նկատառում է գլոբալ շրջակա միջավայրը: Այս առումով, քաղաքային տրանսպորտի կայուն ռազմավարություններին զուգահեռ, ազգային տրանսպորտային շրջանակում պետք է ընդգրկել ցածր ածխածնային հատկանիշերով տրանսպորտային համակարգի ապահովման հարցը: Դիմագրավելով Կովկասի շրջանում տարածաշրջանային տրանսպորտի ոլորտում իրար հետ մրցակցող հնարավորություններին՝ Հայաստանը պետք է զարգացնի իր տարած-

քով անցնող տարանցիկ երթուղիները, որոնք կապահովեն ավելի կարճ հաղորդակցություններ և ավելի արագ ծառայություններ: Առկա երկաթուղային ենթակառուցվածքների արդիականացումն այս ռազմավարության կարևորագույն մասն է:

Տնտեսական աճին ու միջազգային համագործակցությանն աջակցելուց բացի, Հայաստանի տրանսպորտային համակարգի բարելավումը կապահովի մարդկանց արդյունավետ փոխադրումը հասարակական տրանսպորտով, հատկապես՝ քաղաքային բնակավայրերում:

2. Շինարարության զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում

Տնտեսության իրական հատվածի ճյուղերի համակարգում առանձնահատուկ նշանակություն ունի շինարարությունը: Այն իր զարգացման աստիճանով անհրաժեշտ պայմաններ է ստեղծում արտադրության բոլոր ճյուղերի զարգացման համար, նպաստում է դրանցում տեխնիկական առաջադիմության արմատավորմանը, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և բնակչության սոցիալական պայմանների բարելավմանը: Շինարարությունն անմիջականորեն կապված է նյութական արտադրության բոլոր ճյուղերի հետ և ապահովում է տնտեսության ընդլայնված վերարտադրությունը:

Շինարարության ծավալում ընդգրկվում են բոլոր ոլորտներում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, առևտուր և այլ) իրականացվող շինարարական աշխատանքները:

ՀՀ անցումային շրջանի սկզբնական փուլում շինարարությունը կտրուկ անկում ապրեց, անավարտ մնացին թե՛ արտադրական, թե՛ ոչ արտադրական բնույթի բազմաթիվ շինարարական կառույցներ: Ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով շինարարական աշխատանքներն իրականացվում էին անչափ դանդաղ, նույնիսկ աղետի գոտում: Վիճակը ինչ ոչ չափով բարելավվեց 2000 թվական-

ներին, ընդ որում՝ փոխվեցին նաև շինարարության ֆինանսավորման աղբյուրները. եթե մինչև անկախացումը շինարարության միջոցների 70 տոկոսը հատկացվում էր պետական բյուջեից, ապա ներկայումս ընդհամենը 17.2 տոկոսը: 2000-ականների ընթացքում, հիմնականում, Հայաստանում հաստատուն կերպով աճում էր կենտրոնացումը շինարարության և գյուղատնտեսության ոլորտների վրա: Մինչև 2008 թվականը շինարարությունը կազմում էր ՀՆԱ-ի 28 տոկոսը, իսկ շինարարությունն ու գյուղատնտեսությունը միասին՝ ՀՆԱ-ի 46 տոկոս: 2006-2008 թվականներին շինարարության ճյուղը միջին հաշվով ապահովում էր շուրջ 22 տոկոս իրական աճ: Այսինքն, այն հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2009 թվականին նույնչափ մեծ արագությամբ տնտեսության այս ճյուղը զահավիժեց՝ արձանագրելով 42.3 տոկոս իրական անկում:

Գծապատկեր 1

Շինարարության ծավալները տոկոսներով 2005 թ.-ի նկատմամբ:[13]



Հայաստանի համար անշարժ գույքի ոլորտն ավանդաբար եղել է տնտեսական ցնցումների նկատմամբ առավել զգայուն: Ակնհայտ է, որ Հայաստանը ճգնաժամային փուլ մտավ՝ մեծապես կախված լինելով խոցելի ոլորտներից: Տնտեսության կառուցվածքում շինարարության ոլորտի այդպիսի մեծ մասնաբաժինն ազդում է կայու-

[13] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 327:

նության վրա: Նախ՝ Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի արտադրողականությունը ցածր է շինարարության ոլորտի արտադրողականությունից, Հայաստանի շինարարության ոլորտում մեկ շնչին բաժին ընկնող համախառն ավելացված արժեքը մոտ 4.5 անգամ գերազանցել է այն մակարդակը, որը հատուկ է մեկ շնչին բաժին ընկնող ընդհանուր համախառն ավելացված արժեքի նմանատիպ մակարդակ ունեցող երկրներին (օրինակ՝ Վրաստան, Բոսնիա-Հերցեգովինա): Երկրորդ՝ այն, որ շինարարությունը շարունակում է մնալ Հայաստանի ամենաբարձր արտադրողականությամբ ոլորտներից մեկը, պայմանավորված է երկրի տնտեսության մյուս ճյուղերի արտադրողականության ավելի ցածր մակարդակով: Այդ իսկ պատճառով հրատապ խնդիր է ներդրողների համար մյուս ճյուղերն ավելի գրավիչ դարձնելը՝ արտադրողականության աճը խթանելու և տնտեսությունը հավասարակշռելու համար:

2009 թ.-ին Ֆինանսատանտեսական ճգնաժամի արդյունքում Հայաստանում ՀՆԱ-ն կրճատվեց 14.8 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Այս անկման 75 տոկոսը տեղի է ունեցել շինարարության հաշվին (42.3 տոկոս անկում): Շինանարության անկայուն զարգացումները ցնցումներ են առաջացնում ընդհանուր տնտեսության մեջ, որոնք էլ վտանգում են երկարաժամկետ աճը:

Ճգնաժամի հետևանքներն օգնեցին որոշակի հավասարակշռություն վերահաստատել տնտեսության մեջ: 2010 թվականին ճյուղի զարգացումը նորից ընկավ հունի մեջ, թեև անկումն այս ճյուղում շարունակվում է մինչև օրս՝ շինարարության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է ընդամենը 12.2 տոկոս:

2011 թ.-ին ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված շինարարության կառուցվածքում գերակշռում են կազմակերպությունների միջոցները՝ 49.9 տոկոս, բնակչության միջոցները կազմել են 15.3 տոկոս, օտարերկրյա միջոցները՝ 13.5 տոկոս:[14] Շինարարության կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի ևս որոշակի փո-

[14] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 312:

փոխության է ենթարկվել: Եթե նախորդ տարիներին գերակշռող էին անշարժ գույքի հետ կապված գործառնություններին ուղղվող միջոցները, ապա 2010 թվականից սկսած նկատելի է, որ նշված ենթաճյուղին ուղղվող միջոցների մասնաբաժինը կրճատվել է և դրա փոխարեն աճում են տնտեսության մյուս ճյուղերին, հատկապես էներգետիկային, տրանսպորտին ու կապին ուղղվող միջոցները:

Չնայած վերը նշված դրական կառուցվածքային տեղաշարժերի, շինարարության միջոցներն ըստ ճյուղերի շարունակվում է հիմնականում ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործունեությանը՝ 22.4 տոկոս: Էլեկտրականության, գազի, ջրի մատակարարման ճյուղին ուղղվում են շինարարության միջոցների՝ 11.1 տոկոս, մշակող արդյունաբերությանը՝ 4.8 տոկոս, տրանսպորտի ճյուղին՝ 10.6 տոկոս, տեղեկատվության և կապի ճյուղին՝ 18.6 տոկոս: [15]:

ՀՀ շինարարության քաղաքականությունը պետք է ընդգրկի հետևյալ խնդիրների լուծումները՝ բարձրացնել ներդրումների տընտեսական արդյունավետությունը, երկրի արտադրական ներուժի աճն ապահովել ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության պահանջներին համապատասխան, շինարարությունն իրականացնել առավել առաջադիմական մեթոդներով և տեխնիկայով, կատարելագործել շինարարական աշխատանքների եղանակները, շինարարական միջոցներն անշարժ գույքի հետ կապված գործունեությունից ուղղել դեպի այլ ոլորտներ և այլն:

3. ՀՀ զբոսաշրջության զարգացման առանձնահատկությունները

ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում գերակշռում է ծառայությունների մատուցման ոլորտը: Այս ճյուղը տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկն է: 2012 թ.-ին այն ապահովել է ՀՆԱ-ի շուրջ 40 տոկոսը:

[15] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012, էջ 315:

Ծառայությունների զարգացման բնագավառում կարևորվում է զբոսաշրջությունը: Այն այնպիսի ոլորտ է, որը միաժամանակ ազդում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա և կրում դրանց ազդեցությունը: Այսօր զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ոչ միայն ամենամեծ, այլև ամենաարագ զարգացող ճյուղն է, որի զարգացման տեմպերը գրեթե կրկնակի գերազանցում են մյուս ճյուղերի զարգացման տեմպերին: Միջազգային զբոսաշրջությունը տնտեսության երեք ամենամեծ արտահանող ճյուղերի շարքում է, ի թիվս նավթարդյունաբերության և մեքենայաշինության: Եվ հենց տնտեսական շահույթն է զբոսաշրջության շարժիչ ուժը:

Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը նպաստող նախադրյալների թվին են դասվում.

ա) Բուժառողջարանային հարուստ ռեսուրսները, որոնցից ներկայումս փաստացի օգտագործվում է միայն 3-4 %-ը: Առողջարանային զբոսաշրջության համար կան առողջարանային բազմաթիվ գոտիներ՝ Ջերմուկ, Արզնի, Հանքավան, Աղվերան, Արզական, Բջնի, Սոլակ, Ստեփանավան և այլն, հանքային բազմատեսակ ջրերով ու ձևավորված յուրօրինակ ավանդույթներով:

բ) Պատմամշակութային բազմաթիվ հուշարձանների առկայությունը, ավելի քան 4000 տարվա հարուստ պատմություն, յուրօրինակ մշակույթ՝ ճարտարապետություն, գրականություն, երգարվեստ, պարարվեստ, կիրառական արվեստներ, պատմության և մշակույթի կոթողներ, ավելի քան 24000 պատմամշակութային բազմազան հուշարձաններ: Պատմամշակութային և բնության հուշարձաններից երեքը համաշխարհային մշակույթի գանձերի (UNESCO) ցուցակում են՝ Հաղպատ-Սանահինը, Գեղարդավանքն ու Ազատ գետի հովիտը, Էջմիածինը Զվարթնոց տաճարի հետ:

գ) Սփյուռքի առկայությունը և ՀՀ-ի հետ փոխադարձ կապերի ակտիվացումը:

դ) Զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացման ներուժը:

Հայաստանը յուրօրինակ ձմեռային զբոսաշրջային ծառայություններ առաջարկելու զգալի ռեսուրսների է տիրապետում՝ բնակ-

լիմայական պայմաններ, Ծաղկաձոր, Ջերմուկ, Արագած, Աղվերան: Ծաղկաձորում և Ջերմուկում գործում են միջազգային չափանիշներին համապատասխանող ճոպանուղիներ:

ե) Ինքնատիպ բնություն, բնակլիմայական բարենպաստ պայմաններ: Լեռնային յուրօրինակ այս երկրում բնակլիմայական տարբեր գոտիները հերթագայում են միմյանց:

Բացի այդ, աշխարհում առաջին քրիստոնյա պետություն, առաքելական եկեղեցու բնօրրան և Նոյյան տապանի հանգրվան համարվելը Հայաստանը դարձնում է եզակի զբոսաշրջավայր:

Զբոսաշրջության զարգացումը կարող է էական ազդեցություն ունենալ ՀՀ տնտեսության և տարածքային զարգացման վրա՝ դրամական հոսքերի միջոցով: Այն կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, ենթակառուցվածքների բարելավվմանը, այսինքն՝ կկառուցվեն ու կվերանորոգվեն հյուրանոցներ, ճանապարհներ, այգիներ, սննդի ու զվարճանքի վայրեր և այլն: Զբոսաշրջության բարգավաճումը մեր երկրում մեծապես կարող է նպաստել նաև մեր երկրի ինտեգրմանը միջազգային քաղաքական, հասարակական և տնտեսական կառույցներին:

Չնայած Հայաստանում վերջին տարիներին արձանագրված զբոսաշրջության զարգացման միտումներին, այնոամենայնիվ, Հայաստանը ներկայումս համաշխարհային զբոսաշրջային ուղղությունների շարքում չէ: Հայաստանն ունի համաշխարհային շուկայում որպես զբոսաշրջային ուղղություն պատշաճ կերպով դիրքորոշվելու կարիք: Սա իր հերթին պահանջում է զբոսաշրջային ռեսուրսների պատշաճ և մանրամասն գնահատում, համաշխարհային շուկայում պահանջարկի և հայկական զբոսաշրջային առաջարկի վերանայում:

Բացառությամբ Հայաստանի համայնքներում ձևավորված մի քանի զբոսաշրջային ենթակառուցվածքների, հյուրանոցային տնտեսության օբյեկտների ու զվարճանքի վայրերի, զվարճանքի օբյեկտների մեծամասնությունը կենտրոնացած է Երևանում: Ներկայում զբոսաշրջությունից ծագած եկամուտների շատ փոքր մասն են փո-

խանցվում մարզեր, չնայած գյուղական համայնքներում առկա է զբոսաշրջային գործունեության զարգացման և ծավալման մեծ ներուժ: Հայաստանի զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների մասնագիտական որակը, հմտություններն ու գիտելիքը միջազգային ընդունված ստանդարտներից ցածր են: Անհրաժեշտ է մշակել զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիր, ներառյալ զբաղվածության հնարավորությունների բարելավումը և մարդկային ռեսուրսների վերապատրաստումը: Կարևոր խնդիր է նաև շրջակա միջավայրի աղտոտվածությունը, աղտոտման աղբյուրների տեղակայումը և դրանց հետ կապված՝ աղտոտման ու արտակարգ իրավիճակների վտանգը: Անհրաժեշտ է ձևավորել ու զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները, բարելավել ծառայությունների որակը: Ներդրումների խրախուսման համար անհրաժեշտ է բարեփոխումներ իրականացնել իրավական դաշտում, մաքսային համակարգում, երկարաժամկետ բիզնես-վարկերի համակարգերում: Ոլորտի զարգացման ներկա միտումների վրա հիմնվելով՝ ՀՀ Կառավարությունը մշակել է զբոսաշրջության զարգացման հայեցակարգ (2007-2030 թթ.), ըստ որի՝ նպատակադրվում է 2030 թվականին զբոսաշրջիկների քանակը հասցնել 4.5մլն-ի (3մլն միջազգային և 1.5մլն ներքին զբոսաշրջիկներ):

ԳԼՈՒԽ 7
ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Անցումային ժամանակաշրջանի բովանդակությունը և հիմնական գծերը

Անցումային տնտեսությունն իր բնույթով տնտեսության էվոլյուցիայի (աստիճանական զարգացման) հատուկ կարգավիճակ է, որը գործում է մեկ համակարգից (պլանային) մյուսին (շուկայական) անցման, մեկ պատմական աստիճանից մյուսին անցման ընթացքում: Ընդ որում այն հանդես է գալիս որպես հասարակության զարգացման «միջանկյալ» կարգավիճակ ու շրջադարձային տնտեսական, քաղաքական ու սոցիալական վերափոխումների ժամանակաշրջան:

Անցումային տնտեսությունն ունի իր հիմնական գծերը, օրինաչափությունները և առանձնահատկությունները, որոնք ազգային տնտեսության առջև որոշակի խնդիրներ են առաջ քաշում, դրանք ուսումնասիրելու, բացահայտելու և լուսաբանելու ուղղությամբ՝ միաժամանակ կատարելով տնտեսական ընդհանրացումներ: Անցումային տնտեսության տեսության հիմնադրույթն առաջին հերթին պետք է պատասխանի այն հարցին, թե որն է դրա տեղը ընդհանուր տնտեսագիտության մեջ: Այս տեսակետից անցումային տնտեսության հիմնադրույթները տնտեսագիտական գրականության մեջ արծարծվել են բազմազան ձևերով: Առաջին անգամ դրանք կապված են եղել ազգարային հասարակարգից անցում ինդուստրիալ հասարակարգին: Այնուհետև անցումը կապիտալիզմից սոցիալիզմին (մարքսային ուսմունի): Վերջապես, ներկայումս, երբ տեղի է ունենում անցումը սոցիալզմից շուկայական տնտեսությանը: Հետևաբար, ժամանակակից անցումային տնտեսության ուսումնասիրությունը դարձել է արդիական և օբյեկտիվ անհրաժեշտություն: Նոր շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման խնդիրների

միաժամանակյա լուծումը պահանջում է նպատակաուղղված, գիտականորեն հիմնավորված տնտեսական քաղաքականություն: Ազգային տնտեսության ժամանակակից մոդելի ստեղծումը ենթադրում է համապատասխան նպատակ և տրամաբանական անցում նախկին պլանային տնտեսությունից նոր շուկայական տնտեսությանը:

Անցումային տնտեսության վերլուծությունը պետք է հիմնվի տնտեսական օրենքների, օրինաչափությունների և մեթոդաբանական մի շարք նախադրյալների վրա:

Նախ զարգացման վերլուծությունը պետք է հենվի ոչ թե առանձին երկրի, այլ ողջ համաշխարհային համակցության վրա, ոչ թե առանձին կոնկրետ պատմական ժամանակաշրջանի, այլ հասարակության զարգացման ողջ ընթացքի վրա: Երկրորդ՝ հետազոտությունների ուղղվածությունը ոչ թե անցումային տնտեսության գործընթացի ինչ-որ կոնկրետ պատմական պահի նկարագրություն է, այլ առաջին հերթին ընդհանուր գծերի և օրինաչափությունների բացահայտումը: Երրորդ՝ ընդհանուրի և յուրահատուկի վերլուծության միասնության ապահովում, որը կարևոր է օգտագործել յուրաքանչյուր երկրի համար եզրակացության հասնելու համար: Չորրորդ՝ տնտեսությունը դիտարկվում է որպես անցումային, որտեղ կարևոր նշանակություն ունի հին կապերի և տարրերի «մահացումը» և նորերի առաջացումն ու զարգացումը:

Անցումային տնտեսության տեսության օբյեկտը պետք է դիտարկել տնտեսագիտության տեսության շրջանակներում, մասնավորապես, կապված նրա պատմական բնույթի հետ: Այս իմաստով անցումային տնտեսության տեսության ծագումը և զարգացումն արտահայտում է ժամանակակից փուլի օբյեկտիվ պահանջները:

Անցումային տնտեսության տեսությունը ներառում է զարգացման մի քանի փուլեր: Առաջին՝ նոր տեսությունը դրսևորվում է որպես «հակապատկեր» նախորդի նկատմամբ, երկրորդ՝ նոր տեսությունը զարգանում և տնտեսական կյանքում զբաղեցնում է առաջնակարգ տեղ, քանի որ հենց այն կարող նպաստել լուծելու ծագած արդիական խնդիրները: Երրորդ՝ իր զարգացման ընթացքում, նոր

տեսությունը հասնելով «պիկին» ինտեգրվում է տնտեսագիտության տեսության մեջ՝ դառնալով նրա բաղկացուցիչ մասը: Հետևաբար՝ անցումային տնտեսության տեսությունն ուսումնասիրում է շուկայական հարաբերությունների անցման տնտեսական հարաբերությունները:

Անցումային տնտեսության հիմնական գծերը զգալիորեն պայմանավորված են տվյալ ժամանակաշրջանի փոփոխությունների բնույթով: Ըստ Սեն-Սիմոնի այդ փոփոխությունները զարգացման բնույթի փոփոխություններ են:

Անցումային տնտեսության առաջին բնորոշ գիծը անկայունությունն է, որը արտահայտվում է տրանսֆորմացիոն անկումով, գործազրկության և ինֆլյացիայի բարձր մակարդակով: Անկայունությունը ոչ միայն ունի ժամանակավոր բնույթ, այլև փորձում է վերադարձնել տվյալ համակարգն իր հավասարակշռված կայուն վիճակին: Դրանք կոչված են ուժեղացնելու գոյություն ունեցող համակարգի անկայունությունը, բայց այնպես, որ արդյունքում այն աստիճանաբար իր տեղը զիջի մյուս սկզբնական փուլում դեռևս թույլ նոր տնտեսական համակարգին: Երկրորդ բնորոշ գիծը, որը բխում է առաջինից, անցումային տնտեսության զարգացման այլընտրանքային բնույթն է: Անշուշտ այլընտրանքայնությունն ունի որոշակի սահման, բայց բոլոր դեպքերում դա նշանակում է, որ անցումային տնտեսության զարգացման արդյունքները կարող են լինել տարբերակային: Այն բխում է անցումային տնտեսության բնույթից, ուր զուգորդվում են հին և նոր կարգավիճակների տարրերը, ինչպես նաև նոր առաջացած բազմաթիվ գործոններից (նույնիսկ նեգատիվ), որոնք ազդում են անցման շրջանի տնտեսության զարգացման գործոնների վրա: Երրորդ բնորոշ գիծը, յուրահատուկ անցումային տնտեսաձևերի առաջացումն ու գործունեությունն է: Այստեղ նույնպես առկա է հնի և նորի «խառնուրդը» տվյալ ժամանակաշրջանում: Անցումային ձևը ներառելով «խառը» բովանդակություն, արդեն արտահայտում է հակասություն և ծառայում է որպես ինքնատիպ ազդանշան նախկին համակարգի «մահացման» մասին: Չորրորդ բնորոշ գիծն անցումային տնտեսությանը յուրահատուկ հակասական

բնույթն է: Այդ հակասությունը ոչ թե գործունեության, այլ զարգացման հակասություն է: Սակայն սոցիալ քաղաքական առումով, անցումային ժամանակաշրջանը հաճախակի ուղղեկցվում է հակասությունների կտրուկ սրումով և հեղափոխություններով: Հինգերորդ բնորոշ գիծն անցումային տնտեսության պատմական բնույթն է: Այն կախված է երկու հանգամանքներից. առաջին՝ անցումային տնտեսության պայմաններն ունեն պատմական բնույթ և երկրորդ՝ անցումային տնտեության պատմական բնույթը կախված է տվյալ տարածաշրջանի և առանձին երկրի յուրահատկությունից: Օրինակ, ոչ համանուն անցումային գործընթացներ տեղի ունեցան արևմտյան և արևելյան քաղաքակրթություններում:

Ինչ վեաբերվում է նորմալ վերարտադրության գործընթացին, ապա ի տարբերություն կայուն զարգացող տնտեսությունների, անցումային ժամանակաշրջանում որպես վերարտադրության ընդհանուր առանձնահատկություն կարելի է առանձնացնել. առաջին՝ վերարտադրության իներտայնությունը և երկրորդ՝ այդ գործընթացում տնտեսավարման նոր ձևերի ու հարաբերությունների զարգացման ինտեսիվությունը: Ի տարբերություն վերարտադրության իներտայնությանը, որը դեռևս ենթադրում էր հին տնտեսական ձևերի ու կառուցվածքի հարատև պահպանում, վերարտադրության նոր ձևերի և հարաբերությունների ինտեսիվ զարգացումն առաջնակարգ պլան է մղում զարգացման մեկ աստիճանից՝ մյուսին անցման գործիքակազմի ստեղծումը: Այն նպատակաուղղված է ճշգրտորեն որոշելու զարգացման միտումները և բացահայտելու այնպիսի արդյունավետ ձևեր, որոնք պատկանելու են ապագային:

2. Տնեսական և սոցիալական վերափոխումներն անցումային տնտեսությունում

Անցումը պլանայինից շուկայական տնտեսությանը պահանջում է արմատական կառուցվածքային վերափոխումներ. արտադրական, տեխնոլոգիական, ճյուղային, տարածքային, կառավարչական, կազմակերպչական, սոցիալական և այլն: Անցումային ժամա-

նակաշրջանի հիմնախնդիրները պետք է հանդիսանան կառուցվածքային անհարթությունների և համամասնությունների վերացումները, որոնք ժառանգություն են մնացել պլանային համակարգից:

Տնտեսական վերափոխումների իրականացման ռազմավարությունը ներառում է երկու հիմնական ուղղություններ. առաջինը՝ հակաինֆլյացիոն միջոցառումների մշակումը և իրականացնումն է, երկրորդը՝ սեփականատիրական հարաբերությունների արմատական վերափոխման ճանապարհով կազմակերպչակառուցվածքային խառը բարեփոխումների իրականացնումը:

Անցումային տնտեսության առաջին փուլում պլանային տնտեսությանը յուրահատուկ ճնշող ինֆլյացիան վերաճվել էր բաց ինֆլյացիայի: Գների ազատականացնումն էլ իր հերթին նպաստեց ինֆլյացիայի խորացմանը: Նման իրավիճակում հակաինֆլյացիոն քաղաքականությունը դարձել էր օբյեկտիվ անհրաժեշտություն: Հակաինֆլյացիոն քաղաքականության իրականացումը նպատկաուղղված էր շուկայական ֆինանսական հավասարակշռության սահմանմանը:

Հայաստանում հակաինֆլյացիոն քաղաքականությունը փաստորեն սկսվեց կիրառվել ռուբլու գոտուց դուրս գալուց հետո (1993 թ.), որը շարունակվում է մինչև օրս: Ինֆլյացիայի մակարդակի իջեցումը և շուկայի հավասարակշռության սահմանումը նպաստում է նաև բյուջեի դեֆիցիտի կրճատմանը: Տնտեսական վերափոխումների իրականացման երկրորդ կարևոր ուղղությունը հանդիսացավ սեփականության ձևերի արմատական վերափոխումների հետևանքով կազմակերպչակառուցվածքային բարեփոխումների իրականացումը:

Ցանկացած երկիր, որը ձեռնամուխ է լինում շուկայական հարաբերությունների ձևավորմանը, առաջին հերթին անհրաժեշտություն է առաջանում լայնամասշտաբ մասանավորեցման գործընթացի իրականացմանը: Մասանավորեցման (սեփականաշնորհման) իրականացման համար անհրաժեշտաբար պետք է ապահովվեն որոշակի պայմաններ: Փորձը ցույց է տալիս, որ պետական ձեռնար-

կությունների մասնավորեցման բնագավառում արդյունավետ քաղաքականություն կիրառելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ կազմակերպչական միջոցառումներ.

- օրենսդրական դաշտի ստեղծում,
- կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- հասարակական կարծիքի ձևավորում,
- ձեռնարկությունների համակարգված վերակառուցում,
- կազմակերպչաիրավական վերակառուցում,
- ֆինանսական համակարգի վերակառուցում,
- արժեթղթերի շուկայի ստեղծում և այլն:

Ձեռնարկությունների մասնավորեցման ամենակարևոր խնդիրներից մեկն այն է, որպեսզի բարձրացվի ձեռնարկության և դրա աշխատողների շահագրգռվածությունը՝ ավելացնելու թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների ծավալը և որակը:

ՀՀ-ում 1994-1995 թթ. մասնավորեցման առաջին փուլում, մասնավորեցվել են «փոքր» օբյեկտների, սննդի, թեթև, տեղական և փայտամշակման արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարության համալիրի էական մասը, ժողովրդական սպառման ապրանքներ թողարկող մեքենաշինական արդյունաբերական ձեռնարկությունները և անավարտ շինարարական օբյեկտները: Երկրորդ փուլում մասնավորեցման ենթարկվեցին առաջին փուլում չմասնավորեցված մեքենաշինական, քիմիական, մետաղագործական և արդյունաբերական մյուս ճյուղերի միջին և խոշոր ձեռնարկությունները: Հետագայում մասնատվեց նաև երկրի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք ստրատեգիական օբյեկտներ, ինչպես օրինակ հեռախոսակապը, բաշխիչ ցանցերը և այլն: Հայաստանը առաջինն էր ԱՊՀ երկրներից, որը սեփականաշնորհեց գյուղատնտեսական հողերը, անասունները, գյուղատնտեսական տեխնիկան և այլն:

Սակայն, անկանոն և թալանի վերածված մասնավորեցման հետևանքով տեղի ունեցավ սեփականության միաձուլում իշխանության հետ: Կոռումպացված մասնավորեցման հետևանքով գրեթե ամբող-

ջությամբ տապալվեց Հայաստանի արդյունաբերությունը: Գյուղատնտեսությունը կանգնեց աղքատության և կործանման եզրին:

Սեփականաշնորհման հետևանքով դրամատիկ փոփոխություններ տեղի ունեցան եկամուտների բաշխման ոլորտում: Հայաստանում այդ գործընթացը շոշափեց այն բոլոր ուղղությունները, որոնք բնութագրում են կյանքի մակարդակը, ստանդարտները, որակը, դրանց թվին կարելի է դասել.

- եկամուտների և սպառման ընդհանուր ծավալը,
- եկամուտների և սպառման կառուցվածքը,
- եկամուտներն ու սպառումը կենսամակարդակի նվազագույն բյուջեի տեսանկյունից,
- հասարակության սոցիալական բևեռացումը:

Պլանային տնտեսությունում աշխատավարձը համարվում էր բնակչության եկամուտների հիմնական աղբյուրը: Ներկայումս Հայաստանում բնակչության մոտ 37 % -ը ապրում է արտասահմանյան մասնավոր տրանսֆերտների հաշվին: Դրանից հետո 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցնում են ձեռնարկատիրությունից ստացված եկամուտները (ներառյալ գյուղատնտեսությունը) և ներդրված կապիտալից ստացված դիվիդենտները և տոկոսները: Աշխատավարձը մղվել է չորրորդ տեղը, հինգերորդ տեղում է մարդասիրական օգնությունից ստացված եկամուտները, սոցիալական վճարումները, անձնական օժանդակ տնտեսությունից ստացված եկամուտները և այլն: Բնակչության մոտ 35 %-ը աղքատներ են: Հարուստ խավի եկամուտները ավելի քան 32 անգամ գերազանցում են ներքին չքավոր խավի եկամուտներին:

Հայաստանում հողի սեփականաշնորհումը տեղի ունեցավ գյուղատնտեության մեքենայացման ցածր մակարդակի պայմաններում, որի հետևանքով գյուղացիների զգալի մասը հայտնվեցին ծանր աշխատանքային պայմաններում: Դրա հետ մեկտեղ գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց փոքր չափերով, արտադրանքի արտադրության և իրացման հատուկ մեխանիզմի բացակայության պայմաններում վերածվել են մանր բնամթերային տնտեսությունն-

րի: Գյուղատնտեսության հողերի մոտ 30-40 %-ը չի մշակվում՝ անարդյունավետության պատճառով:

ԽՍՀՄ կազմում Հայաստանի գյուղատնտեսությունը թողարկում է ՀՆԱ-ի 32.1 %-ը: Ներկայումս գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմում է ընդամեն 23 % -ը:

Անցումային ժամանակաշրջանում տնտեսական վերափոխումներն ուղղվում էին նաև սոցիալական վերափոխումներով:

Մարդկային հասարակության գլոբալ պրոբլեմների զարգացումը 21-րդ դարի նախաշեմին ցույց տվեցին, որ հենց սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսությունն է ամենաարդյունավետը և դինամիկը, ուր գիտատեխնիկական առաջադիմությունը սոցիալական - տնտեսական զարգացման գլխավոր գործոնը դարձնում է մարդու ստեղծագործական աշխատանքի զարգացումը: Սոցիալական տնտեսության հիմնական նպատակը հասարակության բարեկեցության ապահովումն է, աշխատանքային օրվա կրճատումն է և ազատ ժամանակի արդյունավետ օգտագործումն է:

Տնտեսագիտական գրականության մեջ տնցումային տնտեսության և սոցիալական քաղաքականության էության և դերի վերաբերյալ գոյություն ունի երկու հիմնական մոտեցումներ՝ ազատական և պետական (էտատիստական): Ընդ որում՝ ազատականները ցույց տալով անցումային ժամանակաշրջանում իրականացող սահմանափակ, պասիվ և փոխհատուցվող սոցիալական քաղաքականութունը շեշտադրում են ուշադրությունը կենտրոնացնել շուկայական վերափոխումների սոցիալական օգուտների վրա: Սոցիալական օգուտի (արդյունավետություն) ներքո ազատականները նկատի ունեն այն հանգամանքը, երբ հասարակությունն անցում է կատարում մեկ վիճակից մյուսին բարձրանում է նրա կենսամակարդակը, կամ էլ բարձրանում է մարդկանց որոշակի խմբերի կենսամակարդակը մյուսների կենսամակարդակի չիջեցման պայմաններում (պարետո բարելավում):

Հակառակը «պետականները» պետությունից պահանջում են կիրառել ընդլայնված և ակտիվ «հարձակվողական» սոցիալական

քաղաքականության և իրենց իրավացիությունը ապացուցելու համար շեշտադրում են շուկային անցման վերափոխումների «սոցիալական ծախքերը»՝ նկատի ունենալով բնակչության կենսամակարդակի իջեցումը, զանգվածային գործազրկության և աղքատության առաջացումը, եկամուտների բաշխման անհավասարության աճը, սոցիալական պաշտպանության համակարգի քայքայումը և այլն: Տնտեսական արդյունավետության բարձրացումը և շուկայական վերափոխումներն առաջին պլան են մղում տնտեսականի և սոցիալականի հարաբերակցությունը, այսինքն՝ սոցիալական խնդիրների լուծումը համատեղելը տնտեսական արդյունավետության բարձրացման հետ: Ներկայումս Հայաստանում տնտեսական վերափոխումների և սոցիալական վերափոխումների միջև առկա է որոշակի հակասություն:Դեռ ավելին, անկատար և ոչ լիարժեք սոցիալական վերափոխումները չեն նպաստում տնտեսական արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Ավելի քան 20 տարվա ընթացքում ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ օլիգոպոլացված գերակայությամբ տնտեսությունը չի ծառայում հասարակության շահերին: Դեռ ավելին մոնոպոլ գերշահույթի ձգտումներն արգելակում են ազատ, կատարյալ մրցակցության զարգացումը:

Պարետո բարելավում Հայաստանում գոյություն չունի, մարդկանց որոշակի խմբերի (օլիգարխների) կենսամակարդակը և շռայլությունը աճում է ժողովրդի հաշվին: Հայաստանում, ներկայումս բնակչության կենսամակարդակը չի աճում, ընդհակառակը ավելանում է աղքատ խավի տեսակարար կշիռը և արտագաղթը: Այս ամենը վկայում են այն բանի մասին, որ Հայաստանում չեն օգտագործում շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման օրինաչափությունները: Հետևաբար Հայաստանի իշխանությունները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն սոցիալական և տնտեսական քաղաքականության զարգացման խնդիրների վրա:

ԳԼՈՒԽ 8
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Աշխատաշուկայի տեսակները և դրանց հասունության փուլերը (աստիճանները)

Շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում, ապրանքների ու ծառայությունների, կապիտալի, փողի և այլ շուկաների կողքին ձևավորվում է նաև աշխատաշուկան:

Տրանսֆորմացիոն անկումը, որը յուրահատուկ է անցումային տնտեսությանը, անխուսափելիորեն շոշափում է նաև զբաղվածության խնդիրը: Չնայած Հայաստանում աշխատաշուկան մեծ չէ, սակայն առկա են բազմազան խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ: Բավական է նշել, որ բնակչության մեկ երրորդը կենտրոնացված է Երևանում, իսկ ամենացածր տեսակարար կշիռը գյուղատնտեսական առանձին շրջաններում (մարզերում)՝ մասնավորապես սահմանամերձ շրջաններում (1,8-5,8 %):

Սովորաբար, կախված շուկայական հարաբերությունների հասունության մակարդակից, տարբերվում են աշխատաշուկայի հետևյալ հիմնական տեսակները.

- <u>Զարգացած (մասնակի) աշխատաշուկա</u>: Շատ տնտեսագետների կարծիքով այս աշխատաշուկան յուրահատուկ է եղել պլանային տնտեսությանը, սակայն դրա ֆունկցիաները սահմանափակ են եղել: Այս շուկայի պարադոքսը այն է, որ մշտապես առկա է եղել աշխատուժի դեֆիցիտ, աշխատանքի առաջարկը գերազանցել է պահանջարկին: Սակայն դա հանրապետությունների և առանձին տնտեսական շրջանների համար դրսևորվել է որոշակի առանձնահատկություններով: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում գոյություն է ունեցել գործազրկության բարձր մակարդակ (մոտ 250 հազ. մարդ) և տարեկան միջին հաշվով 60-70 հազ. մարդ արտագնա աշխատանքի է մեկնել ԽՍՀՄ-ի տարբեր հանրա-

պետություններ, մասնավորապես Ռուսաստանի Դաշնություն: Սակայն, միաժամանակ Սիբիրի և Հեռավոր Արևելքի տնտեսական շրջաններում աշխատուժի մեծ պահանջարկ է գոյություն ունեցել:

- **<u>Ստվերային կամ չկարգավորվող աշխատաշուկա</u>**, որը գործում է ստվերային տնտեսությունում: Պաշտոնական տվյալներով ստվերային տնտեսությունը կազմում է 30,4 %, սակայն ոչ պաշտոնական տվյալներով (այլ աղբյուրներից՝ հեռուստացույց, թերթեր և այլն) այն ՀՀ-ում կազմում է 70-80 %: Այս աշխատաշուկայում տիրում է այնպիսի սոցիալական-աշխատանքային հարաբերություններ, որի ժամանակ խախտվում են աշխատանքային, միգրացիայի և հարկային օրենսդրությունները՝ խուսափելով պետության վերահսկողությունից: Հայաստանում ստվերային տնտեսությունը կոչվում է նաև «արտոնյալ տնտեսություն», դա պայմանավորված է տնտեսության օլիգոպոլացվածության բարձր մակարդակով: Չնայած այս բացասական երևույթներին, ստվերային տնտեսությանը նպաստում է աշխատատեղերի և թողարկվող ապրանքների ու ծառայությունների աճին:
- **<u>Կարգավորվող աշխատաշուկա</u>**՝ այս աշխատաշուկան ձևավորվում է նրա սուբյեկտների տնտեսական վարքագծերի իրավական հիմքերի վրա: Այն ենթադրում է զարգացած ինստիտուտների համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատուժի շարժը: Կարգավորող շուկան սովորաբար յուրահատուկ է ազատական տնտեսական մոդելին և հաճախակի անվանվում է ազատական շուկայական մոդել, որը յուրահատուկ է մասնավորապես Ֆրանսիային և ԱՄՆ-ին: Աշխատանքի և զբաղվածության ոլորտում պետական կարգավորումն արտահայտվում է իրական միջավայրի ձևավորումով, աշխատանքի տեղավորման ինֆորմացիայի ծառայության տրամադրումով, գործազուրկների նպաստների հատկացումով և այլն:

- **<u>Կազմակերպված աշխատաշուկա</u>**: Այն բնութագրական է սոցիալական կողմնորոշման շուկայական տնտեսությանը (Սկանդինավյան մոդել): Այն լայն տարածում է ստացել Սկանդինավյան երկրներում և Գերմանիայում: Ենթադրում է զարգացած սոցիալական հիմնարկությունների համակարգ, որոնք ապահովում են պետական երաշխիքներ՝ գործազրկությունից պաշտպանվելու, գործազուրկներին վերապատրաստելու և անհրաժեշտ սոցիալական օգնություն: Այս աշխատաշուկայի շրջանակներում զբաղվածության քաղաքականությունը համարվում է պետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունը:

Հայաստանի Հանրապետությանն ավելի շատ յուրահատուկ է ստվերային և չկարգավորվող աշխատաշուկան: Այսուհանդերձ, ՀՀ աշխատաշուկան ունի բարձր որակավորման մասնագետների մեծ առաջարկ: Բավական է նշել, որ աշխատունակ բնակչության 34,1 %-ն ունի բարձրագույն կրթություն, իսկ 45,5 %-ը՝ միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն:

Աշխատաշուկայում որպես պահանջարկի սուբյեկտներ հանդես են գալիս բիզնեսը և պետությունը, իսկ առաջարկի սուբյեկտը՝ տնային տնտեսությունները:

Ազատ մրցակցային շուկայում ձեռներեցների կողմից վարձակալված բանվորների քանակը որոշվում է երկու ցուցանիշով.

1. աշխատավարձի մեծությամբ,
2. աշխատանքի սահմանային արդյունքի արժեքով (դրամական արտահայտությամբ):

Վարձակալված բանվորների քանակի աճով տեղի է ունենում արդյունքի սահմանային մեծության կրճատում (եկամտի նվազման օրենք): Լրացուցիչ աշխատանքի միավորի ներգրավումն ավարտվում է այն ժամանակ, երբ աշխատանքի սահմանային արդյունքը, դրամական արտահայտությամբ, հավասարվում է աշխատավարձի մեծությանը:

Աշխատանքի պահանջարկի ծավալը հակադարձ կախվածություն մեջ է գտնվում աշխատավարձի մեծությունից: Աշխատավարձի դրույքաչափի աճին զուգընթաց, այլ հավասար պայմաններում, ձեռնարկատերը հավասարակշռության պահպանման նպատակով, կկրճատի աշխատանքը (աշխատողների քանակը), իսկ դրա իջեցման դեպքում աշխատանքի պահանջարկի մեծությունը կաճի: Աշխատավարձի մեծության և աշխատանքի պահանջարկի միջև եղած կախվածությունը կարելի է արտահայտել հետևյալ գրաֆիկի պատկերմամբ.



Աբցիսների առանցքին տեղադրելով պահանջվող աշխատանքի քանակը (L), իսկ օրդինատների առանցքի վրա՝ աշխատավարձի դրույքաչափը (W), ապա D_L կորի յուրաքանչյուր կետ ցույց կտա թե ինչպիսին կլինի աշխատանքի պահանջարկն աշխատավարձի որոշակի դրույքաչափի դեպքում:

Աշխատանքի պահանջարկի կորի վարընթաց բնույթը ցույց է տալիս, որ ավելի ցածր աշխատավարձին համապատասխանում է աշխատանքի նկատմամբ մեծ պահանջարկ և հակառակը:

Ինչ վերաբերում է աշխատանքի առաջարկի կորին, ապա այն ունի դրական թեքություն, այսինքն աշխատանքի առաջարկի ծավալը կախված է աշխատավարձի մեծությունից: Այդ կախվածությունը կարելի է տեսնել հետևյալ գրաֆիկի պատկերմամբ.



Աշխատանքի առաջարկի կորը (S_L) ցույց է տալիս, որ աշխատավարձի բարձրացումն ուղեկցվում է աշխատանքի առաջարկի ավելացումով և հակառակը:

Աշխատանքի ամբողջական առաջարկը տնտեսության մեջ կախված է բազմաթիվ գործոններից, ինչպես օրինակ բնակչության թվաքանակը և դրանում առկա ակտիվ բնակչությունը, աշխատանքային օրվա միջին տևողությունը, աշխատողների պրոֆեսիոնալ որակական մակարդակը և այլն:

Սոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում միջին անվանական աշխատավարձի մակարդակը տատանվում է 45000 մինչև 120000 դրամի սահմաններում: Այն բարձր է միայն ֆինանսական գործունեությամբ զբաղվածների մոտ: Աշխատավարձի մակարդակի ավելի բարձր ցուցանիշների դեպքում է միայն աշխատանքի առաջարկ ունեցողների տոկոսն ավելանում: Այսպես, 35,1%-ն աշխատանքի առաջարկ կունենան, եթե նրանց վճարվի 45000-90000 դրամ, իսկ 20,6 %-ը՝ 90000-150000 դրամի դեպքում կանցնեն աշխատանքի: Այն հիմնականում պայմանավորված է սփյուռքից ստացված տրանսֆերտներով: Նրանք կհամաձայնվեն աշխատել, եթե աշխատավարձի մակարդակը գերազանցում է տրանսֆերտները[16]: Այսինքն ՀՀ-ում աշխատանքային եկամտի և աշխատանքի առաջարկի կապը ճկուն չէ: Մարդիկ էլ կան, որ միջին աշխատավարձի դեպքում նույնիսկ դրանից ցածր աշխատավարձի դեպքում պատրաստ են աշխատելու: Ըստ սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների 45000-90000 դրամ աշխատավարձի դեպքում պատրաստ է աշխատանքի առաջարկ ներկայացնել 55,3 %-ը:

2. Զբաղվածություն (թաքնված զբաղվածություն): Գործազրկության առաջացման նախադրյալներն անցումային ժամանակաշրջանում

Լրիվ զբաղվածություն ասելով չպետք է հասկանալ, որ բացարձակապես բացակայում է գործազրկությունը: Քանի որ ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունը (բնական գործազրկություն) անխուսափելի է, հետևաբար լրիվ զբաղվածություն գոյություն ունի այն դեպքում, երբ աշխատուժը 100 %-ով ներգրավված չէ հանրօգուտ աշխատանքին: Սակայն լրիվ զբաղվածության ժամանակ հնարավոր է նաև թերզբաղվածությունը: Թերզբաղված են համարվում նրանք, ովքեր աշխատում են երկրում սահմանված աշխատաժամանակից պակաս աշխատօր կամ աշխատաշաբաթ:

[16] ՀՀ աշխատանքային շուկայի վերլուծությունը, Երևան, 2010, էջ 44:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում հիմնական աշխատանքում զբաղվածների 71,4 %-ն աշխատում է լրիվ աշխատօրով, 14,4 %-ը՝ ոչ լրիվ աշխատօրով, իսկ 14,2 %-ը՝ լրիվ աշխատանքից ավելին: Տնտեսագիտական գրականության մեջ թերզբաղվածությունը հաճախակի անվանվում է մասնակի զբաղվածություն: Մասնակի զբաղվածները, դրանք այն մարդիկ են, որոնք ցանկանում են ունենալ լրիվ աշխատանքային օր, սակայն չեն գտնում:[17]

Բացի մասնակի զբաղվածությունից գոյություն ունի նաև թաքնված և կրկնակի զբաղվածություն: Թաքնված զբաղվածներ համարվում են գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները, ինչպես նաև ինքնազբաղվածներն ու գործատուները: Թաքնված զբաղվածության մակարդակը ՀՀ-ում կազմում է 27,4 %, իսկ կրկնակի աշխատանք ունեցողները՝ 13,6 %[18]: Կրկնակի զբաղվածության գոյությունը հիմնականում պայմանավորված է իրական աշխատավարձի ցածր մակարդակով:

Ոչ լրիվ զբաղվածությունն արտահայտվում է գործազրկության առկայությամբ: Գործազուրկ են համարվում աշխատունակ տարիքի այն անձինք, ովքեր չեն աշխատում և ակտիվորեն փնտրում են աշխատանք:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ գործազուրկների 44,1 %-ը չի աշխատում, որովհետև չի կարողացել աշխատանք գտնել (ֆրիկցիոն գործազրկություն), 21,6 %-ը չի ցանկանում աշխատել (կամավոր գործազրկություն), 23,8 %-ն ի վիճակի չի եղել մշտական աշխատանք կատարելու, իսկ 10,5 %-ը՝ այլ պատճառներով[19]:

Շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում Հայաստանում աննախադեպ աճեց գործազուրկների քանակը: Այն պայմանավորված է եղել մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ

---

[17] ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծությունը, Երևան, 2010, էջ 44:
[18] ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը, Երևան, 2010, էջ 35-36:
[19] Նույն տեղում, էջ 37:

պատճառներով: Ինչպես հայտնի է, պլանային համակարգում բացառվում էր ցիկլային գործազրկությունը, սակայն առկա էր ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունը (բնական գործազրկություն): Դեֆիցիտը, որպես պլանային տնտեսության յուրահատուկ երևույթ, բնութագրական էր նաև աշխատանքային ռեսուրսներին: Աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկ կար Սիբիրի և Հեռավոր Արևելքի տնտեսական շրջաններում: Իրականում պլանային տնտեսությանը յուրահատուկ էր թաքուն գործազրկությունը, որը պայմանավորված էր ձեռնարկություններում հումքի, հիմնական նյութերի բացակայությամբ, արտադրական ռիթմի խախտումներով ու կանգառումներով, ինչպես նաև ձեռնարկություններում արհեստականորեն «ավելորդ» աշխատատեղերի ստեղծմամբ: Նման պայմաններում առաջացած աշխատուժի դեֆիցիտը պայմանավորում էր աշխատանքային կարգապահության խախտումներ, պարապուրդներ և հետևաբար տնտեսական արդյունավետության նվազում:

Պլանային տնտեսությանը յուրահատուկ թաքուն գործազրկությունն անցումային ժամանակաշրջանում արտահայտվեց բացահայտ գործազրկությամբ, որը հիմնականում արտահայտվեց.

- Արտադրության ծախքերի կրճատման և արտադրության արդյունավետության բարձրացման ձգտումը խթան հանդիսացավ վերացնելու ձեռնարկություններում առկա «ավելորդ» աշխատատեղերը, որի հետևանքով նախկինում թաքուն գործազրկությունը դարձավ բաց՝ թափանցիկ գործազրկություն: Այսինքն, մասնավորեցման հետևանքով, մասնավոր ձեռնարկությունների առաջացումը հանգեցրեց գործազրկության ինտենսիվացմանը:
- Վերացավ անցյալին յուրահատուկ երիտասարդ կադրերին հարկադրական կարգով աշխատանքի նշանակումը:
- Զգալիորեն աճեց կառուցվածքային գործազրկությունը՝ պայմանավորված տնտեսության մեջ սկսված կառուցվածքային վերափոխումներով:

- ԽՍՀՄ տնտեսական կապերի խզման հետևանքով առաջացած տրանսֆորմացիոն անկման հետևանքով կրճատվեց աշխատանքի պահանջարկը: Այլ կերպ ասած առաջացավ նաև ցիկլային գործազրկություն:
- Հողի մասնավորեցումը և կոլտնտեսությունների ու պետական տնտեսությունների կազմալուծումը պայմանավորեց գործազրկության բարձր մակարդակ գյուղատնտեսության ոլորտում:
- Հայաստանում թերի, անկանոն և թալանի աստիճանի հասած մասնավորեցման հետևանքով փակվեցին հարյուրավոր ձեռնարկություններ:
- Բնակարանային շուկայի ստեղծումը, որը պայմանավորեց մարդկանց տարերային տեղաշարժեր գյուղից քաղաք, քաղաքից քաղաք՝ այդպիսով նպաստելով ֆրիկցիոն գործազրկության ծավալմանը:

Ազգային վիճակագրության տվյալներով ներկայումս Հայաստանում գործազուրկները կազմում են 9,1 %: Սակայն չի համապատասխանում իրական գործազրկության տվյալներին, քանի որ դա չի ներառում թաքուն գործազրկությունը:

Սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներով ՀՀ-ում աշխատանք չունեն հարցվածների 27,3 %-ը, ընդ որում Երևանում՝ 20,9%, Կոտայքում՝ 26,9%, Շիրակում՝ 21,7%, Տավուշում՝ 23,0 %, Լոռիում՝ 31,6 %, Սյունիքում 17,3 %, Արմավիրում՝ 46,3 %, Արարատում՝ 23,0 %, Գեղարքունիքում՝ 19,0 %, Արագածոտնում՝ 31,6 %, Վայոց Ձորում՝ 16,3 %: Գործազրկության հիմնական պատճառն աշխատատեղերի պակասն է: Դրա հետ մեկտեղ առկա են նաև աշխատանք գտնելու խոչընդոտներ: Այսպես, հարցվածների 32.2 %-ի համար համապատասխան որակավորում չունենալն է, 17,1 %-ի համար գիտելիքների ու հմտությունների բացակայությունն է, 6,8 %-ը չգիտի թե որտեղ կարող է վերապատրաստվել, 12,7 %-ը՝ թե մաս-

նագիտական ինչ վերապատրաստում անցնել, իսկ 32,2 %-ը բերում է այլ պատճառներ[20]:

3. Գործազրկության տնտեսական և սոցիալական հետևանքները

Գործազրկության տնտեսական հետևանքը չթողարկված արտադրանքն է: Երբ տնտեսությունն ի վիճակի չէ ապահովել անհրաժեշտ քանակի աշխատատեղեր բոլորի համար, ովքեր ցանկանում են աշխատել, ապա ապրանքների և ծառայությունների ներուժային մակարդակը չի ապահովվում: Այլ կերպ ասած, տնտեսությունը գտնվում է իր արտադրական հնարավորություններից ցածր մակարդակում:

Մակրոտնտեսական ուսումնասիրության մեջ հայտնի տնտեսագետ Արթուր Օուքենը ՀՆԱ-ի թերարտադրությունը մաթեմատիկորեն արտահայտել է գործազրկության մակարդակի և ՀՆԱ-ի ծավալի ետ մնալու միջև եղած հարաբերությամբ: Այդ հարաբերությունը հայտնի է որպես Օուքենի օրենք: Ըստ այդ օրենքի, եթե գործազրկությունը մեկ տոկոսով ավելին է իր բնական մակարդակից, ապա ՀՆԱ-ն կրճատվում է 2,5 %-ով: Այսպես, եթե ընդունենք, որ Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ (2009 թ.) գործազրկության մակարդակը հասավ 12 %-ի, կամ 6 %-ով ավելի քան բնական գործազրկության մակարդակը՝ մոտ 6 %: Բազմապատկելով 6 %-ը գործազրկության բարձր մակարդակը Օուքենի գործակցով՝ 2,5 %-ով (6x2,5=15), կստացվի, որ 2009 թ. ՀՆԱ-ն կրճատվել է 15 %, որը գրեթե համապատասխանում է իրական ՀՆԱ-ի կորստին (14,1 %): Չնայած գործազրկությունը «թանկ» է նստում տնտեսության վրա, սակայն տևական հարկադրական գործազրկության պատճառած մարդկային, սոցիալական և հոգեբանական վնասները փողով չի կարելի չափել:

Տևական գործազրկությունը կարող է հանգեցնել ֆիզիկական և հոգեկան առողջության քայքայմանը, սրտի հիվանդությունների և

[20] ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը, Երևան, 2010, էջ 40-41:

ալկոհոլիզմի առաջացմանը: Շատ հաճախ էլ երկար ժամանակ աշխատանք չունեցող մարդիկ ինքնասպան են լինում: Հասարակության համար չկա ավելի մեծ չարիք, քան գործազրկությունն է:

Գործազրկության սոցիալական հետևանքները հիմնականում արտահայտվում են բնակչության կենսամակարդակի նվազմամբ, աղքատության աճով և արտագաղթով:

Չնայած սկսած 1994 թ.-ից Հայաստանում ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 5-6 %, իսկ վերջին տասնամյակում նույնիսկ երկնիշ թվեր (9,6-13,9 %), սակայն գործազրկությունը, աղքատությունը, հարստության մեծ բևեռացումը և արտագաղթը շարունակում են ոչ միայն գոյատևել, այլև աճել:

Դեռևս շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանի առաջին տասնամյակում շեշտակիորեն փոխվեց իրադրությունը զբաղվածության ոլորտում: Զբաղվածության թիվը նվազեց 800 հազ. մարդով (1987 թ. 1750 հազարից 1997 թ. իջնելով 950 հազարի): Այդ ժամանակաշրջանում առավել տպավորիչ էր ծանրաբեռնվածության ցուցանիշները՝ հաշվարկված յուրաքանչյուր 100 զբաղվածի համար: 1990 թ. այդ ցուցանիշը հավասար էր 95-ի, այդ թվում 60 երեխա և 35 թոշակառու: Իսկ սկսած 1991 թվականից այդ ցուցանիշը հավասար է 150-ի (աճ 60 %), այդ թվում 65 երեխա և 60 թոշակառու (աճ 2 անգամ):

Ծանրաբեռնվածության անհավասարաչափ տեղաշարժի աճը (աշխատունակների և զբաղվածների հաշվով) ամենից առաջ պայմանավորված է զբաղվածության մակարդակի կտրուկ անկումով: «Բուտերբրոդում» հացն ավելացավ, իսկ կարագը պակասեց երեխաների և թոշակառուների ավելացման հաշվին, որն էլ պայմանավորեց բնակչության կենսամակարդակի նվազում: Բավական է նշել, որ այդ ժամանակաշրջանում բնակչության մեկ շնչի եկամտի մեծությունը, որն օգտագործվում է սպառման համար կրճատվեց 3 անգամ: Դրանով իսկ, շատ կարճ ժամանակահատվածում, բնակչության զգալի մասը փոխեց իր վեկտորը դեպի համընդհանուր աղքատություն:

Անցումային ժամանակաշրջանի առաջին տասնամյակում համատարած գործազուրկության առաջացումն ուղեկցվեց նաև աղքատության բարձր տեսակարար կշռով (57 %): Այդ մասին վկայում են հետևյալ տվյալները[21]:

Նվազագույն աշխատավարձը կազմում էր 8 դոլար, միջին աշխատավարձը՝ 22 դոլար, կենսաթոշակների և նպաստների միջին չափը՝ 7 դոլար: Աշխատավարձի նվազագույն և միջին դրույքները 10 տարում նվազել էին (համադրելի գներով) 6,5 անգամ, նվազագույն աշխատավարձ ստացողների բաժինն ընդհակառակը՝ աճել է 1,5 անգամ, իսկ միջին շնչային եկամուտը, որը գնում է սպառման, կրճատվել էր 3 անգամ: Երկրորդ տասնամյակում պայմանավորված տնտեսական աճի կայուն և բարձր տեմպերի առկայությամբ, մինիմալ աշխատավարձը կազմում է 32,5 հազ. դրամ, միջին աշխատավարձը մոտ 110 հազ. դրամ: Վերջին տասնամյակում կրճատվեց աղքատության տեսակարար կշիռը: Այն 57 %-ից իջավ 22,5 %-ի: Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո կրկին աղքատության տեսակարար կշիռը աճեց 22,5 %-ից մինչև 34,1 %: Բացարձակ արտահայտությամբ, այսօր Հայաստանում աղքատ են մոտ մեկ միլիոն մարդ, որից ծայրահեղ աղքատներ են 110 հազարը:

Համատարած գործազրկությունը և աղքատությունն ուղեկցվեց նաև արտագաղթի աճով: Ընդհանրապես Հայաստանի Հանրապետությունը ներկայիս սահմաններով կարելի է որակել որպես միգրացիայի երկիր: Երբ Հայաստանը կորցրեց պետականությունը, հայերին սկսեցին տեղափոխել Իրան, Թուրքիա, արաբական երկրներ և այլն: 20-րդ դարասկզբին Թուրքիայի կողմից կազմակերպված Մեծ եղեռնը բռնի արտագաղթը հասցրեց իր գագաթնակետին: Արևելյան Հայաստանը, երբ միացավ Ռուսաստանին, իր տարածքում ուներ 164 հազ. մարդ խառը բնակչություն, որից հայերի տեսակարար կշիռը կազմում էր 40-45 %: 1899 թ. Ռուսաստանի բնակչության մարդահամարի տվյալներով Հայաստանում ապրում էր մոտ 1 մլն. մարդ: 20-րդ դարի 20-ական թվականներից՝ համաշխարհային

[21] Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, Երևան, 1999, էջ 293:

պատերազմի, հեղափոխության և այլ պատճառներով, Հայաստանի բնակչությունը կրճատվեց մինչև 720 հազ. մարդ[22]:

ԽՍՀՄ-ի կազմում՝ շուրջ 70 տարիների ընթացքում, Հայաստանի բնակչության թիվը հասավ 3 մլն. 870 հազարի: Միգրացիան նոր թափ ստացավ 1991 թ.: Միայն վեց տարում՝ 1997 թ. միգրացիայի բացասական մնացորդը կազմեց 720 հազ. մարդ, այսինքն Հայաստանում մշտական ապրող բնակիչների թիվը կրճատվեց 20 %-ով: Այդ ժամանակաշրջանի արտագաղթի գլխավոր պատճառներ հանդիսացան[23].

- ✓ Հայաստանում աշխատանքի տեղավորվելու անհնարինությունը (48 %),
- ✓ եկամուտների, սպառման և կյանքի ստանդարտների չափազանց ցածր մակարդակը (27 %),
- ✓ ոչ մի պայմանների դեպքում հնարավոր չէ ապրել Հայաստանում (վերը նշվածներին գումարած սոցիալ-կենցաղային պայմանները, հակամարտությունը, տրանսպորտը, հասարակական-հոգեբանական ոլորտը և այլն) (12 %),
- ✓ խուսափել զինվորական ծառայությունից (7 %),
- ✓ այլ պատճառներ (6 %):

Վերջին 15 տարում ՀՀ-ից դուրս են եկել տնային տնտեսությունների անդամների 21,6 %, իսկ հարցումների մասնակիցների 4,8 %-ը նշել է, որ իր հիմնական աշխատանքի վայրը գտնվում է արտերկրում, որի հիմնական պատճառներից են եղել.

- ➢ պարզապես աշխատանք գտնելը (22,6 %),
- ➢ ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը (2,3 %),
- ➢ լավ վարձատրվող աշխատանք գտնելը (24,1 %),
- ➢ միանալու ընտանիքի մյուս անդամներին (20,5 %),
- ➢ անվստահություն ապագայի հանդեպ (1,5 %),
- ➢ կրթությունը (4,3 %),

---

[22] Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, Երևան, 1999, էջ 295:
[23] Նույն տեղում, էջ 297:

➢ այլ պատճառներ (21,7 %)[24]:

Որպես առանձնահատկություն կարելի է նշել, որ սովորաբար արտագաղթը հիմնականում տեղի է ունենում ձմռան, գարնան և ամռան ամիսներին, իսկ աշնանը՝ ընդհակառակը, հայրենիք վերադարձողները ավելին են, քան գնացողները: Այսուհանդերձ մեկնողների և գնացողների հաշվեկշռի սալդոն բացասական է: Հայաստան վերադառնալու հիմնական շարժառիթն ընտանիքի և հայրենիքի կարոտն է, աշխատանքային պայմանագրերի ժամկետների լրանալը և այլն: Վերջին տարիներին Հայաստանից արտագաղթը կրկին ակտիվացել է, միայն 2011 թ. մինչև սեպտեմբեր ամսվա վերջը մեկնողների թիվը հասել է 87 հազարի: Ընդհանուր առմամբ սկսած 1991 թ. Հայաստանից տարբեր աղբյուրների տվյալներով արտագաղթել են 1,2-1,5 մլն. մարդ: Արտագաղթի չափերի աստիճանաբար աճը համարվում է ազգային տնտեսության անվտանգության ապահովման ամենաէական խնդիր: Հետևաբար, ՀՀ իշխանությունների ամենաառաջնային խնդիրն է ստեղծել նոր աշխատատեղեր, բարձրացնել մինիմալ աշխատավարձը, թոշակները և նպաստները:

Այսպիսով, բնակչության արտագաղթը Հայաստանում մոտ 75 %-ով պայմանավորված է զուտ տնտեսական գործոններով: Արտագաղթողների գրեթե կեսը մեկնել է ժամանակավոր աշխատանք փնտրելու, որպեսզի օգնի իր ընտանիքի անդամներին: Այսօր Հայաստանի բնակչության մոտ 37 %-ն ապրում է արտասահմանյան երկրներից ստացված մասնավոր տրանսֆերտների հաշվին:

4. Զբաղվածության քաղաքականությունը ՀՀ-ում

Անցումը պլանայինից շուկայական տնտեսությանն արտահայտվեց նաև բնակչության զբաղվածության էական տեղաշարժերով: Մասնավորապես այդ տեղաշարժերը հանգեցին հետևյալին.

✓ անցումը պարտադիր ու լրիվ զբաղվածությունից շուկայական տնտեսությանը յուրահատուկ չափանիշներին,

[24] ՀՀ աշխատաշուկայի վերլուծությունը, Երևան, 2010, էջ 47:

- ✓ փոփոխվել է զբաղվածության բաշխման կառուցվածքը (աճել է ծառայության ոլորտում զբաղվածության մակարդակը, հակառակ դրան կրճատվել է արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը),
- ✓ աննախադեպ չափերով աճել է գործազրկությունը,
- ✓ աշխատաշուկայի անհավասարակշռության հետևանքով աճել է աշխատանքային օրվա տևողությունը (մասնավորապես ծառայության ոլորտում), բարձրացել է աշխատանքի լարվածության աստիճանը, աշխատավարձը չի համապատասխանում կատարած աշխատանքի բարդության աստիճանին և աշխատանքային պայմաններին,
- ✓ անկատար, թերի սեփականաշնորհման արդյունքում փակվել են բազմաթիվ ձեռնարկություններ, շատերն էլ աշխատում են թերբեռնվածությամբ, աշխատավորների մեծ մասը մատնվել է հարկադիր պարապուրդների և այլն:

Անցումը շուկայական հարաբերություններին, անշուշտ, ձերբազատեց մարդուն պետության կախվածությունից և հնարավորություններ ստեղծեց զբաղվածության արդյունավետ համակարգ ձևավորելու համար: Սակայն այն դեռևս իրողություն չի դարձել: Դրա համար ժամանակ և ամենակարևորը պետության, արհմիությունների և գործատու-սեփականատերերի միասնական և նպատակասլաց ջանքեր են պահանջում: Շուկայական հարաբերություններին անցման «շոկային թերապիայի» մոդելի օգտագործումը, ճիշտ է, պահանջում է խորքային, կառուցվածքային վերափոխումներ, բայց միաժամանակ այն նաև պահանջում է զբաղվածության ակտիվ քաղաքականություն: Մինչդեռ աշխատաշուկայի և զբաղվածության ոլորտում պետական կարգավորման միջոցառումները դեռևս համարժեք չեն ստեղծված իրավիճակին: Թույլ է կամ գրեթե բացակայում է արհմիությունների գործունեությունը: Հայաստանի իշխանությունների կողմից վարվող զբաղվածության քաղաքականությունը կարելի է որակավորել թերի և պասիվ: Չնայած որոշակի աշխատանք տարվում է գործազուրկների ու թափուր աշխատատեղերի

գրանցման և գործազրկության նպաստներ սահմանելու համար, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրանցված գործազուրկների թիվն առնվազն 8 անգամ պակաս է իրականից, իսկ գործազրկության նպաստների ցածր մակարդակը չի ծառայում իր նպատակին:

Աշխատաշուկայի ու զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները իրականացնելու, ինչպես նաև արտագաղթը կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել պետական կարգավորման իրական միջոցառումներ, որոնց թվին կարելի է դասել.

- ✓ Նպաստավոր պայմանների ստեղծումը մանր ու միջին գործարարության զարգացման համար, հարկային և վարկային այնպիսի քաղաքականության կիրառումը, որը ոչ թե խոչընդոտի, այլ նպաստի դրանց հետագա ծավալմանը և զարգացմանը:
- ✓ Ապահովել ազատ, կատարյալ մրցակցային միջավայր շուկայի բոլոր մասնակիցների համար: Չեռնարկել համապատասխան և անհետաձգելի միջոցառումներ պայքարելու օլիգոպոլիաների դեմ, քանի որ դրանք չեն ապահովում հասարակական արդյունավետություն: Դեռ ավելին, մոնոպոլ բարձր (ցածր) գների սահմանման արդյունքում ապահովում են գերշահույթ՝ խուսափելով օրինական հարկերի ճշգրիտ մուծումներից, ինչպես նաև խոչընդոտում են մանր և միջին բիզնեսի զարգացմանը:
- ✓ Տնտեսության զարգացման առաջնային ճյուղերի ընտրությունը կատարելիս նկատի ունենալ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները, մասնավորապես խրախուսել աշխատատար ճյուղերի զարգացումը, որը կնպաստի գործազրկության աստիճանաբար նվազմանը:
- ✓ Արտագաղթը կրճատելու նպատակով բացի աշխատաշուկայի կարգավորումից, անհրաժեշտ է նաև նպաստել ապա-

հովագրական կապիտալի և ֆյուչերսային շուկաների ձևավորմանը ու զարգացմանը:

- ✓ Մեծացնել պետական ներդրումները երկրի տնտեսության իրական հատվածում, որը միաժամանակ կնպաստի նոր աշխատատեղի ստեղծմանը և գործազրկության կրճատմանը:
- ✓ Նպաստել օտարերկրյա կապիտալի (մասնավորապես սփյուռքի) ներգրավումը տնտեսության իրական հատված, որը միաժամանակ խթան կհանդիսանա երկիրը լքած բնակչության մի մասի վերադարձը հայրենիք:
- ✓ Անհրաժեշտ է ճշգրտել աշխատաշուկայում առկա գործազուրկների թիվ, որը մոտ 8 անգամ պակաս է, քան իրականում դրանց թիվն է, միաժամանակ ոչ թե վերացնել՝ այլև բարձրացնել առկա գործազրկության նպաստների չափը:

Չկա ավելի կարևոր խնդիր, քան աշխատաշուկայի և զբաղվածության կարգավորման խնդիրներն են: Դրանց զարգացման մակարդակից է կախված թե՛ գործազրկության կրճատումը, թե՛ աղքատության վերացումը և թե՛ արտագաղթի կրճատումը: Երկրի ներքին և արտաքին քաղաքականության գլխավոր ուղղվածությունը պետք է հանդիսանա մարդկային կյանքի որակի բարձրացումը, չկա և չի էլ կարող լինել ավելի գերխնդիր, քան բնակչության կենսամակարդակի բարձրացումն է և նրանց բարեկեցության աճը:

ԳԼՈՒԽ 9
ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Սոցիալական քաղաքականության էությունը, դերը և ֆունկցիաներն ազգային տնտեսությունում

Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ Հայաստանը սոցիալական պետություն է, որի ծրագրային նպատակն է բոլոր քաղաքացիների համար ապահովել կյանքի արժանավայել պայմաններ և կենսամակարդակ:

Սոցիալական քաղաքականությունը պետության և տնտեսական սուբյեկտների գործունեություն է, որը նպատակաուղղված է բնակչության կյանքի և աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովմանը: Սոցիալական քաղաքականությունն արտացոլում է տնտեսական աճի արդյունքները և վերջնական նպատակը: Սոցիալական քաղաքականության և տնտեսական աճի միջև առկա է փոխկապակցվածություն: Մի կողմից սոցիալական քաղաքականությունը հանդիսանում է տնտեսական աճի նպատակը, մյուս կողմից էլ՝ նրա գործոնը, քանի որ բարեկեցության աճն ուժեղացնում է (խթանում է) աշխատանքի նկատմամբ շարժառիթները և նպաստում է դրա արդյունավետության բարձրացմանը:

Սոցիալական քաղաքականության հիմնական ֆունկցիաներն են.

- սոցիալական արդարության ապահովումը,
- սոցիալական պաշտպանվածության համակարգի ստեղծումը,
- բնակչության բարեկեցության համար պայմանների ապահովումը,
- եկամուտների բաշխման համապատասխան քաղաքականության մշակումը և օգտագործումը:

Այդ ֆունկցիաների իրականացման ընթացքում որոշվում են հետևյալ խնդիրները.

- ✓ զբաղվածության ծրագրերի իրագործում,
- ✓ սոցիալապես անապահով խավերի նկատմամբ օգնության ցուցաբերում,
- ✓ կրթության, առողջապահության և սոցիալական ապահովագրության մատչելիության բարձրացումը:

Շուկայական հարաբերություններին անցումով սոցիալական քաղաքականության առաջնություններ են դառնում բաշխման և սոցիալական պաշտպանության ֆունկցիաները, որոնք աստիճանաբար փոխարինում են մինչռեֆորմային սոցիալական քաղաքականության տնտեսական և գաղափարական ուղղություններին: Այն բացատրվում է հետևյալ կերպ: Այսպես, եթե պլանային տնտեսությունում պետությունը հնարավորություն ուներ կենտրոնացված կարգով սոցիալականը՝ ենթարկելու տնտեսական քաղաքականությանը և լուծել տնտեսական խնդիրներ (օգտագործելով բաշխման հարաբերություններում սպառման հասարակական ֆոնդերը) և դրանով իսկ հասնելու պետությանը անհրաժեշտ հաշվեկշռի՝ սոցիալական և տնտեսական արդյունավետության միջև, ապա անցումային տնտեսությունում նման հաշվեկշիռ՝ ըստ բարեկեցության նորդասական տեսության սահմանվում է շուկայի միջոցով, պետության մինիմալ միջամտության պայմաններում: Դրա համար էլ շուկայական տնտեսության պայմաններում սոցիալական քաղաքականությունը ենթարկել տնտեսական խնդիրների լուծման համար կորցնում է իր նշանակությունը: Որպես ապացույց, ազատականները նշում են, որ շուկայական տնտեսությունում չկա միանշանակ կախվածություն տնտեսական աճի և եկամուտների, արտադրության ծավալի ցուցանիշների և կյանքի պայմանների բարելավման միջև :

Շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում սոցիալական ոլորտը մնում էր որպես ավելի քիչ վերափոխվող ոլորտ, որը չի կարող դառնալ տնտեսական աճի ինքնուրույն գործոն:

Անցումային ժամանակաշրջանում սոցիալական քաղաքականությունը մեծապես կախված է սուբյեկտիվ գործոններից, մասնավորապես քաղաքական ընտրությունից և գաղափարական նախասիրություններից:

Անցումային ժամանակաշրջանում սոցիալական քաղաքականության յուրահատկությունը կայանում է դրա այլընտրանքայնության և անկայունության մեջ, երբ կարճ ժամանակահատվածում կարող է տրամագծորեն փոխվել սոցիալական քաղաքականության նպատակը, դրա բովանդակությունը և դերը: Եվ այս բոլորը կախված է վերը նշված սուբյեկտիվ գործոններից, ինչպես նաև օբյեկտիվորեն առկա սահմանափակումներից, որոնց թվին կարելի է դասել.

- ✓ Վերափոխումների սոցիալական ծախքերը (բնակչության կենսամակարդակի իջեցումը, զանգվածային գործազրկություն և աղքատություն և այլն), որոնք ծագեցին վերափոխումների սկզբնական տարիներին և հետագայում կայունացան և մեծ դժվարությամբ են կրճատվում:
- ✓ Վերափոխումների սկզբնական փուլում հարկաբյուջետային ճգնաժամը, որը հանգեցրեց ֆինանսական սահմանափակումների, ինչը կապված էր հարկային բազայի (հիմքերի) նվազման հետ՝ պայմանավորված իրական աշխատավարձի և շահույթի կրճատմամբ: Դրա հետ միաժամանակ աճում էր բյուջեի սոցիալական բեռը, որն էլ իր հերթին պայմանավորված էր նվազ ապահովված ընտանիքների աճով, որոնք կարիք ունեին պետության պաշտպանության:
- ✓ Ինստիտուցիոնալ սահմանափակումները, որոնք պայմանավորված են կառավարչական պրոֆեսիոնալ ապարատի բացակայությամբ, որը կկարողանար մշակել գրագետ, իրական սոցիալական ծրագրեր և կկազմակերպեր դրանց իրականացումը:

Այս և այլ սահմանափակումները՝ անցումային ժամանակաշրջանում նեղացրեցին սոցիալական քաղաքականության իրականացման շրջանակները: Բոլոր հետսոցիալիստական երկրների, այդ

թվում նաև Հայաստանի համար ընդունելի դարձավ պաշտպանողական սոցիալական քաղաքականությունը, որը խոճընդոտում էր սոցիալական քաղաքականությունը նվազ ապահովված խավերին օգնություն ցուցաբերելու իմաստով: Մինչև այսօր էլ բնակչությանը տրամադրվող սոցիալական օգնությունը լիարժեք կարգավորված չէ և դրանց օգնության չափը (գումարային արտահայտությամբ) նույնիսկ չի ապահովում մինիմալ պարենային զամբյուղի պահանջները:

Որպեսզի հիմանորենք թե՞ անցումային ժամանակաշրջանում տնտեսության համար ինչքանով է արդյունավետ սոցիալական քաղաքականությունը՝ անհրաժեշտ է վերլուծել սոցիալական ծախսերի և սոցիալական օգուտների հարաբերակցությունը:

2. Սոցիալական քաղաքականության դերը սոցիալական ծախքերի և սոցիալական օգուտների հավասարակշռության գործում

Սոցիալական օգուտ ասելով հասկանում ենք, երբ հասարակության կամ մարդկային առանձին խմբի բարեկեցությունն աճում է առանց նվազեցնելու ուրիշ խմբերի բարեկեցությունը: Նման փոփոխությունը տնտեսագիտական գրականության մեջ կոչվում է պարետո բարելավում: Հետևաբար հարց է ծագում անցումը պլանային տնտեսությունից՝ շուկայականին ապահովում է արդյո՞ք պարետո բարելավում: Այս նկատառումով գիտնականները և քաղաքագետները պաշտպանում են ազատականների հայացքները և իրենց մեկնաբանություններում հենվում են միջանկյալ արդյունքների վրա ու գտնում են, որ անցումային ժամանակաշրջանում կարելի է հասնել բարեկեցության էական արդյունքների:

Հայաստանի օրինակով վերը շարադրված տեսակետը չի համապատասխանում իրականությանը, քանի որ անցումային ժամանակաշրջանում վատթարացել է կյանքի մակարդակը բնորոշող գրեթե բոլոր ցուցանիշները (բնակչության եկամուտները և խնայողությունները, իրական աշխատավարձը, զբաղվածությունը և այլն):

Սակայն լիբերալները դիմում են բարեկեցությունը բնորոշող այլընտրանքային գնահատումների: Ազատականները (լիբերալները) գտնում են, որ օրինաչափ չէ, երբ բարեկեցության ընթացիկ մակարդակը համեմատվում է զարգացած շուկայական երկրների համանուն ցուցանիշի հետ: Նրանք գտնում են, որ ընթացիկ բարեկեցությունը պետք է համեմատել այն իրավիճակի հետ, որում կգտնվեր հասարակությունը, եթե չիրականացվեր շուկայական վերափոխումներ: Այնուհետև լիբերալները նշում են հետևյալ փաստարկները, որոնք ձեռք են բերվել շուկայական վերափոխումների արդյունքում.

- ✓ գոյություն ունեն մարդկանց որոշակի խմբեր, որոնք բարելավել են իրենց բարեկեցությունը՝ շուկայական հարաբերություններին անցման ընթացքում: Դրանք ավելի ստեղծագործական, նախաձեռնող, լավ կրթված մարդիկ են, որոնք օգտագործել են շուկայական համակարգի առավելությունները, իրենց ունակությունները, կարողություններն ու կապիտալը ներդրել են տնտեսության մեջ՝ ապահովելով իրենց համար բարձր եկամուտներ,
- ✓ ապրանքների և ծառայությունների դեֆիցիտի վերացման արդյունքում բոլոր սպառողները ևս բարձրացրել են իրենց բարեկեցությունը,
- ✓ կրթության ոլորտում մարդիկ ձեռք են բերում միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընտրելու ազատություն: Փոփոխվել են ուսուցման մեթոդիկան և վերապատրաստման ձևերը, որը նրանց հնարավորություններ է տալիս ընդունելու ինքնուրույն որոշումներ ապագա աշխատանքի նկատառմամբ,
- ✓ առողջապահության ոլորտում ընդլայնված է պետական և մասնավոր բժշկական ծառայությունների ծավալը, բարելավում է սպասարկման որակը և այլն,
- ✓ չմերժելով աղքատության առկայությունը՝ մատնանշում են, որ աղքատությունը յուրահատուկ չէ միայն շուկայական

տնտեսությանը և որ այն մեծ տեսակարար կշիռ է ունեցել նաև պլանային համակարգում:

Սակայն լիբերալների քննադատները բերում են օրինակներ, որոնք ցույց են տալիս բարեկեցության նվազումը (բնակչության մեկ շնչի ՀՆԱ-ի հաշվով), որը ապացույց է այն բանի, որ գոյություն ունի պարետո անորոշություն, երբ բնակչության առանձին խմբի բարեկեցության աճը ուղղեկցվում է մեկ այլ խմբի հաշվին: Այսպես, եթե Հայաստանում՝ ԽՍՀՄ կազմում մինչ վերափոխումները բնակչության ունևոր խավի 20 %-ը տնօրինում էր եկամուտների 29,2 %-ը, իսկ 20 % աղքատ խավը՝ տնօրինում էր եկամուտների 9,8 %-ը[25], ապա 10 տարի անց (վերափոխումների ընթացքում) բնակչության հարուստ խավի 20 %-ի եկամուտները 32 անգամ գերազանցում էին ներքին ցածր խավի (աղքատների) 20 %-ի եկամուտները:

Նոր դասականները և ինստիտուցիոնալ ուղղությունների ներկայացուցիչները գտնում են, որ շուկայական մեխանիզմի արդյունավետությունն ամբողջությամբ ապահովելու համար, անհրաժեշտ է պահպանել կատարյալ մրցակցության պայմանները: Դրա հետ մեկտեղ Քեմբրիջի դպրոցի տնտեսագետները նշում են, որ կատարյալ մրցակցության ցանկացած պայմանի խախտումը հանգեցնում է շուկայի ալոկացիոն արդյունավետության խախտումների, որն էլ իր հերթին արտահայտվում է բացասական սոցիալական էֆեկտներով. շահագործման աճով, եկամուտների բաշխման համամասնությունների փոփոխումով՝ ի օգուտ շահույթի, այլ ոչ թե աշխատավարձի, բնակչության եկամուտների դիֆերենցումով՝ սպառողի «ինքնուրույնության» խախտումներով և այլն:

Հետևաբար, դիտարկելով շուկայական տնտեսության պայմաններում բնակչության կյանքի որակի և մակարդակի բարձրացման հարցերը՝ ամենից առաջ անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել այն հարցին, թե շուկայի սոցիալական առավելությունը ինչքանով է կախված նրա դրսևորման ձևերից: Այսինքն որքան ակտիվորեն ընթանա ազգային տնտեսության ապամոնոպոլացումը և

[25] Теория переходной экономики, М., 2001, стр. 390.

մրցակցային միջավայրի ստեղծումը, այնքան ավելի շատ կդրսևորվի շուկայի սոցիալական էֆեկտը:

Այս նկատառումով Հայաստանի իշխանությունները պետք է նպատակաուղղված լինեն արմատականորեն վերակառուցելու տնտեսության մեջ ձևավորված օլիգոպոլիստական իշխանությունը և ստեղծեն անհրաժեշտ պայմաններ ազատ, կատարյալ մրցակցության ծավալման և զարգացման համար:

3.Կենսամակարդակի և կյանքի որակի ինդիկատորները

ՀՆԱ-ն ցույց է տալիս ազգային տնտեսության զարգացման մակարդակը: Սակայն այն չի կարող ամբողջությամբ բնութագրել բնակչության կենսամակարդակը: Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի արտադրությունը դեռևս բավարար չէ, որպեսզի ճշգրտորեն որոշել բնակչության կենսամակարդակը (կյանքի որակը): Դրա համար անհրաժեշտ է նաև պարզաբանել բնակչության եկամուտների դիֆերենցումը:

Այսուհանդերձ, լայն տարածում է գտել նաև այնպիսի տեսակետ, ըստ որի ՀՆԱ-ի և բնակչության կենսամակարդակի միջև գոյություն ունի սերտ դրական կորելացիա (համահարաբերակցություն): Այսինքն, ինչքան մեծ է ՀՆԱ-ի արտադրությունը, այնքան հասարակությունը մոտ է կյանքի բարձր որակի: Հետևաբար, անհրաժեշտ է բացահայտել, թե կենսամակարդակի ինչպիսի ցուցանիշներ չեն ընդգրկվում ՀՆԱ-ի մեջ:

Ընդհանրապես գոյություն ունի արտադրական գործունեության մի շարք տեսակներ, որոնք չեն իրականացվում շուկայում, ինչպես օրինակ, տնային տնտեսությունում կատարվող հյուսնի, դերձակի, վարսավիրի, ներկարարի աշխատանքները և այլն: Այդ աշխատանքները չեն արտահայտվում ընկերությունների հաշվետվություններում, դրա համար էլ դրանք չեն ներառվում ազգային եկամտի հաշվարկների մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս,

որ նման տիպի աշխատանքները կազմում են ՀՆԱ-ի մոտ 15 %-ը, սակայն չեն արտահայտվում ՀՆԱ-ի ցուցանիշում:

Հաջորդը ստվերային տնտեսության ոլորտն է, որտեղ գործարար ակտիվությունն իրականացվում է շրջանցելով օրենսդրությունը: Մի կողմից ստվերային տնտեսությունը դրական երևույթ է (տնտեսական բարիքների արտադրություն), քանի որ այն պայմանավորում է զբաղվածության և եկամուտների աճ, սակայն մյուս կողմից այն բացասական է նրանով, որ գործարարները խուսափում են հարկ վճարելուց:

Տեսանելի ճշգրտությամբ կարելի է որոշել ստվերային տնտեսության մակարդակը. կանխիկ պահանջարկի վերլուծության, էլեկտրաէներգիայի ծախսերի հաշվարկումով, եկամուտների և ծախսերի տարբերություններով և այլն: Հայաստանում պաշտոնական տվյալներով ստվերային տնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 30 %-ը: Սակայն ոչ պաշտոնական տվյալներով (հեռուստատեսություն, մամուլ) այն հաշվարկվում է ավելի քան 70 %-ը: Եթե պայմանականորեն ընդունենք, որ ստվերային տնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 50 %-ը, ապա դա կնշանակի, որ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշը կավելանա 50 %-ով: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում այն կազմում է ՀՆԱ-ի 25-30 %-ը, Իտալիայում՝ 24,4 %, Շվեդիայում՝ 17,5 %, Շվեյցարիայում՝ 9 %, իսկ ամենացածրը՝ ԱՄՆ-ում՝ 8,2 %:

Կենսամակարդակը բնութագրող հաջորդ ցուցանիշը ազատ ժամանակի տևողությունն է: Կ. Մարքսը մի առիթով նշել է, որ հարուստ է այն երկիրը, որտեղ ազատ ժամանակը ավելի երկար է: Հետևաբար, կարճ է աշխատաժամանակի տևողությունը: Ճիշտ է, աշխատաժամանակի տևողության կրճատումը հանգեցնում է ՀՆԱ-ի նվազմանը, սակայն կենսամակարդակը չի որոշվում միայն դրամական արտահայտությամբ: Աշխատաժամանակի կրճատումը և ազատ ժամանակի ավելացումը պայմաններ է ստեղծում ստեղծագործական աշխատանքի կատարելագործման և մարդու համակողմանի զարգացման համար:

ՀՆԱ-ն քանակական և ոչ թե որակական ցուցանիշ է, հետևաբար, չի կարող արտահայտել ապրանքների որակի բարձրացումը, որը էական նշանակություն ունի բնակչության կյանքի որակի բարձրացման գործում:

Վերջապես, ՀՆԱ-ի ցուցանիշը չի ներառում գործարար ակտիվության բացասական արդյունքները, ինչպես օրինակ շրջակա միջավայրի աղտոտումը, որը հանգեցնում է բարեկեցության նվազմանը: Ընդ որում, այն ոչ միայն օդի, ջրի աղտոտումն է, այլև կանաչ տարածությունների կրճատումը, որը խիստ բացասականորեն կարող է անդրադառնալ կյանքի տևողության վրա: Այս նկատառումով մի կողմից էներգետիկական ճգնաժամը, մյուս կողմից էլ կանաչ տարածությունների անխնա օգտագործումը սրճարաններ, ռեստորաններ և հյուրանոցներ կառուցելու նպատակով՝ Հայաստանում կանաչ տարածությունը կրճատվեց 50 %-ով, իսկ Երևան քաղաքում՝ 75 %-ով:

Հայտնի են բարեկեցության հետևյալ հիմնական ինդիկատորները.

- ✓ աշխատավարձի մակարդակ,
- ✓ բնակարանով ապահովվածություն,
- ✓ երկարատև օգտագործման ապրանքներով (ավտոմեքենաներ, հեռուստացույցներ, համակարգիչներ, սառնարաններ և այլն) ապահովվածություն,
- ✓ առողջապահության հիմնարկությունների առկայությունը և դրանց հասանելիություն,
- ✓ լիարժեք հանգստի և զբոսաշրջության հնարավորություններ,
- ✓ հանցագործությունների ցածր մակարդակ,
- ✓ կյանքի տևողություն,
- ✓ շրջակա միջավայր,
- ✓ տնտեսական և քաղաքական ազատություն և այլն:

Ինչպես վերը նշվեց բնակչության կենսամակարդակը արտահայտվում է տարբեր ցուցանիշների համակարգով, որում առանձ-

նահատուկ նշանակություն ունի բնակչության պահանջմունքները, իրական եկամուտները, անձնական սպառման մակարդակը և սոցիալ-հոգեբանական բավարարվածությունը:

Բնակչության իրական եկամուտները դրսևորվում է հիմնականում դրամական եկամուտների և առկա գների մակարդակով: Սակայն, որպեսզի ավելի ճշգրիտ պատկերացում ունենանք բնակչության կենսամակարդակի մասին, բացի մակրոտնտեսական ցուցանիշներից (ՀՆԱ, ազգային եկամուտ) անհրաժեշտ է նաև դրանք դիտարկել միկրոտնտեսական մակարդակով: Այսինքն ուսումնասիրության օբյեկտն ընդունենք ընտանիքը, նրա կազմը, աշխատունակ անդամների զբաղվածությունը, աշխատողների և խնամառուների հարաբերանցիությունը և այլն: Այս ցուցանիշների հաշվարկով կարելի է կառուցել երկու հասկացություն՝ «պահանջմունք» և «սպառում», որոնց վերլուծությամբ հնարավոր է լուսաբանել պահանջմունքների բավարարման մակարդակը՝ ելնելով սպառման չափերից:

Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում պարենային ապրանքների սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի հացամթերքից (որի սպառումը ոչ թե կրճատվել, այլ աճել է), մյուս բոլոր պարենային ապրանքատեսակների սպառումն էականորեն նվազել է: Ավելի շատ կրճատվել է բարձրարժեք սննդային ապրանքների սպառումը, որը պայմանավորված է բնակչության իրական եկամուտների կրճատմամբ, որը վերջին հաշվով բնակչության կենսամակարդակի նվազման արտացոլումն է:

Հայաստանում «կոռումպացված» սեփականաշնորհման հետևանքով ազգային հարստությունը կենտրոնացավ մի խումբ մարդկանց ձեռքին (տեղի ունեցավ սեփականության և իշխանության միաձուլում), իսկ բնակչության մեծամասնությունը ըստ էության զրկվեց դրանից: Արդյունքում Հայաստանը դարձավ խիստ բևեռացված երկիր: Դրա մասին վկայում է այն փաստը, որ բնակչության

հարուստ խավի՝ 20 %-ի եկամուտները 32 անգամ գերազանցում են բնակչության ստորին խավի՝ աղքատների 20 %-ի եկամուտներին:

Հայաստանի բնակչության կենսամակարդակի անկումն ուղեկցվեց նաև եկամուտների բաշխման անհավասարության սրրմամբ: Դրա հետևանքով Հայաստանում խիստ նվազեց «միջին խավը», այն դարձավ առավել խոցելի և սոցիալապես անպաշտպան:

Յուրաքանչյուր երկրի բնակչության համար չկա և չի էլ կարող լինել ավելի կարևոր խնդիր, քան ժողովրդի կենսամակարդակի և կյանքի որակի բարելավումը: Երկրում իրականացվող թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունների իրականացումը վերջիվերջո իր արտահայտությունը պետք է գտնի մարդկանց բարեկեցության բարելավման ապահովման գործում: Ժամանակն է, որ երկրի իշխանությունները ցաք ու ցրիվ միջոցառումների իրականացումից անցում կատարեն համակարգված փոփոխությունների, որը էապես կնպաստի հասարակության բոլոր անդամների ապրելակերպի բարելավմանը:

4.Սոցիալական պաշտպանության համակարգը ՀՀ-ում, սոցիալական ապահովածություն և սոցիալական ապահովագրություն

Սոցիալական պաշտպանությունը «անհատ-պետություն» և «ընտանիք-պետություն» հարաբերությունների համակարգ է, որը նպատակաուղղված է պետության կողմից բնակչության նվազագույն կենսամակարդակի և աշխատուժի նորմալ վերարտադրության ապահովմանը:

Սոցիալական պաշտպանության օբյեկտներ կարող են համարվել աշխատանք չունեցող ու նվազ ապահովված բնակչության խավերը:

Ինչպես հայտնի է շուկայական տնտեսությունը եկամուտները բաշխում է խիստ անհավասարաչափ կերպով՝ «ով ինչ արժի» սկզբունքով: Եկամուտների բաշխման անհավասարությունը ուժեղա-

նում է, մասնավորապես, արտադրության կրճատման և ինֆլյացիայի պայմաններում: Հետևաբար, պետության սոցիալական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի բնակչության նվազ ապահովված խավերի սոցիալական պաշտպանության միջոցառումների իրականացմանը և սոցիալական լարվածության թուլացմանը:

Սոցիալական պաշտպանության միջոցառումների ծրագրերի և օրենքների համակարգը ելնում է ՀՀ-ում մարդու իրավունքների հռչակագրի հիմնադրույթներից, որտեղ մարդկային կյանքը համարվում է հասարակության համար ամենաբարձր արժեքը: Այսինքն պետությունը պետք է իր քաղաքացիներին պաշտպանի զանազան տիպի տնտեսական և սոցիալական բնույթի ցնցումներից և անհաջողություններից, որոնք կարող են ծագել աշխատանքի կորստի, եկամուտների կտրուկ անկման, հաշմանդամության, ծերության և այլ պատճառներով:

Սոցիալական պաշտպանության համակարգը ներառում է.

- ✓ սոցիալական ապահովությունը,
- ✓ սոցիալական երաշխիքների տրամադրումը (օրինակ մինիմալ աշխատավարձի սահմանումը),
- ✓ սոցիալական ապահովագրությունը,
- ✓ սոցիալական պաշտպանությունը (դրամական և նյութական ձևերով):

Սոցիալական պաշտպանությունը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով.



Սխեմա 1. Սոցիալական պաշտպանության համակարգը

Սոցիալական պաշտպանության համակարգի սխեման նման է հիերարխիկ բուրգի, որը կազմված է սոցիալական պաշտպանության մի քանի մակարդակներից: Նրա նեղացումը դեպի վեր նշանակում է այս կամ այն սոցիալական պաշտպանության մակարդակում մարդկանց թվի կրճատում: Այս համակարգի հիմքը (բազիսը) պետական սոցիալական երաշխիքների համակարգն է, որը ներառում է մինիմալ ֆիքսված եկամուտները (մինիմալ աշխատավարձը կամ մինիմալ թոշակը), ինչպես նաև հասարակության կյանքի ապահովման համակարգը (առողջությունը, կրթությունը, մշակույթը): Այդ երաշխիքներն ընդհանուր են բոլորի համար և կոչված են ապահովելու կյանքի մինիմալ ստանդարտները: Ակնհայտ է, որպեսզի պահպանել երաշխիքների համակարգը, անհրաժեշտ է որպեսզի վճարովի ծառայությունների ավելացմանը զուգընթաց աճեն նաև բնակչության եկամուտները, մասնավորապես աշխատավարձը: Սակայն, Հայաստանում տնտեսական աճը դեռևս չի հանգեցրել եկամուտների մինչ ճգնաժամային մակարդակին: Չնայած մինիմալ աշխատավարձն աճեց մի քանի անգամ, սակայն այն դեռևս մի քանի անգամ ցածր է կենսապահովման մինիմումից (45 հազ. դրամ): Այս-

պիսի պայմաններում բացակայում է նաև ինքնապահովման մեխանիզմը:

Սոցիալական պաշտպանության համակարգի կարևոր տարրերից է նաև սոցիալական ապահովությունը, որը ներառում է սոցիալական ռիսկերի հետևյալ տեսակները՝ արտադրական վնասվածքները, հիվանդությունները, հաշմանդամությունը, ծերությունը և այլն: Սոցիալական ապահովությունն արտահայտվում է երկու հիմնական ձևով.

1. պետական սոցիալական ապահովագրություն,
2. պետական օգնություն:

Պետական սոցիալական ապահովագրության մեխանիզմը հիմնված է մի կողմից աշխատողների և գործատուների պարտադիր ապահովագրության մասնահանման կուտակումից (արտաբյուջետային ֆոնդ), մյուս կողմից սոցիալական համահավասար տրանսֆերտների վճարում այդ ֆոնդից:

Սոցիալական օգնությունը տրամադրվում է քաղաքացիներին այնպիսի դեպքում, երբ նրանք իրավունք չունեն ստանալու սոցիալական տրանսֆերտներ: Սոցիալական օգնության հիմնական տեսակներն են. գործազուրկներին և նրանց ընտանիքներին նյութական օգնությունը, ընտանեկան նպաստները (երեխաների համար), փախստականներին միանվագ նպաստները, բնակարանի և այլ կոմունալ ծառայությունների փոխհատուցումը և այլն: Սոցիալական օգնության հիմնական նպատակն է բնակչության եկամուտների համահարթումը, պայքարը աղքատության դեմ և այլն:

Սոցիալական օգնության համակարգը դեռևս չի հասել իր կատարելագործման բարձր աստիճանին, ինչպես ԱՊՀ երկրներում, այնպես էլ Հայաստանում: Սոցիալական օգնություն երբեմն չեն ստանում նրանք, ովքեր դրա կարիքը ունեն, այլև շատ դեպքերում ստանում են նրանք, ովքեր դրա կարիքը չունեն: Դրա հետ մեկտեղ, բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում վճարումները գումարային արտահայտությամբ:

Սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործման համար առավել հետաքրքրություն է ներկայացնում ամերիկյան մոդելը, որը հիմնված է ֆինանսավորման երկու աղբյուրների վրա.

1. պետական,
2. մասնավոր:

ԱՄՆ-ում այդ նպատակով խթանում են մասնավոր ձեռնարկատիրության զարգացումը և հարկազանձման միջոցով ազդում են ազգային եկամտի վերաբաշխման վրա՝ թուլացնելով եկամուտների բաշխման անհավասարությունը հարուստների և աղքատների միջև: ԱՄՆ-ում սոցիալական պաշտպանության ծախսերը հիմնականում կրում է պետությունը, որը օգնում է բնակչության սոցիալապես թույլ պաշտպանված խմբերին: Ընդ որում, այդ օգնությունը կատարվում է պետական սոցիալական ապահովագրության (ծերության, հաշմանդամության և կերակրողներին կորցնելու կապակցությամբ թոշակների վճարում և այլն), ինչպես նաև պետության օժանդակության միջոցով: Այդ օգնությունն իրականանում է ոչ միայն դաշնային վարչակազմի, այլև նահանգների սոցիալական ծրագրերի շրջանակներում: Բացի այդ այն ներառում է ոչ միայն դրամական օգնությունը, այլև նյութական օգնության մթերքների ձեռք բերման կտրոնների հատկացման, դպրոցականների նախաճաշերի տրամադրման, հղի կանանց և փոքր երեխաների համար հատուկ կերակրատեսակների ապահովման տեսքով և այլն:

5. Աղքատության դրսևորման ձևերը և չափման եղանակները: Աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունները ՀՀ-ում

Տնտեսագիտական գրականության մեջ աղքատությունը բնութագրվում է նախևառաջ սպառմանն ուղղված ծախսերի ցածր մակարդակով: Ըստ Համաշխարհային բանկի՝ աղքատությունն արտահայտվում է որպես.

- հնարավորությունների պակաս՝ եկամուտների, սպառման ու ծախսերի ցածր մակարդակ, արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն, սոցիալական կապիտալի ցածր մակարդակ,
- սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություն,
- անվտանգության ցածր մակարդակ՝ տարբեր ռիսկերի նկատմամբ (աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ և այլն) պաշտպանության ցածր մակարդակ,
- ազդեցության ցածր մակարդակ (ձայնազրկություն)՝ տնտեսական և հասարակական, այդ թվում աղքատների կյանքի վրա ազդեցություն ունեցող կառույցների գործունեության մասնակցություն, դրանց հետ բանակցելու և դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս:

Այսինքն, աղքատությունը ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական և հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքներ բավարարելու անհնարինությունն է:

Այսուհանդերձ, աղքատության ուսումնասիրությունը հիմնականում ներառում է կենսաբանական ցուցանիշները, ինչպես նաև առողջապահության և կրթության մատչելիությունը:

Սովորաբար երկրի աղքատության գնահատման հիմք է հանդիսանում բացարձակ աղքատության երկու գծերի՝ աղքատության պարենային գծի և աղքատության ընդհանուր գծի հաշվարկները: Ընդ որում, այդ հաշվարկները կառուցվում են բնակչության համար անհրաժեշտ սննդամթերքի ձեռք բերման համար կատարված ծախսերով: Որպես սննդամթերքի սպառման նվազագույն մակարդակ՝ մեկ շնչի հաշվով, օրական հաշվարկվում է 2232 կկալ էներգետիկա պարունակող սննդամթերքը, իսկ որպես նվազագույն պարենային զամբյուղի արժեք՝ այդ էներգետիկային համապատասխան սնընդամթերքի ձեռք բերման համար անհրաժեշտ դրամական միջոցնե-

րի չափը: Պարենային կամ սպառողական զամբյուղը տարբեր երկրներում ունի տարբեր մակարդակ: Բնակչության այն խմբերը, որոնց կենսամակարդակն այդ պարենային զամբյուղից ցածր է, համարվում են աղքատներ: Նվազագույն պարենային զամբյուղի գինը, վերահաշվարկված՝ ապրանքների ու ծառայությունների վրա կատարված ծախսերի գործակցով, ծառայում է որպես սպառողական զամբյուղ կամ աղքատության ընդհանուր գիծ:

Ելնելով աղքատության չափանիշներից, Հայաստանի բնակչությունը կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

1. աղքատներ, որոնք կազմում են բնակչության մոտ 34,1 %՝ բացարձակ թվով մոտ 1 մլն. մարդ, այդ թվում՝ ծայրահեղ աղքատներ՝ 110 հազ. մարդ կամ աղքատների 11 %-ը,
2. ոչ աղքատներ, որոնք գոյատևում են, դրանք կազմում են բնակչության 54 %-ը,
3. հարուստներ, որոնք կազմում են բնակչության մոտ 12 %-ը:

Աղքատության ուսումնասիրությունը ներառում է նաև աղքատության խորությունը, սրությունը, ինչպես նաև բնակչության եկամուտների, ծախսերի և սպառման բաշխումը ըստ դեցիլային կամ քվինտիլային խմբերի և Ջինիի գործակցի: Ընդ որում՝ աղքատության խորությունը բնութագրում է, թե աղքատներն աղքատության գծից ինչքան են ներքև գտնվում, աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների ստորին մակարդակը, իսկ Ջինիի գործակիցը՝ ինչքան անհավասարաչափ են բաշխված եկամուտները բնակչության բոլոր անդամների միջև: Որքան Ջինի գործակիցը մոտ է 1-ին, այնքան բարձր է հասարակության բևեռացման աստիճանը՝ ըստ եկամուտների մակարդակի:

Հայաստանում Ջինի գործակիցը հաշվարկված է եղել 0,15-0,17, սակայն վերջին տարիներին այն գրեթե կրկնապատկվել է:

Հայաստանում աղքատության ծավալումը սկսվեց դեռևս ԽՍՀՄ կազմում: Դրա հիմնական պատճառը հանդիսացավ Սպիտակի աղետալի երկրաշարժը, որը գետնին հավասարեցրեց տասնյակ քաղաքներ և գյուղեր, 500 հազ. մարդ դարձավ անօթևան, հսկայական

չափերով աճեց նաև գործազրկությունը: Աղետալի երկրաշարժը ուղեկցվեց Ղարաբաղյան ազատագրական շարժումով, որի հետևանքով շուրջ 360 հազ. փախստականներ ներգաղթեցին Հայաստան: Նրանց մեծ մասը ավելացրեց երկրի սոցիալական պաշտպանության խիստ կարիք ունեցողների թիվը: Աղքատության ծավալումը շարունակվեց նաև շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում: Այն, մասնավորապես, պայմանավորված էր տրանսֆորմացիոն անկումով, երկրի տնտեսական շրջափակումով, անկանոն, թերի և թալանի ներքո իրականացվող սեփականաշնորհումով, էներգետիկ ճգնաժամով և այլն: Ձեռնարկությունների համատարած փակման և ներդրումային կարողությունների կրճատման հետևանքով բնակչության հիմնական մասը դարձավ գործազուրկ և աղքատ: Աղքատներ դարձան ոչ միայն գործազուրկները, այլև աշխատող մարդկանց մեծ մասը, որոնց եկամուտները չէր համապատասխանում նվազագույն պարենային զամբյուղի արժեքին: Այս բոլորը պայմանավորեցին գրեթե համատարած աղքատություն: Շուկայական հարաբերությունների անցման սկզբնական ժամանակաշրջանում բնակչության 57 %-ը դարձավ աղքատ: Այսպես, 1990-1991 թթ. ընթացքում երկրում միջին աշխատավարձը կազմում էր 220 ռուբլի, իսկ 1993 թ.՝ 25,4 հազ. ռուբլի (1984 թ. համադրելի գներով) կամ այն կրճատվեց 8,6 անգամ, իսկ Ջինի գործակիցը 0,19-ից հասավ 0,35-ի:

Սկսած 1994 թ. տեղի ունեցավ տնտեսության կայունացում և տնտեսական աճ: Մինչև 2000 թ. տնտեսական աճի տեմպերը կազմում էին տարեկան 5-6 %, իսկ 2000-ից մինչև 2009 թ.՝ տնտեսական աճը արտահայտվեց երկնիշ թվերով՝ 9,6-13,9 %: Բնականաբար, դա պայմանավորեց աղքատության կրճատում և 2009 թ. նրա մակարդակն արդեն կազմում էր 22,5 %: Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամը և այնուհետև տնտեսական աճի նվազման տեմպերը բացասականորեն անդրադարձան աղքատության աճի վրա: Աղքատության մակարդակը 22,5 %-ից հասավ 34,1 %: Բնականաբար աղքա-

տության տեսակարար կշռի աճը պայմանավորեց կենսամակարդակի կրճատում և նոր թափ ստացավ արտագաղթը:

Դեռևս 2003 թ. կառավարությունը մշակեց աղքատության հաղթահարման ռազմավարություն՝ 2003-2015 թթ. ժամանակաշրջանի համար: Ըստ այդ ծրագրի նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. կրճատել և հասցնել 19,7 %, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4,1 %: Մինչ այդ աղքատության մակարդակը կազմում էր 50,3 %, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 16 %: Դրա հետ մեկտեղ նախատեսվում էր նաև կրճատել Հայաստանում շատ բարձր մակարդակի հասած բնակչության տարբեր խավերի միջև եկամուտների բաշխման անհավասարությունը:

Աղքատության կրճատման տեսակետից ծրագիրը նպատակաուղղված էր առկա մարդկային ներուժի պահպանումը և հետագա զարգացումը, մարդկային աղքատության դրսևորումների կրճատումը, բնակչության առողջության վիճակի, նրա վերարտադրական ներուժի և կենսամակարդակի բարելավումը, ներառյալ՝ կրթության և առողջապահության ծառայությունների որակի և աղքատների համար մատչելիության մակարդակի բարձրացումը և այլն:

Այդ նպատակներին հասնելու համար ռազմավարական ծրագիրը ելնում էր երեք հիմնական գերակայություններից.

- ✓ կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովում,
- ✓ բնակչության ակտիվ և խոցելի խմբերին ուղղված նպատակային և սոցիալական ու եկամտային համարժեք քաղաքականության իրականացում,
- ✓ երկրի կառավարման համակարգի արդիականացում՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության մակարդակի բարձրացումը, և պետության սեփականության տակ գտնվող ռեսուրսների փաթեթի ընդլայնման ապահովում:

2003 թ. մինչև 2009 թ. տնտեսական աճը կազմեց 9,6-13,9 %: Միաժամանակ աճեց ՀՆԱ-ն և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Միջին աշխատավարձը աճեց 68 %-ով: Միջին ամսական կենսա-

թոշակը 10 հազ. դրամից հասավ մոտ 22,5 հազ. դրամ: Աճեց նաև կրթության և առողջապահության ոլորտների զարգացման համար նախատեսված ծախսերը և մատչելիությունը: Արդյունքում աղքատության տեսակարար կշիռը 2009 թ. իջավ մինչև 22,5 %, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 5,5 %:

2009 թ.-ից սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի վնասներ պատճառեց երկրի տնտեսության զարգացմանը: 2010 թ. տնտեսական անկում եղավ, ՀՆԱ-ն կրճատվեց 14,1 %, որը երկրորդն էր ԱՊՀ երկրների շարքում: Տնտեսական անկումն ուղեկցվեց գործազրկության և ինֆլյացիայի աճով, որոնք էլ իրենց հերթին պայմանավորեցին աղքատության մակարդակի բարձրացումը և կենսամակարդակի իջեցումը: Արդյունքում աղքատության մակարդակը կազմեց 34,1 %, իսկ ծայրահեղ աղքատներինը՝ 11 %:

Աղքատության կրճատման արդի քաղաքականության գրավականը նախևառաջ պետք է հանդիսանա կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծումը՝ հանձինս գործազրկության մեղմացման և եկամուտների անհավասարության հաղթահարման: Քանի որ ինտենսիվ տնտեսական աճը հանգեցնում է աշխատատեղերի կրճատման, հետևաբար անհրաժեշտ է խրախուսել փոքր և միջին բիզնեսի և գործարար միջավայրի զարգացումը, որոնց արդյունքում պետք է շարունակվի աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջընթացի աճը:

Աղքատության հաղթահարման համար կարևոր է նաև պետական կառավարման ոլորտի արդյունավետության մակարդակի բարձրացումը, այդ թվում հակակոռուպցիոն իրական քաղաքականության մշակումը և կիրառումը:

Եկամուտների բաշխման անհավասարությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է որոշել այդ նպատակին ծառայող հիմնական գերակայությունները, մասնավորապես, արդյունավետ սոցիալական և եկամտային քաղաքականությունը: Սոցիալական քաղաքականության հիմնական գերակայությունները պետք է համարվեն.

- սոցիալական օժանդակության ոլորտում ընտանեկան նպաստների հասցեականության աճի ապահովումը և բնակչության ամենաաղքատ շերտի, ըստ հնարավորության առավելագույն ներգրավումը համակարգի մեջ, ընտանեկան նպաստների չափի ավելացումը, որը գերազանցի պարենային աղքատության գիծը,
- սոցիալական ապահովագրության ոլորտում արդյունավետության բարձրացում, ապահովագրական բնույթ կրող կենսաթոշակների վճարման տեղափոխումը պետական բյուջե, ինչպես նաև կենսաթոշակների տարբերակման կիրառման հիման վրա, աշխատանքային ստաժի վրա հիմնված կենսաթոշակային համակարգից անցումն ապահովագրական համակարգին:

ԳԼՈՒԽ 10
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում

Ներդրումային քաղաքականության կատարելագործումը միկրո և մակրո մակարդակներով, նախ ենթադրում է ներդրումային գործընթացի տեսական և գործնական վերլուծություն: Դրա անհրաժեշտությունն արդիական է, մասնավորապես, պայմանավորված է պլանային համակարգից շուկայական համակարգին անցումով: Վերլուծության ընթացքում մեծ ուշադրություն պետք է դարձնել անցումային տնտեսության հիմնական գծերին և դրանցում տեղի ունեցող գործընթացներին, մասնավորապես, տնտեսության անկայունությանը, զարգացման այլընտրանքային բնույթին, հակասություններին, յուրահատուկ անցումային տնտեսական ձևերի առաջացմանը, ինչպես նաև պատմական բնույթին:

Որպեսզի լավ հասկանալ ներդրումային ոլորտի աղբյուրները և ներդրումային գործընթացի առանձնահատկությունները ազգային տնտեսությունում, անհրաժեշտ է վերլուծել դրա ելակետային իրավիճակը: Միաժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ խորհրդային տնտեսության մեջ փաստորեն բացակայում էր ներդրումների գործիքակազմի և պայմանների խորը վերլուծություն հետևյալ պատճառներով.

- ✓ բացակայում էր ներդրող սուբյեկտը, ֆիզիկական կամ իրավական անձը, որի նպատակը պետք է հանդիսանար շահույթի ստացումը,
- ✓ ներդրումային օբյեկտի ընտրության պլաններում առկա էր որոշակի սահմանափակումներ, մասնավորապես գույքը (ունեցվածքը), որը գտնվում էր պետության այլընտրանքային սեփականության ձևերում, ինչպես նաև բացակայում էին արժեթղթերը, արժույթները և այլն,

- ✓ ներդրումային գործունեության նկատմամբ շահագրգռվածության ցածր մակարդակը, որը պայմանավորված էր սեփականության իրավունքի ճշգրիտ հստակեցման (ամրացման), մասնավոր սեփականության, ինչպես նաև գույքի ժառանգականության սահմանափակմամբ:

Պլանային համակարգում հիմնական ներդրողը պետությունն էր: Պետությունն էր որոշում երկրի զարգացման սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Պետությունն էր սահմանում առանձին ձեռնարկության «ինվեստիցիոն պորտֆելը»՝ ելնելով նրա շահույթի մասհանումներից և ռենովացիայի համար նախատեսված ամորտիզացիոն ֆոնդից:

Ընդհանրապես վերցրած, պետական ներդրումային քաղաքականության մեջ բացակայում էր համակարգված մոտեցումը:

Ցանկացած երկրի տնտեսությունում ներդրումների կատարելագործման բոլոր հնարավոր տարբերակները կարելի է ամփոփել մի քանի մոդելներում, որոնք պլանային համակարգում չեն գործել: Այս տեսակետից ուշադրության է արժանի Վ. Ս. Բարդի հետևյալ մոդելները[26].

1. ներդրումային գործընթացի մոդել տնտեսության լրիվ ազատականացման և պետական հովանավորչության պայմաններում,
2. ներդրումային գործընթացի մոդել տնտեսության լրիվ ազատականացման՝ պետական հովանավորչության բացակայության պայմաններում (բաց համաշխարհային շուկա),
3. զուտ շուկայական ներդրումային գործընթացի լրիվ ազատականացման մոդել,
4. ներդրումների հավաքագրական (մոբիլիզացիոն) մոդել,
5. ներդրումների պլանաչափ բաշխման մոդել՝ դրամական միջոցների օգտագործմամբ,

[26] Бард В. С., Инвестиционные проблемы российской экономики, М., Экзамен, 2000, гл. 2.

6. ներդրումների երկմոդել համակարգ՝ ինքնապարփակ ներքին և արտաքին աղբյուրների վրա,
7. ներդրումային գործընթացի ինտեգրման մոդել:

Սակայն վերը նշված մոդելների կիրառումը գործնականում կախված է ազգային ներդրումային շուկայի ձևավորման խնդրից: Հետևաբար, դրա ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը կարող է հիմք ծառայել տվյալ շուկայի կառավարման հայեցակարգի մշակման համար:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում ներդրումային շուկայի գործունեության սկզբունքների որոշակի առանձնահատկությունների հետ մեկտեղ առկա են նաև որոշակի ընդհանուր գծեր: Գործնականում լայն տարածում է ստացել անգլո-ամերիկյան և եվրոպական կապիտալի շուկայի մոդելները:

Վերը շարադրված հայեցակարգային մոդելների միջև տարբերությունների հիմքում ընկած են մի քանի սկզբունքներ, որոնք իրականացվում են ինչպես կապիտալ ներդրումների ֆինանսավորման ոլորտում (առաջնային շուկայում), այնպես էլ արժեթղթերի երկրորդային շուկայում: Այդ սկզբունքները իրենց արտահայտությունն են գտնում տնտեսության իրական հատվածի հարաբերություններում (արտադրական ձեռնարկություններ), տնտեսության ֆինանսական հատվածում (բանկային և ներդրումային ինստիտուտներ), կորպորատիվ սեփականության կառուցվածքում: Այդ սկզբունքների օրինաչափ արտահայտությունն է հանդիսանում շուկայի կարգավորման համակարգը և ներդրումային գործընթացում պետության և անմիջական մասնակիցների փոխադարձ շահերի զուգակցումը:

Կարևոր է նշել, որ եթե եվրոպական արժեթղթերի շուկան ձևավորվել է մի քանի հարյուրամյակների ընթացքում, ապա ժամանակակից ամերիկյան ֆոնդային շուկան իր բազային բնութագրով պարտական է Ֆ. Դ. Ռուզվելտի «նոր կուրսին» և դրանում առաջ քաշված քեյնսյան գաղափարին, մասնավորապես պետության աջակցությունն արժեթղթերի շուկայի զարգացմանը, որպես ներդրումային գործընթացի հիմքի:

Ֆոնդային շուկայի այս կամ այն մոդելի իրականացումը կապված է տնտեսության իրական հատվածի համար կապիտալ ներդրումների հատկացման հիմնական ձևերի հետ, որտեղ էական գերակշռություն ունի բանկային վարկը կամ արժեթղթերը: Դրանց սկզբունքային տարբերության հիմքում ընկած է հետևյալ բազային բնութագրերը.

- ֆոնդային շուկայում բանկերի դերը և հնարավորությունը. ֆինանսական շուկայի բաժանումը բանկային գործունեության և արժեթղթերի գործողության հատվածների,
- կորպորատիվ սեփականության կառուցվածքը, մանր ներդրումների դերը և բաժնետերերի պաշտպանությունը,
- շուկայի կարգավորման բնույթը (պետական ինստիտուտների դերը և կազմակերպության ինքնակարգավորման հնարավորությունները):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում ներդրումային շուկայի ձևավորումը ունի հետևյալ բնութագրիչները.

1. բաժանված են վարկային և ներդրումային գործունեությունները,
2. բանկային-վարկային, ֆինանսական և ներդրումային ինստիտուտները դեռևս էական դեր չեն խաղում տնտեսության իրական հատվածի ներդրումների ֆինանսավորման համար,
3. սեփականաշնորհման հետևանքով արդյունաբերության հատվածը կայուն չէ: Կրճատվում է մանր բաժնետերերի տեսակարար կշիռը, ընդլայնվում է խոշոր բաժնետերերի չափաբաժինը,
4. մանր բաժնետերերը և ներդրողները չունեն կորպորացիաների վերահսկման մեխանիզմ,
5. ձևավորվել է ներդրումային շուկայի օլիգոպոլիական մոդել,
6. սահմանափակ է օտարերկրյա ներդրումների ծավալը,

7. բացակայում է պետության կողմից ներդրումային շուկայի կարգավորումը: Դեռ ավելին, պետական այրերը խոչընդոտում են ներդրումային միջավայրի ծավալմանը:

Շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում յուրաքանչյուր բարեփոխում այնքանով է հաջողվում, որքանով այն համակարգված և նպատակասլաց է իրականացվում, համապատասխանում է օբյեկտիվ տնտեսական օրենքների պահանջներին, բխում է համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից և նպաստում է ազգային տնտեսության զարգացմանը:

Այս առումով Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է.

- ✓ համաշխարհային շուկայում ներդրումների զարգացման միտումները և նրանց ներառումը Հայաստանի տնտեսության զարգացման ծրագրերում,
- ✓ օտարերկրյա ներդրումների հոսք ապահովելու համար համապատասխան միջավայրի ապահովումը,
- ✓ ներդրումային քաղաքականության իրական կողմնորոշիչների սահմանումը,
- ✓ ներքին ներդրումների խթանումը ներքին խնայողությունների աճը, ինչպես նաև նպաստել սպառողական հոգեբանության հաղթարարմանը,
- ✓ տնտեսության առանձին ճյուղերում Հայաստանի բացարձակ և հարաբերական առավելությունների լիարժեք օգտագործումը և այլն:

2. Ներդրումային ճգնաժամի առաջացման պատճառները և ծավալն ազգային տնտեսությունում

Ներդրումային ճգնաժամը սկսվել է դեռևս նախորդ դարի 90-ական թվականներից: Այդ ժամանակաշրջանում ներդրումների բացարձակ մակարդակը կրճատվեց երեք քառորդով: Ներդրումների ծավալի կրճատումը հիմնականում պայմանավորված էր ներքին

խնայողությունների (կուտակումների) սահմանափակությամբ, մասնավորապես, մասնավոր ներդրողները, որոնք ճգնաժամը հաղթահարելու համար չէին կարող անհրաժեշտ մեծության կապիտալ ներդնել: Տվյալ երևույթի առկայությունն ամենից առաջ կախված էր երկրում ծավալվող ինֆլյացիայի աճի տեմպերի արագացումից: Բացի այդ բացակայում էր նաև խնայողությունների և ներդրումների տրանսֆորմացիայի աշխատունակ մեխանիզմը:

Գների ազատականացումը նոր թափ հաղորդեց ինֆլյացիայի տեմպերի արագացմանն, որն էլ իր հերթին նշանակալիորեն կրճատեց ներդրումների զարգացման համար ֆինանսական բազան:

Շուկայական հարաբերություններին անցման սկզբնական ժամանակաշրջանում էականորեն կրճատվեցին բնակչության եկամուտները: Այսպես, նվազագույն և միջին իրական աշխատավարձերը առաջին 10 տարում նվազեցին 6,5 անգամ, նվազագույն աշխատավարձ ստացողների բաժինն աճեց 1,5 անգամ, իսկ միջին շնչային եկամտի մեծությունը, որը գնում է սպառման, կրճատվեց 3 անգամ[27]: Դրանով իսկ շատ կարճ ժամանակաշրջանում, բնակչության զգալի մասը փոխեց իր վեկտորը դեպի համընդհանուր աղքատության մակարդակ: Բնականաբար, նման պայմաններում, էականորեն սահմանափակվեցին բնակչության խնայողությունները, որոնք էլ իրենց հերթին պատճառ հանդիսացան կապիտալ ներդրումների ճգնաժամի առաջացման համար:

Ներդրումային ճգնաժամի էական պատճառ հանդիսացավ նաև Կենտրոնական բանկի կողմից բնակչության խնայողությունները սառեցման քաղաքականությունը, ինչպես նաև առևտրային բանկերի կողմից բնակչության ավանդների հափշտակումը: Այս բոլորը բնակչության մոտ անվստահություն առաջացրեց, իրենց դրամական միջոցներն ավանդների ձևով առևտրային բանկերում պահելու համար:

Արտադրական ոլորտի ձեռնարկություններում, ինչպես նաև ոչ առևտրային հիմնարկություններում ու կազմակերպություններում,

[27] Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, Երևան, 1999, էջ 293:

որտեղ սովորաբար ձևավորվում է համախառն խնայողությունների գերակշռող մասը (մինչև 60 %), ինչը ևս կրճատվեց, որը պայմանավորված էր ինչպես հիմնական արտադրական կապիտալի զգալի մասի արժեզրկմամբ, այնպես էլ խնայողությունների ու ներդրումների նյութաֆինանսական կորուստներով:

Հայաստանի տնտեսությունը վերափոխումների ընթացքում ապրեց մի շարք ցնցումներ: Մասնավորապես, տնտեսությանը մեծ վնասներ պատճառեց 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը, որի հետևանքով շարքից դուրս եկան արդյունաբերական ձեռնարկությունների մեկ երրորդ մասը, ավերվեցին հյուսիսային շրջանների տասնյակ քաղաքներ և գյուղեր: Անօթևան մնացին շուրջ 500 հազար մարդ, 25 հազար մարդ մահացավ: Դրան ավելացավ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը: Վրաց-աբխազական պատերազմի հետևանքով փակվեց Ռուսաստանի հետ միակ կապ հաստատող երկաթուղին: Տնտեսությանը զգալի վնաս պատճառեց նաև էներգետիկական ճգնաժամը: Մեղմ ասած անկանոն և հախուռն սեփականաշնորհումը կազմալուծեց Հայաստանի արդյունաբերությունը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նախկին տնտեսական կապերի խզումը գրեթե կաթվածահար արեց Հայաստանի տնտեսությունը: Առանձնապես ծանր վիճակում հայտնվեցին մեքենաշինությունը, քիմիական և թեթև արդյունաբերությունը՝ կապված հումքի և իրացման շուկաների կորստի հետ: Այս ամենը հասցրեց այն բանին, որ 1993 թ. Հայաստանում համախառն ներքին արդյունքը կրճատվեց 59 %, որը ԱՊՀ երկրների կազմում ամենամեծ ցուցանիշն էր:

Խնայողությունների կրճատման և ճգնաժամի խորացմանը զուգընթաց տեղի ունեցավ ՀՆԱ-ի մեջ ներդրումների նորմայի աստիճանաբար նվազում, որն էլ իր հերթին խոչընդոտում է տնտեսության զարգացումը և քայքայված ազգային տնտեսության վերականգնումը:

Ներդրումային ճգնաժամի դրսևորման ևս մեկ ձև է հանդիսանում իրական հատվածում խնայվող ռեսուրսների կապիտալիզացիայի մասշտաբների կայուն կրճատումը:

Երկարատև ժամանակահատվածում ներդրումային պահանջարկի նվազման վրա էականորեն ազդել են այնպիսի գործոններ, ինչպիսիք են իրացվելիության և իրական հատվածի ֆինանսական վիճակի վատթարացումը և դրա բացասական ազդեցությունը հիմնական կապիտալում ներդրումների վրա: Ֆինանսական ռեսուրսների մեծ մասն ուղղվել են դեպի ձեռնարկություններ՝ արտադրության մինիմալ մակարդակի պահպանման և ընթացիկ կարիքները հոգալու համար, այդ թվում նվազող շրջանառու կապիտալի համալրման համար: Ներդրումների պահանջարկի ապահովման բացակայության պատճառով կապիտալ ներդրումների դինամիկան աստիճանաբար կախվածության մեջ ընկավ ձեռնարկությունների անվճարունակությունից և փոխադարձ պարտքերի աճից: Կոշտ ճնշող ինֆլյացիայի, անկումային կոնյուկտուրայի և անվճարունակության աճի արդյունքում տեղի ունեցավ ներդրումների ֆինանսական ռեսուրսների անհետացում: Սահմանափակվեց նաև ամորտիզացիայի հաշվին ներդրումների ֆինանսավորումը:

Կապիտալ ներդրումների ոլորտի վրա բացասական ազդեցություն է թողնում նաև տոկոսի բարձր նորման (տարեկան 20-25 %): Դա մի կողմից ներառում է ռիսկի բարձր աստիճան, մյուս կողմից էլ վարկի վերադարձնելիության դժվարություններ է ստեղծում:

Անկայուն տնտեսավարման մեխանիզմի և ծանր (կոշտ) հարկային բեռի պատճառով ներդրումների սահմանափակման լուրջ գործոն է դարձել նաև ստվերային տնտեսության առկայությունը: Ընդ որում, պաշտոնական տվյալներով Հայաստանում հաշվարկվում է 30 % ստվերային տնտեսություն, իսկ ոչ պաշտոնական տվյալներով մոտ՝ 70 %: Ռուս տնտեսագետներ Մ. Կամենեցկու և Լ. Դոնցովայի տվյալներով ստվերային տնտեսության բացակայության դեպքում, շինարարության մեջ իրական կապիտալ ներդրումների

ծավալը կարող է աճել 1,18 անգամ[28]: Հարցի էությունը այն է, որ ստվերային եկամուտները դուրս են գալիս տնտեսավարման շրջապտույտից և չեն կարող դառնալ ներդրումների աղբյուր: Ստվերային տնտեսության գերաճի պայմաններում փորձել տնտեսության իրական հատվածը հագեցնել փողով և կրճատել ֆինանսական պակասորդը կհանգեցնի երկրում ներդրումների «սովի» սաստկացմանը:

Հայաստանի տնտեսության իրական հատվածում բացակայում է նաև խնայողությունների կապիտալիզացիայի արդյունավետ շուկայական մեխանիզմը: Դեռևս մինչ վերափոխումային ժամանակաշրջանը ձեռնարկությունների ներդրումային ռեսուրսները ճիշտ է ոչ միշտ էր արդյունավետ օգտագործվում, սակայն դա կենտրոնացված ձևով բյուջեի միջոցով ուղղվում էր համապատասխան նպատակների կատարմանը: Ներկայումս այդ համակարգը փլուզվել է, իսկ նորը, որը պետք է համապատասխանի շուկայական տնտեսավարմանը, դեռևս գտնվում է ստեղծման փուլում: Իրավիճակն էլ ավելի է սաստկանում, քանի որ բացակայում է նաև կապիտալի միջճյուղային ներթափանցման շուկայական մեխանիզմը, այդ թվում նաև ֆոնդային շուկայի միջոցով: Բանկային ոլորտը նույնպես պատրաստ չէ խոշոր միջոցներ հատկացնել արտադրության մեջ ներդրումներ կատարելու համար: Դա պայմանավորված է առևտրային բանկերի կապիտալիզացիայի ցածր մակարդակով: Դրանցում բացակայում են նաև ներդրումային նախագծերի կազմման աշխատանքային փորձը, թափանցիկ չէ նաև փոխառուների մասին ինֆորմացիան:

Արտադրության չափերի կրճատումը, իրական հատվածի հիմնական կապիտալի վիճակը և ներդրումների անբավարարվածությունն արտադրության մեջ հանգեցրեցին հսկայական չափերի սնանկացման, ճգնաժամի և հիմնական կապիտալի ֆիզիկական ու բարոյական մաշվածքի: Մեքենասարքավորումների զգալի մասը

[28] Каменецкий М., Донцова Л., Инвестиционно-строительный сектор: оценка обьемов теневой экономики. Инвестиции в России, 1998, N 7, стр. 29.

ժամկետանց են և չեն բավարարում արտադրության զարգացման ժամանակակից պահանջներին:

3. Բարենպաստ ներդրումային եղանակի ձևավորման տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները

Շուկայական հարաբերությունների ձևավորման ընթացքում ներդրումների իրականացումը հանդիպեց լուրջ խոչընդոտների, որոնք թույլ չէին տալիս ներդրումների խթանիչ գործիքակազմեր կիրառելու: Դրանց թվին կարելի է դասել.

- ✓ ֆինանսական սուղ ներուժը,
- ✓ ձեռնարկությունների աղքատիկ եկամուտները, բնակչության խնայողությունների փոքր ծավալները, ինչպես նաև դրանց ոչ լրիվ տրանսֆորմացիան ներդրումներ կատարելու համար,
- ✓ անցումն ինդուստրիալ զարգացման նոր մոդելի, որը պահանջում էր ֆինանսական ռեսուրսների մեծ ծավալ,
- ✓ տնտեսական աճի ձևախախտումը, որը խոչընդոտում էր կապիտալի ներհոսքը և արտադրության մեջ դրա մուտքի պատնեշների ստեղծումը, մասնավորապես արտադրության մոնոպոլացման բարձր մակարդակը, քրեական ուժերի ակտիվացումը, ինֆլյացիան, միջոցների երկարատև ներդրման շահավետության նվազումը և այլն,
- ✓ շուկայական տնտեսության զարգացման անբավարար մակարդակը, որն անկարող է լրիվ չափով ապրանքային հագեցվածության անհրաժեշտ մակարդակ ապահովել: Դրա հետ մեկտեղ, շուկայական գործիքակազմի թուլությունը (անկատարելությունը) թույլ չէր տալիս առկա ռեսուրսները տեղափոխել դեպի տնտեսական աճն ապահովող անհրաժեշտ «կետը», որն էլ հանգեցրեց ներդրումների պահանջարկի նվազեցմանը,

- ✓ անցումային ժամանակաշրջանին յուրահատուկ տրանսֆորմացիոն անկումը, որը հանդիսացավ ամենաանբարենպաստ ժամանակահատվածը ներդրումներ կատարելու համար: Տնտեսական անկումն էլ ավելի սրեց ձեռնարկությունների առանց այդ էլ սուղ եկամուտները, անհասանելի դարձրեց առևտրային վարկը՝ նույնիսկ շրջանառու միջոցները համալրելու համար:

Քանի որ Հայաստանում անցումը շուկայական հարաբերություններին տեղի ունեցավ առանձնահատուկ դժվարություններով և ինֆլյացիայի բարձր տեմպերով, առաջնահերթ խնդիր էր դարձել ուժերը կենտրոնացնել երկրի ֆինանսական համակարգի (պրոբլեմների) առողջացմանը:

Բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու անհրաժեշտ է.

1. բացահայտել ներդրումների համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները (ներքին և արտաքին աղբյուրները),
2. ձևավորել այնպիսի շուկայական սուբյեկտներ, որոնք ունակ են իրականացնելու արդյունավետ ներդրումներ (ստեղծել սեփականության բազմաթիվ ձևեր սեփականաշնորհման միջոցով, ինչպես նաև ներգրավել օտարերկրյա ներդրողներ),
3. ստեղծել այնպիսի մակրոտնտեսական միջավայր, որն ունակ է իրականացնել ռեսուրսների տրանսֆորմացիան իրական ներդրումային միջավայրում: Դրա համար անհրաժեշտ է.
   - ✓ նպաստել բնակչության խնայողությունների հոսքին՝ տրանսֆորմացիան ներդրումների մեջ,
   - ✓ նպաստել ընթացիկ ինֆլյացիայի նվազմանը,
   - ✓ ստեղծել հակամոնոպոլիստական և հակաքրեական տընտեսական քաղաքականության իրական մեխանիզմներ,
   - ✓ վերացնել մանր ու միջին գործարարության զարգացման խոչընդոտները,

- ✓ նպաստել բանկի տոկոսադրույքի նվազեցմանը,
- ✓ ստեղծել ձեռնարկատիրության և ներդրումների համար անհրաժեշտ իրավական միջավայր և այլն:

4. օգտագործել ներդրումների ակտիվացման համապատասխան խթաններ և այլն:

Ընդհանուր առմամբ ներդրումային միջավայրի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ներդրումային ռեսուրսների հայտնաբերումը, դրա անհրաժեշտ ծավալի որոշումը, որը հնարավոր կլինի ներդնել ազգային տնտեսությունում:

Շուկայական հարաբերություններին անցման նախնական փուլում ներդրումների ծավալը եղել է ծայրահեղ աղքատիկ: Իսկ ինչ վերաբերվում է ներդրումների արտաքին (օտարերկրյա) աղբյուրներին, ապա պետք է նշել, որ դրանք ևս եղել են խիստ սահմանափակ, քանի որ դրանք կապված են պետական արտաքին պարտքի աճի և բյուջեի պակասորդի հետ:

Քանի որ անցումային ժամանակաշրջանում նոր ձևավորվող տնտեսավարման կառուցվածքը չէր կարող ապահովել անհրաժեշտ մակարդակի ներդրումային ռեսուրսներ, իսկ փոխառու միջոցներն էլ սուղ էին և չէին կարողանում ապահովել ներդրումային իրական միջավայր, առաջնային պլան է մղվում այնպիսի շուկայական սուբյեկտների ստեղծումը, որոնք կկարողանան ապահովել ներդրումային նորմալ գործընթաց: Դրա իրականացումն էլ անմիջականորեն կապված է սեփականատիրական հարաբերությունների վերափոխման, սեփականության բազմազան ձևերի ստեղծման և պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման հետ: Տնտեսագիտական գրականության մեջ տարածված էր այնպիսի տեսակետ, որ մասնավոր սեփականության գերակայությունը կապահովի տընտեսական արդյունավետություն, կնպաստի տնտեսական աճի արագացմանը և արդյունքում կբարելավի ներդրումային միջավայրը: Սակայն ԱՊՀ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում սեփականաշնորհման թերի գործընթացը չապահովեց սպասելիքների անհրաժեշտ մակարդակ և արդյունավետություն: Դեռ ավելին, Հայաս-

տանում տեղի ունեցավ ազգային հարստության միաձուլումն իշխանության հետ, իսկ ազատ մրցակցությունը չծառայեց իր նպատակին: Ընդհակառակը, Հայաստանում գերակայություն ստացավ օլիգոպոլիական տիրապետությունը:

Այլ բնույթ կրեցին շուկայական վերափոխումները Չինաստանում և Վիետնամում, ուր պետական ձեռնարկություններին տրվեցին շուկայական ինքնուրույն սուբյեկտների կարգավիճակ, տեղի ունեցավ պետական հատվածի առևտրայնացում, որն էլ իր հերթին նպաստեց ձևավորելու մրցակցային միջավայր և բարենպաստ պայմաններ ներդրումների իրականացման համար: Սեփականատիրական հարաբերությունների նման աստիճանական (էվոլյուցիոն) վերափոխումներն այդ երկրներում թույլ տվեցին նշանակալից չափով խուսափելու տրանսֆորմացիոն անկումից: Պետական հատվածի առևտրայնացումը զգալի տնտեսական աճ ապահովեց նաև Լեհաստանում:

Սեփականաշնորհման ընթացքում ներդրումային միջավայրի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նաև Հունգարիայում, նախկին Գերմանիայի դեմոկրատական հանրապետությունում, ուր պետական ձեռնարկությունները վաճառվեցին շուկայական գներով: Այս երկրներում ձեռնարկության գնորդն արդեն ներդրումների գրավչությունը գնահատում էր ելնելով շահույթի ստացումից:

Անցումային ժամանակաշրջանում շատ երկրներ, այդ թվում նաև Հայաստանը, մեծ հույսեր էր կապում օտարերկրյա կապիտալի ներդրումների հետ: Սակայն դա էլ իր հերթին պահանջում է ներդրումների խթանման համապատասխան գործիքակազմերի մշակում և կիրառում: Ռուսաստանի Դաշնության փորձը ցույց տվեց, որ օտարերկրյա պորտֆելային ներդրումները ոչ բոլոր դեպքերում են ապահովում տնտեսական զարգացում: Ներդրումները հաճախակի կրել են սպեկուլյատիվ բնույթ և չնպաստեցին արդյունաբերության վերականգնմանը: Այս տեսակետից Չինաստանը ստեղծեց օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմաններ, մասնավորապես երկրի հարավային շրջաններում ազատ տնտեսական գո-

տիների ստեղծման ճանապարհով: Դա, փաստորեն, լրացրեց երկրում առկա ներդրումների պահանջը: Չինաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումները տնտեսության իրական հատվածում նպաստեցին տնտեսական աճի բարձր տեմպերի սահմանմանը և «տնտեսական հրաշքի» իրականացմանը:

Օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված է նրանով, որ այդ ոլորտում չստեղծվեց արդյունավետ տնտեսական մեխանիզմ, խթանելու օտարերկրյա կապիտալի ներհոսքը երկրի տնտեսության իրական հատվածը:

4. Օտարերկրյա ներդրումների դերը և արդյունավետության գնահատումն ազգային տնտեսության զարգացման գործում

Հայաստանի տնտեսության զարգացման գործում էական նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավումը երկրի իրական հատվածում: Ներդրումներն իրականում կարող են լինել տնտեսական աճի ինտենսիվ բացառիկ գործոն, սակայն չի բացառվում դրանց վտանգավորությունը տնտեսության զարգացման համար: Հետևաբար՝ կարևոր նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման ձևերի և պայմանների խնդրի լուծումը: Այս տեսակետից անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

1. ինչպիսի՞ ձևերով իրականացնել օտարերկրյա ներդրումները (ողղակի ներդրումների, թե փոխառությունների միջոցով),
2. ի՞նչ մեծության պետք է լինի օտարերկրյա ներդրումները,
3. որտե՞ղ պետք է օգտագործել այդ ներդրումները, որպեսզի ապահովվի տնտեսական աճի կայուն և բարձր տեմպեր:

Օտարերկրյա ներդրումների ծավալը ճիշտ գնահատելու համար նախ անհրաժեշտ է որոշել տնտեսական աճի հնարավոր և անհրաժեշտ տեմպը: Դա պետք է ապահովի ցածր տնտեսական աճից

բարձր տնտեսական աճին անցնելու անհրաժեշտությունը և դրա հիման վրա հաղթահարելու աղքատության բարձր մակարդակը (34,1 %), ապա բնակչության միջին խավի ձևավորումը և վերջապես բնակչության բարեկեցության աճը:

Հայաստանում հնարավոր տնտեսական աճի տեմպի սահմանման համար նախ պետք է ճշգրիտ գնահատել նախկին ԽՍՀՄ-ից ժառանգած ներուժը և միայն դրա հիման վրա սահմանել հնարավոր նոր տնտեսական աճի տեմպը: Նման հետազոտություն կատարելու համար կարելի է օգտագործել Ֆոն Նոյմանի դինամիկ մոդելը, որի օգտագործմամբ հնարավոր է ուսումնասիրել տվյալ տնտեսության մեջ առկա տնտեսական ժառանգության կառուցվածքի գենետիկ դինամիկան: Ըստ այդ մոդելի, եթե տնտեսական աճի առավել հնարավոր տեմպը, որը պայմանավորված է նախկին համակարգից ստացված ժառանգությամբ, և որը հաշվարկվել է Ֆոն Նոյմանի դինամիկ մոդելով, ավելի ցածր է, քան տնտեսական աճի անհրաժեշտ տեմպն է, ապա տվյալ երկիրը «դոպինգի», այսինքն լրացուցիչ արտաքին (էկզոգեն) օտարերկրյա ուժերի կարիք ունի: Իսկ տնտեսական աճի հնարավոր ավելի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ երկրի տընտեսության ներածին (էնդոգեն) ներուժն անբավարար է և չի նպաստում նրա արագացված զարգացմանը:

Այսպիսով, զարգացման հնարավոր և անհրաժեշտ տեմպերի միջև տարբերությունը կկազմի օտարերկրյա ներդրումների ներգրավման չափը: Հենց դա պետք է դառնա անհրաժեշտ «դեմպինգի» չափը, այսինքն էկզոգեն լրացուցիչ «ուժը»:

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե օտարերկրյա ներդրումների որ ձևն է ավելի նպատակահարմար (ուղղակի թե փոխառություններ), պետք է նշել, որ ուղղակի ներդրումները քաղաքական տեսանկյունից այնքան էլ գրավիչ չեն, քանի որ դրանք կապված են երկրում արտադրության միջոցների օտարերկրյա սեփականության ստեղծման և տարածման հետ: Այդ կարող է (մեծ չափերի դեպքում) երկրրում բերել քաղաքական և տնտեսական լուրջ բացասական հետևանքների (վտանգել երկրի տնտեսական անկախությունը): Ինչ վե-

բաբերվում է փոխառություններին (վարկավորումներին), ապա դրանք ավելի պակաս հրապուրիչ են: Սակայն ինչպես հայտնի է, Հայաստանում օտարերկրյա վարկավորումները կազմում են շուրջ 4 մլրդ. դոլար՝ ՀՆԱ-ի մոտ 40 %-ը: Փոխառությունների (վարկերի) չափից դուրս ներգրավումը ևս կարող է վտանգել երկրի տնտեսական անվտանգությունը:

Ուղղակի ներդրումների և վարկավորումների ներգրավման առավելությունների գնահատման ցուցանիշ կարող է լինել՝ դրանց օգտագործման արդյունավետության մակարդակը: Այս տեսակետից ընդօրինակելի է շվեյցարական բանկերի կոնֆեդերացիայի մեթոդիկան: Ընդ որում՝ ներդրումների արդյունավետության հիմքում ընկած են տվյալ երկրի վճարունակությունը բնութագրող հետևյալ ցուցանիշները.

1. արտաքին պարտքի մեծության և ապրանքների ու ծառայությունների արտահանման արդյունքում ստացված տարեկան արժույթի հարաբերությունը, ըստ որի օտարերկրյա ներդրողը տվյալ երկիրը գնահատում է դրական, երբ արտահանումից ստացված արժույթը ի վիճակի է ծածկել արտաքին պարտքը,
2. երկրի տարեկան պարտավորությունների և արտահանումից ստացված արժույթի հարաբերությունը, որի համաձայն տվյալ երկիրը օտարերկրյա ներդրողները գնահատում են դրական, եթե արժութային անհրաժեշտ միջոցները, որոնք նախատեսված են մարելու երկրի տարեկան պարտավորությունները՝ ըստ օտարերկրյա պարտքի, կազմում են արտահանումից ստացված արժութային մուտքերի ոչ ավելի, քան 15 %-ը: Այդ դեպքում մնացած 85 %-ը կարող է օգտագործվել երկրի տնտեսական զարգացման համար,
3. երկրի արտաքին պարտքի հարաբերությունն է առկա արժույթին, որի համաձայն, եթե արժութային պաշարները 20 % քիչ է արտաքին պարտքից, ապա դա նշանակում է, որ տվյալ

երկիրը չունի իր պարտքը մարելու համապատասխան երաշխիք,

4. վերջապես երկրի վճարունակությունը բնորոշող չորրորդ ցուցանիշը արտահայտում է երկրի վճարային հաշվեկշռի պակասորդի և արժութային պաշարների հարաբերությունը, որի համաձայն վճարային հաշվեկշռի պակասորդը չպետք է գերազանցի երկրի արժութային պաշարները ավելի քան 1,5 անգամ: Հակառակ դեպքում երկիրն ունակ չէ կատարելու արտաքին պարտքի պարտավորությունները:

Ուշադրության է արժանի նաև արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված մեթոդը, որի համաձայն երկրի արտաքին պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ն կամ էլ չգերազանցի նրա 10 %-ը:

Քանի որ օտարերկրյա ներդրումները պետք է վերադառնան իրենց նախորդ կրողներին (տոկոսով հանդերձ), հետևաբար անհրաժեշտ է ապահովել դրանց արտադրական և արդյունավետ օգտագործման բարձր մակարդակ: Այլ կերպ ասած, երկիրը կարող է ապավինել օտարերկրյա ներդրումներին, քանի դեռ դրա կապիտալի սահմանային արդյունավետությունը մեծ է փոխառության սահմանային «արժեքից» (այսինքն այն տոկոսադրույքից, որի դեպքում միջազգային կապիտալի շուկայից կարելի է վերցնել ֆինանսական միջոցներ՝ ներառյալ միջազգային շուկայի տոկոսադրույքի և տվյալ երկրում գործող տոկոսադրույքի տարբերությունը): Որքան արդյունավետ օգտագործվեն այդ ներդրումները, այնքան մեծ կլինի տարբերության «արժեքը»:

Այսպիսով, օտարերկրյա ներդրումներից օգտվելու հնարավորությունները, որոնք պետք է նպատակաուղղված լինեն տնտեսական բարեփոխումների ու զարգացման ապահովմանը, ամբողջությամբ կախված են այդ միջոցների արդյունավետ օգտագործումից, ինչպես նաև դրանց արդյունավետության մասին օտարերկրյա ներդրողների կարծիքից:

Օտարերկրյա ներդրումների հնարավոր և օպտիմալ մակարդակի պահպանությունը հնարավորություններ կընձեռնի ներդրումները ընդլայնեն մինչև այն սահմանը, որտեղ սահմանային ներդրումային նախագիծն ունի վերադարձելիության այնպիսի նորմա, որը հավասար կլինի օտարերկրյա փոխառությունների տոկոսադրույքին: Այլ կերպ ասած, ներդրումային բոլոր նախագծերն ունենալով վերադարձելիության մեծ հնարավորություններ՝ բարենպաստ պայմաններ են ստեղծում ոչ միայն սպասարկելու պարտքը, այլև ստանալու մեծ եկամուտներ:

Օտարերկրյա ներդրումների հնարավոր և օպտիմալ մակարդակի պահպանումը և արդյունավետության ապահովումը կարելի է լուսաբանել հետևյալ երկու գրաֆիկական պատկերմամբ.

Գրաֆիկ 1.



Գրաֆիկ 2.



որտեղ՝

ՀՆԱ$_{\text{օգտ.}}$ - օգտագործված ՀՆԱ-ն է առանց օտարերկրյա ներդրումների,

ՀՆԱ$_{\text{արտ.}}$ - արտադրված ՀՆԱ-ն է առանց օտարերկրյա ներդրումների,

ՀՆԱօգտ.^{1} - օգտագործված ՀՆԱ-ն է օտարերկրյա ներդրումների կիրառման ժամանակ,

ՀՆԱարտ.^{1} - արտադրված ՀՆԱ-ն օտարերկրյա ներդրումների կիրառման ժամանակ:

Առաջին գրաֆիկում բարձր արդյունավետության արդյունքում որոշակի ժամանակահատվածում (t_1) ՀՆԱ-ի արտադրության կորը (ՀՆԱ$_{\text{արտ.}}$), երբ զարգացման համար օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ, ներքևից հատվում է ՀՆԱ$_{\text{օգտ.}}$ կորի հետ: Ժամանակի որոշակի միջակայքում (0-), երբ ՀՆԱ$_{\text{արտ.}}$ կորը գտնվում է ներքև, ըստ վճարային հաշվեկշռի, ձևավորվում է բացասական մնացորդ: t_1 կետից երկիրը ի վիճակի չէ մարելու իր պարտավորությունները: Տվյալ դեպքերում օտարերկրյա ներդրումների օգտագործումը տնտեսության զարգացման համար օգտակար է, որովհետև դա թույլ է տալիս հասնելու արդյունավետության, որը միայն ներքին, սեփական ներդրումներով անհնարին է:

Ի տարբերություն գրաֆիկ 1-ի՝ գրաֆիկ 2-ում (ցածր արդյունավետություն) ՀՆԱ արտադրության (ՀՆԱարտ.) կորը, երբ տնտեսությունում օգտագործվում են օտարերկրյա ներդրումներ, չի հատվում ՀՆԱօգտ. կորի հետ և տվյալ դեպքում միշտ առկա է վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների բացասական մնացորդ: Տվյալ ժամանակահատվածում, արդյունավետության ցածր մակարդակի պայմաններում նկատվում է արտաքին պարտքի զգալի աճ: 2-րդ գրաֆիկը ցույց է տալիս նաև, թե որքան կարևոր է տնտեսության արդյունավետությունը: Այս գրաֆիկը լուսաբանում է, որ օտարերկրյա ներդրումներն ինքնաբերաբար չեն կարող որոշել տնտեսական աճի հարցերը, որքան էլ կարևոր լինեն օտարերկրյա ներդրումները, նույնքան էլ կարևոր է (դեռ ավելին) այդ ներդրումների արտադրողաբար և արդյունավետ օգտագործումը: Ներդրումները կարող են լինել բացառիկ բարիք, միաժամանակ կարող են դառնալ տնտեսական կախվածության ստեղծման գործոն:

Միաժամանակ պետք է նշել նաև, որ ներդրումների տնտեսական արդյունավետությունը կախված է բնական ռեսուրսներից, մարդկային գործոնից, տնտեսավարման մակարդակից, կառավարման որակից և այլն:

ԳԼՈՒԽ 11
ՄԵՆԱՇՆՈՐՀԸ ԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

1.Մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները

Մրցակցությունը առողջ շուկային բնորոշ հատկությունն է: Մրցակցությունը նպաստում է գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը, նոր արտադրատեսակների ստեղծմանը և դրանց որակի բարձրացմանը և այլն: Գործնականում ապացուցվել է, որ ազգային տնտեսության արդյունավետության մակարդակն այնքան բարձր է, որքան դրանում զարգացած է մրցակցությունը: Ազատ, կատարյալ մրցակցությունը շահավետ է բոլորին՝ սպառողներին, արտադրողներին և հասարակությանն ամբողջությամբ վերցրած: Մրցակցության օբյեկտիվ անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսական ռեսուրսների սահմանափակությամբ և հազվագյուտությամբ, սակայն մրցապայքարի ձևերը և մեթոդները տարբեր համակարգերում տարբեր են:

Պլանային տնտեսությունում՝ սոցիալիստական մրցությունը հիմնականում ուներ երկու առանձնահատկություններ.

1. Տնտեսական ռեսուրսները քանի որ բաշխվում էին պետության կողմից, հետևաբար ձեռնարկությունները միմյանց հետ մրցում էին պետական մարմինների փոխներգործության միջոցով:

Նյութատեխնիկական ռեսուրսներ բաշխող մարմինների հետ ձեռնարկությունները պայքարում էին ավելի շատ ֆոնդեր ձեռք բերելու համար: Գնագոյացման մարմինների հետ պայքարում էին իրենց արտադրանքի վաճառքի համար բարձր գներ սահմանելու համար, իսկ իրենց կողմից սպառվող արտադրության միջոցների գնման համար ցածր գներ սահմանելու համար: Ընդհանուր առմամբ պայքար էր ծավալվում նաև դոտացիաներ և արտոնյալ վարկեր ստանալու համար:

2. Համատարած դեֆիցիտի առկայության պայմաններում, սպառողների միջև պայքար էր ծավալվում ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու համար:

Այդ մրցակցությանը հաճախակի դրսևորվում էր շարունակ գոյություն ունեցող հերթերով, կաշառակերությամբ և այլն:

Հիմնականում սոցիալիստական մրցությունը կրում էր ձևական բնույթ: Շուկայական տնտեսությանը յուրահատուկ է մրցակցության այլ տիպ: Շուկայական տնտեսությունում մրցակցության գլխավոր հարթակը շուկան է: Անցումը պլանային տնտեսությունից շուկայական տնտեսությանը, ենթադրում է ձեռնարկությունների տնտեսավարման ինքնուրույնություն, այսինքն՝ ձեռնարկություններն իրենք պետք է որոշեն ինչ, ինչպես և ում համար արտադրել, նահանջ պլանային (դիրեկտիվ) գներից, արտադրանքի ծավալի ու տեսականու դիրեկտիվ ցուցանիշներից:

Ձեռնարկություններն իրենք են որոշելու իրենց մատակարարներին և վաճառահանման շուկաները:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում շուկայական վերափոխման առաջին քայլը հանդիսացավ գների ազատականացումը: Ենթադրվում էր, որ այն կհանգեցնի առողջ շուկայական մրցակցության միջավայրի: Կանխատեսվում էր, որ գների ազատականացումը կհանգեցնի դեֆիցիտի (ավելցուկի) վերացմանը և կապահովի տնտեսության հաշվեկշռվածություն: Սակայն գների ազատականացման հետևանքով տեղի ունեցավ գների բարձրացում (անցում ճնշող ինֆլյացիայից՝ բաց ինֆլյացիային): Հավասարակշռված գների առաջացումը հանգեցրին ձեռնարկությունների համար նոր կողմնորոշումների, եթե նախկինում նրանք արտադրում էին պետական պլաններին համապատասխան, արդեն պետք է հարմարվեին շուկայական պահանջարկին: Այս էլ իր հերթին բավարար չէր շուկայական մրցակցության ձևավորման համար: Իրական մրցակցությունը հնարավոր է, երբ առկա է վաճառողների առատություն: Բացի դրանից, երկրում սկսված տրանսֆորմացիոն անկումն

իր հերթին խոչընդոտում էր շուկայի համար արդյունավետ արտադրությունը:

Շուկայական հարաբերությունների անցման սկզբնական ժամանակաշրջանում դեռևս դանդաղորեն էր ձևավորվում արդյունավետ արտադրողների ընտրությունը: Քանի դեռ առկա էին վնասով աշխատող ձեռնարկությունները, դեռևս ի հայտ չէին գալիս կոշտ մրցակցությանը յուրահատուկ վաճառողներ: Այն ձեռնարկությունները, որոնք դեռևս չունեին մրցակցային պայքարի նորույթներ (նոր ձևեր), ձգտում էին ստեղծել շուկայի բաժանման համաձայնագրեր, որը շուկային զրկում էր անհրաժեշտ շարժունակությունից և սահմանափակում էր տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերը:

Արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ է ստեղծել տնտեսվարման այնպիսի մեխանիզմ, որը կապահովի ռեսուրսների շարժունակություն: Ռեսուրսների ազատ տեղաշարժի ռեժիմը պահանջում է ստեղծել համապատասխան շուկայական ենթակառուցվածքներ.

- կապիտալի շուկա,
- ապրանքների մեծածախ վաճառահանման շուկաներ,
- ինֆորմացիոն միջավայր,
- փողի կայուն շրջանառություն,
- ինստիտուցիոնալ բազա և այլն:

Սակայն այս բոլորը ստեղծվեցին միայն գների ազատականացումից հետո: Դրա համար էլ այն չարդարացրեց շուկայական ուժերի արագ գործողության առաջացման հույսերը: Գները աճեցին, սակայն կառուցվածքային անհամամասնությունները չվերացան:

Շուկայական հարաբերություններին անցման ընթացքում մրցակցության կայացումը և զարգացումը պայմանավորված է սեփականատիրական հարաբերությունների վերափոխման հետ, մասնավորապես պետական ձեռնարկությունների մասնավորեցման, որը կարող է ճանապարհ հարթել ազատ ձեռնարկատիրության կայացման և զարգացման համար: Չինաստանում սեփականատիրական

հարաբերությունների վերափոխումները տեղի ունեցան պետական ձեռնարկությունների առևտրայնացման ճանապարհով, որը ձեռնարկություններին աստիճանաբար վերահարմարեցրեց շուկայական հարաբերություններին: Ռուսաստանում և Հայաստանում տարածված էր այն կարծիքը, որ մրցակցային արդյունավետ մեխանիզմի կայացումը պայմանավորված է արագ մասնավորեցման քաղաքականության հետ: Սակայն անկանոն և թալանի աստիճանի հասած մասնավորեցումը բացասականորեն անդրադարձավ ազգային տնտեսության զարգացման վրա և գետին տապալեց սեփականաշրջանորհման հետ կապված հույսերը: Տենդագին մասնավորեցումը հանգեցրեց ձեռնարկությունների ստագնացիային, այլ ոչ թե մրցակցության կայացմանը ու կատարելագործմանը:

2.Մոնոպոլ շուկայի առանձնահատկությունները անցումային ժամանակաշրջանում

Պատմականորեն մոնոպոլիաները ձևավորվել են արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման արդյունքում: Մոնոպոլիաների ձևավորման նպատակը լրացուցիչ շահույթի (գերշահույթի) ստացումն է՝ մրցակցության ընթացքում շուկաների նվաճման ճանապարհով: Բավական է նշել, որ 20-րդ դարի 80-ական թվականներին ԱՄՆ-ում ֆիրմաների 0,5 %-ի ձեռքում էին գտնվում երկրի աշխատուժի 25 %-ը, որոնք թողարկում էին ՀՆԱ-ի 32 %-ը[29]: Մոնոպոլիան մի կողմից նպաստում է արտադրողական ուժերի հետագա զարգացմանը, մյուս կողմից էլ ապրանքների ու ծառայությունների վրա սահմանելով մոնոպոլ բարձր գներ՝ գրավելով իրացման շուկաները քայքայելով մանր արտադրողներին, արհեստական սահմանափակումների ճանապարհով խոչընդոտում է արտադրության զարգացմանը, քանի որ հասարակությունը լիովին չի օգտագործում իր տնտեսական ներուժը:

[29] Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2002 թ., էջ 106:

Ժամանակակից պայմաններում առողջ շուկայական հարաբերությունների ձևավորումը ևս մշտապես հանդիպում է որոշակի ձախողումների, կապված մոնոպոլիաների գոյության հետ, որոնք ժառանգություն են մնացել պլանային տնտեսությունից:

Մոնոպոլիաների առաջացումը պլանային տնտեսությունում, ի տարբերություն զարգացած շուկայական մրցակցության, տեղի ունեցավ արհեստական ճանապարհով, որը հիմնականում պայմանավորված է եղել.

- Պետության կողմից ռեսուրսների ուղղումը դեպի առաջնային արտադրական կառուցվածքներ, դրանց անմիջականորեն դարձնելով մոնոպոլիաներ: Այդ ձեռնարկությունների նկատմամբ կիրառվում է կապիտալ ներդրումների հատկացման պետական հովանավորչություն:
- Խոշոր ձեռնարկությունների դիրքերի ամրապնդմամբ և ձեռնարկությունների մրցունակության հիմքերի թուլացմամբ:

Նկատի էր առնվում նաև այն հանգամանքը, որ արտադրության կենտրոնացումը խոշոր, հսկա ձեռնարկությունում կհանգեցնի մասշտաբի աճի դրական էֆեկտի: ԽՍՀՄ-ում 80-ական թվականներին մոտ 4 հազար արտադրատեխնիկական նշանակություն ունեցող արտադրանք թողարկվում էր 3 հսկա ձեռնարկությունների կողմից[30]:

Անցումային ժամանակաշրջանում այդ մոնոպոլիաներին միացան նաև շուկայական տիպի նորաստեղծ մոնոպոլիաներ, որոնք առաջացան արտադրողների մրցակցության ընթացքում, և ներկայումս դարձել են իրական տիրապետող ուժ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Այս տեսակետից Հայաստանի տնտեսության համար յուրահատուկ դարձան մասնավորապես օլիգոպոլիաները:

Այսուհանդերձ, մոնոպոլիաները, անկախ այն հանգամանքից, թե ինչ ճանապարհով են առաջացել՝ ձևախողում են շուկան, խոչընդ-

[30] А. Чеканский, «Микроэкономический механизм трансформационного цикла», М., 1998 г., стр. 131.

դոտում են գիտատեխնիկական առաջադիմությունը, արտադրանքի որակի բարձրացումը և տեսականու ընդլայնումը, իսկ մոնոպոլ բարձր գներն էլ իրենց հերթին պայմանավորում են ինֆլյացիայի առաջացում: Վերջին տարիներին, Հայաստանում ինֆլյացիայի աճի բարձր տեմպերը, առաջին հերթին պայմանավորված են սուպերմարկետների (Երևան սիթի, Սթար, SAS և այլն) թվաքանակի աճով, որոնք մեծամասամբ օլիգոպոլիական ֆիրմաներ են:

Շուկայական հարաբերությունների անցման սկզբնական ժամանակաշրջանում, երբ հանրապետությունում դեռևս չկար հակամոնոպոլիստական օրենսդրություն, մեղմ ասած անկանոն մասնավորեցման հետևանքով, երբ սեփականությունը միաձուլվեց իշխանության հետ, մոնոպոլիաների տարածումն ավելի լայն թափ ստացավ և նոր որակ ձեռք բերեց:

Ներկայումս մոնոպոլացված են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները (արտադրություն, առևտուր, արտաքին առևտուր և այլն), որի հետևանքով Հայաստանը տարածաշրջանում դարձավ ամենամոնոպոլացված երկիրը: Հայաստանում 2000 թ.-ին Ազգային ժողովի կողմից ընդունած հակամոնոպոլիստական օրենսդրությունը, ցավոք, կիրառվում է անբավարար մակարդակով և հեռու է ազատ մրցակցության տնտեսության ստեղծման օբյեկտիվ անհրաժեշտությունից:

3. Տնտեսության ապամոնոպոլացման հիմնախնդիրները: Հակամոնոպոլիստական քաղաքականություն

Չնայած ազատ (կատարյալ) մրցակցության անվիճելի արժանիքներին, դրանում առկա է նաև էական թերություն, այն իմաստով, որ կատարյալ մրցակցության զարգացումը կարող է ուղեկցվել մոնոպոլիաների առաջացմամբ: Ինչպես նախորդ պարագրաֆներում նշվել է, մոնոպոլիան որոշակի իշխանություն ունի գների թելադրման, շուկաների բաժանման, արհեստականորեն դեֆիցիտի ստեղծման բնագավառներում և այլն: Հետևաբար հակամոնոպոլիստական

քաղաքականությունն ուղղված է մրցակցային միջավայրի ձևավորմանը և շուկայում մոնոպոլ իշխանության սահմանափակմանը: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է վերահսկել (շուկայում) մոնոպոլիաների վարքագիծը, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ բարձր մոնոպոլ գների իջեցման համար, չթույլատրել հասարակական ծախքերը գերազանցող գների սահմանումը, արգելել մոնոպոլիաների կողմից փոքր և միջին ձեռնարկությունների կլանումը, միաձուլումը և միավորումը: Այսպիսով, հակամոնոպոլիստական քաղաքականությունը մի կողմից պետք է ձգտի կարգավորել գները, նպաստի ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և բարելավի տնտեսության կառուցվածքը, մյուս կողմից՝ արգելի մոնոպոլիաների կողմից հակահասարակական գործունեությունը: Այսինքն, քանի որ պետությունը հնարավորություններ չունի վարչարարական կարգով վերացնելու մոնոպոլիաները, հետևաբար ստիպված է կիրառելու մոնոպոլ կառույցների վրա ներգործելու ընտրանքային քաղաքականություն, դրանցից առանձնացնելով այնպիսիները, որոնց նկատմամբ կարելի է կիրառել արգելակող կամ սահմանափակող միջոցառումներ: Հակամոնոպոլիստական քաղաքականության իրականացման ընթացքում պետության առջև կանգնած բարդ խնդիրները հետևյալն են. ինչպիսի՞ տնտեսական չափորոշիչների հիման վրա որոշել մոնոպոլացման մակարդակը, ինչպե՞ս որոշել բարձր (ցածր) գների մակարդակը, ճյուղում տիրապետության որ մասը կարելի է համարել մոնոպոլ իշխանություն, արդյունքի թողարկման սահմանափակության ինչպիսի՞ մակարդակը կարելի է համարել արհեստականորեն դեֆիցիտի ստեղծում և այլն: Հակամոնոպոլիստական քաղաքականության ոլորտում նման հարցերին հստակ պատասխան տալը դժվարին գործ է: Ենթադրենք ֆիրման կիրառելով առաջադեմ տեխնոլոգիա՝ բարձրացրել է աշխատանքի արտադրողականությունը և իջեցրել է ինքնարժեքը և հետևաբար արտադրանքի շուկայական գինը: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս տարբերել նման գների իջեցումը «դեմպինգային» ցածր գներից:

Այդ բոլորը ոչ թե ակադեմիական, այլ զուտ տեսական հարցեր են: Այսպես, օրինակ մանրածախ առևտրի խոշոր խանութները կամ սուպերմարկետները, երբ կարող են կիրառել գների խտրականություն, իջեցնելով գները իրենց հաճախորդների որոշակի խմբերի համար, որը չեն կարող իրականացնել փոքր առևտրային ֆիրմաները, հարց է առաջանում, ինչո՞ւ համապատասխան օրենսդրությամբ արգելակել գների խտրականությունը, այսինքն նման օրենքի կիրառումը, տվյալ դեպքում ո՞ւմ դեմ է ուղղված:

Նոբելյան մրցանակի դափնեկիր Փ. Սամուելսոնը այն գնահատում է, որպես մրցակցության սահմանափակում[31]: Ի՞նչ է շահում հասարակությունը, եթե տվյալ դեպքում պետությունն օրենսդրությամբ արգելի գների խտրականության քաղաքականությունը: Եթե փոքր առևտրային ֆիրմաներն իրենց ապրանքները վաճառել են բարձր գներով, քան խոշոր առևտրային ֆիրմաները, ապա սպառողները ապրանքները կգնեն ավելի բարձր գներով:

Սակայն հարցադրումը կունենա նաև այլ բովանդակություն, եթե հակամոնոպոլիստական քաղաքականությամբ արգելվի չհիմնավորված բարձր գները կամ գների բարձրացումը: Այստեղ տեղին է և արդարացված կլինի գների վերին սահմանի (առաստաղ) հաստատումը՝ ծախքեր գումարած շահույթ սկզբունքով: Հակառակ դեպքում այնպիսի օլիգոպոլացված տնտեսության պայմաններում, ինչպիսին Հայաստանում է, անհնարին է պայքարել չհիմնավորված և շարունակական աճող բարձր գների դեմ: Ներկայումս Հայաստանի ազատ մրցակցության շահերը պաշտպանող կառույցն իր տուգանքների (գների բարձրացման դեպքում) քաղաքականությամբ չի կարող զսպել ահարկու գների աճը հանրապետությունում:

Գրեթե բոլոր շուկայական տնտեսության երկրներում ազատ մրցակցության պաշտպանության համար ստեղծվել են տնտեսական մրցակցության պաշտպանության կոմիտե կամ հանձնաժողով: Հայաստանում այդ մարմինը կոչվում է տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով, որի հիմնական խնդիրներն են.

[31] П. Самуельсон, Экономика, М., 1964 г., стр. 541.

- ✓ ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության խրախուսումը և պաշտպանությունը,
- ✓ մրցակցային միջավայրի ապահովումը,
- ✓ հակամրցակցային գործունեության սահմանափակումը, նախազգուշացումը և կանխարգելումը,
- ✓ տնտեսական մրցակցության վերահսկողության իրականացումը:

Այս բոլորի իրականացման համար, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իրականացնում է հետևյալ հիմնական ֆունկցիաները.

- ➢ քննարկում է խախտման դեպքերը և ընդունում համապատասխան որոշումներ,
- ➢ խախտումների հայտնաբերման դեպքում դիմում է դատարան,
- ➢ մասնակցում է տնտեսական մրցակցության զարգացմանը և այդ բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը և դրանց սահմանված կարգով ներկայացմանը,
- ➢ մասնակցում է իր իրավասության հարցերի շուրջ միջպետական համաձայնագրերի կնքմանը,
- ➢ մշակում է մրցակցության խախտմանը կանխող միջոցառումներ,
- ➢ ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը, հրատարակում է տեղեկագիր:

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը միաժամանակ իրավունք ունի.

- ✓ ընդունել որոշումներ վերը նշված բոլոր տեսակի խախտումների համար,
- ✓ իրականացնել վերահսկողություն տնտեսվարող սուբյեկտների կողմից համաձայնության պայմանների կատարման վերաբերյալ և տալ համապատասխան եզրակացություններ,

- ✓ դիմել դատարան օրենքի խախտումների դեպքում,
- ✓ նշանակել տուգանքներ և այլն:

Ցավոք, վերը շարադրված միջոցառումների իրականացումը չի պարունակում լիարժեք տնտեսական մեխանիզմներ, որոնք կհանգեցնեն ազատ մրցակցության պահպանմանը: Շատ թե քիչ նշանակություն ունի տուգանքների համակարգի կիրառումը, սակայն դա էլ փաստորեն վճռական դեր չի խաղում, քանի որ հսկա օլիգարխները դատարանի միջոցով վիճելի հարցերը լուծում են իրենց օգտին, կամ էլ տուգանքների մակարդակն այնքան ցածր է, որ խախտումների միջոցով ձեռք բերած եկամուտները (օլիգարխների) մի քանի տասնյակ անգամներ գերազանցում են տուգանենքրի չափերը:

Հետևաբար հակամոնոպոլիստական քաղաքականությունը պետք է կոչված լինի սահմանափակելու մոնոպոլ իշխանությունը և դրանով իսկ նպաստելու մրցակցային միջավայրի ձևավորմանը:

Այս տեսակետից անհրաժեշտ է.

- ✓ դադարեցնել կամ կրճատել այն արտադրությունները, որոնք արհեստականորեն ստեղծում են դեֆիցիտ կամ պահպանում են դեֆիցիտը՝ չհիմնավորված գների բարձրացումով (իջեցումով),
- ✓ արգելել այնպիսի խոչընդոտների կիրառումը, որոնք ուղղված են շուկայում նոր արտադրողների մուտքին: Արգելել որոշ ձեռնարկությունների համար հատուկ արտոնությունների սահմանումը՝ մյուսների նկատմամբ խտրականություն կիրառելու նպատակով,
- ✓ մշակել ֆիրմաների արհեստական միավորումը և միաձուլումը սահմանափակող համակարգ,
- ✓ մոնոպոլիստական ճյուղերում կիրառել մրցակցության աջակցություն,
- ✓ գործնականում կիրառել գների վերին (առաստաղ) և ներքին սահմանի սահմանումը և այլն:

Հակամոնոպոլիստական քաղաքականության իրականացումը կապված է նաև մոնոպոլիաների գործունեության կարգավորման

հետ, մասնավորապես բնական մոնոպոլիաների կարգավորման համար (գների սահմանման բնագավառում) օգտագործել հասարակական հիմունքներով կազմված հանձնաժողով: Որոշակի իմաստով անհրաժեշտ է կիրառել նաև վարչարարական մեթոդներ: Հեռագրատունը, փոստը, էլեկտրաէներգիայի մատակարարումը, ջրամատակարարումը, երկաթուղին, մետրոն պետք է մշտապես լինեն պետական վերահսկողության համակարգում, իսկ մատակարարման ծառայությունների սակագները պետք է որոշվեն անկախ հասարակական հանձնաժողովների կողմից:

ԳԼՈՒԽ 12
ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1. Պետության դերը տնտեսության կարգավորման գործում

Տնտեսության կարգավորման գործում պետության դերի հարցը կռվախնձոր էր դարձել դեռևս դասական և քեյնսական հայեցակարգերում: Ընդ որում՝ դասականները գտնում էին, քանի որ շուկան օժտված է ինքնակարգավորվող մեխանիզմով, հետևաբար տնտեսության գործերին պետության միջամտությունը ոչ թե օգուտ, այլ վնաս կպատճառի: Հակառակ դրան՝ քեյնսականները գտնում էին, որ տնտեսության պետական կարգավորումն օբյեկտիվ անհրաժեշտություն է:

Արդեն իսկ 20-րդ դարում և մինչ այժմ պետությունն ակտիվ դեր է կատարում մակրոհամակարգում, մասնավորապես կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումներն իրականացվում են պետության միջոցով:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տնտեսության մեջ պետության դերը ոչ թե կրճատվում է, այլ աճում: Ներկայումս, հարցը ոչ թե այս է, թե անհրաժեշտ է արդյո՞ք տնտեսությունում պետության միջամտությունը, այլ թե, ինչպիսին պետք է լինի այդ միջամտությունը:

Նախկին ԽՍՀՄ-ի՝ տնտեսության մոդելը, որը կառուցված էր արտադրության կենտրոնացված կառավարման և ռեսուրսների կենտրոնացված բաշխման հիման վրա, պարզվեց, որ սխալ էր: Այսպես, եթե 20-րդ դարի 50-ական թվականներին տնտեսական աճը տարեկան կազմում էր 10 %, ապա 60-ական թվականներին այն կազմեց 7 %, 70-ականներին՝ 5 %, 80-ականներին՝ 2 %, իսկ 90-ականներին տնտեսական աճը դադարեց գոյություն ունենալուց և տնտեսությունն ընկավ խորը ճգնաժամի գիրկը: Հաղթահարել կենտրոնացված պլանավորման համակարգի ցածր արդյունավետությունը չհաջողվեց, այն բերեց զարգացման վեկտորի կտրուկ փո-

փոխության՝ անցումը շուկայական համակարգին դարձավ օբյեկտիվ անհրաժեշտություն:

Երբ ներկայումս Հայաստանն անցում է կատարում շուկայական հարաբերություններին, հարց է ծագում, ինչպիսին պետք է լինի պետության տնտեսական դերը: Այսինքն բավական է արդյոք, որ պետությունը ստեղծի «խաղի կանոններ», որպեսզի անհատները կարողանան ազատ ծավալել իրենց հնարավորություններն առաջացած խնդիրները լուծելու համար թե պետք է խառնվեն նույն այդ «խաղի կանոնների» շտկմանը՝ օրենսդրական գործունեության միջոցով: Գիտական եզրահանգումները և գործնական փորձը վկայում են, որ շուկայական տնտեսությունում, անհատի ազատ զարգացման շրջանակները կարիք են զգում ոչ միայն «պետական սահմանափակումների», այլև տնտեսական և սոցիալ-քաղաքական որոշակի լրացումների, որպեսզի հենց ինքը համակարգը լինի ճկուն և կենսունակ: Պետության հիմնական խնդիրը (անցումային ժամանակաշրջանում) պետք է հանդիսանա հնարավորինս առավելագույն չափով նպաստելու արտադրողներին և ներդրողներին ակտիվացնելու իրենց գործունեությունն ազգային տնտեսության զարգացման համար:

Այսուհանդերձ, Հայաստանում շուկայական բարեփոխումների ընթացքում «պետություն-շուկա» փոխհարաբերություններում դեռևս բացակայում են համակարգված և գիտականորեն հիմնավորված մոտեցումները, ինչպես նաև պետական կարգավորման մեթոդների և մեխանիզմների փոխկապակցված հայեցակարգ: Օլիգոպոլիաների գերակայության պայմաններում պահանջվում է պետության ակտիվ միջամտությունը: Այս նկատառումով կարևոր է դառնում պետական կարգավորման նոր համակարգի ստեղծում, որը կբխի երկրի ազգային շահերից և հաշվի առնի տնտեսական զարգացումը սահմանափակող գործոնների ազդեցությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է կատարելագործել հակամոնոպոլիստական քաղաքականությունը և ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ ազատ մրցակցային միջավայրի ստեղծման համար:

Սեփականաշնորհման հետևանքով մասնավոր հատվածի ընդլայնման հետ մեկտեղ պետական կարգավորման խնդիրները էականորեն փոփոխվում են՝ պետական ուղղակի կարգավորումից (վարչահրամայական կարգավորում) անցնում է կատարվում առավելապես տնտեսական կարգավորման մեթոդներին, որի նպատակը քաղաքացու և տնտեսական սուբյեկտների տնտեսական և իրավական շահերի պաշտպանությունն է և տնտեսական ազատության ապահովումը:

Ինչպես աղքատ և չաշխատող մարդը չի կարող ազատ լինել, այնպես էլ աղքատ և չաշխատող տնտեսություն ունեցող պետությունները չեն կարող ազատ ու անկախ լինել: Հետևաբար, պետության գլխավոր խնդիրն աշխատող ազգային տնտեսություն ունենալն է: Պետության հիմնական նպատակը պետք է լինի ազգային տնտեսության զարգացման միջոցով ապահովել բնակչության արժանապատիվ կյանք, կյանքի նորմալ պայմաններ և բարեկեցության աճ: Այդ խնդիրների լուծման և տնտեսական զարգացման ներքին կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներկա փուլում իրականացնել հակաճգնաժամային վերափոխումներ և կառավարում: Պետությունը մասնավորապես պետք է նպատակային ծրագրեր մշակի և օգտագործի՝ ճգնաժամը հաղթահարելու, սոցիալական կայունություն հաստատելու և օրենքների կիրառումն ապահովելու համար:

2. Տնտեսության հարկաբյուջետային կարգավորումը

Դեռևս վերափոխումների նախօրյակին Հայաստանի տնտեսական իրավիճակն աղետալի էր: Այն ամենից առաջ վերաբերվում էր ֆինանսական համակարգին: Բյուջեի անհաշվեկշռվածության և ֆիսկալ անհամամասնությունների առաջացման հիմնական պատճառներ հանդիսացան տնտեսության կառավարման հիերարխիկ համակարգի աստիճանական անկումը (դեգրադացիան), բյուջեի

եկամուտների նվազումը, բյուջեի ծախսերի աճը, տնտեսական քաղաքականությունում թույլ տրված սխալները և այլն:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը ամենից առաջ պետք է ձեռնամուխ լիներ ստեղծելու իր հարկաբյուջետային համակարգը և առաջին հերթին պետք է լուծվեին հետևյալ խնդիրները.

- ✓ ազգային արժույթի ներդրումը,
- ✓ հարկային նոր քաղաքականության ընդունումը,
- ✓ միջոցառումների ձեռնարկում բյուջեի դեֆիցիտը կրճատելու համար (1993 թ. բյուջեի դեֆիցիտը կազմում էր 33,6 %, 1994 թ.՝ 27,8 %):

Բյուջեի դեֆիցիտի կտրուկ աճը հիմնականում պայմանավորված էր հարկային քաղաքականության փոփոխության հետ: Մինչև 1991 թ.-ի բյուջեի եկամուտների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ուներ շրջանառության հարկը (52,5 %), որը վերափոխումների ընթացքում փոխարինվեց ավելացված արժեքի և ավելցուկային հարկերով: Այդ հարկերը 1992 թ. կազմեցին բյուջեի եկամուտների 41,4 և 22,2 %-ը՝ համապատասխանաբար: Պետական բյուջեի եկամուտների նվազումը պայմանավորված էր նաև ՀՆԱ-ի կտրուկ կրճատմամբ (59 %): Փաստորեն բյուջեի պակասորդը ծածկվեց հիմնականում արտաքին և կենտրոնական բանկի վարկերի հաշվին:

Սկսած 1994 թ.-ից հանրապետության տնտեսության մեջ տնտեսական աճը հանգեցրեց պետական բյուջեի եկամուտների աճին, սակայն բյուջեի պակասորդն առկա է մինչ օրս:

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացման հիմնական թերություններից են.

- ✓ բյուջեի պակասորդի առկայությունը,
- ✓ սուբսիդիաների և ներքին տրանսֆերտների կրճատումը,
- ✓ բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման գործում Կենտրոնական բանկի մասնակցության մեծացումը և այլն:

Հիմնական ձեռքբերումներից կարելի է նշել ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի պակասորդի կրճատումը: Հարկաբյուջետային քաղաքականության ձեռքբերում կարելի է համարել նաև արտասահմանյան

վարկերի հաշվին պակասորդի ֆինանսավորման կրճատումը: Արժեթղթերի իրացման հաշվին տեղի ունեցավ ֆինանսավորման ներքին աղբյուրների մեծացում, որը նույնպես կարելի է համարել առաջընթաց քայլ հարկաբյուջետային քաղաքականության բնագավառում:

Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով պակասորդի ֆինանսավորման գործում դարձյալ կտրուկ բարձրանում է օտարերկրյա վարկերի բաժինը, որի հետևանքով Հայաստանի արտաքին պարտքը հասավ մոտ 4 մլրդ դրամի կամ էլ ՀՆԱ-ի 40 %-ը: Ցավալին այն է, որ եկել է նախորդ ժամանակաշրջանում ստացած օտարերկրյա վարկերի վճարման ժամանակաշրջանը, սակայն բյուջեում չկան համապատասխան ֆինանսական միջոցներ այդ պարտքերը փակելու համար, կառավարությունը ստիպված է կրկին դիմելու օտարերկրյա վարկերի, որպեսզի փակի նախորդ ժամանակաշրջանների վարկերը՝ տոկոսներով հանդերձ, ինչը կրկին կբերի պետական արտաքին պարտքի աճի:

Ընդհանրապես հարկաբյուջետային քաղաքականության միջոցով ազգային տնտեսության կարգավորման ընդհանուր սկզբունքները պարզելու համար անհրաժեշտ է առանձնացնել այդ քաղաքականության երկու բաղադրիչները.

- ✓ Առաջինը դա պետական ծախսերն են, որոնք օգտագործվում են ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման համար, որոնց միջոցով կարելի է ավելացնել կամ կրճատել ամբողջական ծախսերը,
- ✓ Երկրորդը դա այն պետական ծախսերն են, որոնք օգտագործվում են շուկայական տնտեսության կայունացման նպատակով, դրանք մասնավորապես նպաստում են արտադրության ներքին ծավալի աճին (կրճատմանը):

Արտադրության ներքին ծավալի վրա պետությունը ազդում է նաև հարկային քաղաքականության միջոցով: Ակնհայտ է, որքան հարկերը բարձր են, այնքան պետական բյուջե մեծ ֆինանսական միջոցներ կներգրավեն, սակայն դա կպայմանավորի բնակչության

տրամադրության տակ եղած եկամուտների կրճատումը, որն էլ իր հերթին կհանգեցնի ամբողջական ծախսերի կրճատմանը, իսկ դա նշանակում է, որ բնակչությունն ավելի քիչ ապրանքներ ու ծառայություններ կգնի: Բարձր հարկերի դեպքում, ինչպես ձեռնարկությունների, այնպես էլ աշխատողների համար աշխատանքը դառնում է անշահավետ: Ուստի խելամիտ հարկային քաղաքականությունը ենթադրում է վերլուծել և հաշվարկել այն բոլոր գործոնները, որոնք կարող են խթանել կամ խոչընդոտել ազգային տնտեսության զարգացմանը:

Ներկայումս Հայաստանում կիրառվող հարկային քաղաքականությունը չի ծառայում իր նպատակին: Դրանում կիրառվող շատ օրենքներ անկատար են, շատ դեպքերում էլ կամա թե ակամա խախտվում են, իսկ հարկային մարմիններն էլ լիարժեք պատրաստ չեն կանխելու օրենքները խախտողներին:

Ազգային տնտեսության կարգավորման համար պետությունն օգտագործում է հարկաբյուջետային միասնական քաղաքականություն: Ընդ որում՝ հարկաբյուջետային քաղաքականության էությունը այն է, որ տնտեսության անկման կանխատեսման դեպքում պետությունն ավելացնում է պետական ծախսերը կամ կրճատում է հարկերը, իսկ վերելքի փուլում՝ ինֆլյացիայի կանխման համար, ընդհակառակը՝ կրճատում է պետական ծախսերը և ավելացնում է հարկերը: Այդ քաղաքականությունը տնտեսագիտական գրականության մեջ հայտնի է դիսկրեցիոն քաղաքականություն անվամբ:

Սակայն Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում կիրառվեց պետական ծախսերի կրճատման և հարկերի չիջեցման քաղաքականություն, ինչը կարելի է համարել տնտեսական կարճատեսություն:

Ինչ վերաբերում է միկրոմակարդակում ազգային տնտեսության կարգավորմանը, ապա դա իրականացվում է սովորաբար ֆինանսների ապակենտրոնացման միջոցով, որին վերաբերվում է ձեռնարկությունների ֆինանսները: Ձեռնարկությունների մակարդակով ֆինանսների ամբողջությունը կազմում է երկրի ֆինանսական միջոց-

ների զգալի մասը: Վերափոխումների արդյունքում ձեռնարկությունները ձեռք բերեցին ֆինանսների տնօրինման իրական տնտեսական անկախություն (շահույթի տնօրինման, ձեռնարկության հասույթի ինքնուրույն բաշխման, արտադրական և սոցիալական ֆոնդերի ձևավորման ոլորտներում և այլն):

Սակայն անցումային ժամանակաշրջանում դեռևս պահպանվում է արտադրական ոլորտի գործունեության վրա բյուջեի ներգործության անբավարար երևույթներ, մասնավորապես, մեծ չէ բյուջեի ներգործությունը ներդրումային գործընթացի զարգացման ուղղությամբ:

Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու համար բյուջետային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի ձեռնարկությունների և ճյուղերի ֆինանսական առողջացմանը, դրանց ներդրումային ներուժի ձևավորմանը, ինչպես նաև ազգային տնտեսության տարբեր ոլորտների միջև ֆինանսական կապերի կատարելագործմանը:

Ֆինանսական իրավիճակի առողջացման համար անհրաժեշտ է տնտեսության իրական հատվածում կանոնավորել դրամական հարաբերությունների համակարգը՝ կայունացնել ազգային արժույթը, ինչպես նաև բարձրացնել ձեռնարկությունների և առևտրային բանկերի ապրանքների և ծառայությունների իրացվելիության մակարդակը:

Կառավարության առաջնակարգ խնդիրները պետք է լինեն ձեռնարկությունների համար հավասար մրցակցային պայմանների ապահովումը, ինչպես նաև ստեղծել այնպիսի ֆինանսական համակարգ, որը կհամապատասխանի սոցիալական շուկայական մեխանիզմի պահանջներին:

3. Պետության դրամավարկային քաղաքականությունը

Դրամավարկային քաղաքականությունը իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից կիրառվող փոխկապակցված միջո-

ցառումների համակարգի միջոցով, որի նպատակն է վարկերի և փողի շրջանառության վրա ծրագրավորված ներգործության ճանապարհով հասնել գործարար ակտիվության, լրիվ զբաղվածության՝ առանց ինֆլյացիայի:

Դրամավարկային քաղաքականության կարևորագույն լծակներն են.

1. բաց շուկայում արժեթղթերի առք ու վաճառքը,
2. հաշվարկային տոկոսադրույքի քաղաքականությունը,
3. բանկային պահուստի նորմի պարտադիր կարգավորումը:

Դրամավարկային քաղաքականության կարևոր ուղղությունը բաց շուկայում իրականացվող գործառնություններն են: Այդ գործառնությունների էությունը այն է, որ Կենտրոնական բանկը ներգործում է փողի առաջարկի փոփոխման վրա՝ պետական փոխառությունների (պարտատոմսերի) առք ու վաճառքի միջոցով:

Հաշվարկային տոկոսադրույքի փոփոխման քաղաքականությամբ (դիսկոնտ քաղաքականություն) իրականացվում է հաշվարկային տոկոսադրույքի մեծության կարգավորումը: Ընդ որում, երբ առևտրային բանկերը դիմում են Կենտրոնական բանկին դրամական փոխառու միջոցներ ստանալու համար, ապա Կենտրոնական բանկը՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանի անհրաժեշտությունից, կրճատում (բարձրացնում) է վարկի տոկոսադրույքը:

Դրամավարկային քաղաքականության երրորդ կարևոր լծակը՝ Կենտրոնական բանկի կողմից *բանկային պահուստի նորմի պարտադիր կարգավորումն է*: Սովորաբար բանկային պահուստի նորմը տատանվում է 3-20 %-ի սահմաններում՝ կախված տվյալ ժամանակաշրջանի տնտեսական իրավիճակից: Ընդ որում՝ դրանով իսկ պետական բանկը ներգործում է առևտրային բանկերի վարկավորման կարողությունների վրա:

Հայտնի են դրամավարկային քասղաքականության երկու հիմնական տեսակ:

- մեղմ (փափուկ) դրամավարկային քաղաքականություն կամ «էժան» փողի քաղաքականություն, երբ տնտեսության մեջ

տեղ է գտնում տնտեսական անկում, գործազրկություն և գների իջեցում, ապա Կենտրոնական բանկը, որպեսզի խթանի ամբողջական ծախսերը, սկսում է գնել նախօրոք վաճառված պարտատոմսերը (կոմերցիոն բանկերից և բնակչությունից): Արդյունքում աճում է փողի առաջարկը և իջնում է տոկոսադրույքը: Փողի առաջարկն իր հերթին կնպաստի ամբողջական ծախսերի և ամբողջական պահանջարկի աճին, իսկ տոկոսի նորմի իջեցումը կխթանի ինվեստիցիան՝ արտադրության չափերի ընդլայնման համար: Այնուհետև, Կենտրոնական բանկն իջեցնում է պահուստի նորմը (օրինակ 20 %-ից՝ 10 %-ի) և դրանով ավելացնում է դրամական բազմարկիչի չափը:

Եվ վերջապես, Կենտրոնական բանկն իջեցնում է հաշվարկային տոկոսադրույքները (զեղչադրույքները), որպեսզի խթանի առևտրային բանկերի կողմից վարկային գործառույթների ընդլայնումը, որն էլ իր հերթին կնպաստի փողի առաջարկի աճին՝ վարկային հարաբերություններում: Արդյունքում մեղմ դրամավարկային քաղաքականության նպատակն է վարկը դարձնել ավելի դյուրին (մատչելի) և հեշտ ձեռք բերվող, որպեսզի ավելանա փողի առաջարկը և ամբողջական ծախսերը, որոնք էլ իրենց հերթին կհանգեցնեն զբաղվածության աճին և տնտեսությունը դուրս կբերեն անկման փուլից:

Իսկ երբ տնտեսությունը գտնվում է վերելքի բարձրագույն կետում (բում), որը տնտեսությանը տանում է դեպի ինֆլյացիոն պարույր, Կենտրոնական բանկը վերը նշված միջոցառումները կիրառում է հակառակ ուղղությամբ, որի նպատակն է կրճատել ամբողջական ծախսերը և մեղմացնել ինֆլյացիան: Այդ քաղաքականությունը հայտնի է «թանկ» փողի քաղաքականություն անվանմամբ:

Սակայն պետք է նշել, որ ռուբլու փոխանակումը նոր հայկական դրամով չիրականացվեց դոլարի նկատմամբ ռուբլու կուրսի հաշվառումով: Այսինքն, երբ 1993 թ. 1000 ռուբլին փոխանակվում էր 1 դոլարով և եթե ՀՀ-ում 200 ռուբլին փոխանակվում էր 1 դրամով,

ապա ըստ փոխարժեքի 1 դոլարը պետք է հավասար լիներ 5 դրամի: Սակայն 1993 թ. սահմանվեց 1 դոլարի փոխարժեքը 14,5 դրամի չափով: Դրանից հետո շատ կարճ ժամանակահատվածում (2 ամիս) դրամի փոխարժեքն իջավ 7 անգամ, իսկ այժմ (2014 թ.) արդեն ավելի քան 25 անգամ:

Մինչև 1994 թ. Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը կրում էր վարչահրամայական բնույթ և նրա կարգավորման հիմնական մեխանիզմներն էին բանկերից կանխիկ փողի տրամադրման սահմանափակումը, ինչպես նաև տոկոսի ստորին նորմի սահմանումը և այլն: Արդյունքում գրանցվեց տնտեսական աճի շարունակական անկում, պետական բյուջեի հսկայական պակասորդի առաջացում, անկառավարելի ինֆլյացիա և այլն, որոնց պայմաններում օտարերկրյա ներդրումների մակարդակը հավասարվեց գրեթե զրոյի:

1994 թ. վերջում ազգային արժույթի ձևավորման գործընթացը դարձավ կարգավորվող: Սակայն պետք է նշել, որ դրանից հետո էլ նոր քաղաքականության խնդիրներն ու նպատակները իրականացվում էին ցաք ու ցրիվ կերպով (ոչ ամբողջական), քանի որ դեռևս գոյություն ուներ առևտրային բացասական հաշվեկշիռ և պետական բյուջեի պակասորդը (60 %) հիմնականում ֆինանսավորվում էր Կենտրոնական բանկի վարկի հաշվին: Ինչ վերաբերվում է պետական բյուջեի պակասորդի ծածկմանն օտարերկրյա վարկերի հաշվին՝ այն իրականացվեց 1995 թվականից, որն էլ իր հերթին հնարավորություններ ընձեռնեց մշակելու դրամական զանգվածի ու դրամական բազայի կայունացման աստիճանական քաղաքականություն, ինչպես նաև ստեղծելու արժույթի պահուստներ:

Շուկայական հարաբերություններին անցման սկզբնական ժամանակաշրջանում դժվար էր ասել, թե Հայաստանում դրամավարկային քաղաքականությունը իր համապատասխան լծակներով (բաց շուկայում գործարքները, պարտադիր պահուստային նորմերը և հաշվարկային տոկոսադրույքի սահմանումը) կիրառվում էր համապատասխան չափերով և ապահովում անհրաժեշտ արդյունքներ:

Բավական է նշել, որ ընդամենը 1,5 ամսվա ընթացքում (1993 թ.) դրամական զանգվածն աճեց 3 անգամ, իսկ 1994 թ. առաջին կիսամյակում՝ 4,5 անգամ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար 1995 թ. բնակչությանը վաճառվեց 1,1 մլրդ. դրամի պետական արժեթղթեր, որի շնորհիվ կրճատվեց շրջանառության մեջ առկա դրամի զանգվածը: Այս քաղաքականությունը Կենտրոնական բանկը շարունակում է և դրանով իսկ նպաստում է շրջանառության մեջ դրամական զանգվածի աստիճանական կրճատմանը:

Կենտրոնական բանկի կողմից դրամաշրջանառության կարգավորման մյուս երկու լծակները դեռևս ակտիվ դեր չեն խաղում: Ինչպես օրինակ առևտրային բանկերի պահուստավորման նորմի ներգործությունն է դրամական զանգվածի կրճատման (ավելացման) վրա: Դա պայմանավորված է նրանով, որ բնակչության իրական եկամուտները գտնվում են ցածր մակարդակում, մեծ տեսակարար կշիռ ունի աղքատությունը և գործազրկությունը, ցածր է բնակչության կենսամակարդակը, որոնք թույլ չեն տալիս խնայել դրամական միջոցներ: Մյուս կողմից էլ բնակչությունը դեռևս չունի լիարժեք վստահություն իր խնայած դրամական միջոցները առևտրային բանկերում պահելու առումով: Ինչ վերաբերվում է դրամավարկային քաղաքականության երրորդ լծակին՝ հաշվարկային տոկոսադրույքների սահմանմանը, երբ առևտրային բանկերը չեն տնօրինում անհրաժեշտ վարկային ռեսուրսներ շուկայի պահանջների բավարարման համար, ապա Կենտրոնական բանկը նրանց նկատմամբ կիրառում է զեղչադրույքներ, որպեսզի նախ խթանի (անհրաժեշտության դեպքում) ամբողջական պահանջարկը և երկրորդ՝ շահագրգռի բանկերին օգտվելու այդ հնարավորությունից: Եթե Կենտրոնական բանկը ցանկանում է նվազեցնել առևտրային բանկերի վարկային ռեսուրսները (ինֆլյացիայի աճի պայմաններում), ապա բարձրացնում է տոկոսադրույքները:

Հայաստանում այս քաղաքականությունը սկսվեց կիրառվել 1995 թ.-ից: Այդ նպատակով Կենտրոնական բանկը սահմանեց առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի և փաստացի հա-

մալրված հիմնադիր կապիտալի միջև հարաբերակցության նորմատիվային ցուցանիշները:

Վերջին տարիներին Հայաստանի դրամավարկային քաղաքականության հիմնական առանձնահատկությունը եղել է, այն որ Կենտրոնական բանկը կառավարության հետ համաձայնեցնում է մակրոտնտեսական ցուցանիշների աճի խթանման ծրագիրը: Այդ նպատակով Կենտրոնական բանկն սկսեց կիրառել կոշտ դրամավարկային քաղաքականություն, որի հիմնական նպատակը դարձավ ինֆլյացիայի մեղմացումը և ազգային արժույթի կայունացումը:

Սակայն կոշտ դրամավարկային քաղաքականությունն արդյունավետ է այն երկրներում, որտեղ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Հայաստանում, եթե նկատի ունենանք, որ նվազագույն աշխատավարձն ընդամենը 45 հազ. դրամ է, միջին աշխատավարձը՝ 125 հազար դրամ, կենսաթոշակները և նպաստները գտնվում են շատ ցածր մակարդակի վրա (միջին կենսաթոշակը 22 հազ. դրամ), ապա անհրաժեշտ է կիրառել բնակչության եկամուտների ինդեքսավորման սկզբունքը: Իսկ ներկայումս բնակչության եկամուտները աճում են ավելի դանդաղ, քան ինֆլյացիան, արդյունքում իջել է բնակչության կենսամակարդակը:

Այսպիսով, եթե շուկայական տնտեսության անցման սկզբնական ժամանակաշրջանում դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակն է եղել ազգային տնտեսության բարեփոխումների իրականացումը և կայունացումը, ապա ժամանակակից պայմաններում, առաջնային պլան է մղվում սոցիալ-տնտեսական զարգացման առավել մասշտաբային խնդիրների լուծումը:

4. Արժեթղթերի շուկայի կարգավորումը

Ֆինանսական շուկայի կարևոր հատվածներից մեկը արժեթղթերի շուկան է: Արժեթղթերի կամ ֆոնդային շուկան՝ այն շուկան է, որը միջնորդավորում է վարկային հարաբերությունները և համատիրակալ հարաբերություններն արժեթղթերի օգնությամբ: Ֆինան-

սական ռեսուրսների ներգրավումը նման ճանապարհով նշանակում է դրանց ազատ շրջանառություն շուկայում:

Լայն իմաստով արժեթղթերի շուկան արժեթղթերի թողարկման և շրջանառության հետ կապված հարաբերություններն են, որոնք առաջանում են դրանք թողարկողների և ներդրողների միջև:

Նեղ իմաստով արժեթղթերի շուկան կոնկրետ մեխանիզմների ամբողջություն է, որի միջոցով իրականացվում են արժեթղթերի թողարկման առընչությամբ առաջացող հարաբերությունները, այսինքն այն արժեթղթերի շուկայի դրսևորման ձև է, որը կարող է հանդես գալ բորսաների, բորսայակից շուկաների, համակարգչային առևտրական համակարգերի, ինչպես նաև անկազմակերպ չկարգավորվող (փողոցային) շուկաների ձևով:

Ըստ կազմակերպչական կառուցվածքի արժեթղթերի շուկան լինում է առաջնային և երկրորդային: Առաջնային արժեթղթերի շուկայում տեղի է ունենում արժեթղթերի առաջնային տեղաբաշխումը: Այսինքն դրանում տեղի է ունենում նոր թողարկված արժեթղթերի վաճառքը: Առաջնային շուկայի մասնակիցներն են հանդիսանում արժեթղթեր թողարկողները (էմիտենտները) և ներդնողները (ինվեստորները): Ֆոնդային շուկայում արժեթղթերի հիմնական գնորդները ոչ թե ֆիզիկական, այլ իրավաբանական անձինք են. բանկերը, ապահովագրական կազմակերպությունները, ինվեստիցիոն և կենսաթոշակային ֆոնդերը և այլն:

Արժեթղթերի երկրորդային շուկայում տեղի է ունենում արժեթղթերի շրջանառությունը՝ արժեթղթերի առք ու վաճառքը: Արժեթղթերի երկրորդային շուկան էական դեր է խաղում արժեթղթերի վերավաճառման գործում, այն թույլ է տալիս ինվեստորներին ազատորեն գնել և վաճառել արժեթղթերը: Երկրորդային շուկան իր հերթին բաժանվում է երկու մասի՝ բորսայական և ոչ բորսայական արժեթղթերի շուկաների:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ արժեթղթերի շուկայի վերաբերյալ: Մի խումբ տնտեսագետներ գտնում են, որ այն կարևոր գործոն է տնտեսական

աճի տեմպերի արագացման համար և մատնանշում են, որ «ֆոնդային շուկայի գործունեությունը ծավալային ցուցանիշների, իրացվելիության և կապիտալի համաշխարհային շուկաների ինտեգրման տեսանկյունից դրական ազդեցություն է թողնում տնտեսական աճի վրա»[32]: Դրա հետ մեկտեղ դիտարկվում է նաև այն փաստը, որ համաշխարհային ֆոնդային շուկայի կապիտալիացումը վերջին տասնամյակում աճել է ավելի քան 5 անգամ:

Ջոն Ռոբինսոնը, Ռոբերտ Լուկասը գտնում են, որ «արժեթղթերի շուկաները տնտեսական աճի գործում ունեն երկրորդական նշանակություն»[33]: Այդ հարցի պատասխանն իր արտահայտությունն է գտել նաև տնտեսական կարգավորման «անգլոսաքսոնական» և «կոնտինենտալ» մոդելներում:

Ըստ առաջին մոդելի արժեթղթերի շուկան նպաստում է տնտեսական աճին, իսկ ըստ երկրորդ մոդելի՝ այն ունի երկրորդական նշանակություն:

Զարգացած շուկայական երկրներում բաժնետոմսերի ազատ շրջանառությունը բնութագրվում է հետևյալ տվյալներով. Գերմանիայում՝ 17 %-ը, Ճապոնիայում՝ 23 %-ը, ԱՄՆ-ում՝ 66 %-ը, Կանադայում՝ 70 %-ը[34]:

Կարևոր է նշել, որ Հայաստանում իրավիճակը բարվոք չէ, քանի որ մասնավորեցման արդյունքում գրանցված 1200 բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերն այդպես էլ շուկա դուրս չեկան և ընկերությունների կորպորատիվ կառավարումը չկայացավ: Դրա հետ մեկտեղ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի արժեթղթերի շուկայում կապիտալացման մակարդակը տարածաշրջանում ամենացածրն է և իր մոտակա հարևանին՝ Վրաստանին զիջում է մոտ 8 անգամ:

---

[32] Развития фондового рынка, Институт экономического развития Всемирного банка, 1998, стр. 5.

[33] Նույն տեղում, էջ 2:

[34] Տնտեսական վերափոխումները անցումային շրջանում, Երևան, 1999, էջ 244:

Հայաստանում արժեթղթերի շուկայի ձևավորումը սկսվեց շուկայական վերափոխումներին զուգընթաց՝ սոցիալ-տնտեսական վատ պայմաններում, որոնք պայմանավորված էին, ամենից առաջ, նախկին ԽՍՀՄ տնտեսության առանձնահատկություններով, մասնավորապես այն հանգամանքով, որ ԽՍՀՄ-ում գրեթե բացակայում էին արժեթղթերի (որպես այդպիսիների) թողարկումն ու շրջանառությունը՝ բացառելով արժեթղթերում ներդնող խավի առկայությունը և համապատասխան մտածելակերպի ձևավորումը: Իսկ ինչ վերաբերվում է ԽՍՀՄ պետական պարտատոմսերին, ապա դրանց բարձր իրացվելիությունը և ռիսկի ցածր մակարդակը, գրեթե բացակայող շրջանառությունը, դրանք նույնականացնում էին բանկային ավանդների հետ:

Արժեթղթերի շուկայի ձևավորման դժվարությունները Հայաստանում պայմանավորված էր նաև երկրի ներսում տեղի ունեցող՝ ներքին գործոնների ազդեցությամբ, որոնց թվին կարելի է դասել.

- 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժը, որը գրեթե ամբողջությամբ շարքից հանեց երկրի հյուսիսային շրջանների արդյունաբերությունը,
- սեփականաշնորհման հետևանքով ձեռնարկությունների զանգվածային մասշտաբով աշխատանքային գործունեության դադարեցումը,
- արցախյան պատերազմը և Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը,
- էներգետիկական ճգնաժամը,
- վրաց-աբխազական պատերազմի հետևանքով Ռուսաստանի հետ կապող միակ երկաթուղու փակումը և այլն:

Այսպիսի դժվար պայմաններում Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ եղավ արժեթղթերի շուկայի ձևավորմանը և զարգացմանը: Այդ նպատակով ընդունվեցին մի շարք օրենսդրական ակտեր և փաստաթղթեր: Դեռևս 1993 թ. ընդունվեց «արժեթղթերի շրջանառության» մասին ՀՀ օրենքը, 1994 թ.՝ «ինվեստիցիոն հիմնադրամների» մասին ՀՀ օրենքը: Արժեթղթերի շուկայում, արհես-

տավարժ գործունեության իրականացման համար, կարևոր նշանակություն ունեցավ 1998 թ. «Արժեթղթերի շուկայում իրականացվող գործունեության լիցենզավորման կարգը հաստատող» ՀՀ Կառավարության որոշման ընդունումը, որը հիմք հանդիսացավ շուկայում արժեթղթերի գծով գործունեության տեսակների սահմանման, դրանց առանձնահատկությունների հստակեցման և դրանից ելնելով այդ գործունեությունների լիցենզավորման համար: Վերջապես 2000 թ.-ի Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ ամբողջական օրենքը:

Չնայած ըստ այդ օրենքի՝ Հայաստանում կարող էին շրջանառություն կատարել բաժնետոմսերը, պարտատոմսերը, սեփականաշնորհման պետական արժեթղթերը (վաուչերները), ավանդային սերտիֆիկատները, մուրհակները, առևտրային արժեթղթերը, ինչպես նաև ֆյուչերսային, ֆորվարդային և օպցիոն պայմանագրերը, այդուհանդերձ, ՀՀ արժեթղթերի շուկայում հիմնականում շրջանառվում էր պետական պարտատոմսերը, բաժնետոմսերը և սեփականաշնորհման արժեթղթերը (վերջիններս դադարել են գոյություն ունենալուց):

Պետական պարտատոմսերի հիմնական նպատակը պետբյուջեի պակասորդի ծածկումն է: Ինչ վերաբերվում է մասնավորեցման հետևանքով ստեղծված բաժնետիրական ընկերություններին և դրանց արժեթղթերին, ապա պետք է նշել, որ այդ գործընթացը չունեցավ համապատասխան ծավալում: Հիմնական պատճառն այն է, որ նոր ստեղծված բաժնետիրական ընկերություններում չափազանց բարձր էր առանձին բաժնետերերի ձեռքում բաժնետոմսերի կենտրոնացման մակարդակը, որը վերջին հաշվով պայմանավորեց մոնոպոլ իշխանության առաջացումը:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում ազգային տնտեսության զարգացման գործընթացը պահանջում է արժեթղթերի շուկայի լիարժեք կայացում, որը էական նշանակություն ունի ներքին և արտաքին ներդրումների ներգրավման և դրա հիման վրա տնտեսական աճի տեմպերի բարձրացման համար:

ԳԼՈՒԽ 13
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՏԵՂ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Ձեռնարկատիրության էությունը և դերը ազգային տնտեսությունում

Ձեռնարկատիրության վերաբերյալ դեռևս իրենց տեսակետն են հայտնել Ռ. Կանտիլոնը, Ա. Սմիթը, Ժ. Բ. Սեյը, Կ. Մարքսը, Ի. Շումպետերը, Ա. Մարշալը և ուրիշներ: Ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանել ձեռնարկատիրության էությունը: Այսպես, Ռ. Կանտիլոնը գրում է, որ ի լրացումն հողի սեփականատիրոջ և վարձու աշխատողների երևան է եկել մարդկանց մի նոր խավ, որոնք իրենց վախով և ռիսկով ձգտում են շուկայական փոխանակության միջոցով ստանալ շահույթ: Այնուհետև ինդուստրիալ հասարակարգին անցումով, ձեռնարկատիրության ոլորտը դառնում է նյութական արտադրությունը, այսինքն եկամուտը արդեն կարելի է ապահովել ոչ թե շուկայական գների տարբերությունից (էժան գնել, թանկ վաճառել), այլ արտադրական գործոնների արդյունավետ օգտագործումից: Ռ. Կանտիլոնից հետո 100 տարի անց Ժ. Բ. Սեյը ձեռնարկատիրությունը բնորոշեց, որպես արտադրական գործոնների տարբեր համակցություններ: Սեյը գտնում էր, որ արտադրական գործոնները պետք է դուրս բերել այնտեղից, որտեղ ստեղծվում է ավելի քիչ եկամուտ և տեղափոխել այնտեղ, որը կապահովի ավելի մեծ եկամուտ:

Կ. Մարքսը ձեռնարկատիրությունը դիտարկեց որպես արտադրության իրային (առարկայական) և կենդանի գործոնի միացում, որի վերջնական նպատակը հավելյալ արժեքի (շահույթի) արտադրությունն է:

Ա. Մարշալը՝ օգտագործելով արտադրական գործոնների համակցումը կապված դրանց «տեղաշարժի» սկզբունքի զարգացման հետ, այն որոշակիացրեց ֆիրմայի մասշտաբով: Նա արտադրական

գործոնների տեղաբաշխումը կապեց տեխնոլոգիական առաջադիմության և առանձին ձեռնարկության արտադրության կազմակերպման հետ:

Ընդհանրացնելով ձեռնարկատիրության վերաբերյալ տեսակետները՝ կարելի է առանձնացնել ձեռնարկատիրության հետևյալ յուրահատկությունները.

- ✓ տնտեսական ռեսուրսների արդյունավետ միավորման (միաձուլման) և կառավարման գործունեություն, տնտեսական ռեսուրսների կառավարման ժամանակ ազատ որոշումների ընդունում, որը որոշվում է սեփական և ներգրավված միջոցների հարաբերակցությամբ, ինչպես նաև ձեռնարկատիրության գործունեության կազմակերպման ձևով (անհատական կամ կոլեկտիվ),
- ✓ տնտեսական ռեսուրսների (արտադրական գործոնների) նոր համակցությունների փնտրում (մշակում) և օգտագործում: Ի. Շումպետերն առանձնացնում է ձեռնարկատիրության գործունեության նորարարությունների հետևյալ ուղղությունները. պատրաստել նորը կամ էլ կատարելագործել առկա արդյունքները, արտադրության նոր մեթոդների ներդրումը, նոր շուկաների յուրացումը, ռեսուրսների նոր աղբյուրների ձեռք բերումը, արտադրության վերակազմավորումը,
- ✓ վերջնական արդյունքներին հասանելիության անորոշություն և ձեռնարկատիրական ռիսկ, որը կապված է պատասխանատվության հետ և ենթադրում է ձեռնարկատիրոջ պատասխանատվություն ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար:

Իսկ ձեռնարկատիրության ռիսկի աստիճանը որոշվում է ձեռնարկատիրոջ կառավարման ունակություններից, երկրի տնտեսական կայունությունից, ձեռնարկատիրոջ իրավական պաշտպանվածության մակարդակից և այլն:

Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեությունը միաձուլում է սեփականատիրոջ, նորարարի և մենեջերի ֆունկցիաները: Հետե-

վաբար ձեռնարկատիրությունը նախաձեռնություն է՝ կապված տընտեսական ռիսկի հետ, ուղղված մրցակցային առավելությունների ձեռք բերմանը և պահպանմանը, իսկ ձեռնարկատիրության նպատակը շահույթի ստացումն ու կապիտալի ընդլայնումն է:

Ձեռնարկատիրությանը բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1. ձեռնարկատիրական նախաձեռնություն,
2. տնտեսական անորոշության պայմաններում կոմերցիոն ռիսկ,
3. արտադրական գործոնների համակցման արդյունավետ տարբերակի ընտրություն,
4. նորարարություն (նոր արտադրատեսակների արտադրություն, նոր տեխնոլոգիաների կիրառում):

Պայմանների այն ամբողջությունը, որոնք ներգործում են ձեռնարկատիրության ձևավորման, զարգացման և իրականացման ֆունկցիաների վրա, իրենից ներկայացնում է ձեռնարկատիրական միջավայրը (դաշտը):

Ձեռնարկատիրությունը և միջավայրը, դրանք շուկայական տնտեսության երկու անբաժանելի մասերն են, որոնք ակտիվորեն ներգործում են միմյանց վրա՝ ծնում են նոր փոփոխություններ և զարգացում:

Ձեռնարկատերը ձևավորելով միջավայրը, այն դարձնում է իր համար գործունեության օբյեկտ և իրականացնում է իր համար անհրաժեշտ նորարարությունները և հայտնագործությունները: Հեսկինգն առանձնացնում է ձեռնարկատիրության միջավայրի հետևյալ հիմնական տարրերը.

- տնտեսական իրավիճակ,
- քաղաքական իրավիճակ,
- իրավական դաշտ,
- սոցիալ-կուլտուրական միջավայր,
- տեխնոլոգիական միջավայր,
- ինստիտուցիոնալ կազմակերպչատեխնիկական միջավայր:

Ձեռնարկատիրության գործոնները, դրանք ձեռնարկատիրության ֆունկցիաների իրականացման հնարավորությունները որոշող պարամետրերն են: Այս տեսակետից տարբերվում են ձեռնարկատիրության արտաքին և ներքին գործոնները:

Արտաքին գործոնների թվին կարելի է դասել.

1. բնական դեմոգրաֆիական գործոնները (կլիման, հողի որակը, հումքի բազան և այլն),
2. սոցիալ-կուլտուրական գործոնները (բարոյական նորմերը, կրոնական հասունությունը, կրթական մակարդակը, գործարարության էթիկան և այլն),
3. տեխնոլոգիական գործոնը (շուկայի զարգացման մակարդակը, եկամուտների մակարդակը և բաշխման յուրահատկությունները, հարկային քաղաքականությունը և այլն),
4. իրավական գործոնները (տնտեսական իրավունքի զարգացման մակարդակը, ձեռնարկատիրության միջավայրի պահպանման օրենսդրությունը և այլն),
5. քաղաքական գործոնները (քաղաքական ինստիտուտների կայունությունը, հասարակության և պետության համագործակցության բնույթը և այլն):

Ներքին գործոնները ներառում են.

1. սեփականատիրական հարաբերությունների զարգացման մակարդակը,
2. տնտեսական բջիջների կազմակերպման ներքին յուրահատկությունները:

Ձեռնարկատիրությունն իրականացվում է բազմաթիվ ֆունկցիաների միջոցով, որոնք կարելի է միավորել երկու խմբերում. առաջին խմբի ֆունկցիաները կապված են ձեռնարկատիրության միջավայրին հարմարվելու, ընթացիկ խնդիրների իրականացման, ինչպես նաև միջավայրի փոփոխմանն արձագանքելու հետ: Այս տեսակետից ձեռնարկատիրության ֆունկցիաներն ընդունում են կառավարչական ֆունկցիաների տեսք, ինչպես օրինակ՝ ֆինանսական կառավարումը, արտադրության մատակարարումը, կադրերի կա-

ռավարումը և այլն: Երկրորդ խմբի ֆունկցիաները բնութագրում են, թե ձեռնարկատիրությունը ինչպիսի ներգործություն կարող է թողնել տնտեսավարման վրա: Այս իմաստով ձեռներեցը կատարում է որոշակի վերափոխումներ՝ ինստիտուցիոնալ, սոցիալական և տնտեսական ֆունկցիաների միջոցով: Ըստ ինստիտուցիոնալ ֆունկցիայի ձեռնարկատերն իր ինվեստիցիոն գործունեությամբ փոփոխում է շուկայական իրավիճակը: Ձեռնարկատերը պետք է ստեղծի ոչ միայն նոր արտադրատեսակներ և տեխնոլոգիաներ, այլև փոխի շուկայական միջավայրը, ձևափոխի հինը և ստեղծի նոր ինստիտուտներ, մասնավորապես ռեսուրսների կոորդինացման եղանակների ու ձևերի փոփոխման, ինչպես նաև շուկայական մրցակցության փոփոխման միջոցով:

Ըստ սոցիալական ֆունկցիայի՝ ձեռնարկատերը վերջ ի վերջո պետք է զբաղվի արտադրանքի տեսականու նորացմամբ, դրանց տալով սպառողական նոր հատկություններ, որպեսզի բավարարի սպառողների նորացված պահանջմունքները, իրականացնի օպտիմալ սպառողական ընտրություն՝ հասարակության բարեկեցության բարձրացման համար:

Ըստ տնտեսական ֆունկցիայի ձեռնարկատերը պետք է հասնի մրցակցային առավելությունների ձեռք բերմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և արտադրության արդյունավետության բարձրացմանը:

2. Փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը և ֆունկցիաները

Շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) զարգացումը դարձել է հրամայական պահանջ: Այն համարվում է ազգային տնտեսության կարևոր երաշխիքներից մեկը, ապահովում է ուժեղ և դինամիկ մասնավոր հատվածի ձևավորումը և նպաստում է տնտեսական աճի տեմպերի արագացմանը: ՓՄՁ կայացումը և ընդլայնումը

նպաստում է ձեռնարկատիրության խավի ձևավորմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը, խթանում է մրցունակ արտադրանքի թողարկումը, արտադրական հզորությունների արդյունավետ օգտագործմանը, երկրում քաղաքական և տնտեսական կայունության ապահովմանը և այլն:

ՓՄՁ-ներն առավելապես զարգանում է տնտեսության մասնավոր հատվածում և լայն տարածում է ստացել արտադրության, առևտրի, գյուղատնտեսության, շինարարության, ծառայությունների ոլորտում և այլն: Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում աշխատատեղերի մոտ 70 %-ը ապահովվում են ՓՄՁ-ները արտադրելով ՀՆԱ-ի 40-60 %-ը:

Ի տարբերություն զարգացած շուկայական երկրների, անցումային տնտեսությամբ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, քանի դեռ շարունակվում են տնտեսավարման մեխանիզմի վերափոխումները, փոքր և միջին ձեռնարկությունների բաժինը թե՛ զբաղվածության ոլորտում և թե՛ ՀՆԱ-ի մեջ դեռևս փոքր է:

Աղյուսակ 1.

ՓՄՁ դերն առանձին երկրների տնտեսություններում[35]

Երկրներ	ՓՄՁ թիվը		Զբաղվածների թիվը	ՓՄՁ բաժինը %-ներով	
	հազ. հատ	1 հազ. բնակչի հաշվով		զբաղվածների ընդհ. թիվը	ՀՆԱ-ի մեջ
Մեծ Բրիտանիա	2930	46	13,6	49	50-53
Գերմանիա	2290	37	18,5	46	50-54
Իտալիա	3920	68	16,8	73	57-60
Ֆրանսիա	1980	35	15,2	54	55-62
ԱՄՆ	19300	74	70,2	54	50-52
Ճապոնիա	6450	50	39,5	78	52-55
Ռուսաստան	837	6	8,1	10	10-11
Բելոռուս	27	3	0,3	8	7-8

[35] С. Мозоль, Экономика малого бизнеса, Минск, 2004, стр. 13.

ՓՄՁ-ները Հայաստանի տնտեսությունում ևս փոքր տեսակարար կշիռ ունի: Բացի դրանից, քանի որ երկրում հիմնականում տիրապետող է հանդիսանում օլիգոպոլացված տնտեսությունը և դա շարունակաբար զարգանում է, այն հանգեցնում է ՓՄՁ-ների տեսակարար կշռի կրճատման թե՛ զբաղվածության և թե՛ ՀՆԱ-ի արտադրության մեջ: Դրա հետ մեկտեղ կոշտ հարկային քաղաքականությունը, հարկերի տարատեսակ ձևերի առկայությունը և բարձր հարկային դրույքաչափերն իրենց հերթին ևս խոչընդոտում են ՓՄՁ զարգացմանը:

Գործնականում շուկայական տնտեսության բոլոր երկրներում մշակվել և կիրառվում են ՓՄՁ տարածաշրջանային քաղաքականություն՝ առաջնություն տալով առավել թույլ տնտեսական զարգացման և գործազրկության բարձր մակարդակ ունեցող տարածաշրջաններին: Ընդ որում՝ որոշ երկրներում որպես չափանիշ սահմանվում է միայն ձեռնարկությունում աշխատող մարդկանց քանակը, որոշ երկրներում հաշվի են առնվում նաև կապիտալի տարեկան շրջապտույտը և այլն: Համաձայն Եվրոստատի (EUROSTAT) չափորոշիչների, միկրոձեռնարկություններ են համարվում 0-9, փոքր՝ 10-49, միջին՝ 50-249 աշխատող ունեցող ձեռնարկությունները:

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները սահմանվում են «փոքր և միջին ձեռնարկության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, որը ընդունվել է 2000 թ.-ին: Ըստ այդ օրենքի՝ Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են.

- գերփոքր առևտրական կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին թիվը չի գերազանցում 5 մարդ,
- փոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների թիվը չի գերազանցում՝ արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում՝ 50, շինարարությունում, էներգետիկայում, գիտության և կրթության բնագավառում՝ 25, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում՝ 15 մարդը,

- միջին առևտրական կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին թիվը չի գերազանցում՝ արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում 100, շինարարությունում, էներգետիկայում, գիտության և կրթության բնագավառում՝ 50, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների ոլորտում՝ 30 մարդը:

ՓՄՁ-ներն ունեն որոշակի առավելություններ և առանձնահատկություններ, որոնցից առավել ուշադրության է արժանի հետևյալը. դրանք հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսները և ավելի քիչ կախվածություն ունեն ներմուծումից, չեն պահանջում խոշոր ներդրումներ, արագորեն և կարճ ժամանակահատվածում կարող են ստեղծել նոր աշխատատեղեր, համեմատաբար փոքր ծախսերով և արագորեն կարող են արմատավորել նորագույն տեխնիկա և տեխնոլոգիա, այն ավելի ճկուն է և արագորեն արձագանքում է բնակչության արագ փոփոխվող սպառողական պահանջմունքներին, որով նպաստում են տարածաշրջանի զարգացմանը և այլն:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում ՓՄՁ-ները հանդիսանում են ժամանակակից շուկայական ենթակառուցվածքների հիմքը, որը երբեմն կանխորոշում է տնտեսական աճի տեմպերը, ՀՆԱ-ի կառուցվածքն ու որակը: Սակայն այս ոլորտի զարգացման տեմպերը Հայաստանում դեռևս հեռու են կատարյալ լինելուց: Դա հիմնականում պայմանավորված է դրանց համար անհրաժեշտ աջակցության մեխանիզմների անկատարությամբ և թերզարգացվածությամբ: Այս ամենի հետևանքով լիարժեքորեն չեն օգտագործվում երկրում առկա նյութական, արտադրական և մարդկային ռեսուրսները՝ սահմանափակելով ազգային տնտեսության զարգացումը:

Հայաստանում գոյություն չունի ՓՄՁ-ների զարգացման համար հարկային խթանիչ քաղաքականություն և հարկային արտոնություններ՝ մասնավորեպս նոր ստեղծվող ձեռնարկությունների համար: Դեռ ավելին, ներկայիս հարկային քաղաքականությունը խո-

չընդոտում է ՓՄՁ զարգացումը, շատ դեպքերում էլ դրանք մտնում են ստվերային ոլորտ: Հայաստանում կարևոր խնդիր է նաև ձեռնարկությունների ֆինանսավորման հարցը, վարկային ռեսուրսների դժվարամատչելիությունը, վարկերի բարձր տոկոսադրույքները ոչ թե նպաստում, այլ խոչընդոտում են ՓՄՁ զարգացումը: ՓՄՁ զարգացման գործում կարևոր նշանակություն ունի նաև ներքին շուկայում առկա ցածր պահանջարկը, որն էլ իր հերթին պայմանավորված է ցածր աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների մակարդակով, աղքատության բարձր տեսակարար կշռի առկայությամբ և այլն:

Դրությունը բարվոք վիճակում չի նաև արտահանման բնագավառում: Այս տեսակետից անհրաժեշտ է պետական աջակցություն արտահանումը խրախուսելու նպատակով: Առանց այն էլ ՀՀ-ում արտահանումը մոտ 4 անգամ զիջում է ներմուծման ծավալներին: Արտահանման խթանման համար անհրաժեշտ է ֆինանսական և վարկային ռեսուրսների առկայություն, ինչը գրեթե բացակայում է: Լուրջ խնդիրներ կան նաև տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրման հարցերում: Եղած իրավիճակի վրա իր բացասական ազդեցությունն է թողնում նաև պրոֆեսիոնալ, մասնագիտական բարձր որակավորմամբ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը: Այդ պատճառով էլ ՓՄՁ-ները հիմնականում տարածված են ոչ այնքան արտադրական, որքան առևտրի ու ծառայությունների ոլորտներում:

Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ ոլորտը զարգանում է այն դեպքում, երբ ձեռնարկատիրության զարգացման ծրագրերն իրագործվում է համալիր ձևով և հետևյալ հիմնական մակարդակներով.

1. ռազմավարական մակարդակով (ՓՄՁ համար ազգային քաղաքականության մշակում),
2. ինստիտուցիոնալ մակարդակով (ՓՄՁ աջակցության համապատասխան կառույցների և ենթակառույցների զարգացում),

3. ձեռնարկությունների մակարդակով (ձեռնարկատերեր, գործարար կառույցներ, ոչ կառավարական կազմակերպություններ):

Յուրանքաչյուր երկրում ընդհանուր ազգային քաղաքականության շրջանակներում իրականացվում է ՓՄՁ աջակցության ազգային քաղաքականություն և դրան համապատասխան պետական ծրագրերի մշակում և օգտագործում:

Անցումային տնտեսությամբ երկրներում ՓՄՁ զարգացմանը լուրջ խոչընդոտներ են հանդիսանում նաև վարչարարական բնույթի խնդիրների առկայությունը, բյուրոկրատական քաշքշուքները, կոռուպցիան, իրավական օրենքների անկատարությունը և այլն:

Ներկայումս հրատապ խնդիր է դարձել ՓՄՁ զարգացման համար ստեղծելու համապատասխան տնտեսական, իրավական և քաղաքական միջավայր: ՓՄՁ-ի կայացումը և զարգացումը ոչ միայն կարևոր նշանակություն ունի շուկայական հարաբերությունների կայացման համար, այլև մեծ է նրա դերն ազատ մրցակցության ծավալման և զարգացման գործում՝ ինչը բխում է հասարակության շահերից:

3. Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) դերն ազգային տնտեսությունում

Տնտեսագիտական գրականության մեջ վերջին մի քանի տասնամյակներում լայն տարածում է ստացել ֆիրմայի կենսունակության պարբերաշրջանային (կամ աճի փուլերը) տեսությունը:

Համաձայն այդ տեսության՝ ենթադրվում է, որ ֆիրմայի կողմից արտադրված արդյունքն անցում է հետևյալ փուլերով.

1. նոր արտադրատեսակի մշակում,
2. ներդրում շուկայում,
3. աճ,
4. հասունություն,
5. հագեցվածություն,

6. անկում:

Այս (ֆիրմայի աճի փուլերը) մոտեցումն առաջին անգամ մշակվել է ամերիկյան տնտեսագետ Տ. Լևիտտի կողմից (1965 թ.)՝ համաձայն որի կարելի է որոշել ֆիրմայի չափսերը (փոքր, միջին, խոշոր)՝ ելնելով նրա զարգացման փուլերի բնույթից: Այս տեսության տարբերակներից մեկն ուշադրությունը սևեռում է արտադրանքի զարգացման ռազմավարությանը՝ որպես ֆիրմայի աճի փուլի ինդիկատոր: Միաժամանակ ֆիրման դիտարկելով դինամիկ պլանով, որպես զարգացող մանրից մինչև խոշոր, նշում են, որ ֆիրման իր գործունեությունը դիվերսիֆիկացնում է ըստ ապրանքային և ճյուղային սկզբունքի: Ընդ որում՝ արդյունքի զարգացման փուլը բնութագրելու համար օգտագործվում է մասնագիտացման գործակիցը՝ ֆիրմայի տարեկան եկամտի և արդյունքի արտադրության (մատակարարման) ընդհանուր ծախսերի հարաբերությունը:

Այս դասակարգումը պետությանը թույլ է տալիս պաշտպանել այս կամ այն խումբ ֆիրմաներին, որոնք կարող են բարենպաստ պայմաններ ստեղծել ազգային տնտեսության զարգացման համար: Բնականաբար, եթե նման դեր կարող են կատարել խոշոր ձեռնարկությունները, ապա պետությունը կխթանի դրանց զարգացումն ի նպաստ ազգային տնտեսության զարգացման: Մյուս կողմից էլ պետությունը պետք է պաշտպանի ազատ մրցակցությունը և ՓՄՁ ձեռնարկությունների համար ապահովի համապատասխան տնտեսական, իրավական և քաղաքական միջավայր, դրանց վերաբերյալ ապահովի համապատասխան արտոնություններ: Միաժամանակ պետք է կիրառի իրական հակամոնոպոլիստական քաղաքականություն, որի կարիքը ունի մասնավորապես օլիգոպոլացված Հայաստանի տնտեսությունը:

Խոշոր ձեռնարկությունների առավելությունների մասին (ՓՄՁ համեմատությամբ) դեռևս խոսել են Շումպետերը և Ջոն Գելբրայտը: Սակայն խոշոր ֆիրմաները դժվար թե կարողանան ցուցաբերել համապատասխան վերաբերմունք շուկայում հանկարծակի ծագած տատանումների նկատմամբ: Ինչպես հայտնի է դրանց գործունեու-

թյունը դիվերսիֆիկացված է ըստ տարբեր ճյուղերի և նույնիսկ երկրների: Եթե խոշոր ձեռնարկությունների ստեղծումն ավելի նպատակահարմար է ծանր արդյունաբերության, մետաղաձուլության, մեքենաշինության ճյուղերում, ապա լայն սպառման ամենօրյա ապրանքների արտադրության համար ավելի նպատակահարմար են փոքր և միջին ձեռնարկությունները:

Այսպիսով, ՓՄՁ դերն ազգային տնտեսության զարգացման տեսանկյունից պետք է լուսաբանել հետևյալ ուղղություններով:

Տնտեսավարման մեխանիզմում ՓՄՁ-ները թույլ են տալիս պայքարել մոնոպոլիաների դեմ՝ ապահովելով անհրաժեշտ ճկունություն ժամանակին արձագանքելու սպառողական պահանջմունքների փոփոխմանը: ՓՄՁ-ները լինելով շուկայական միջավայրի անբաժանելի մաս, մրցակցային ճնշում են գործադրում խոշոր ձեռնարկությունների վրա և դրանով իսկ նպաստում են խթանելու նրանց ներդրումային գործունեությունը: ՓՄՁ-ների գործունեության շնորհիվ ավելի լավ է բավարարվում բնակչության պահանջմունքները: Դա պայմանավորված է նրանով, որ ՓՄՁ-ն լրացնում է շուկայի բոլոր հատվածները (որմնախորշերը), որոնք անտեսվում են խոշոր ձեռնարկությունների կողմից՝ պայմանավորված արտադրության մասշտաբի մինիմալ էֆեկտով:

Հասարակական հոգեբանության բնագավառում ՓՄՁ սեփականատիրոջ հոգեբանություն է ձևավորվում. ինքնուրույն որոշումներ ընդունել, վստահել սեփական ուժերին (կարողություններին, ունակություններին), իր համար ապահովել մրցակցային միջավայր և այլն: Փոքր և միջին բիզնեսով զբաղվող մարդը թույլ է տալիս իրեն զգալու որպես անհատ, անկախ և ունակ է որոշելու բարդ խնդիրներ:

Սոցիալական կառուցվածքի բնագավառում ՓՄՁ հանդիսանում է միջին խավի ձևավորման հիմքը, որը ցավոք Հայաստանում դեռևս չի կայացել:

ՓՄՁ-ները հանդիսանում են ազատական տնտեսության հիմքը, դրանք ապահովում են պետական բյուջեի հարկային մուտքերը, եկամուտները (խնայողությունները) և բնակչության զգալի մասի

ապրելու միջոցները: Շնորհիվ ՓՄՁ-ների ստեղծվում են նոր աշխատատեղեր, ապահովվում է նյութական, ֆինանսական և բնական ռեսուրսների հավաքագրումը (մոբիլիզացիան): ՓՄՁ-ն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ավելի արդյունավետ է կազմակերպում տնտեսության ինովացիոն զարգացումը: ՓՄՁ-ները զբաղվում են նոր արտադրատեսակների, տեխնիկայի և տեխնոլոգիայի մշակմամբ և արտադրության մեջ ներդրմամբ:

Արտասահմանում իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ակտիվ ինովացիոն գործունեությամբ զբաղվում են հատկապես այն ֆիրմաները, որոնցում աշխատողների թվաքանակը չի գերազանցում 100 մարդը: ԱՄՆ-ի ազգային գիտական ֆոնդի գնահատմամբ մինչև 100 աշխատողներ ունեցող ֆիրման 4 անգամ ավելի շատ նորարարություններ է իրականացնում, քան 1000 մինչև 10000 աշխատողներ ունեցող ֆիրման, 24 անգամ ավելի նորարարություններ են կիրառում, քան 10000 ավելի աշխատողներ ունեցող ֆիրման[36]:

Մեծ ֆիրմաների համեմատությամբ ՓՄՁ-ներ ունեն հետևյալ առավելությունները.

- ✓ մեծ շարժունակություն և գործնականություն,
- ✓ կապիտալի արագ վերաթափանցում,
- ✓ որոշումների արագ ընդունում,
- ✓ կապիտալի փոքր պահանջարկ և արդյունքի արտադրության արագ փոփոխություն,
- ✓ կարճ տեխնոլոգիական պարբերաշրջան, միջոցների արագ շրջանառություն,
- ✓ արտադրության կազմակերպման և կառավարման ցածր ծախսեր,
- ✓ արտադրանքի կայուն իրացում (շնորհիվ կոնկրետ սպառողների)
- ✓ շուկայական պահանջարկի փոփոխություններին արագ հարմարվողականություն:

[36] С. Мозоль, Экономика малого бизнеса, Минск, 2004, стр. 18.

ՓՄՁ-ների թույլ կողմերը կարելի է համարել.

- արտադրանքի դիվերսիֆիկացման ցածր մակարդակը,
- ռեսուրսների տնօրինման ցածր մակարդակը (ցածր հիմնադրրական կապիտալ, վարկային հասանելիության նեղ շրջանակներ),
- կախվածությունը խոշոր ձեռնարկություններից,
- ղեկավարության ցածր հեղինակություն և բանիմացություն,
- գիտական մշակումների համար ֆինանսավորման սահմանափակումներ և այլն:

ԳԼՈՒԽ 14
ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

1. «Տնտեսական անվտանգություն» հասկացությունը, չափանիշները և ցուցանիշները

Շուկայական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում տեղի ունեցող սոցիալական և տնտեսական խորը վերափոխումները շոշափում են նաև անհատի, պետության և հասարակության հիմնարար հիմքերը:

Ազգային անվտանգության հայեցակարգը ներառում է անհատի, պետության և հասարակության անվտանգությունը ներքին և արտաքին սպառնալիքներից՝ կյանքի կենսագործունեության բոլոր ոլորտներում: Ինչպիսի սպառնալիքներ կարող են գոյություն ունենալ տնտեսական շահերի իրացման գործընթացում, ազգային անվտանգության ոլորտում: Դրանցից են ամենից առաջ ՀՆԱ-ի, ներդրումների, ինովացիոն ակտիվության և գիտական ներուժի կրճատումը, ագրարային հատվածի ստագնացիան, ներքին և արտաքին պարտքի աճն և այլն:

«Տնտեսական անվտանգություն» հասկացությունն այնպիսի իրավիճակ է, որը պետք է ապահովի կայուն տնտեսական աճ, բավարարի հասարակության սպառողական պահանջմունքները, իրականացնի, արդյունավետ կառավարում տնտեսության բոլոր հատվածներում, ինչպես նաև ապահովի երկրի տնտեսական պաշտպանություն ազգային և միջազգային մակարդակներում:

Տնտեսական անվտանգությունն անհրաժեշտ է դիտարկել որպես բազմամակարդակ համակարգ. միջազգային, ազգային, ձեռնարկություն (ֆիրմա), անհատ:

Միջազգային տնտեսական անվտանգությունը համաշխարհային տնտեսության իրավիճակն է, որի դեպքում ապահովվում է տարբեր երկրների համագործակցությունն արտաքին առևտրում և աշխատանքի միջազգային բաժանման մեջ:

Ազգային տնտեսական անվտանգությունը կոչված է ապահովելու երկրի ընդլայնված վերարտադրության ռեժիմը (կանոնակարգը):

Ձեռնարկության տնտեսական անվտանգությունը մի իրավիճակ է, որտեղ ապահովվում է առկա կապիտալի արդյունավետ օգտագործումը և կայուն աճը:

Անհատի տնտեսական անվտանգությունը մարդու կենսագործունեության իրավիճակ է, որը կոչված է ապահովելու մարդու իրավական և տնտեսական պաշտպանությունը, շահերը:

Տնտեսական անվտանգության որոշման համար պետք է տարբերել առկա և ապագայում ծագող սպառնալիքները, ցույց տալ ցուցանիշների համակարգը, որը ի վիճակի է բնութագրելու այդ սպառնալիքների ներգործությունը տնտեսական իրավիճակի վրա:

Հայտնի են տնտեսական անվտանգությունը որոշող հետևյալ գործոնները.

- ✓ երկրի տնտեսաաշխարհագրական դիրքը, որը կապված է արտադրողական ուժերի տեղաբաշխման հետ,
- ✓ երկրի տնտեսական և ռազմաքաղաքական հզորությունը,
- ✓ երկրի ինստիտուցիոնալ համակարգի կողմնորոշումը, որը նպատակաուղղված է ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքի պաշտպանությանը, որից կախված է տնտեսական անվտանգությունը,
- ✓ պետության տնտեսական քաղաքականության առաջնությունների հարաբերակցությունը «ազգային շեղանկյան» (Մ. Պորտեր, Մոսկվա, 1993 թ.) դետերմինանտների նկատմամբ, որը կոչված է ապահովելու ձեռնարկության, ճյուղի մրցակցային առավելություններն ազգային տնտեսությունում,
- ✓ պետության տնտեսական քաղաքականության առաջնությունները սոցիալ-տնտեսական և էկոլոգիական ոլորտներում, որը կոչված է ապահովելու երկրի բնակչության կյանքի որակի ստանդարտները՝ ներառյալ կրթության, առողջապահության, մշակույթի և սոցիալական ենթակառուցվածքների մակարդակները,

- ✓ ՀՆԱ-ի ճյուղային և ռեգիոնալ կառուցվածքի պարամետրերը, որոնք կարող են ապահովել ազգային անվտանգությունը,
- ✓ ազգային տնտեսության գործունեությունն ապահովող Եվրասիական մաքսային միության պայմանների սկզբունքները և այդ պայմաններից կախված նյութական բարիքների ներմուծումը և արտահանումը, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները, որոնք վերաբերվում են ռազմավարական նշանակության կատեգորիաներին,
- ✓ ռազմավարական նշանակությամբ կարևորագույն նյութական բարիքների առկա պաշարները, որը բավարար է ապահովելու տնտեսական անվտանգությունը ֆորս-մաժորային (անհաղթահարելի) պայմաններում:

Տնտեսական անվտանգության սպառնալիքի աստիճանի գնահատման և հաղթահարման համար անհրաժեշտ է օգտագործել կատարյալ տեղեկատվությունների ցուցանիշներ, որոնց ամբողջականությունը թույլ կտա բնութագրելու երկրի տնտեսական անվտանգության իրավիճակը: Այդ գնահատման համակարգը պետք է հայտնաբերի այն պատճառները, որոնք նպաստել են սպառնալիքի առաջացմանը, ինչպես նաև այդ սպառնալիքներից առաջացող հետևանքները:

Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման համար սովորաբար օգտագործվում են ինչպես ինտեգրալ, այնպես էլ մասնակի ցուցանիշների համակարգ: Սակայն դրանք մի կողմից պետք է օգտագործել տնտեսական անվտանգության խնդիրների ուսումնասիրության տարբեր նպատակների համար, մյուս կողմից էլ այդ ցուցանիշները պետք է կազմել այնպես, որպեսզի ինտեգրալ ցուցանիշը ներառի նաև մասնակի ցուցանիշները:

Տնտեսական անվտանգության աստիճանը պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ որքանով է տնտեսական իրավիճակը սպառնում երկրի անկախությանը: Այս տեսակետից հնարավոր է օգտագործել հետևյալ պայմանական հասկացությունները. «վատ», «շատ վատ» և «անհուսալի»: Տվյալ դեպքում տնտեսագիտական

գրականության մեջ օգտագործվում է ներմուծման նկատմամբ մարժինալիստական (սահմանային) ցուցանիշը, որը որոշվում է ներմուծման լրացուցիչ աճի և ազգային եկամտի հարաբերությամբ.

$$S_{imp}=\frac{\Delta M}{\Delta R}$$

որտեղ՝

ΔM-ը ներմուծման լրացուցիչ աճն է ազգային եկամտի աճի դեպքում,

ΔR-ը ազգային եկամտի աճն է:

Ենթատեքստում տնտեսության անվտանգության գնահատման այդ ցուցանիշը թույլ է տալիս որոշելու որքանով է ազգային տնտեսությունը կախված արտաքին աշխարհից: Ինչքան բարձր է տնտեսության զարգացման մակարդակը և դիվերսիֆիկացիան, այնքան ցածր է տնտեսության հակվածությունը ներմուծումից: Երբ աճում է ΔM մեծությունը, ապա տնտեսական անվտանգության մակարդակը նվազում է և ուժեղանում է երկրի կախվածությունը համաշխարհային տնտեսության համակարգից և հակառակը, երբ ΔM-ը նվազում է, ապա տնտեսական անվտանգության մակարդակը աճում է:

Հետևաբար, մի կողմից, ներմուծման նկատմամբ մարժինալիստական հակվածության ցուցանիշը թույլ է տալիս եզրահանգելու, որ երկիրը փոքր կամ մեծ աստիճանով կախված է համաշխարհային տնտեսական համակարգից և նրանում ձևավորվում է ֆորս-մաժորային իրավիճակ, մյուս կողմից՝ այդ ցուցանիշը անուղղակիորեն արտացոլում է ազգային տնտեսության իրավիճակը: Եթե երկիրը հանգիստ վիճակում է, չկա սոցիալական լարվածություն կամ այն արտահայտվում է ցածր մակարդակով, չկան բնական աղետներ, ազգային տնտեսությունը բարձր մակարդակով ապահովում է բնակչության նյութական պահանջմունքները առանց ներմուծման, ապա դա նշանակում է, որ երկիրը պատսպարվել է թե ներքին և թե արտաքին սպառնալիքներից: Արդյունքում երկրի անվտանգությունը գտնվում է բարձր մակարդակի վրա: Ցավոք Հայաստանում իրա-

վիճակը տագնապալից է, իսկ ներմուծումը ավելի քան 3 անգամ գերազանցում է արտահանմանը:

Տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են տնտեսական անվտանգության գնահատման բազմաթիվ ցուցանիշներ և դասակարգումներ: Նկատի ունենալով տնտեսական կյանքի տարբեր բնագավառները, անվտանգության ցուցանիշները կարելի է ներկայացնել հետևյալ հիմնական խմբերով.

- ընդհանուր տնտեսական ներուժը գնահատող ցուցանիշներ, ինչպիսիք են բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ և դրա բաժանումը սպառման և կուտակման ֆոնդերի,
- երկրի պաշտպանվածությանը և դրա համար հատկացվող ֆինանսական միջոցները,
- երկրի զարգացման ներքին (ինքնուրույն) հնարավորությունները (կապիտալի պաշարը, ազգային խնայողությունները, ներդրումների ներքին և արտաքին աղբյուրները),
- բնակչության կենսամակարդակը (մեկ շնչին ընկնող ազգային եկամուտը, իրական աշխատավարձը, սպառողական գների ինդեքսը, նվազագույն աշխատավարձը և այլն),
- ֆինանսական անվտանգության ցուցանիշները (ներքին և արտաքին պարտքի մեծությունը, ներդրումների ներուժը, ինչպես նաև դրամավարկային և ֆիսկալ քաղաքականությունը),
- ազգային տնտեսության անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, ապրանքների ու կապիտալի արտահանումը և ներմուծումը, երկրի ներքին ու արտաքին (միջազգային) գների հարաբերությունը:

Տնտեսության անվտանգության ցուցանիշները դասակարգվում են նաև ըստ բնագավառների.

- ✓ տնտեսական,
- ✓ սոցիալական,
- ✓ էկոլոգիական,
- ✓ քաղաքական:

Սոցիալական ոլորտում տնտեսական անվտանգությունը գլխավորապես կապված է զանգվածային գործազրկության հետ, որի արդյունքում նվազում է բնակչության կենսամակարդակը: Էկոլոգիական ոլորտում տնտեսական անվտանգությունը կապված է հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև շրջակա միջավայրի աղտոտման հետ: Արդյունքում վատթարանում են աշխատանքային պայմանները և մարդկանց առողջությունը, աճում է անաշխատունակությունը և առողջության վերականգնման ծախսերը: Քաղաքական ցուցանիշները արտահայտվում են երկրի քաղաքական կյանքի կայունությամբ և ժողովրդավարության մակարդակով:

Քանի որ տնտեսական անվտանգության ցուցանիշների վերաբերյալ տարբեր երկրներում կան տարբեր մոտեցումներ, հետևաբար տնտեսագետներն օգտագործում են այսպես կոչված «անվտանգության շեմային մեծություններ» հասկացությունը: Երբ երկիրը գերազանցում է շեմային մեծությունը, ապա նրա տնտեսական, քաղաքական և սոցիալական վիճակը խիստ վատթարանում է: Դիցուկ, շեմային ցուցանիշներ կարող են հանդիսանալ երկրի բնակչության անհրաժեշտ պարենի կախվածության մակարդակը, այսինքն սպառման ենթակա ներմուծվող պարենը չպետք է գերազանցի սպառման 35 %-ը, գիտության զարգացման ծախսերը պետք է կազմեն ՀՆԱ-ի առնվազն 5 %, պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60 %-ը և այլն: Այսպիսով, երկրում անհրաժեշտ տնտեսական անվտանգության շեմային մեծությունները կոչված են բացահայտելու տնտեսությանը սպառնացող վտանգները և ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ տնտեսական զարգացում ապահովելու համար:

Այժմ բերենք մի քանի օրինակներ Հայաստանի տնտեսական անվտանգության շեմային մեծությունների և տնտեսության մեջ առկա մակրոտնտեսական ցուցանիշների համեմատությունների վերաբերյալ, որոնք պարունակում են վերարտադրության անընդհատությունը և տնտեսական զարգացման հնարավորությունները: Հա-

մեմատության պրոցեսում կրկին օգտագործելով «լավ», «վատ» և «անհուսալի» հասկացությունները: Այսպես, 2000 թ. Հայաստանում ՀՆԱ-ի հավելաճի շեմային մեծությունը սահմանվել է 2,7 %: Իրականում, սկսած 1994 թ. մինչև 2000 թ. տնտեսական աճը կազմել է միջին հաշվով 5-6 %, իսկ 2000 թ. մինչև 2009 թ. 9,6 %-13,9 %: Այս երևույթը կարելի է գնահատել «լավ»: Սակայն ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանում ՀՆԱ-ը կրճատվել է 14,1 %: Այս երևույթը կարելի է գնահատել «վատ»: 2010 թ. Հայաստանում կրկին տեղի է ունենում տնտեսական աճ 2,1 %-4,1 %: Այս երևույթը նույնպես կարելի է գնահատել «լավ»:

Հաջորդ կարևոր ցուցանիշը բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի արտադրությունն է, որի շեմային մակարդակը 2000 թ. կազմել է 2250 ԱՄՆ դոլար: Սակայն սկսած 2000 թ. մինչև 2006 թ. ՀՆԱ-ի արտադրության ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով եղել է ավելի պակաս՝ նախատեսված շեմային մեծությունից (2000 թ.՝ 502,7, 2001 թ.՝ 557,3, 2002 թ.՝ 739,9, 2003 թ.՝ 874,1, 2004 թ.՝ 1112,8, 2005 թ.՝ 1523,0, 2006 թ.՝ 1982,1): Այս երևույթը կարելի է գնահատել «վատ»: Սակայն սկսած 2007 թ. բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի արտադրությունը սկսեց գերազանցել շեմային մակարդակը: Այս երեվույթը կարելի է գնահատել «լավ»:

Հաջորդը, գիտության և կրթության զարգացման ֆինանսավորման ծախսերի շեմային ցուցանիշը 2000 թ. սահմանված է եղել ՀՆԱ-ի 5 %-ի չափով, սակայն իրականում այն չի գերազանցել 3 %-ի սահմանագիծը (սկսած 1991 թ. մինչև 2011 թ.): Այս երևույթը կարելի է գնահատել «անհուսալի»: Թերագնահատել գիտության ֆինանսավորումը՝ առնվազն տնտեսական «կարճատեսություն» է, առավել ևս, եթե ցանկանում ենք ստեղծել գիտահենք արտադրություն:

Արտադրվող և սպառվող ապրանքային ծավալների միջև եղած տարբերությունն անհաշվեկշռվածությունն է: Այսպես, շեմային մեծությունը նախատեսում է, որ տնային տնտեսությունների սպառումը պետք է կազմի ՀՆԱ-ի 60 %-ը, սակայն Հայաստանում այն կազ-

մել է 2000 թ.՝ 96,7 %, 2005 թ.՝ 75,4 %, 2007 թ.՝ 70,4 %: Այս երևույթը գնահատվում է «վատ»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում աստիճանաբար նվազում է տնտեսական անվտանգության մակարդակը, սակայն միաժամանակ պետք է լուրջ ուշադրություն դարձնել արտաքին պարտքի աննախադեպ աճին և ֆինանսական միջոցներ հատկացնել ընդլայնելու գիտության ծախսերը: Հետևաբար, տնտեսական անվտանգության շեմային մեծությունները դեռևս չեն արտահայտում ազգային տնտեսության իրական անվտանգության մակարդակը:

2. Ձեռնարկության (ֆիրմայի) տնտեսական անվտանգությունը

Ազգային տնտեսության անվտանգության ապահովման գիտական և մեթոդաբանական խնդիրների լուծումը կապված է նաև ֆիրմաների աշխատանքային գործունեության հետ: Այս տեսակետից անհրաժեշտ է՝ ճշգրտել ֆիրմայի տնտեսական անվտանգության բովանդակությունը, քանի որ դրանից կախված է հենց ֆիրմայի տնտեսական անվտանգության համակարգի սկզբունքների մշակումը և դրա ապահովումը:

Տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել, որպես ֆիրմային նորմալ կենսագործունեությունն ապահովող անհրաժեշտ պայման, անկախ արտաքին և ներքին ֆորսմաժորային իրավիճակից: Ընդ որում՝ տնտեսական անվտանգության սպառնալիքները ֆիրմայի համար պայմանավորված է ոչ միայն ռեսուրսների անարդյունավետ օգտագործման հնարավորությամբ, այլև արտադրական համակարգի բոլոր տարրերի օգտագործման ճկունությունն ապահովող ռազմավարության անհրաժեշտ մակարդակի բացակայությամբ, որը կարող է ապահովել ֆիրմայի կայուն հարմարվողականությունն (ադապտացիան) արտաքին միջավայրի պարամետրերի փոփոխության ներքո:

Էական նշանակություն ունի նաև ֆիրմայի անվտանգության սպառնալիքների աղբյուրների բացահայտումը, որոնք ծագում են

ֆիրմայի ներսում: Դրա հետ կապված առաջանում է ֆիրմայի սահմանային հնարավորությունների ինտեգրալ գնահատման խնդիրը կամ էլ նրա ռազմավարության ներուժի գնահատումը: Քանի որ հենց այդ ներուժի հզորությունը (կարողությունը) կարող է դառնալ ֆիրմայի ներքին տնտեսական անվտանգության գրավականը: Ֆիրմայի տնտեսական ռեսուրսներն անհրաժեշտ է բաշխել ռազմավարական ներուժի տարրերի միջև՝ ելնելով օպտիմալության սկզբունքից, այսինքն՝ ֆիրմայի ռազմավարական ներուժը պետք է պաշտպանված լինի տեխնիկական և այլ միջոցներով:

Ֆիրմայի անվտանգությանը կարող է սպառնալիք ծագել նաև արտաքին միջավայրից: Այդ սպառնալիքը կարող է ծագել կապված ֆիրմայի արտադրական գործունեության կառավարման (մենեջմենթի) հստակ տնտեսական ռազմավարության բացակայության դեպքում:

Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են ճգնաժամային երևույթների հետևյալ տեսակները.

- ✓ ճգնաժամային իրավիճակ,
- ✓ ճգնաժամ,
- ✓ աղետներ:

Ճգնաժամային իրավիճակը բնութագրվում է որպես ֆիրմայի ընդունակությունը հարմարվողականության (ադապտացիայի) նկատմամբ, ճգնաժամը դրսևորվում է կայունության աստիճանական (փափուկ) կորուստով, այսինքն՝ ֆիրմայի ռազմավարական ներուժի արդիականացման (մոդեռնացման) անհրաժեշտությամբ, աղետն արտահայտվում է կայունության կտրուկ (կոշտ) կորուստով, այսինքն՝ անհրաժեշտ է փոփոխել գործարարության (բիզնեսի) պարադիգմը, որպեսզի խուսափել տնտեսական անվտանգության կորուստից:

Այսպիսով, կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը. ֆիրմայի տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել որպես մի իրավիճակ, որի դեպքում նրա ռազմավարական ներուժը հեռու է (մոտ չէ) ադապտացիայի սահմանից, իսկ տնտեսական անվտան-

գության սպառնալիքը աճում է, երբ ռազմավարական ներուժի ադապտացիան ավելի ու ավելի է մոտենում սահմանային գոտուն: Այլ կերպ ասած, տնտեսության անվտանգության սպառնալիքներն արդեն կարող են արտահայտվել ֆիրմայի ֆինանսական դրության վատթարացումով, ֆիրմայի վարկանիշի կորուստով և այլն: Իսկ ինչ վերաբերվում է աղետային իրավիճակին, ապա դա նշանակում է, որ տնտեսական անվտանգության սպառնալիքը հասել է իր գագաթնակետին, որ կարող է ուղեկցվել ֆիրմայի կապիտալի լրիվ կորուստով:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի ֆիրմայի տնտեսական-կառավարչական բնույթի սպառնալիքի աղբյուրների հետևյալ դասակարգումը[37].

[37] А. П. Градов, Национальная экономика, Киев-Харьков-Минск, 2005, стр. 187.


Տնտեսական-կառավարչական սպառնալիքների առաջացման աղբյուրները
Արտաքին
Ներքին
Տնտեսավարման ռազմավարական գոտի (ՏՌԳ)
Ռազմավարա-կան ռեսուրսների գոտի (ՌՌԳ)
Ռազմավարա-կան խմբի գոտի (ՌԽԳ)
առաքելություն
ռազմավարու-թյուն
Տնտեսական սպառնալիքների համապատասխան աղբյուրների պարամետրերի մանրամասնությունները
ֆիրմայի ռազմավարական ներուժը (ՖՌՆ)
Ձեռնարկության ներքին և արտաքին միջավայր «թույլ ազդանշան», ճգնաժամային իրավիճակ, ճգնաժամ, աղետալի իրավիճակ

Նման դասակարգումը կարող է հիմք հանդիսանալ նախօրոք մշակված, հակամիջոցների համակարգի մշակման համար, որն անհրաժեշտ է ձեռնարկության կառավարման գործի կազմակերպման համար: Այդ հակամիջոցները կանխատեսում են ՌԽԳ և ՌՌԳ հարաբերությունը՝ այդ օբյեկտների կառավարման հավաքածուն ՖՌՆ-ի նկատմամբ, որի նպատակն է ռեսուրսների օպտիմալ բաշխումը:

Նման հակամիջոցների մշակման համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի ինդիկատորներ, որոնք կկարողանան քանակապես բնութագրել ճգնաժամային իրավիճակը, ճգնաժամը և աղետալի իրավիճակը: Այնուհետև այդ ինդիկատորների համակարգումը ըստ շարժման ձևերի և շեմային նշանակության կարող է հանդիսանալ տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարության մշակման կարևորագույն ուղղությունը:

Ձեռնարկությունների տնտեսական անվտանգության ապահովման զգալի խնդիրներ առաջացան հատկապես շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում: Անցումային տընտեսության դժվարին խնդիրներից է նաև արտաքին պարտքի մարումը: Սակայն ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև ներքին պարտավորությունները միկրո մակարդակով, մասնավորապես ձեռնարկությունների փոխադարձ պարտքերի կտրուկ աճը: Դրա հետևանքով կտրուկ խախտվում է տարբեր ճյուղերի և ձեռնարկությունների փոխներգործությունը, ինչպես նաև խախտվում են վերարտադրության նորմալ ընթացքի ֆինանսավորման հիմքերը:

Ձեռնարկությունների փոխադարձ պարտքերի առաջացման պատճառներից ամենից առաջ պետք է նշել գների ազատականացումը, որը միկրո մակարդակով առաջացրեց այսպես կոչված «մկրատի էֆեկտ», երբ ձեռնարկությունները ստիպված էին իրենց կողմից ձեռք բերվող ռեսուրսների նկատմամբ վճարել ավելի մեծ գումարներ (գների աճին զուգընթաց), իսկ իրենց կողմից վաճառվող արտադրանքի գները բարձրանում էին ավելի դանդաղ: Դա պայմանավորված է հումքի բարձր գների մակարդակով և դրա մատակարարման դժվարություններով՝ սեփական ծախքերի կառուցվածքի

արագ փոփոխման անհնարինության պատճառով: Դրա հետ մեկտեղ բյուջետային սուբյեկտների վերացմանը զուգընթաց ինֆլյացիայի տեմպերի աճը էլ ավելի նվազեցրեց ձեռնարկությունների վճարունակության հնարավորությունները:

Կարևոր է նշել նաև, որ գների ազատականացմանը զուգընթաց կազմալուծվում էին արտադրական և սպառման նախկին դիրեկտիվ կապերը և ուժեղանում էր առաջարկի ու պահանջարկի օրենքների ներգործությունը: Սովորաբար ճգնաժամի պայմաններում արտադրության չափերի կրճատումը նշանակում է նախկինում արտադրվող շատ արտադրատեսակների նկատմամբ պահանջարկի կրճատում, ապրանքակուտակում և դրան համապատասխանաբար ձեռնարկության վճարունակության նվազում:

Ձեռնարկությունների փոխադարձ պարտքերի աճի պատճառ հանդիսացավ նաև անցումային տնտեսությունում պետության կողմից վարած կոշտ մոնետար քաղաքականությունը դրամաշրջանառության ոլորտում: Դա բերեց ոչ միայն պետական դոտացիաների վերացմանը, այլև վարկային բարձր տոկոսադրույքների առաջացմանը, որը ձեռնարկությունների համար նշանակում էր ֆինանսական ռեսուրսների ձեռք բերման սահմանափակում:

Ընդհանրապես ձեռնարկությունների փոխադարձ պարտքերի առաջացումը ուներ օբյեկտիվ բնույթ: Ձեռնարկությունները ստիպված էին հարմարվել նոր տնտեսական պայմաններին փոփոխելով իրենց տնտեսական վարքագիծը, այսինքն նոր զարգացում ստացավ բարտերային փոխանակությունը:

Այսպիսով, անցումային ժամանակաշրջանում անհատական վերարտադրության օբյեկտիվ դժվարություններ առաջացան ոչ միայն շուկային հարմարվելու անհրաժեշտությամբ, այլև ֆինանսական ռեսուրսների սահմանափակման, կապիտալ արժեքների կորստի և վճարումների ճգնաժամի պատճառով: Հետևաբար անհատական վերարտադրության պրոցեսին պետության ակտիվ միջամտության կարիք կա, որպեսզի ապահովվի տնտեսական անվտանգությունը նաև ձեռնարկության (ֆիրմայի) մակարդակով:

3. Պետության դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում

Ինչպես հայտնի է, տնտեսական անվտանգության սպառնալիքները հիմնականում պայմանավորված են ազգային տնտեսության մրցունակության աստիճանով, ինչպես նաև պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության անարդյունավետությամբ: Հետևաբար, պետք է նկատել, որ ազգային տնտեսության անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է պետության նպատակաուղղված գործունեության անհրաժեշտ պայմանների ապահովում:

Որպեսզի ընտրել ճշգրիտ և իրական տնտեսական քաղաքականություն, պետական գործիչները պետք է պատասխանեն երկու հիմնական հարցի.

1. ի՞նչ նպատակ ունեն,
2. այդ նպատակին հասնելու համար ինչպիսի՞ գործիքներ ունեն:

Պետության տնտեսական քաղաքականության ամբողջական վերլուծություն դեռևս կատարել է հոլանդացի տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր Յան Տինբերգենը (1952 թ.): Ըստ Տինբերգենի պետական մարմինները նախ.

- ✓ պետք է ընտրեն տնտեսական քաղաքականության նպատակը, ինչպես, օրինակ, հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացումը (դրա նպատակային ցուցանիշները՝ լրիվ զբաղվածություն, զրոյական ինֆլյացիա),
- ✓ պետք է կառավարությունը գնահատի, ինչպիսի քաղաքական գործիքներ ունի,
- ✓ պետք է պետական գործիչները հենվեն տնտեսության այնպիսի մոդելի վրա, որը կարող է միաձուլել նպատակը և գործիքները:

Տինբերգենը գտնում էր, որ քաղաքագետները կարող են հասնել այդ երկու նպատակներին (լրիվ զբաղվածություն, զրոյական ինֆ-

լյացիա) այն դեպքում, երբ գործիքների քանակը հավասար է նպատակների քանակին և գործիքների ներգործությունը նպատակների վրա անկախ են մեկը մյուսից:

Բազմաթիվ նպատակների սահմանումը կոչվում է նպատակային գործառույթներ (ֆունկցիաներ): Այստեղ կարևորն այն է, որ կառավարությունը հստակ կերպով կազմակերպի նպատակների օգտագործման հաջորդականությունը:

Տինբերգենը գտնում է, որ նպատակային ֆունկցիան պետք է ներառի հետևյալ 8 հիմնական տարրերը.

1. պետական ծախսերի ծավալը,
2. իրական աշխատավարձի տեմպերի փոփոխությունը,
3. զբաղվածության մակարդակը,
4. եկամուտների բաշխման ինդիկատորները,
5. ներդրումների ծավալը,
6. արտադրության մակարդակը,
7. վճարային հաշվեկշռի մնացորդը (սալդո),
8. ամբողջական պահանջարկը:

Ներկայումս կառավարությունները դիտարկում են երկու նպատակ.

1. լրիվ զբաղվածությունը,
2. պայքարը ինֆլյացիայի դեմ:

Շատ տնտեսագետներ գտնում են, որ ավելի լավ է ընտրել կարգավորման մեկ ասպեկտ և դրա վրա կենտրոնացնել բոլոր ջանքերը, ինչպես օրինակ, պայքարը ինֆլյացիայի դեմ:

Այսուհանդերձ, ազգային տնտեսության անվտանգության ապահովման համար վճռական դեր ու նշանակություն ունի ազգային տնտեսության մրցակցային առավելություններին պետական աջակցությունը: Այս տեսակետից պետությունը պետք է իրականացնի.

- արտադրության միջոցների զարգացում՝ բարձր տեխնիկական մակարդակի հիման վրա և դրանով իսկ ապահովելով

բնակչության նյութական պահանջմունքների որակյալ և արդյունավետ բավարարումը,

- ռազմավարական ռեսուրսային պաշարների ապահովում,
- արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացում ու կատարելագործում,
- տնտեսական գործունեության բոլոր ոլորտների համար ֆինանսական ռեսուրսների մշտական աճ, դրանով իսկ ապահովել համապատասխան ներդրումներ՝ ամրապնդելու երկրի տնտեսական հզորությունը,
- հակամենատիրական քաղաքականության անընդհատ կատարելագործում և ազատ մրցակցության պաշտպանություն,
- բանկային համակարգի անընդհատ կատարելագործումը՝ ռազմավարական ներդրումների խրախուսման համար,
- ձեռնարկությունների սննկացումը սահմանափակող և կանխող ինստիտուտների և մեխանիզմների կատարելագործում և ազատ մրցակցության ապահովում,
- փոքր և միջին բիզնեսի աջակցություն,
- սպառողների իրավունքների պաշտպանություն,
- սոցիալական ապահովություն:

Շուկայական հարաբերությունների անցման ժամանակաշրջանում սոցիալական ապահովությունը կարևոր դեր է խաղում ազգային տնտեսության անվտանգության ապահովման գործընթացում: Այստեղ կարևոր նշանակություն ունեն մինիմալ աշխատավարձի, կենսաթոշակների բարձրացումը և դրանց ինդեքսավորումը:

Տնտեսական անվտանգության ապահովման համար պետական կարգավորումն իրականացվում է տնտեսության ուղղակի և անուղղակի միջամտությամբ: Պետական ուղղակի միջամտությունը տնտեսությունում պայմանավորված է, նախ տնտեսության մեջ պետական (հասարակական) հատվածի առկայությամբ: Պետությունը տիրապետում է կապիտալի տարատեսակ ձևերի, տրամադրում է փոխառություններ, հանդիսանում է ձեռնարկությունների սեփականա-

տեր, մասնակցում է նյութական բարիքների արտադրությանը և այլն:

Պետության անմիջական մասնակցությունը տնտեսությունում դրսևորվում է նաև երկրում իրավական միջավայրի ստեղծումով: Պետության կողմից իրավական ակտերի ընդունումը նպաստում է ձեռնարկությունների միջև տնտեսական հարաբերությունների իրականացմանը և այլն:

Պետական անուղղակի միջամտությունը տնտեսությունում արտահայտվում է որոշակի լծակների օգտագործմամբ, ինչպիսիք են՝ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները և այլն:

ԳԼՈՒԽ 15
ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը

Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը գիտականորեն հիմնավորված չափանիշների և մեթոդների համակարգ է, որը օրենսդրորեն սահմանվում է պետության կողմից՝ այլ երկրների և առանձին տնտեսական գործակալների հետ տնտեսական հարաբերությունների կարգավորման և կազմակերպման համար, որի նպատակը ազգային տնտեսության տնտեսական և քաղաքական շահերի հետապնդումն ու զարգացումն է: Այն ներառում է տնտեսական, քաղաքական, ռազմական, սոցիալական և էկոլոգիական ոլորտները, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում:

Ներկայումս, երբ արագանում է համաշխարհային գլոբալացումը՝ արտաքին գործոնը ձեռք է բերում էական նշանակություն: Ինչպես օրինակ, երկրի անդամակցությունը Եվրոմիությանը, Համաշխարհային առևտրային կազմակերպությանը և մաքսային միությանը:

Արտաքին տնտեսական քաղաքականության մեթոդները իրականացվում են յուրահատուկ տնտեսական մոդելների միջոցով, որոնց թվին կարելի է դասել արտաքին տնտեսական կոնտրակտները (պայմանագրերը), արտահանման արտոնագրումը (լիցենզավորումը), մաքսային տուրքերը, հաշվարկային դրույքները, հարկային գանձումները, պետության նպատակային պատվերները և այլն:

Անակախացումից հետո Հայաստանի պետությունը դեռևս չունի հստակ, համազգային արտաքին տնտեսական քաղաքականության հայեցակարգ և դրան համապատասխան ազգային տնտեսության զարգացման ծրագիր:

Շուկայական հարաբերություններին անցման սկզբնական ժամանակաշրջանում Հայաստանում ընդունվեցին մի շարք օրենքներ «Արտաքին տնտեսական կապերի ազատականացման մասին», «Սեփականության մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկման մասին», «Լիզինգի», ինչպես նաև հարկային, մաքսային օրենսգրքերը և այլն: Սակայն մինչև այժմ անբավարար են դրանց իրականացման համապատասխան մեխանիզմների մշակումը և օգտագործումը: Շատ դեպքերում էլ չեն օգտագործվում մշակված օրենքները:

Հայաստանի արտաքին տնտեսական կապերի զարգացման վրա բացասական ազդեցության են թողնում նաև երկրում առողջ քաղաքական և սոցիալական միջավայրի բացակայությունը: Դրա հետ մեկտեղ մեծ թափ ստացավ կոռուպցիան, կաշառակերությունը և ստվերային տնտեսությունը: Արդյունքում բնակչության մեկ շնչի հաշվով՝ ՀՆԱ-ի արտադրությամբ Հայաստանը զբաղեցնում է ամենացածր տեղերից մեկը, իսկ անհատի և տնտեսական անվտանգության աստիճանով հայտնվեց բիզնեսի համար ամենաբարձր ռիսկի գոտում:

Բնականաբար նման իրավիճակում հայտնված երկրի համար, ուրիշ երկրների հետ արտաքին տնտեսական համագործակցություն ունենալը բավականին դժվարին խնդիր է, քանի որ բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում օտարերկրյա ինվեստիցիաները, ապրանքների ու ծառայությունների արտահանումը, Հայաստանի ինտեգրումը համաշխարհային տնտեսական համակարգում:

2. Արտաքին առևտուր

Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է արտաքին առևտուրը: Ընդհանուր առումով արտաքին (միջազգային) առևտուրը միջոց է, որի օգնությամբ տարբեր երկրներ կարող են զարգացնել մասնագիտացումը, բարձրացնել իրենց տնտեսական ռեսուրսների արտադրողականությունը և դրա-

նով իսկ նպաստել արտադրության ընդհանուր ծավալի աճին: Միջազգային առևտրի հիմքում ընկած է երկու կարևոր հանգամանք՝

1. տնտեսական ռեսուրսների բաշխվածությունը ըստ երկրների խիստ անհավասարաչափ է,
2. ապրանքների արտադրության արդյունավետությունը պահանջում է տարատեսակ տեխնոլոգիաներ և ռեսուրսների համակցություններ:

Այսպես, Ճապոնիան չունի հարուստ բնական ռեսուրսներ (նավթ, գազ, քարածուխ և այլն), սակայն ունի ծովային և օվկիանոսային հարուստ ձկնեղեն: Դրա համար էլ սկսած հին ժամանակներից զբաղվել է ձկնեղենի արդյունագործությամբ, որն էլ իր հերթին խիստ պահանջարկ առաջացրեց ռադիոտեխնիկայի, միկրոէլեկտրոնիկայի և նավագնացության սարքավորումների ստեղծման և օգտագործման համար: Հետագայում Ճապոնիան մասնագիտացավ հեռուստացույցների, մագնիտոֆոնների, կինոապարատների, համակարգիչների, ավտոմեքենաների և այլ կենցաղային ապրանքների արտադրության գծով: Այդ ապրանքների արտահանման գծով Ճապոնիան առաջնակարգ դիրք զբաղեցրեց ԱՄՆ-ի շուկայում:

Ավստրիալիան չունենալով մեծ քանակի աշխատանքային ռեսուրսներ, ոչ հարուստ օգտակար հանածոներ, մասնագիտացավ գյուղատնտեսական ապրանքների արտադրության և արտահանման ուղղությամբ (միս, բուրդ, ցորեն և այլն): Բրազիլիան օգտագործելով իր արևադարձային կլիման՝ մասնագիտացավ սուրճի արտադրության մեջ: Ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր երկիր աշխատանքի միջազգային բաժանման շրջանակներում լավագույն ձևով օգտագործելով իր ռեսուրսային ներուժը, կհայտնվի ավելի շահավետ իրավիճակում՝ մյուս երկրների նկատմամբ: Դեռևս Ջ. Միլլը գրում էր. «որ աշխարհում արտադրված արդյունքները կլինեին ավելի շատ կամ էլ դրա արտադրության ծախսերը կլինեին ավելի փոքր, եթե յուրաքանչյուր

իր արտադրվեր այնտեղ, որտեղ կա ավելի բարենպաստ պայմաններ դրա արտադրության համար»[38]:

Նշանակում է միջազգային փոխանակության օգտակարությունը (շահավետությունը) կայանում է նրանում, որ այն թույլատրում է տարբեր երկրների ներմուծել այնպիսի ապրանքներ, որոնք իրենք չեն կարող արտադրել առկա բնական-աշխարհագրական պայմաններում: Բացի դրանից միջազգային առևտուրը նպաստում է ավելի արդյունավետ օգտագործել մարդկային ռեսուրսները:

Արտաքին առևտրի հիմքը արտադրողական ուժերի զարգացումն է, նոր տեխնոլոգիաների ստեղծումը և ռեսուրսների արդյունավետ համակցությունն է. «Երկիրը, որը արտադրում է ավելի մեծ շուկայի համար, քան իր սեփական շուկան է, կարող է խորացնել աշխատանքի բաժանումը և լայնորեն կիրառելով մեքենաները՝ լայն հնարավորություններ կունենա կատարելագործելու արտադրությունը: Սա կնպաստի արտադրության ծավալների ավելացմանը, ինչը կարող է երկարաժամկետ հատվածում բերել համապատասխան փոփոխությունների համաշխարհային տնտեսությունում»[39]:

Աշխատանքի բաժանման և մասնագիտացման հետ կապված համեմատական առավելության սկզբունքը էական նշանակություն է ստանում միջազգային առևտրում:

Համեմատական առավելությունների սկզբունքի մասին դեռևս իր դիրքորոշումն է հայտնել դասական քաղաքատնտեսության հիմնադիրներից մեկը՝ Դավիթ Ռիկարդոն: Ըստ Դ. Ռիկարդոյի. «Առևտրի լրիվ ազատության համակարգում յուրաքանչյուր երկիր, բնական է, ծախսում է իր կապիտալը և աշխատանքը արդյունաբերության այնպիսի ճյուղերում, որոնք ապահովում են առավելագույն օգուտ: Անհատական օգուտին հետևելը կապված է բոլորի համար ընդհանուր բարիքների հետ: Խթանելով աշխատասիրությունը, վարձահատույց լինելով նորարարությանը, առավել իրական ձևով օգտագործելով բնության տված բոլոր ուժերը, այդ սկզբունքը հանգեցնում է

[38] Дж. Милл, Основы политической экономики, т. 2, М. 1980, стр. 340.
[39] Дж. Милл, Основы политической экономики, т. 2, М. 1980, стр. 340.

տարբեր ազգերի միջև աշխատանքի ամենաարդյունավետ բաժանմանը, միևնույն ժամանակ ավելացնելով արտադրանքի ընդհանուր զանգվածը, այն ավելացնում է համընդհանուր բարեկեցությունը և բոլոր քաղաքակիրթ ազգերը կապում է ընդհանուր հանգույցներով՝ մեկ համաշխարհային համայնքի մեջ»[40]: Այսինքն այս սկզբունքով Դ. Ռիկարդոն հաշվի է առնում միայն աշխատանքի գործոնը: Սակայն դա կարելի է տարածել արտադրության բոլոր գործոնների վրա: Ինչպես օրինակ, Է. Հեկշերի և Բ. Օհլինի մոդելներում դիտարկվում էին կապիտալի և աշխատանքի գործոնները: Կապիտալի փոխարեն կարելի է դա լուսաբանել հողի, օգտակար հանածոների և այլ ռեսուրսների օրինակով:

Ըստ համեմատական առավելությունների սկզբունքի փոխշահավետ մասնագիտացումը և առևտուրը երկու ցանկացած երկրների միջև հնարավոր է մինչև այն պահը, քանի դեռ ցանկացած երկու ապրանքների համար արտադրության ծախքերի ներքին հարաբերությունները տարբեր են: Ըստ համեմատական առավելությունների մասնագիտացումը երկրի համար, ֆիքսված ռեսուրսների ծավալի դեպքում, կարող է պայմանավորել ավելի մեծ իրական եկամուտ, իսկ առևտրի պայմանները՝ որոշում են թե ինչ կերպով կարելի է միջազգային արտադրության այդ աճը բաշխել առևտուր կատարող երկրների միջև:

Չնայած այս ամենին, համաշխարհային տնտեսության զարգացման վերջին շրջանում հայտնվել են նաև այլ միտումներ: Մասնավորապես առանձին հեղինակներ համոզված են, որ հարաբերական առավելությունների ավանդական տեսությունը չի կարող պատասխանել շատ հարցերի, կապված արտադրության ինտերնացիոնալացման հետ, որի հետևանքով ներֆիրմային շրջանառությունը հասել է մեծ ծավալների: Ինչպես օրինակ, ներֆիրմային կապերը ներկայումս կազմում են միջազգային առևտրի մոտ 70 %-ը, վաճառվող լիցենզիաների և պատենտների 80-90 %-ը, կապիտալի արտահանման՝ 40 %-ը: Դրա հետ մեկտեղ, ապրանքների և կապիտալի

[40] Д. Рикардо, т. 1, М. 1955, стр. 116.

թափանցումը զարգացող երկրներ շատ դեպքերում պայմանավորված է էժան աշխատուժի, արտադրության այլ գործոնների, ինչպես նաև պահանջարկի առկայությամբ: Հետևաբար, Հայաստանի ազգային տնտեսության զարգացման շահերը պահանջում են՝ հաշվի առնել նաև համաշխարհային տնտեսության զարգացման այդ միտումները:

Միջազգային առևտրին մասնակցության մակարդակը գնահատվում է արտաքին առևտրի շրջանառությամբ, ներմուծման և արտահանման հարաբերությամբ և առևտրային հաշվեկշռի վիճակով:

Հայաստանի արտաքին առևտրի շրջանառությունը ներկայումս կազմում է մոտ 2 մլրդ դոլար, որից 1 մլրդ. դոլարը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը: Հայաստանը հիմնականում արտահանում է հանքահումքային ռեսուրսներ, պարենային ապրանքներ, թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված զարդեր, մեքենասարքավորումներ և այլն: Ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռը կազմում են պարենային ապրանքները, վառելիքը (մասնավորապես բենզին), դեղորայքները և այլն: Ներմուծման և արտահանման հաշվեկշռի մնացորդը, սկսած անկախության ձեռք բերման օրվանից մինչև այսօր, պակասորդային է: Ներկայումս ներմուծումը գերազանցում է արտահանմանը ավելի քան 3 անգամ: Ընդհանրապես Հայաստանը որդեգրել է արտաքին առևտրատնտեսական ազատականացման ուղին: 2014 թ. անդամակցելու են Եվրասիական մաքսային միությանը: Ըստ էության, չնայած ձեռնարկվող միջոցառումներին, դեռևս լիարժեք չի կայացել արտաքին առևտրի քաղաքականությունը, հստակ չի դրա նպատակներն ու խնդիրները: Ներկայումս Հայաստանի տնտեսության համար կարևոր խնդիր է մնում արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը՝ արտահանման խթանումը, ներմուծման կրճատումը: Դրանում կարող է նպաստել ներմուծումը փոխարինող ապրանքների կազմակերպումը և զարգացումը երկրի ներսում: Մասնավորապես կրճատել հումքային ռեսուրսների ար-

տահանումը և ընդհակառակը, ավելացնել դրանց հիման վրա պատրաստի արտադրանքի արտադրությունը և արտահանումը (մասնավորապես էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացման ճանապարհով):

Նպատակահարմար է արտահանման քաղաքականությունը խթանել սննդի, թեթև և շինանյութերի արդյունաբերությունում, գորգագործության և գեղարվեստական իրերի արտադրությունում և այլն:

Արտահանման խթանման համար կարելի է կիրառել ուղղակի և անուղղակի ֆինանսավորումը: Ուղղակի ֆինանսավորումը արտահանող ընկերություններին պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացումն է, որը հնարավորություն կտա ծածկելու ապրանքի արժեքի և շուկայական գնի միջև եղած տարբերությունը: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի, մասնավորապես, բարձր տեխնոլոգիաների արտադրության խրախուսումը: Անուղղակի ֆինանսավորման միջոցով կարելի է դոտացիաներ հատկացնել արտահանող ֆիրմաներին կամ իջեցնել նրանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, ինչպես նաև կիրառել մեղմ (արտոնյալ) հարկային քաղաքականություն:

Ինչպես հայտնի է արտահանման և ներմուծման տարբերությունը կոչվում է զուտ արտահանում: Զուտ արտահանումը դրական է, եթե արտահանումը գերազանցում է ներմուծմանը և հակառակը, զուտ արտահանումը բացասական է, եթե ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Հետևաբար, խրախուսել արտահանումը և դրա գերազանցությունը ներմուծման նկատմամբ նշանակում է ավելացնել ամբողջական ծախսերը և զուտ ազգային արդյունքը, իսկ բացասական զուտ արտահանումը բերում է ամբողջական ծախսերի և հետևաբար զուտ ազգային արդյունքի կրճատման: Քանի որ Հայաստանում անկախության ձեռք բերման սկզբնական ժամանակաշրջանից մինչև այսօր ներմուծումը գերազանցում է արտահանմանը, հետևաբար, այն պայմանավորել է արտադրության ընդհա-

նուր ծավալի կրճատումը և խոչընդոտել է ազգային տնտեսության զարգացմանը:

3.Արտաքին պարտք

Ներմուծման համար պետական պարտավորությունների գումարը և օտարերկրյա վարկերը միասին կազմում են երկրի արտաքին պարտքը:

Շուկայական վերափոխումների սկզբնական ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունների կողմից ակտիվ աշխատանքներ ծավալվեցին օտարերկրյա ֆինանսական աջակցություններ ձեռք բերելու համար: Օտարերկրյա վարկեր ձեռք բերելու նպատակով առավել ծավալուն կապեր հաստատվեցին Ռուսաստանի Դաշնության, Եվրոմիության, Համաշխարհային բանկի, Եվրոբանկի և Միջազգային արժութային հիմնադրամի հետ:

Դեռևս 1997 թ.-ին Հայաստանի արտաքին պարտքը կազմում էր 672 մլն. դոլար: Ընդ որում, արտաքին պարտքի մեծ բաժինը ընկնում էր Համաշխարհային բանկին, երկրորդը ըստ մեծության Միջազգային արժութային հիմնադրամն էր՝ 156 մլն. դոլար, երրորդը Ռուսաստանը՝ 90 մլն. դոլար, Եվրոբանկը՝ 65 մլն. դոլար, իսկ Եվրոմիությունը՝ 52 մլն. դոլար: Վարկերի դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքը կազմում էր 3,5-4,5 %, ամենացածր տոկոսադրույքը (1 %) սահմանվել է Համաշխարհային բանկի կողմից:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանի արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կազմեց 41,1 %, որը պայմանավորված էր ոչ այնքան արտաքին պարտքի մեծությամբ, որքան ՀՆԱ-ի ցածր մակարդակով: Վերը նշված ժամանակաշրջանում արտաքին պարտքի առաջացումը հիմնականում պայմանավորված էր արցախյան պատերազմով և տրանսֆորմացիոն անկումով: Օտարերկրյա վարկային միջոցները հիմնականում օգտագործվում էր ընթացիկ սպառման համար: Կարևոր է նշել նաև այն հանգամանքը, որ վարկերից բացի Հայաստան էին մտնում անհատույց ֆինանսական միջոցներ,

որոնք ստացվում էին բարեգործական կամ այլ օգնության (տեխնիկական) գծով: Արտասահմանից ստացված օգնությունների մեջ մեծ տեսակարար կշիռ էր կազմում մասնավոր անձանց կողմից իրենց հարազատներին ուղղարկված ֆինանսական միջոցները (մասնավոր տրանսֆերտները): Ոչ պաշտոնական տվյալներով այսօր Հայաստանի բնակչության 37 %-ը ապրում է արտասահմանյան մասնավոր տրանսֆերտների հաշվին:

Օտարերկրյա վարկերի ներգրավումը Հայաստան շարունակական բնույթ կրեց և 1997 թ. նկատմամբ ներկայումս այն աճել է գրեթե 6 անգամ՝ կազմելով ավելի քան 4 մլրդ. դոլար կամ էլ ՀՆԱ-ի 40 %-ը:

Ընդհանրապես այսօր աշխարհում դժվար է գտնել բաց տնտեսություն ունեցող երկիր, որը որպես վարկառու կամ վարկատու չընդգրկվի միջազգային վարկային հարաբերություններում: Սակայն ավելի կարևորն այն է, թե ինչպես և ինչ նպատակներով են օգտագործվում օտարերկրյա վարկերը: Օտարերկրյա վարկերը, որպես կանոն նախատեսվում են որոշակի ծրագրերի իրականացման համար: Որպեսզի վարկառու երկիրը կարողանա արդյունավետորեն օգտագործել վարկային միջոցները, բացի նպատակայնության նկատառումից կարևոր է նաև ապահովել դրանց արդյունավետ օգտագործումը տնտեսության իրական հատվածում, արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն միջոցների արմատավորման համար և ամենակարևորը, որ օգտագործվող վարկերը կարճ ժամանակաշրջանում փոխհատուցվեն ու ետ վերադառնան իրենց նախորդ կրողներին: Պետության կարևոր խնդիրը պետք է լինի, ոչ թե նախորդ ժամանակների կուտակված վարկային միջոցները թողնել գալիք սերունդների ուսերին, այլ կայուն զարգացող ազգային տնտեսության ստեղծումը:

Միջազգային վարկերը ոչ միայն պետք է նպաստեն ազգային տնտեսության զարգացմանը, այլև պետք է երկրի արտադրությունը դուրս բերեն ազգային շրջանակներից, ապահովելով տնտեսական կապերի միջազգայնացումը, ինչպես նաև մասնագիտացումը:

Հայտնի են միջազգային վարկի հետևյալ կարևոր սկզբունքները.

- ✓ վերադարձելիությունը,
- ✓ ժամկետայնությունը,
- ✓ վարկի դիմաց տոկոսների վճարումը,
- ✓ ապահովվածության երաշխիքները,
- ✓ նպատակաուղղվածությունը և այլն:

Ըստ ժամանակահատվածի, վարկերը լինում են կարճաժամկետ (մինչև 7 տարի) և երկարաժամկետ (7 և ավելի տարիներ):

Կարճաժամկետ վարկերը ձևավորվում են շրջանառու կապիտալի ձեռք բերման համար և հիմնականում օգտագործվում են արտաքին առևտրում, միջազգային վճարային հաշվարկներում, ինչպես նաև սպասարկում են ապահովագրական գործարքները: Երկարատև վարկերը օգտագործվում են հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու համար, դրանք սպասարկում են մեքենասարքավորումների արտահանմանը, գիտահետազոտական աշխատանքների և նոր տեխնոլոգիայի մշակմանը և այլն:

Օտարերկրյա վարկերի ներգրավման ժամանակ անհրաժեշտ է դրանցից կազմել մեկ ամբողջական փաթեթ (ոչ թե ցաք ու ցրիվ ծրագրեր), որը լինի առավել օպտիմալ և տնտեսության համար ամբողջությամբ վերցրած և առանձին ներդրումային ծրագրերի համար, այսինքն՝ վարկային բաժնի նվազագույն չափ, վերաֆինանսավորման միջոցով վճարման ժամկետը հետաձգվող փոխառու միջոցների ներգրավում և այլն: Դրա հետ մեկտեղ ֆինանսական վարկերը պետք է համապատասխանեն ազգային տնտեսության առաջնային հիմնախնդիրների լուծմանը:

Միջազգային վարկավորման սկզբունքներում Համաշխարհային բանկը վարկառու երկրներին դասակարգում է ըստ նրանց հնարավորությունների՝ առավել ծանր, միջին և նվազ պարտքի բեռ ունեցող երկրների: Ընդ որում, եթե արտաքին պարտքը ՀՆԱ-ի ցուցանիշը գերազանցում է 60 %-ով, ապա երկիրը դասվում է առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրների շարքին, իսկ 48-60 %-ի դեպքում՝ միջին երկրների և վերջապես մինչև 48 % պարտքի դեպքում՝ նվազ պարտքի բեռ ունեցող երկրների շարքին: Դա նշանակում է, որ

ներկայումս Հայաստանը համարվում է նվազ պարտքի բեռ ունեցող երկիր:

Կարևորվում է նաև արտաքին պարտքի ցուցանիշը բնակչության մեկ շնչի հաշվով, որը Հայաստանում կազմում է մոտ 1500 դոլար:

Արտաքին պարտքի գնահատման համար էական նշանակություն ունի ռիսկի գործոնը՝ մասնավորապես միջազգային շուկայում փոխարժեքների, տոկոսադրույքի և միջազգային գների տատանումները:

4.Ազգային տնտեսության ինտեգրումը համաշխարհային տնտեսական համակարգում

Տնտեսական ինտեգրացիան ազգային տնտեսությունների մերձեցումն է, տնտեսությունների միջև հարաբերությունների, արգելքների՝ վերացումը, աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա երկրների միջև՝ ապրանքափոխանակությունը, համատեղ գիտատեխնիկական՝ համագործակցությունը և համատեղ ձեռնարկությունների ստեղծումը:

Տնտեսական ինտեգրման անհրաժեշտ պայմաններն են.

- ✓ աշխատանքի միջազգային բաժանման խորացումը,
- ✓ տնտեսական կյանքի միջազգայնացումը,
- ✓ գիտատեխնիկական առաջադիմության արագացումը (բարձր տեխնոլոգիաներ),
- ✓ ազգային տնտեսությունների բացության մակարդակի բարձրացումը և այլն:

Համաշխարհային տնտեսությունում ազգային տնտեսությունների մերձեցման (ինտեգրման) հիմքում ընկած է աշխատանքի միջազգային բաժանման խորացումը:

Տնտեսական կյանքի միջազգայնացման ազդեցության տակ, առանձին երկրի վերարտադրությունը դուրս է ազգային տնտեսության շրջանակներից, որը հիմնականում դրսևորվում է ազգային ֆի-

նանսական կապիտալների միաձուլմամբ (անդրազգային կորպորացիաներ, Համաշխարհային բանկ, Եվրոբանկ և այլն):

Գիտության և տեխնիկայի զարգացումը դրսևորվում է տարբեր երկրների համատեղ ջանքերով, որը թույլ է տալիս օգտագործելու համաշխարհային գիտական նվաճումները: Ինչ վերաբերվում է տնտեսության բաց լինելու մակարդակի բարձրացմանը, ապա դրանում էական նշանակություն ունեն պետություններիարտաքին տընտեսական քաղաքականության ռազմավարությունները:

Միջազգային ինտեգրացիան նպաստում է յուրաքանչյուր ազգային տնտեսության հեռանկարային զարգացմանը:

Միջազգային տնտեսական ինտեգրացիան իրականացվում է միկրո և մակրո մակարդակներով: Միկրոմակարդակով այն կարող է դրսևորվել տարբեր երկրների ձեռնարկությունների միջև տնտեսական փախադարձ կապերի հաստատման, ինչպես նաև մասնաճյուղերի ստեղծման ճանապարհով: Մակրոմակարդակով, այն դրսևորվում է պետությունների միջև տնտեսական քաղաքականությունների համաձայնության միջոցով: Միջպետական մակարդակով ինտեգրացիան նպատակաուղղված է տվյալ տարածաշրջանում ապահովելու ապրանքների (ծառայությունների) և արտադրության գործոնների ազատ շարժ: Դա նշանակում է՝ համաձայնեցնել և համատեղ իրականացնել գիտատեխնիկական, ֆինանսական, արժույթային, սոցիալական քաղաքականություններ և այլն:

Տարբեր երկրների միջև կայուն և մշտական համագործակցության ձևավորումը և զարգացումը հանգեցնում է ազգային տնտեսությունների մեկուսացման հաղթահարմանը և ձեռնարկատիրության միջազգայնացմանը: Տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն են ստանում ազատորեն օգտվել ինտեգրացիայի մասնակից երկրների հարուստ փորձից, տնտեսական ռեսուրսներից, վաճառահանման շուկաներից: Դրանք կարող են համատեղ ուժերով ձեռնամուխ լինել գործազրկության և աղքատության հաղթահարմանը, առողջապահական ցանցերի զարգացմանը և զանազան սոցիալական խընդիրների լուծմանը: Վերջին հաշվով, միջազգային տնտեսական ին-

տեգրացիան նպաստում է մասնակից երկրների ազգային տնտեսության զարգացման արագացմանը և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ շուկայական վերափոխումներին, մասնավորապես, ազատական և բաց տնտեսության ստեղծման ճանապարհով լուրջ քայլեր ձեռնարկեց համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու նախադրյալների ստեղծման ուղղությամբ: Սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ խոչընդոտում էին դրա ձևավորմանը և կայացմանը, որոնց թվին կարելի է դասել նախկին ավանդական շուկաների կորուստը, համաշխարհային շուկայից մեկուսացումը, արցախյան պատերազմը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տնտեսական շրջափակումը, էներգետիկ ճգնաժամը, վրաց-աբխազական հակամարտության հետևանքով Ռուսաստանի հետ կապող միակ երկաթուղու փակումն, անկանոն սեփականաշնորհումը, օրենսդրական թույլ դաշտը և այլն: Այս բոլորը իրենց հերթին պայմանավորեցին տրանսֆորմացիոն անկումը: Արդյունքում ստեղծվեց ծանր սոցիալական իրավիճակ, որը բնակչությանը հույս չէր ներշնչում վաղվա օրվա հանդեպ:

Սակայն զարգացած շուկայական երկրների փորձը և ձեռք բերած հաջողությունները և ներկայումս իրականացվող ինտեգրացման գործընթացները ցույց են տալիս, որ առանց ինտեգրման անիրագործելի է տնտեսական զարգացումը: Իսկ որպեսզի հասնել դրան, անհրաժեշտ է ունենալ բաց տնտեսություն և իրականացնել ազատ միջազգային առևտրի քաղաքականություն:

Տնտեսական ինտեգրացման համար համապատասխան միջավայր ստեղծվեց, դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ առաջացան այնպիսի կառույցներ, ինչպիսիք են՝ Համաշխարհային բանկը, Միջազգային արժութային հիմնադրամը, Եվրոբանկը, Եվրոմիությունը և այլն:

Տնտեսական ինտեգրացիայի տեսանկյունից օրինակելին Եվրոպական միությունն է, որն անցել է ազատ առևտրի, միաժամանակ

խորացնելով ինտեգրացման հնարավորությունները, աշխատուժի, կապիտալի շուկաներում, ինչպես նաև ձեռնամուխ է եղել արժութային միության կայացմանն ու զարգացմանը, որը պայմանավորել է տնտեսական գործունեության միասնական ռեժիմի, միասնական արժույթի և այլնի ստեղծումը: Տնտեսական ինտեգրացման համար լայն հնարավորություններ ստեղծվեց, երբ 1995 թ. հիմնադրվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, որի անդամներից է նաև Հայաստանը: Ի տարբերություն Սակագների և առևտրի գլխավոր համաձայնության կառույցի, Առևտրի համաշխարհային կազմակերպությունում քննարկվում են ոչ միայն ապրանքների ու ծառայությունների առևտրի ազատականացման, այլև մտավոր սեփականության, արդյունաբերական, գյուղատնտեսական քաղաքականության հրատապ խնդիրներ, ներդրումներին վերաբերվող տարաբնույթ հարցեր: Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր գործառույթը ազատ առևտրի ապահովումն է և մասնակիցների միջև ծագած վեճերի լուծումը:

Այսուհանդերձ տնտեսական ինտեգրացիան ներառում է մի քանի փուլ: Սովորաբար այն սկսվում է երկրների միջև համաձայնություններով, որոնք մեկը մյուսի նկատմամբ սահմանում են որոշակի արտոնություններ: Այնուհետև ինտեգրացիան անցնում է հետևյալ հիմնական մակարդակները.

- ✓ ազատ առևտրի գոտու ստեղծում, որի դեպքում մասնակից երկրները վերացնում են արտահանման սակագները,
- ✓ ստեղծվում է մասնակից երկրների մաքսային միություն, որի շրջանակներում վերանում են մաքսատուրքերը,
- ✓ ընդհանուր շուկայի ապահովում է, որի շրջանակներում վերանում են արտահանման հետ կապված բոլոր տեսակի սակագները, արտադրության գործոնների տեղաբաշխման սահմանափակումները և մշակվում է ընդհանուր արտաքին քաղաքականություն (այդ թվում նաև այն երկրները, որոնք ընդհանուր շուկայի անդամ չեն),

- ✓ տնտեսական միության ստեղծում, որը ներառում է ընդհանուր շուկայի բոլոր սկզբունքները, միաժամանակ այդ մակարդակում ստեղծվում են տնտեսական ինստիտուտների միավորումներ, բոլոր մասնակից երկրների գործունեության ապահովման համար համապատասխան կանոնակարգեր և այլն,
- ✓ տնտեսական և արժութային միության ստեղծում (օրինակ «եվրո»-ն՝ Եվրոմիության երկրների համար):

Էական նշանակություն ունի այն հանգամանքի գնահատումը, թե որքանով է արդյունավետ կամ անարդյունավետ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ լինել: Դա ունի իր դրական և բացասական հետևանքները: Որպես դրական հետևանքներ կարելի է առանձնացնել.

- ➢ անբարեխիղճ մրցակիցներից պաշտպանվելու իրավունքի ձեռք բերումը,
- ➢ մասնակցել միջազգային առևտրի կանոնների մշակմանը, ներկայացնելով երկրի ազգային շահերը,
- ➢ վաճառահանման համապատասխան միջազգային շուկաների ձեռք բերումը,
- ➢ կառուցվածքային վերափոխումների ակտիվացումը՝ նպատակաուղղված ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը,
- ➢ երկրի հեղինակության բարձրացումը և ներդրումային միջավայրի բարելավումը:

Բացասական հետևանքներից կարելի է առանձնացնել.

- ➢ ներմուծման էքսպանսիայի (ընդլայնման) ուժեղացման հետևանքով տեղական ոչ մրցունակ ճյուղերի և ձեռնարկությունների սննկացումը,
- ➢ բյուջեի եկամուտների կրճատումը՝ մաքսատուրքերի վերացման հետևանքով,
- ➢ սոցիալական ծախքերի աճը (ձեռնարկության փակում, գործազրկություն, միգրացիա և այլն):

Սակայն ինչպես ցույց են տալիս զարգացած շուկայական տնտեսության երկրների փորձը և անցած ուղին, առանց համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրվելու, անհնարին է տնտեսական զարգացման լուրջ հեռանկարներ ապահովել:

Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի երկրների հետ տնտեսական սերտ համագործակցության զարգացումը, որը վերջին հաշվով հանգեցնում է հարևան երկրների հետ տնտեսությունների ինտեգրացման խորացմանը:

Ներկայումս Հայաստանը անդամակցում է ԱՊՀ-ի և Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Ներկայումս անհնարին է համագործակցությունը Թուրքիայի և Ադրբեջանի հետ, քանի այդ երկրները համագործակցության հարցը կապում են մի կողմից Արցախի, մյուս կողմից էլ եղեռնի հետ: Իրանի հետ համագործակցությունը այնքան էլ բարվոք վիճակում չէ, դա պայմանավորված է նախ այն հանգամանքով, որ Իրանում դեռևս չեն կատարվում արմատական շուկայական վերափոխումներ և երկրորդ՝ Արևմտյան տերությունների կողմից այդ երկրի նկատմամբ կիրառվում է պատժամիջոցներ (տնտեսական էմբարգո): Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում նույնպես մոտ ապագայում դժվար է ակնկալել շոշափելի առավելություններ: Հարևան երկրներից մնում է Վրաստանը, որի հետ հնարավոր է ամենասերտ տնտեսական համագործակցությունը, քանի որ թե տնտեսությունների զարգացման մակարդակով, թե տնտեսական քաղաքականության ուղղվածությամբ ըստ էության մեր շահերը համընկնում են: Ճիշտ է, Ռուսաստանի հետ արտաքին առևտրի բաժինը Հայաստանի հետ ամենամեծն է (1 մլրդ. դոլար), սակայն Ռուսաստանը դեռևս նոր է դարձել Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ: Այնպես որ, դեռևս հնարավոր է հետագա տնտեսական համագործակցության էլ ավելի կատարելագործումը Ռուսաստանի հետ:

Տնտեսական ինտեգրացիայի խորացման նպատակով անհրաժեշտ է արտահանման խրախուսման բնագավառում պետական կարգավորման ուժեղացում, հատկապես հայրենական արտադը-

բանքի նկատմամբ պահանջարկի խրախուսում, որը ամենից առաջ պահանջում է արտադրանքի որակի բարձրացում, գների ցածր մակարդակ, լավագույն դիզայն, ինչպես նաև հայրենական արտադրանքի իրազեկության ընդլայնում:

Հատուկ օժանդակության կարիք ունեն մասնավորապես ցածր մրցունակության ձեռնարկությունները, ինչպես օրինակ հաստոցաշինության, էլեկտրատեխնիկական, տրիկոտաժի արդյունաբերությունը և այլն: Դրանցում արտակարգ կարևորություն է հանդիսանում արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը և արդյունավետության բարձրացումը:

Հայաստանից արտահանվող արտադրանքի մեջ չնչին տեսակարար կշիռ (5 %) է կազմում թեթև արդյունաբերության արտադրանքը: Ելնելով վաճառահանման շուկաների ձեռք բերման կարևոր պահանջարկից, անհրաժեշտ է այդ ճյուղի արագացված վերակառուցումը, որը նպաստի շուկաներում, մասնավորապես, ԱՊՀ երկրներում դրա կողմից թողարկվող արտադրանքի պահանջարկի աճին:

Պետական հովանավորչական քաղաքականություն պետք է կիրառել հատկապես մեքենաշինության այն ճյուղերի նկատմամբ, որոնք դեռևս մրցունակ չեն, մասնավորապես նպաստի այդ ճյուղերում բարձր կատարելագործված տեխնոլոգիաների լայն կիրառմանը: Նման քաղաքականություն անհրաժեշտ է կիրառել նաև գյուղատնտեսական հումքի մշակման հիմքի վրա սննդամթերքի արտադրությունը և արտահանումը: Այս նկատառումով անհրաժեշտ է օգտագործել Արարատյան դաշտավայրի բացարձակ և համեմատական առավելությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1
Ազգային տնտեսության բովանդակությունը և դասակարգումը
1. Տնտեսական գործունեության բովանդակությունը և նպատակը 3
2. «Ազգային տնտեսության» հայեցակարգը 6
3. Ազգային տնտեսության ուսումնասիրության առարկան, մեթոդները և գործառույթները 9
4. Ազգային տնտեսության ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները, ազգային տնտեսությունների դասակարգումը 11

Գլուխ 2
Երկրի տնտեսական ներուժը
1. Տնտեսական ներուժը և կառուցվածքը: Տնտեսական ներուժի կուտակումը 14
2. Ազգային հարստությունը՝ որպես երկրի տնտեսական ներուժի բաղկացուցիչ մաս 21

Գլուխ 3
Երկրի գիտատեխնիկական ներուժը
1. Գիտատեխնիկական առաջադիմության էությունը և հիմնական գծերը 28
2. Գիտատեխնիկական առաջադիմությունը և տնտեսական աճը 32
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը որպես գերակա ուղղություն 36
4. Գիտության դերն ազգային տնտեսությունում 38

Գլուխ 4
ՀՀ արդյունաբերությունը
1. Արդյունաբերական քաղաքականության էությունը և հիմնական գծերը 42
2. Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը և վերափոխման անհրաժեշտությունը 49

Գլուխ 5
ՀՀ գյուղատնտեսությունը
1. Ագրարային քաղաքականության էությունը և հիմնական գծերը 56
2. ՀՀ գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները: Ագրոարդյունաբերական համալիր: 60

Գլուխ 6
Տրանսպորտը և կապը, շինարարություն և զբոսաշրջությունն ազգային տնտեսությունում
1. Տրանսպորտը և կապը..... 66
2. Շինարարության զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում..... 71
3. ՀՀ զբոսաշրջության զարգացման առանձնահատկությունները..... 74

Գլուխ 7
Պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանի հիմնախնդիրները
1. Անցումային ժամանակաշրջանի բովանդակությունը և հիմնական գծերը..... 78
2. Տնեսական և սոցիալական վերափոխումներն անցումային տնտեսությունում..... 81

Գլուխ 8
Զբաղվածության ապահովման համակարգը
1. Աշխատաշուկայի տեսակները և դրանց հասունության փուլերը (աստիճանները) 87
2. Զբաղվածություն (թաքնված զբաղվածություն): Գործազրկության առաջացման նախադրյալներն անցումային ժամանակաշրջանում..... 92
3. Գործազրկության տնտեսական և սոցիալական հետևանքները..... 96
4. Զբաղվածության քաղաքականությունը ՀՀ-ում..... 100

Գլուխ 9
Ազգային տնտեսության սոցիալական հիմքերը
1. Սոցիալական քաղաքականության էությունը, դերը և ֆունկցիաներն ազգային տնտեսությունում 104

2. Սոցիալական քաղաքականության դերը սոցիալական ծախքերի և սոցիալական օգուտների հավասարակշռության գործում 107
3.Կենսամակարդակի և կյանքի որակի ինդիկատորները 110
4. Սոցիալական պաշտպանության համակարգը ՀՀ-ում, սոցիալական ապահովածություն և սոցիալական ապահովագրություն..... 114
5. Աղքատության դրսևորման ձևերը և չափման եղանակները: Աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունները ՀՀ-ում 118

Գլուխ 10
Ներդրումային քաղաքականություն

1. Ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում..... 125
2. Ներդրումային ճգնաժամի առաջացման պատճառները և ծավալն ազգային տնտեսությունում..... 129
3. Բարենպաստ ներդրումային եղանակի ձևավորման տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները 134
4. Օտարերկրյա ներդրումների դերը և արդյունավետության գնահատումն ազգային տնտեսության զարգացման գործում 138

Գլուխ 11
Մենաշնորհը և մրցակցությունը ՀՀ-ում

1.Մրցակցային միջավայրի ձևավորման պայմանները..... 145
2.Մոնոպոլ շուկայի առանձնահատկությունները անցումային ժամանակաշրջանում 148
3. Տնտեսության ապամոնոպոլացման հիմնախնդիրները: Հակամոնոպոլիստական քաղաքականություն 150

Գլուխ 12
Ազգային տնտեսության կարգավորումը

1. Պետության դերը տնտեսության կարգավորման գործում 156
2. Տնտեսության հարկաբյուջետային կարգավորումը..... 158
3. Պետության դրամավարկային քաղաքականությունը 162
4. Արժեթղթերի շուկայի կարգավորումը 167

Գլուխ 13
Փոքր և միջին ձեռնարկատիրության դերը և տեղ ազգային տնտեսությունում

1. Ձեռնարկատիրության էությունը և դերը ազգային տնտեսությունում 172
2. Փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը և ֆունկցիաները 176
3. Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) դերն ազգային տնտեսությունում 181

Գլուխ 14
Երկրի տնտեսական անվտանգությունը

1. «Տնտեսական անվտանգություն» հասկացությունը, չափանիշները և ցուցանիշները 186
2. Ձեռնարկության (ֆիրմայի) տնտեսական անվտանգությունը 193
3. Պետության դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում 199

Գլուխ 15
ՀՀ տնտեսությունը համաշխարհային տնտեսական համակարգում

1. Պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը 203
2. Արտաքին առևտուր 204
3.Արտաքին պարտք 210
4.Ազգային տնտեսության ինտեգրումը համաշխարհային տնտեսական համակարգում 213

Երևանի պետական համալսարան

Վոլոդյա Հովսեփյան
Մարգարիտա Եղիազարյան

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական ձեռնարկ)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլ 14:
Տպաքանակը՝ 100 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2014